1. A body made of gray porous basalt, treated on all sides (height 63 cm, width-20 cm, thickness 20 cm, f. 1, measurement 1).

2. The stylized stone head of a bull (height. 42 cm, width 38 cm, thickness 15-20 cm, f. 2, measurement 2).

3. Stele in the form of an arrow, processed from two sides. (height 110cm, length 45cm, thickness 10-15cm f. 3, measurement 3) .4.




4. Stele of porous pinkish basalt (65x65x25 cm., F. 4, measurement).
5. Base of basalt (diameter 48-50cm, thickness 6 cm f. 5, measurement 5).



Նկ. 1, Չափազրություն 1




Նկ. 2,



Չափագրություն 2




Նկ. 3



Չափագրություն 3




Նկ. 4,



Չափագրություն 4



Նկ. 5



Չափագրություն 5

**Լարիսա ԵԳԱՆՅԱՆ, Համագասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

Շիրակի երկրագիտական թանգարան (Գյումրի)

Էլ. փոստ՝ smuseum@web.am

**ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ  
ՊԵՂՈՒՄՆԵՐ ՇԻՐԱԿՈՒՄ 2008-2016թթ.**

2008-2016թթ. Շիրակում հայտնաբերվել են անտիկ ժամանակաշրջանում իրականացված թաղումներ: Դրանց մի մասը պեղվել է ավելի վաղ ժամանակաշրջանի հուշարձանների (Ազատան, Հայկաձոր) պլանային ուսումնասիրության ժամանակ, մյուսների պեղումները կրել են փրկարարական բնույթ և հիմնականում հողային աշխատանքների ժամանակ բացված կամ հնագիտական հետախուզության ընթացքում հայտնաբերված անտիկ դամբարանադաշտերում են:

2013թ. Շիրակի մարզի Լուսադրյուր գյուղում՝ Ռաֆիկ Բադալյանի տան բակում, տարածքի բարեկարգման ընթացքում մակերեսին բացվել և ավերվել էին անտիկ ժամանակաշրջանի հինգ թաղումներ, որոնցից չորսը՝ կարասային, մեկը՝ հիմնահողային: Հորիզոնական կամ ուղղահայաց կանգնեցված կարասների մեջ կատարվել էր դիադրում: Գտնվեցին դեղին մածուկից, գծավոր ազաթից ու սարդիոնից գնդաձեւ մի քանի ուլունքներ, պոչը գույգ թռչուններով բրոնզյա գդալիկ և կարմիր սարդիոնից երկարավուն բաժանարար ուլունք: Դամբարանները, ըստ հայտնաբերված նյութերի, թվագրվում են մ.թ.ա. 1-ին - մ.թ.1-ին դարերով:

Մ.թ.ա. 12-6-րդ դարերով թվագրվող Ազատանի ամրոցը և բնակավայրը մ.թ.ա. 5-րդ դարում սկսում են լքվել: Ամենայն հավանականությամբ, բնակչության ստվար գանգվածը մ.թ.ա. 6-5-րդ դարում տեղափոխվում է մոտ 2կմ հեռավորությամբ հիմնված Բենիամինի նորաստեղծ դաստակերտ: Ազատանի ամրոցը և բնակավայրը կորցնում են իրենց նշանակությունը, սակայն, ինչպես ցույց տվեցին վերին շերտերի պեղումները, կյանքը այստեղ շարունակվել է նաև անտիկ ժամանակաշրջանում: Ամրոցի և բնակավայրի վերին շերտի պեղումների ընթացքում համարյա մակերեսին հայտնաբերվեցին անտիկ շրջանի մի քանի դամբարաններ: Դրանցից վաղագույնը հայտնաբերվել է բնակավայրի տարածքում: Վերին շերտի պեղումների ընթացքում մակերեսի անկանոն փոքր քարակույտը հեռացնելիս մոտ 30 սմ խորության մեջ հայտնաբերվեցին մարդու ոսկորներ: Մաքրելուց հետո արևելք-արևմուտք ուղղությամբ բացվեց, ծավալած ոտքերով, աջ կողքին կծկված դիրքով պառկած կմախքը, մոտ 1մ հյուսիս, նույն խորությունից հայտնաբերվեց մարդու վերին ծնոտ՝ գանգի դիմային մասի փոքր հատվածով, ուսուկրը և անրակը: Սրանք նույն կմախքի մաս են, որոնք թաղման մակերեսային լինելու պատճառով հավանաբար քշել տարվել են գիշակեր կենդանիների կողմից: Կմախքի աջ բազկոսկրի վրա կային երկու բրոնզյա ապարանջաններ: Թաղումը, ըստ հայտնաբեր-

ված բրոնզյա, ներձկված իրանով, օձագլուխ ապարանջանների, թվագրվում է մ. թ. ա. 6-5-րդ դարերով:

Մյուս դամբարանները գտնվում են ամրոցի շրջակայքում: Դրանք դիաթաղմամբ սալարկղային թաղումներ են: Ամրոցի եւ շրջակայքի վերին շերտը վերաբերում է հելլենիստական ժամանակաշրջանին: Այստեղ հայտնաբերված թաղումները խիստ մակերեսային էին, և ընթերցվում էին դամբարանների կողասալերը: Պեղված ոչ մի դամբարան ծածկասալ չունեք: Երկու թաղում հայտնաբերվեցին ամրոցի պարսպին հարավային կողմից հարող վաղ կառույցի պեղումների ընթացքում: Հողի վերին շերտը հեռացնելիս հայտնաբերվեց ավերված սալարկղի մեջ աջ կողքին կծկված դիրքով պառկած կմախքը, որի գանգը բացակայում էր: Ուղեկցող նյութեր չկային: Դրանից 30մ դեպի հյուսիս, ամրոցի մեջ պեղված հելլենիստական ժամանակաշրջանին վերաբերող, կեղծ թաղով քարաշար ամբարներից մեկում հայտնաբերվեց փոքր սալաքարի վրա դրված մարդու գանգ, որը կարող էր նշված կմախքինը լինել: Նույն կառույցի արևմտյան պատի վրա հայտնաբերվեց մանկական, փոքրիկ սալարկղային թաղում, որի կմախքը համարյա չէր պահպանվել: Ամրոցի արևմտյան կողմում՝ տափարակի վրա, իրարից ոչ հեռու հայտնաբերվեցին սալարկղային 2 թաղումներ: Առաջինն ուներ արեւելք-արևմուտք ուղղվածություն, կմախքը կծկված պառկած էր ձախ կողքի՝ դեմքով դեպի հյուսիս, առանց ուղեկցող նյութերի: Երկրորդն ուներ հյուսիս-հարավ կողմնորոշում, կմախքը նույն դիրքով էր՝ դեմքով դեպի արևելք: Գլխի մոտ դրված էր մեկ պուլիկ, կրծքին՝ ոսկրյա նախշազարդ իրի բեկոր: Դամբարանի մոտից հայտնաբերվեց կապույտ, անթափանց ապակուց բազմանիստ կնիք: Դամբարանները, ըստ հայտնաբերված նյութերի, թվագրվում են մ.թ.ա. 1-ին-մ.թ.1-ին դարերով:

Մոտավորապես մ.թ.ա. 6-րդ դարում Հայկաձորի երկաթիդարյան ամրոցից բնակավայրը դուրս է գալիս եւ տեղափոխվում հրվանդանի հարավային կողմի ընդարձակ տարածք, ուր կյանքը շարունակվում է անտիկ ժամանակաշրջանում: 2014թ. ամրոցից մոտ 200մ հարավ-արևելք՝ մակերեսից 20 սմ խորության վրա, բացվեց կարասային մանկական երկու թաղում: Կարմիր անգորբապատ կարասները դրված էին կիսապառկած դիրքով, բերանները դեպի արևմուտք: Առաջինը փակված էր բազալտե շրջանաձև բարակ սալով, իսկ մյուսը՝ մեկ այլ կարասի ստորին մասով: Կարասների մոտ հայտնաբերվեց կարմրավուն տուֆից ֆալուս: Առաջին կարասից հայտնաբերվեցին բրոնզյա, օձագլուխ փոքր ապարանջան ու ապակու մածուկից ուլունքներ: Ըստ հայտնաբերված նյութերի՝ թաղումները վերաբերում են մ.թ.ա. 1-ին-մ.թ. 1-ին դարերին:

2013թ. Շիրակի մարզի Ղազանչի գյուղից (պատմական Աշոցք) հյուսիս՝ գազատարի համար փորված խրամատում, ավերվել էին արևելք-արևմուտք կողմնորոշմամբ սալարկղային բազմաթիվ թաղումներ: Այստեղ պեղվեցին համեմատաբար անխաթար մնացած երկու դամբարաններ, որոնցից մեկում կատարված էր զույգ թաղում: Դամբարանների ավերված մասից հայտնաբերվեց կարմիր սարդիոնից մատանի, խրամատի եզրային հատվածում՝ մոխրագույն, սանրաքաշ մակերեսով երկու կարաս: Չնայած

պեղված դամբարաններում ուղեկցող նյութեր չկային, բայց հարակից հատվածներում գտնված նյութերով, թաղման ձևով ու ծեսով դամբարանադաշտը թվագրվում է 3-5-րդ դարերով:

2016թ. Շիրակի մարզի Վարդաքար գյուղում նոր ջրագծի համար փորված խրամատներում ավերվել էին սալարկղային ութ և կարասային մեկ թաղումներ: Մեր կողմից պեղվել են համեմատաբար քիչ վնասված սալարկղային երկու և կարասային մեկ թաղում: Սալարկղերն ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում: Կմախքները պատկած են մեջքի վրա, ձեռքերը որովայնին ծավված: Սալարկղերից մեկում կատարված էր կողք կողքի գույգ թաղում: Դամբարաններում ուղեկցող նյութեր չկային, ինչը հատկանշական է քրիստոնեական թաղումներին: Ջրագծի համար փորված երկրորդ խրամատում հայտնաբերվեցին փշրված կարասի բեկորներ և մարդու ոսկորներ: Կարասը վերականգնվեց: Այն իր ձևով ու գույնով վերաբերում է ուշ անտիկ ժամանակաշրջանին:

2008-2016թթ. Շիրակում հայտնաբերված և պեղված անտիկ ժամանակաշրջանի թաղումներն ու դամբարանադաշտերը նոր լրացուցիչ նյութ են տարածաշրջանի հոգևոր ու նյութական մշակույթի ուսումնասիրության համար:

**Лариса ЕГАНЯН, Амазасп ХАЧАТРЯН (Армения)**

Ширакский центра арменоведческих исследований НАН РА (Гюмри)

Ширакский краеведческий музей

e-mail: smuseum@web.am

## **РАСКОПКИ НОВОНАЙДЕННЫХ АНТИЧНЫХ ЗАХОРОНЕНИЙ В ШИРАКЕ 2008-2016 гг.**

С 2008 по 2016 гг. во время археологических раскопок более ранних памятников (Азатан и Айкадзор, эпоха железа) в Шираке были обнаружены ранее неизвестные некрополи (Вардакар, Лусахпюр, Казанчи) античного периода. Более ранние захоронения (грунтовые, каменные ящики и кувшинные - Азатан, Айкадзор, Лусахпюр) относятся к раннеантичному и эллинистическому периодам. Новонайденные некрополи Казанчи и Вардакар относятся к III-V вв. К этому периоду относится и единственное кувшинное захоронение в некрополе Вардакар. При раскопках некрополей (Айкадзор, Вардакар, Лусахпюр, Казанчи, Азатан), I в. до н.э. - IV-V вв. н.э.) установлены формы погребений: кувшинные, каменные ящики, грунтовые погребения. Каменные ящики раскопаны в Вардакаре и Казанчи. Карасные захоронения, относящиеся к I в. до н.э.-I в. н.э., раскопаны в Айкадзоре, Вардакаре, Казанчи и Лусахпюре. Положение тел сорентировано на восток-запад, юго-восток и северо-запад. Положение скелета прямое, со сложенными на груди или на животе руками, а иногда руки вытянуты вдоль тела. Карасы поставлены вертикально или горизонтально. Это, в основном, детские погребения. В карасных захоронениях скелет находится в скорченном положении. Археологический материал из погребений немногочислен, но весьма характерен. Прямые аналоги исследуемых античных погребений и сопутствующие материалы - в памят-

никах Армении I в. до н. э. - I-III вв. н.э. В результате анализа выявлено, что в исследуемых захоронениях в основном сохраняются погребальные обряды, характерные для Ширака и Армении в целом. Произведенные исследования и погребальный инвентарь дают новый материал по памятникам античной эпохи Ширака и, в целом, сложной и очень интересной античной истории Армении.

**Larisa YEGANYAN, Hamazasp KHACHATRYAN (Armenia)**

Shirak Center for Armenological Studies NAS RA (Gyumri)

Shirak Museum of Regional Studies (Gyumri)

e-mail: smuseum@web.am

### **EXCAVATIONS OF LATELY DISCOVERED NECROPOLISES OF ANTIQUE PERIOD IN SHIRAK IN 2008-2016**

From 2008 to 2016 during the archaeological excavations of earlier monuments (Azatan and Haykadzor) in Shirak, previously unknown necropolises (Vardakar, Lusaghpyur, Kazanchi) of the ancient period were discovered. Earlier burials (soil, in stone boxes and in jugs - Azatan, Haykadzor, Lusaghpyur) belong to the early antique and Hellenistic periods. The newly discovered necropolis of Kazanchi and Vardakar dates from 3-5 centuries. This period also includes the only pitcher burial in the necropolis of Vardakar. During the excavations of necropolises (Haykadzor, Vardakar, Lusaghpyur, Kazanchi, Azatan), I v. do AD - IV-V c. AD) the forms of burials were established: pitchers, burials in stone boxes, soil burials. The burials in the stone boxes were excavated in Vardakar and Kazanchi. Karas burial related to the I century BC. E.-I century. AD, excavated in Haykadzor, Vardakar, Kazanchi and Lusaghpyur. The position of the bodies is oriented to the east-west, southeast and northwest. The position of the skeleton is straight, with arms folded on the chest or abdomen, and sometimes the arms are extended along the body. Crucians are set vertically or horizontally. These are mainly children's rooms. In the red tombs, the skeleton is in a crouched position. Archaeological materials from the burials are few, but very characteristic. Direct analogues of the studied ancient burials and related materials are in the monuments of Armenia I-c. BC- I-III cc AD. As a result of the analysis, it was found out that the burial grounds mainly preserve the funeral rites characteristic of Shirak and Armenia as a whole. Produced research and burial inventory provide new material on the monuments of the ancient era of Shirak and, in general, the complex and very interesting ancient history of Armenia.

**Կարեն ԹՈՒՆԱԹՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան)

էլ.փոստ karen.tokhatyan@gmail.com

**ՄԵԾ ՀԱՅՔԻ ՀՅՈՒՄԻՄԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ**

Ժայռապատկերներն ունեն ճանաչողական մեծ արժեք՝ որպես նախագրային շրջանի պատմամշակութային սկզբնաղբյուր, որոնք յուրօրինակ, պատկերային կերպով արտացոլում են նախագրային շրջանի անցյալը: Ներկայանալով որպես մարդկային հաղորդակցության միջոց՝ դրանք իրականացնում են տեղեկության ու զգացումի գրանցման, արտահայտման, կուտակման և փոխանցման գործառույթներ:

Ժայռապատկերները կարևորվում են Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VII-I հազ. պատմական իրողությունների հասկացման, հայոց ազգաձագման և ժողովրդագրական գործընթացների հստակեցման խնդիրներում:

Հսկայական քանակությամբ, ոճական բազմազանությամբ և հարուստ բովանդակությամբ հայոց ժայռարվեստը առանձնահատուկ տեղ ունի Հին աշխարհի մշակութային ժառանգության մեջ: Հայկական լեռնաշխարհի մերձակայքում հնագույն ժայռապատկերները քիչ են, մինչդեռ Լեռնաշխարհում դիտվում է դրանց գերկենտրոնացում, թեմային ու տեսակային բազմազանություն:

Մեծ Հայքի գրեթե բոլոր աշխարհների լեռնային մասերում բյուրավոր ժայռապատկերներ են հայտնաբերվել: Երկրի հյուսիսային մասերում դրանք հետևյալ վայրերում են.

**1. Տայք աշխարհ.** Կող գավառում՝ Կրիակունք:

**2. Գուգարք աշխարհ.** Թռեղք գավառում՝ Ծաղկա, Ցուրտագետ, Վերին Զավախք գավառում՝ Մուրջախեթ, Դումելյա (Ախալքալաքի մոտ): **Տաշիր** գավառում՝ Լոռիբերդ, Կողես, Եղիտանք, Լեռնավան, Պաղաղբյուր (Լոռու մարզ): **Ձորվոր** գավառում՝ Նեղոց (Լոռու մարզ):

**3. Այրարատ աշխարհ.** Արագածոտն գավառում՝ Արագած լեռ, Ագարակ, Արտին, Արուճ, Գեղամավան, Կաքավաձոր, Նք. Սասունաշեն, Շամիրամ, Հին Շենիկ, Ոսկեհատ, Փոկաբերդ, Օշական (Արագածոտնի մարզ), Արմավիր, Բագարան, Մեծամոր, Մբ Գայանե, Մբ Հռիփսիմե, Մբ Շուշանիկ (Արմավիրի մարզ): **Նիգ** գավառում՝ Ապարանի ջրամբար, Երնջատափ, Տղմուտ, Քուչակ (Արագածոտնի մարզ): **Շիրակ** գավառում՝ Ալամ, Գետիկ: Անիպեմզա, Երեբույք, Հայկաձոր, Հոռոմ, Ձիթհանքով, Մարմաշեն, Մուսայելյան, Տիրաշեն ամրոց (Շիրակի մարզ), Մաստարա (Արագածոտնի մարզ): **Վանանդ** գավառում՝ Զարիշատ, Չամիկ, Բորլուկ գետի հովտում՝ Ագաս, Բկիսու, Կատրան, Կերվան, Սևքար: **Վարաժնունիք** գավառում՝ Գոշ (Տավուշի մարզ): **Տաշիր Վերին** գավառում՝ Գոգարան (Լոռու մարզ):



Մեծ Հայքի հյուսիսի ժայռապատկերները, գտնվելով հիմնականում հարթավայրային անտառատափաստանային տարածքներում, թեմա-ոճային, տեխնիկական ու տեղագրական ընդհանրականություն են դրսևորում ողջ Հայաստանի բարձալեռնային ժայռապատկերների հետ:

**Карен ТОХАТЯН (Армения)**

Институт истории НАН РА (Ереван)

e-mail: karen.tokhatyan@gmail.com

## НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ СЕВЕРА ВЕЛИКОГО АЙКА

Наскальные изображения имеют большую познавательную ценность как историко-культурные первоисточники дописьменного периода, которые своеобразно, весьма изобразительно отображают прошлое. Представляя собой средство человеческой коммуникации, они осуществляют функции фиксации, выражения, накопления и передачи информации и ощущений. Петроглифы играют важную роль для понимания исторических реалий Армянского Нагорья в VII-I тыс. до н.э., для выяснения вопросов этногенеза армян и демографических процессов.

По огромному количеству, разнообразию стиля и богатому содержанию армянское наскальное искусство занимает особое место в культурном наследии Древнего Мира. В прилегающих к Армянскому нагорью регионах древнейших наскальных рисунков не много, тогда как на самом нагорье наблюдается их высокая концентрация, тематическое и видовое разнообразие.

Почти во всех гористых местностях Великой Армении обнаружены мириады наскальных изображений. В северной части страны они находятся в следующих местах:

**1. Провинция Тайк.** В гаваре **Кох** - Криакунк.

**2. Провинция Гугарк.** В гаваре **Трехк** - Цахка, Цуртагет, в гаваре **Верин Джавахк** - Мурджахет, Думейла (около Ахалкалака). В гаваре **Ташир** - Лориберд, Кохес, Ехитанк, Лернаван, Пахахбюр (Лорийский марз). В гаваре **Дзоропор** - Нехоц (Лорийский марз).

**3. Провинция Айрарат.** В гаваре **Арагацотн** - г. Арагац, Агарак, Артин, Аруч, Ге-хамаван, Какавадзор, Неркин Сасунашен, Шамирам, старый Шеник, Воскеат, Покаберд, Ошакан (Арагацотнский марз), Армавир, Багаран, Мецамор, Св. Гаянэ, Св. Рипимэ, Св. Шушаник (Армавирский марз). В гаваре **Ниг** - Апаранское вдхр., Ерджатап, Тхмут, Кучак (Арагацотнский марз). В гаваре **Ширак** - Алам, Гетик, Анипемза, Ереруйк, Айкадзор, Ором, Дзитанков, Мармашен, Мусаелян, крепость Тирашен (Ширакский марз), Мастара (Арагацотнский марз). В гаваре **Вананд** - Заришат, Чамик, в долине р. Борлук - Азат, Икису, Катран, Керван, Севкар. В гаваре **Варажнуник** - Гош (Тавушский марз). В гаваре **Ташир Верин** - Гогаран (Лорийский марз).

Наскальные изображения севера Великой Армении, находясь в основном в равнинной лесостепной местности, проявляют тематическую и стилистическую, техническую и топографическую общность с петроглифами высокогорных частей всей Армении.

**Karen TOKHATYAN (Armenia)**

Institute of History of NAS RA (Yerevan)

e-mail: karen.tokhatyan@gmail.com

## ROCK CARVINGS IN THE NORTH OF GREATER HAYQ

Rock carvings have a great cognitive value as historical and cultural sources from prescriptive period, which in a peculiar, very graphic way reflect the past. Representing a means of human communication, they carry out the functions of fixing, expressing, accumulating and transmitting information and sensations. Petroglyphs play an important role in understanding the historical realities of the Armenian Highland in VII-I millennia BC, and in clarifying the issues on ethnogenesis of Armenians and demographic processes.

By the huge amount, diversity of style and rich content, Armenian rock art occupies a special place in the cultural heritage of the Ancient World. In the regions adjacent to the Armenian Highland ancient rock paintings are not many, while in the Highlands they have a high concentration, thematic and species diversity.

Almost in all mountainous parts of Greater Armenia myriads of rock carvings have been discovered. In the northern part of the country they are in the following places:

**1. Tayk Province.** In **Kogh** gavar - Kriakunq.

**2. Gugark Province.** In **Treghq** gavar - Tzakhka, Tsurtaget, in **Verin Javakhq** gavar - Murjakhet, Dumeyla (in Akhalkalak), in **Tashir** gavar - Loriberd, Koghes, Yeghitanq, Lernavan, Paghagbyur (Lori Marz), in **Dzoropor** gavar - Neghots (Lori Marz).

**3. Ayrarat Province.** In **Aragatsotn** gavar - Mt. Aragatz, Artin, Aruch, Geghamavan, Kaqavadzor, Nerqin Sasunashen, Shamiram, old Shenik, Voskatat, Pokaberd, Oshakan (Aragatsotn marz). In **Nig** gavar - Aparan reservoir, Yernjatap, Tghmut, Quchak (Aragatsotn marz).

In **Shirak** gavar - Alam, Getik. Anipemza, Yereryuk, Haykadzor, Horom, Dzithanqov, Marmashen, Musaelyan, Tirashen fortress (Shirak Marz), Mastara (Aragatsotn marz), Armavir, Bagaran, Metsamor, St. Gayane, St. Hripsime, St. Shushanik (Armavir marz).

In **Vanand** gavar - Zarishat, Chamik, in the Borluk valley - Azat, Ikisu, Katran, Kervan, Sevkar. In **Varazhnuniq** gavar - Gosh (Tavush Marz). In **Tashir Verin** gavar - Gogaran (Lori Marz).

Rock carvings of the north of Greater Armenia, being mainly in the flat forest-steppe terrain, exhibit thematic and stylistic, technical and topographical similarity with the petroglyphs of the high-mountain areas of whole Armenia.

**Ամինիա ԿԱՆԵՑՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

Էլ. փոստ՝ amina-kanetsyan@mail.ru

**ՍՅԱՆ ԽԱՐԻՍԽՆԵՐԸ ԱՆՏԻԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Շինությունների կառուցվածքային տարրերից կարևորագույնը սյունահեծանային կառուցվածքն է, որը հաճախ կրում է շինության ծածկը: Որոշ շինություններում սյունաբները, մշակման բարդության հետ կապված, հաճախ պատրաստվում էին փայտից: Դրանք դրվում էին ոչ թե միանգամից բնահողի, այլ քարե հիմքերի վրա՝ խոնավության քայքայումից ապահովելու, ուժեղ հիմք ստեղծելու, հեծանների և պատի ծանրությունը բնահողի վրա թեթևացնելու նպատակով: Սյան բների հիմքերը (խարիսխները) լինում էին տարբեր:

Իրականացված է խարիսխների ձևերի վերլուծության զարգացումը: Սկիզբ առնելով ուրարտական շրջանի խարիսխներից, նաև կրելով Հայաստանը շրջապատող հելլենիստական երկրների ազդեցությունը՝ խարիսխները ձեռք են բերում բազմազան ձևեր:

Ժամանակակից Հայաստանի տարածքում Բենիամին բնակատեղիում պեղումների ժամանակ հայտնաբերվել են մ.թ.ա. VI-V դարերի խարիսխներ՝ պերսեպոլիսյան տիպի, իսկ նույն շինության վերակառուցումից հետո մ.թ.ա. IV-III դարերում ի հայտ են գալիս պրոտոտորաձև տիպեր, որոնք իրենց գեղարվեստական արտահայտչությամբ փոքրասիական և Աքեմենյան Պարսկաստանի մշակույթների միաձուլումն են: Մ.թ.ա. II դարից սկսած՝ պատմական Հայաստանի տարածքով լայն տարածում են ստանում տորաձև խարիսխները (Արմավիր, Արտաշատ, Գառնի, Շիրակավան, Սպիտակ, Բենիամին, Կապս, Մոխրաբլուր և այլն): Այդ խարիսխների ձևը բնորոշ է արևելյան բոլոր երկրներին: Տորաձև խարիսխների ծագումը կազմավորող արևելյան օրդերի հիմքը, անկասկած, ասիական է, որի ակունքները ծագում են ասորական և վաղուրարտական ճարտարապետություններից:

Ուսումնասիրված և ամփոփված են մի շարք հայտնաբերված տորաձև խարիսխներ, ինչպես նաև իրականացված է դրանց գեղարվեստական արտահայտման ձևերի դասակարգումը: Խարիսխները կերտվում են տարբեր հանքաքարերից՝ տուֆ, բազալտ, սպիտակ կրաքար, մարմար, պորֆիրիտ: Խարիսխների վերին հարթության հենարանի տրամագծերը նույնպես տարբեր են՝ փայտի կամ քարի սյուների օգտագործմամբ պայմանավորված:

Միաժամանակ բազմազան տորաձև խարիսխների հետ հայտնաբերված են չորս խարիսխներ, այսպես կոչված, «ատտիկական հիմնախարիսխ», որոնք թվագրվում են մեր թվարկության առաջին դարերին (Գառնիի տաճար, Դվին, Արտաշատ): Այդ խարիսխներն իրենց տրամատներով (профиль) մոտենում են կլասիկ ատտիկական խարիսխներին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես տորաձև, այնպես էլ ատ-

տիկական խարիսխները ունեին իրենց տեղական նախատարբերակները, որոնց տրամասները հելլենիստական շրջանում ենթարկվել են փոփոխության՝ Հայաստանը շրջապատող երկրների մշակույթի ազդեցության և ներգործության տակ:

**Аминия КАНЕЦЯН РА**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)  
e-mail:amina-kanetsyan@mail.ru

## **БАЗЫ КОЛОНН ДРЕВНЕЙ АРМЕНИИ**

Одним из важнейших элементов конструкций здания являются стойки-опоры, часто поддерживающие перекрытие. Стойки-колонны в ряде сооружений, очевидно, из-за трудоемкости обработки камня делались из дерева. Для предохранения деревянных стоек-колонн от порчи, а также для создания сильного основания для передачи тяжести от стоек и перекрытий на грунт, они ставились не непосредственно на землю, а на каменные основания. Основания под стойками-колоннами были различны.

Проведен анализ развития форм баз. Беря свое начало с урартских баз под воздействием культуры окружающих Армению эллинистических стран, базы приобретают разнообразные формы. На территории современной Армении, в поселении Бениамин были обнаружены базы VI-V вв до н.э. персепольского типа, а в том же перестроенном сооружении в IV-III вв. до н.э. появляются базы прототоровидного типа, которые своей художественной выразительностью, являются слиянием культур Малой Азии и ахеменидского Ирана. Со II в. до н.э. на территории исторической Армении широкое распространение получила торовидная форма баз (Арташат, Армавир, Гарни, Ширакаван, Капис, Спитак, Бениамин, Мохраблур, Эчмиадзин и др.). Эта форма характерна для всех Восточных стран. Происхождение торовидных баз, составляющих основу восточного ордера, явно азиатское и своими истоками восходит к ассирийской и раннеурартской архитектуре. Исследован и обобщен ряд найденных торовидных баз и проведена их классификация по художественной выразительности форм. Высекались они из различных каменных пород – туфа, базальта, белого известняка, мрамора, порфирита. Диаметр опорной плоскости баз также различен в зависимости от употребления деревянных или каменных колонн.

Наряду с разнообразными торовидными базами обнаружены четыре базы, так называемые “аттические”, относящиеся к первым векам н.э. (Гарнийский храм, Двин, Арташат). Эти базы своей профилировкой приближаются к классическим аттическим базам. Исследование показало, что как торовидные, так и аттические базы имели свои местные прототипы. Их профилировка в эллинистический период подверглась изменению под воздействием культуры окружающих Армению стран.

**Aminia KANETSYAN (Armenia)**

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: amina-kanetsyan@mail.ru

## **BASES OF COLUMNS OF ANCIENT ARMENIA**

One of the most important elements of the building construction is the support pillars that often support the ceiling. Shafts of columns in a number of buildings were made of wood, evidently, because of the complexity of stone processing. To protect wooden columns from damage, as well as to create a strong foundation for transferring gravitation force from pillars and ceilings to the ground, the columns were not placed directly on the ground, but on stone bases. The bases under the pillars were different.

The analysis of the development of forms of bases was carried out. Taking its origin from the Urartian bases, the bases have taken on various forms under the influence of the culture of the Hellenistic countries surrounding Armenia. On the territory of modern Armenia, in the Benyamin settlement, the bases of the 6th-5th centuries BC, of the Persepolian type, were discovered. While bases of the toroidal prototype appear in the same reconstructed structure in the 4th-3rd centuries BC. By their artistic expressiveness, these bases are a symbiosis of the cultures of Asia Minor and Achaemenid Iran.

From the 2nd century BC in the territory of historical Armenia, the toroidal form of bases has become widespread (Artashat, Armavir, Garni, Shirakavan, Kaps, Spitak, Beniamin, Mohrablur, Echmiadzin, etc.). This form is typical for all Eastern countries. The origin of the toroidal bases that form the basis of the Eastern order is clearly Asian and goes back to Assyrian and Early Urartian architecture.

A number of found toroidal bases were investigated and summarized; the classification of these bases was carried out by their artistic expression of the forms. The bases were carved out of various stone rocks such as tuff, basalt, white limestone, marble, porphyrite. The diameter of the support plane of the bases is also different depending on the use of wooden or stone columns.

Along with a variety of toroidal bases, four bases, the so-called "Attic", dating back to the first centuries AD, were found (Garni temple, Dvin, Artashat). By their profiling, these bases approach the classical Attic bases. The study showed that both toroidal and attic bases had their local prototypes. Their profiling in the Hellenistic period underwent a change under the influence of the culture of the countries surrounding Armenia.

**Հայկ ՀԱՅԴՈՍՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

e-mail: haykhay11@gmail.com

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԻՆ ՊԱԼԵՈԼԻԹԻ ՈՉ ՕԲՍԵՐՎԱՆԱՅԻՆ  
ԱՐՏԱԴՐԱՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ**

Վերջին տարիներին Բորիս Գասպարյանի ղեկավարությամբ աշխատանքներ են տարվում Հայաստանի միջին պալեոլիթյան հնավայրերի հայտնաբերման և ուսումնասիրության ուղղությամբ (Գասպարյան և այլք, 2009, 41): Դրանց արդյունքում հայտնաբերվել են մի շարք բացօթյա, ինչպես նաև քարայրային կայաններ, որոնց շարքում են Հովք-1 կարատային քարայրը, Բագրատաշեն-1, Բառոժ-12, Նոր Գեղի-1, Աղավնատուն-1, Ալափարս-1 բացօթյա կայանները, Ապրանի գոգավորության բացօթյա հնավայրերը և այլն: Նշված հուշարձանների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս փուլաբաժանելու Հայաստանի միջին պալեոլիթը և ընդգրկելու դրանք երեք ժամանակագրական խմբերում՝ վաղ կամ անցումային միջին պալեոլիթ (Նոր Գեղի-1 բացօթյա կայան), միջին պալեոլիթ (Հովք-1 քարայր, 7-րդ շերտ, Ալափարս-1 բացօթյա կայան, 9-րդ շերտ) և ուշ միջին պալեոլիթ (Երևան-1, Լուսակերտ-1 և 2 քարայրներ, Հովք-1 քարայր, 5-6-րդ շերտեր, Աղավնատուն-1 բացօթյա կայան, 1-ին շերտ, Ալափարս-1 բացօթյա կայան, 2-րդ շերտ, Բառոժ-12, Կալավան-2, Անգեղակոթ-1, Բագրատաշեն-1 կայաններ) (Gasparyan et al., 2014 65-105): Թվարկած հուշարձանների հասակագրման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում Հայաստանի միջին պալեոլիթյան շրջափուլի համար բնորոշվել է հետևյալ ժամանակագրական միջակայքը՝ մեզանից մոտ 350.000 հազար տարուց մինչև 40/35.000 տարի, որը երկրաբանական սանդղակի համադրությամբ՝ համապատասխանում է միջինից վերին պլեստոցենի անցման եզրափակիչ փուլերին և վերին պլեյստոցենի գերակշիռ հատվածին (ռիսվյուրմյան միջառոցադաշտային և վյուրմյան սառցադաշտային ժամանակաշրջաններ), (Любин, 1971, 11; Gasparyan et al. 2014, 32):

Արդի պալեոլիթյան հնագիտության կարևորագույն խնդիրների շարքում է աշխատանքային գործիքներ պատրաստելու համար օգտագործված հումքի տեսակների, դրանց կիրառման նպատակահարմարության և տեղանքի հնամիջավայրի հետ համադրման հարցերի ուսումնասիրությունը: Համաձայն ձեռք բերած տվյալների՝ որոշակի տարածքում կենսագործունեություն ծավալող միջին պալեոլիթյան բնակչությունը ձգտել է օգտագործել գերազանցապես տեղում առկա հումքի աղբյուրները:

Հայաստանի տարածքի՝ վերը նշված միջին պալեոլիթյան մի շարք հնավայրերից (Երևան-1, Լուսակերտ-1 և 2 քարայրներ, Նոր-Գեղի-1, Անգեղակոթ-1, Բառոժ-12, Ալափարս-1 բացօթյա կայաններ) հայտնաբերված քարե առարկաների գերակշիռ մասը պատրաստված է վանակատե հումքից: Այլ տեսակի՝ ոչ վանակատե հումքատեսակներ

րից (կվարցիտ, բազալտ, դացիտ, կրաքար, կայծքար) պատրաստված առարկաները չնչին են (կազմում են արտադրահամալիրի 1-2%-ը): Հնավայրերի մի մասը ներկայանում է խառը հումքով արտադրահամալիրներով, որտեղ վանակատի հետ այլ հումքատեսակները հանդես են գալիս 70-30%, 60-40% կամ գրեթե 50-50% փոխհարաբերությամբ (Կալավան-2 բացօթյա կայան, Արարատ-1 քարայր): Առկա են նաև բացառապես ոչ վանակատե հումքի (դացիտի ու բազալտի) հենքի վրա ձևավորված քարե արտադրահամալիրներ, որտեղ վանակատը չնչին կիրառություն ունի կամ իսպառ բացակայում է: Նման հնավայրեր (Ադավնատուն-1, Բագրատաշեն-1 բացօթյա կայաններ, Լոռու և Շիրակի գոգավորության հնավայրեր) փաստագրվել են ինչպես Հայաստանի արևելյան, այնպես էլ հյուսիսային շրջաններում (Aslanian et al. 2006; Egeland et al. 2016, 1-20):

Ոչ բարձրորակ հումքատեսակների (կվարցացված ապարների, կրաքարի, բազալտի ու դացիտի ցածրորակ տեսակների) օգտագործումը՝ որպես արտադրահամալիրների կամ դրա մի մասի ձևավորման հենք, կարելի է բացատրել մի շարք գործոններով՝ կլիմայական աշխարհագրական-լանդշաֆտային և հասարակական-մշակութային: Նշված գործոնների վերլուծությունը սույն զեկուցման հիմնական նպատակն է: Այսուհանդերձ, արդի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի միջին պալեոլիթի բնակչությունը լիարժեք յուրացրել է ցածրորակ հումքատեսակներից «ցանկալի ձևերի և չափերի» առարկաների պատրաստման տեխնոլոգիական առանձնահատկությունները, իսկ անհրաժեշտության դեպքում հաղթահարել է տարածական ամեն մի խոչընդոտ և հեռավոր աղբյուրներից բնակչության հիմնական վայրեր բերել բարձրորակ վանակատ, կայծքար և այլ հումքատեսակներ:

**Айк АЙДОСЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)  
e-mail: haykhay11@gmail.com

## **НЕОБСИДИАНОВЫЕ СРЕДНЕПАЛЕОЛИТИЧЕСКИЕ КАМЕННЫЕ ИНДУСТРИИ АРМЕНИИ**

За последнее десятилетие изучение памятников среднего палеолита Армении зарегистрировал ощутимый прогресс. На основе изучения новоявленных памятников стало возможным разделить средний палеолит Армении на три хронологические группы: ранний или переходный средний палеолит (стоянка Нор Гехи-1), средний палеолит (пещера Овк-1, слой 7, стоянка Алапарс-1, слой 9) и поздний средний палеолит (пещеры Ереван-1, Лусакерт-1 и 2, Овк-1, слои 5-6, стоянки Ахавнатун-1, слой 1, Алапарс-1, слой 2, Барож-12, Калаван-2, Ангехакот-1, Баграташен-1), с временными рамками от 350.000 до 40/35.000 до наших дней.

Большинство предметов из этих раскопок изготовлены на основе высококачественного обсидианового сырья. Изделия, изготовленные из других пород камня (кварцит, ба-

зальт, дацит, известняк, кремь), незначительны (составляют 1-2 % всего материала). Между тем, существуют индустрии со смешанным использованием каменного сырья, где обсидиан, наряду с другими породами сырья, составляет количественное соотношение 70-30%, 60-40% или примерно 50-50% в коллекциях (стоянка Калаван-2, пещера Арарат-1). Существуют также памятники, каменные индустрии которых представлены исключительно необсидиановыми (дацит и базальт) разновидностями сырья, где обсидиан имеет очень ограниченное использование или совсем отсутствует. Такие памятники были обнаружены как в западной, так и в северных областях Армении (стоянки Ахавнатун-1, Баграташен-1, местонахождения Ширакской и Лорийской котловин).

Факт использования низкокачественного каменного сырья для оформления индустрии или ее части, такого как окварцованный известняк, известняк, кремнистые породы, некачественный базальт и дацит, можно объяснить разными факторами – климатическими, географическими-ландшафтными и социально-культурными. Их анализ и обсуждение лежит в основе данного доклада.

**Hayk HAYDOSYAN (Armenia)**

Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: haykhay11@gmail.com

## **NON-OBSIDIAN BASED MIDDLE PALEOLITHIC LITHIC INDUSTRIES OF ARMENIA**

During last decade study of the Middle Paleolithic sites in Armenia recorded a progress. Based on the newly discovered sites it was possible to place them into three chronological groups which are: early or Transitional Middle Paleolithic (Nor-Geghi-1), middle Middle Paleolithic (Hovk-1 cave, Unit-7, Alapars-1 open-air, Unit 9) and late Middle Paleolithic (Yerevan-1, Lusakert-1 and 2 caves, Hovk-1 cave, Units 5-6, Aghavnatun-1 open-air, Unit 1, Alapars-1 open-air, Unit 2, Barozh-12, Kalavan-2, Angeghakot-1, Bagratashen-1 open-air), with a chronological frame spanning between 350.000 - 40/35.000 years BP.

Lithic industries of the majority of those sites are based on high quality obsidian raw materials. Implements prepared from other types of rocks (quartz, basalt, dacite, limestone, flint) are rare (1-2 % of the whole finds). Meanwhile, there are industries with mixed raw material exploitation, where other types of rocks are present in parallel with obsidian by 70-30%, 60-40% or nearly 50-50% proportions (Kalavan-2 open-air, Ararat-1 cave). There are also sites where the lithic industries are represented only with non-obsidian (dacite and basalt) raw material exploitation, where obsidian has very limited use or is totally absent. Such sites have been recorded in eastern and northern parts of Armenia (Aghavnatun-1, Bagratashen-1 open-air, localities of the Lori and Shirak Depressions).

Exploitation of low quality raw materials, such as silicified limestone, limestone, chert, low quality basalt and dacite, for shaping the lithic industry or its part, can be explained by different factors – climatic, geographic-landscape and social-cultural. Their analyses and discussion is the aim of our report.



**Արսեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ.փոստ՝ ars.vimagraget@gmail.com

**ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԵՎԱՆԸ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Երևանի միջնադարյան պատմությունն ուսումնասիրելու համար, հայ մատենագրության մեջ ավանդված տեղեկություններից զատ, առաջնային սկզբնաղբյուրներ են նաև մեզ հասած վիմական արձանագրությունները, որոնք առավելապես պահպանվել են հոգևոր շինությունների որմերին, խաչքարերին ու տապանաքարերին: Միջնադարյան Երևանը, որը ձեռագրերի հիշատակարաններում հիմնականում գյուղաքաղաք, իսկ 15-րդ դարից՝ մայրաքաղաք է կոչվել, եկեղեցիներով հարուստ բնակավայր էր, որտեղ նաև ձեռագրեր են ընդօրինակվել:

Երևանի վիմագրական ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվել է հնագետ, վիմագրագետ Կարո Ղաֆադարյանը, որը 1975թ. հրատարակած իր մենագրության էջերում ընդգրկել է 293 արձանագրություն: Չնայած այս հանգամանքին՝ Երևանի պատմությունը, ըստ վիմական վկայագրերի, երբևէ հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել: Անշուշտ, վիմագրերը քաղաքի միջնադարյան պատմության, տեղի եկեղեցիների կառուցման ու նորոգման, նվիրատվությունների, հոգևոր ու մշակութային կյանքի լուռ վկաներն են: Վիմագրերի հիմամբ կարելի է փաստել, որ նախկինում երևանամերձ, բայց ներկայումս Երևանի կազմում ընդգրկված բնակավայրերի (Նորք, Ավան, Նորագավիթ, Քանաքեռ և այլն), ինչպես նաև բուն քաղաքի եկեղեցիները միջնադարի գրեթե բոլոր փուլերում գործել ու կարևոր դերակատարում են ունեցել: Չնայած 1679 թ. մեծ երկրաշարժի պատճառած ավերածություններին՝ 17-րդ դարավերջին քաղաքում և նրա արվարձաններում վերագարթոնք են ապրել եկեղեցաշինությունն ու մշակութային կյանքը:

Հարկ է նշել, որ միջնադարյան Երևանը՝ իբրև այգեվետ բնակավայր, քանիցս հիշատակված է հատկապես 13-րդ դ. նվիրատվական վիմագրերում՝ պահպանված Կեչառիսի, Հառիճի, Հաղարծնի, Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենցի), Երևանի Կաթողիկե և այլ վանքերի ու եկեղեցիների որմերին: Պատարագներ ստանալու ակնկալիքով նվիրատուները Երևանում գտնվող այգին կամ այգուց մի մաս են հատկացրել տվյալ հոգևոր կենտրոնին, որի հիմամբ արձանագրություն է կազմվել. օրինակ՝ ոմն Վարդմբել 1204 թ. Երևանի Մեղիտոնի կոչվող այգու մեկ քառորդը գնել և նվիրաբերել է Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, որի դիմաց երկու պատարագ է ստացել: Նույն վանքի Ս. Նշան եկեղեցու մուտքի բարավորի ժամանակամերձ մեկ այլ վիմագրի համաձայն՝ պարոն Վարդը Երևանի իր Չմշկա կոչվող սեփական այգին նվիրաբերում է Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, որի դիմաց Հայր Պետրոսն ութ պատարագ է սահմանում՝ չորսը՝ Վարդին, չորսը՝ Անիարին:

**Арсен АРУТЮНЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА

e-mail: ars.vimagraget@gmail.com

**СРЕДНЕВЕКОВЫЙ ЕРЕВАН В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ**

Для изучения средневековой истории Еревана кроме сведений, переданных в сочинениях летописцев, важными первоисточниками являются также дошедшие до нас эпиграфические надписи, сохранившиеся большей частью на стенах церквей, хачкарах (крест-камнях) и надгробиях. Средневековый Ереван, фигурирующий в рукописных памятных записях в основном как сельская местность, а с XV века – столица, был населенной местностью, богатой церквями, в которых, помимо прочего, копировались рукописи.

Изучением эпиграфического наследия Еревана занимался археолог, знаток эпиграфики Каро Кафадарян, представивший 293 эпиграфические надписи на страницах опубликованной им в 1975 году монографии. Несмотря на это обстоятельство, история Еревана по эпиграфическим свидетельствам никогда не становилась объектом специального исследования. Вне сомнения, памятные надписи являются немymi свидетелями средневековой истории города, строительства и реконструкции его церквей, пожертвований, духовной и культурной жизни. Основываясь на памятных надписях можно констатировать, что церкви населенных пунктов, находящихся некогда поблизости от Еревана, а ныне – вошедших в черту города (Норк, Аван, Норагавит, Канакер и пр.), так же, как и церкви центральной части Еревана, почти во все периоды средневековья были действующими и играли важную роль. Несмотря на большие разрушения, причиненные землетрясением 1679 года, в конце XVII века церковное строительство и культурная жизнь в городе и его окрестностях пережили пору своего возрождения.

Необходимо отметить, что средневековый Ереван, как богатая садами местность, не раз упоминается в особенности в посвященных надписях XIII века, сохранившихся в монастырях Кечарис, Арич, Агарцин, церкви Св. Григория Просветителя (Тиграна Оненца) в Ани, Катогике Еревана и на стенах других монастырей и церквей. Дарители, надеясь удостоиться литургии, предоставляли в дар находящийся в Ереване сад или часть сада определенному духовному центру, о чем составлялась памятная надпись. Так, например, некий Вардмбел в 1204 году приобрел четверть находящегося в Ереване сада, называемого Мегитони, и передал его в дар церкви Св. Григория Просветителя в монастыре Кечарис. В ответ на это было отслужено две литургии в его честь. Согласно другой памятной надписи, сделанной в период сооружения притолоки церкви Сурб Ншан (Св. Знамения) того же монастыря, парон (господин) Вард пожертвовал свой собственный сад в Ереване, называемый Чмшка, церкви Св. Григория Просветителя в Кечарисе, в ответ на что отец Петрос назначил восемь обеден – четыре в честь Варда и четыре в честь Аниара.

**Arsen HARUTYUNYAN (Armenia)**

Institute of Archaeology and Ethnography NAS RA

e-mail: ars.vimagraget@gmail.com

## **THE MEDIEVAL YEREVAN IN EPIGRAPHIC INSCRIPTIONS**

For studying the history of medieval Yerevan (besides literature information) there are also important sources of epigraphic inscriptions preserved and are mostly kept on the walls of the spiritual buildings, cross-stones (khachkar) and tombstones. According to the colophons of the manuscripts, medieval Yerevan, being a settlement, has been called a capital, since 15<sup>th</sup> century. It was a rich settlement with churches where manuscripts were copied.

Archaeologist, epigraphist Karo Ghafadaryan had been studying the epigraphical heritage of Yerevan and later in 1975 published 293 inscriptions on the pages of his monograph. Despite of that fact according to the epigraphs the history of Yerevan has never been specially investigated.

Surely epigraphic inscriptions are silent witnesses in the medieval history of the city, structural, renovational works of churches, donations, spiritual and cultural life. Based on epigraphs it can be stated that the churches previously located on the outskirts of Yerevan are currently included in the city (Nork, Avan, Noragavit, Kanaker, etc.). In addition, the town churches were also acting and played an important role during all medieval periods. Despite the damage caused by the earthquake in 1679, church building and cultural life have revived in the city and its surroundings since the end of 17<sup>th</sup> century.

It should be noted that medieval Yerevan being a fertile garden is mentioned especially in dedicational inscriptions of the 13<sup>th</sup> century, which are kept on the walls of the monasteries and churches of Kecharis, Harich, Haghartsin, St. Gregory Illuminator of Ani (Tigran Honents), Katoghike of Yerevan etc. Expecting to receive liturgy the benefactors donated the garden located in Yerevan or some part of it to the spiritual center. Based on this a long inscription has been engraved. For example, some man named Vardmbel bought a quarter of Meghitoni garden in Yerevan and donated it to the St. Gregory Illuminator church of Kecharis monastery in 1204. In return there were held two liturgies. According to another inscription engraved on the top of the entrance to St. Nshan church of the same monastery, Mr. Vard donated his own Chmshka garden in Yerevan to the church of St. Gregory Illuminator and so father Peter held eight liturgies, four of them to Vard and four to Aniar.

**Հասմիկ ՀՄԱՅԱԿՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ (Երևան)

Էլ.փոստ՝ hhmayakyan@yahoo.com

**ԵՂՋԵՐՈՒՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ԿԱՊԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ՓՈՔՐ ԱՍԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ (Ք.ա. III – I հազ.)**

Եղջերուների պաշտամունքը հնագույն արմատներ ունի թե՛ Փոքր Ասիայում, թե՛ Հայկական բարձրավանդակում: Փոքր Ասիայից հայտնաբերված հնագիտական նյութերը վկայում են եղջերուի պաշտամունքի հնագույն ավանդույթներ՝ Ք.ա. III հազարամյակից սկսած: Իսկ խեթական սեպագիր աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ տեքստեր, հիմնականում ծիսական բովանդակությամբ կամ ծիսական արարողությունների ու տոների նկարագրություններ, որոնցում խոսվում է, օրինակ, տաճարներին եղջերուներ նվիրաբերելու մասին: Խեթական Հին թագավորության շրջանի տեքստերում եղջերուների պաշտամունքին առնչվող աստվածները հանդես են գալիս հետևյալ անվանումներով՝ Լուլլայամա, Կուռունտա կամ Ռունտա: Հնագիտական նյութերում հանդիպում են եղջերուի հետ կամ նրա վրա կանգնած աստվածների պատկերումներ, որոնք հնագույն փոքրասիական ավանդույթ են, և նման պատկերումներ հանդիպում են դեռևս հին կապադովկիական կնիքների վրա:

Եղջերուների պաշտամունքը վկայված է նաև Հայկական լեռնաշխարհում հնուց ի վեր՝ սկսած II հազ. և ավելի վաղ: Նման պատկերումներ առկա են բրոնզե գոտիների, ծիսական անոթների վրա, գտնվել են եղջերուների արձանիկներ, բազմաթիվ եղջերուների պատկերումներ կան նաև ժայռապատկերներում:

Հետաքրքրական է, որ թե՛ փոքրասիական հնագիտական նյութերը, խեթական սեպագիր տեքստերը, թե՛ Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված նյութերը ի ցույց են դնում եղջերուների պաշտամունքի կապը Արևի կամ Արևի աստծո պաշտամունքի հետ: Մեր զեկուցման ընթացքում համեմատական սկզբունքով կփորձենք բացահայտել, թե ինչպիսի պատկերացումային ընդհանրություններ կան այս առումով: Մասնավորապես, խեթական սեպագիր աղբյուրներում պահպանված նյութերը վկայում են, որ Արևի աստծո տաճարներին նվիրաբերում էին եղջերուներ, օրինակ՝ «Նունտ խարսիա» տոնի ժամանակ, մեկ այլ տեքստում վկայված է եղջերուներ պահելու մասին Արևի աստծո տաճարում: Հետաքրքրական է, որ խեթական արքան Արևի աստծուն նվիրված ծիսակարգի ժամանակ վերջինիս պատվին հեղում է կատարում եղջերուի պրոտոմով գավաթից և այլն:

Հայաստանյան նյութում եղջերուի և արևի կապը դիտարկելի է, օրինակ, Իջևանի շրջանի Ենոքավան գյուղի դամբարաններից մեկում գտնված բրոնզե գոտու վրայի պատկերներից, որ հրատարակել է Ս. Եսայանը: Նմանատիպ բովանդակությամբ մեկ այլ գոտի է գտնվել Լճաշենից, որ թվագրվում է Ք.ա. XII-XI դարերով: Բազմաթիվ են եղ-

ջերուների պատկերումները ժայռապատկերներում, որոնցում ևս դրսևորվում է եղջերուի և արևի պաշտամունքի կապը: Ջեկուցման մեջ կքննարկենք տարբեր ժայռապատկերներ, որոնց սյուժեների՝ մեր և այլ մասնագետների կողմից առաջադրված մեկնաբանությունները ակներև ընդհանրություն են հանդես բերում խեթական սեպագիր տեքստերում առկա եղջերուների և արևի պաշտամունքի կապի հետ: Կքննարկենք նաև II-I հազ. վերաբերող, Շիրակից, Դվինից և այլ վայրերից պեղված կավե սափորների և կարասների վրա առկա պատկերները, Շենգավիթից գտնված եղջերանման և արևի պաշտամունքին նվիրված օջախը և այլն, որոնք ևս վկայում են եղջերուի և արևի պաշտամունքի առնչությունների մասին:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ թե՛ Փոքր Ասիայում բնակվող խաթական և խեթալուվիական ժողովուրդներին, թե՛ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչներին բնորոշ էին եղջերուների պաշտամունքը և նրա կապը Արևի պաշտամունքի հետ, և այս պատկերացումային ընդհանրությունները կարող են վկայել նրանց փոխադարձ շփումների և փոխազդեցությունների մասին, որոնք իրենց արտացոլումն են գտել ու ենթաշերտային կերպով պահպանվել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգության մեջ:

**Асмик АМАЯКЯН (Армения)**

Институт востоковедения РАН РА(Ереван)

e-mail: hhmayakyan@yahoo.com

## **СВЯЗЬ КУЛЬТА ОЛЕНЯ И СОЛНЦА НА ТЕРРИТОРИИ АРМЕНИИ И МАЛОЙ АЗИИ (III – I ТЫС ДО Н.Э.)**

Культ оленя имеет древнейшие корни как в Малой Азии, так и на Армянском нагорье. Археологические артефакты, найденные в Малой Азии свидетельствуют о существовании древнейшей традиции культа оленя начиная уже с III тысячелетия до н.э. А в хеттских клинописных источниках сохранились многочисленные тексты ритуального содержания, описывающие разные ритуалы и праздники, или рассказывающие, например, о подношениях оленей храмам. В текстах, относящихся к периоду Древнехеттского царства, божества, связанные с культом оленей, выступали под именами Луллаяама, Курунта или Рунта. В археологических материалах встречаются изображения божеств с оленями или стоящих на оленях, что является древней малоазийской традицией; подобные изображения уже встречаются на древних каппадокийских печатях.

Культ оленя освидетельствован также на Армянском нагорье с древнейших времен, начиная с II тысячелетия и ранее. Подобные изображения встречаются на бронзовых поясах, ритуальных сосудах; также были найдены фигурки оленей, многочисленные наскальные изображения оленей.

Интересно, что как археологические материалы, найденные из Малой Азии, хеттские клинописные тексты, так и артефакты, найденные на Армянском нагорье, обнаруживают

связь культа оленя с почитанием Бога солнца. В нашем докладе мы попытаемся сравнительным методом выявить общность вышеупомянутых представлений. В частности, хеттские тексты свидетельствуют, что храму Солнца подносились олени, как например, во время праздника Нунт харсийа, в другом же тексте говорится о том, что при храме Солнца держали оленей. Примечательно, что хеттский царь во время ритуального обряда, посвященному богу солнца, совершал возлияние в честь последнего из кубка-протома с головой оленя.

В материалах Армянского нагорья связь солнца и оленя обнаруживается, например, на бронзовом поясе, раскопанном из гробниц села Енокаван Иджеванского района, опубликованном С.Есяном. Другой пояс, датируемый XII-XI веками до н.э. со схожим изображением был найден из Лчашена. Есть также много наскальных изображений оленей, которые выявляют связь оленя с культом солнца. В докладе будут также обсуждаться различные наскальные изображения, сюжетные интерпретации которых, сделанные нами и другими исследователями, выявляют явные сходства между хеттскими представлениями о связи оленей и культом солнца. Мы также рассмотрим изображения оленей, на глиняных сосудах и карасах, найденных из Ширака, Двина и других мест, относящихся к II-I тысячелетию, а также очаг в форме оленьих рогов из Шенгавита, посвященный культу солнца, которые также свидетельствуют о связи оленя с культом солнца.

Обобщив, можно сказать, что вышеуказанные факты свидетельствуют о взаимных связях между хеттами и жителями Армянского нагорья, которые сохранились на субстратном уровне в культуре и духовном наследии армянского народа.

**Hasmik HMAYAKYAN (Armenia)**

Institute of Oriental Studies NAS RA (Yerevan)

e-mail: hhmayakyan@yahoo.com

## **CONNECTION OF DEER AND THE SUN CULT IN CULTURES OF ARMENIA AND ASIA MINOR (III- I MILLENIA BC)**

The roots of deer cult can be traced back to very ancient times in both Asia Minor and the Armenian Highlands. Archaeological artifacts excavated in Asia Minor can serve as evidence for ancient traditions starting from III millennium BC. Simultaneously the Hittite sources have preserved various texts mainly narrating about rites or describing ceremonies or celebrations and tell about giving deers to temples as gift. In texts relating to the Hittite Old Kingdom, the deities associated with the deer cult are Lullayama, Kurunta or Runta. The archaeological materials also show depictions of these deities with deers or deities standing on them which was an ancient tradition in Asia Minor and similar pictures are already met on ancient Cappadocian seals.

The deer cult has been attested in the Armenian Highlands from times immemorial starting from II millennium BC and even earlier. Similar depictions can be found on bronze belts, ritual vessels as well as sculpturines of deers and rock painting.

It's interesting that the archaeological stuff found from Asia Minor, the Hittite cuneiform texts as well as the objects found from the Armenian Highlands demonstrate the connection with

the sun and the sun cult. The author will attempt in comparative way to reveal the existing common perceptions in this regard. Particularly, the Hittite cuneiform texts witness that deers have been donated to the temples of the sun god, e.g. during Nunt Harsia celebration, another source narrates about keeping deer in the temple of the sun god. It's also noteworthy that the Hittite king has been conducting pouring during the rite devoted to the sun god using a cup with deer protoma.

On the Armenian artifacts, the connection of deer and the sun is also visible. e.g. on depictions of bronze belt excavated from tombs in village of Yenokavan (Ijevan region of Armenia) published by S. Yesayan. Another belt with similar image was excavated from Lchashen dating to XII-XI CC BC. There are a lot of pictures of deers in rock paintings which unveil the connection between the deer and the sun cult. The author also will discuss various rock paintings, her and others' commentaries on motifs showing relation between deers of the Hittite cuneiform texts and the sun cult. The thesis also to discuss images on *karases* - clay large jars (II-I millennium) excavated from Shirak, Dvin and other locations, the hearth in the form of deer horns dedicated to the sun cult found in Shengavit. All this witness about association of deer and the sun cult.

The relationship between the people of Khotorjour and their Muslim neighbors has always been good-neighborly. The Armenians of Khotorjour supported Muslims in every possible way - they built the only Muslim school in the center of Kiskim district - Arsis, and provided Arsis with drinking water. Even the military neighbors of Khotorjour –The Lazes, were in active economic relations with Khotorjour. In particular, the Lazes ensured the safety of the Armenians on the way to the Black Sea coast, for which they were generously awarded.

However, the administration of the Erzurum vilayet did not like the friendship between Khotorjour and its neighbors, and therefore the activity of the robber groups began to be encouraged. The situation was complicated in the 1870s. With the consent of the governor of Erzurum, a famous criminal Sharifogli Hussein Bey was thrown against Khotorjour, who terrorized not only the Armenians, but also the population of the whole Kiskim district. The Khotorjourians could not in any legally way succeed in the liquidating the Hussein Bey gang. Even after he was arrested and convicted, the Armenian population did not feel any better, since he



and his accomplices managed to escape and again get engaged in robbery. Having exhausted all legal ways, Khotorjourian Metsavor bribed one of the closest associates of Hussein Bey - Cherkez Onbashi, who cut off the head of Hussein Bey and gaved it to Metsavor.

In the 1880s Hussein Bey's assistant Tuylogli Dursun Bey was sent by the Governor of Erzurum against Khotorjour. He found a new way of plundering Armenians, ompeling them to buy smuggled goods. In 1886, Dursun Bek demanded that Hotorjur should be recognized as the ruler of the community.

However, Armenians make a decision for resisting. Dursun Bey decides to take hostages the members of the family of Metsavor, in order to have an advantage in negotiations with the Armenians. However, his plan fails. On the way to Metsavor's house, he stumbles upon a member of the Khotorjour self-defense - Kerob Voskanyan, who shoots Dursun Bey, after which he dies in an unequal battle. The grouping of Dursun Bey, having lost his leader, leaves Khotorjour alone.

The governor of Erzurum appeals to the assistant of Dursun bey, Abdulla Mamushogli, to head the group of Dursun bey against Khotorjour, but Mamushogli refuses. In the place of this, he establishes friendly relations with the Armenians, in every possible way supports them with his team composed of Laz. During the massacre of Armenians in 1895-1896, Mamushogli, together with Kopalogly from Hamshen had protected Khotorjour from Turkish gangs, which were concentrated in the neighboring Ispir and were preparing to invade Khotorjour.

**Հասմիկ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան)

Էլ.փոստ՝ amirjanyan.hasmik@rambler.ru

## **ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ԱՐԴՈՒԹՅԱՆԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Հայ Առաքելական եկեղեցու ռուսահայ թեմի աթոռակալ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին (1779-1801) է առնչվում թեմի հոգևոր-կառավարչական տարբեր խնդիրների լուծումը:

Նպաստելով 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսների կողմից Դրիմի և Մոլդավայի հայերի բռնագաղթի հետևանքով Նոր Նախիջևան և Գիգորիոպոլ հայաբնակ քաղաքների ու շրջակայքի գյուղերի ձևավորմանը՝ արքեպիսկոպոսը մեծ ուշադրություն է դարձնում նորահաստատ, ինչպես նաև մինչ այդ գոյություն ունեցող հայաբնակ բնակավայրերում հայկական հավատի ու դավանանքի պահպանման հարցերին:

Թեմի հոգևոր կյանքը վարչական ամուր հիմքի վրա դնելու հրամայականը բխում էր առաջին հերթին ուղղադավանության, կաթոլիկության, տարբեր աղանդների, առհասարակ դավանափոխության դեմ պայքարի անհրաժեշտությունից: Օտար միջավայրում գտնվող հայ բնակչության կյանքում դավանաբանական շեղումներն անխուսափելիորեն տանում էին դեպի բնակչության ուժացման ու ռուսացման:

Տեղի հայերը, հատկապես սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների հետևանքով, փոխում էին դավանանքը: Հայ բնակչությունը խնդրագրերով բազմիցս դիմում է Հ. Արղությանին՝ լուծելու նմանօրինակ հարցերը: Վշտացած արքեպիսկոպոսը համեմատություն է անցկացնում արևմտահայերի ու ռուսահայերի միջև, ցավով արձանագրում, որ եթե թուրքերի բռնության ներքո հայ երեխաները հավատափոխ են լինում, ապա Ռուսաստան եկած հայերը նույն վերաբերմունքին են արժանանում քրիստոնյաների կողմից:

Հավատափոխության դեպքերը կանխելու համար արքեպիսկոպոսը դիմումներ է հղում ռուս հոգևոր գործիչներին, դատական Սինոդի անդամներին, քաղաքական այլ գործիչների՝ մասնավորապես նշելով, որ ռուս քահանաներն իրավունք չունեն հատկապես անչափահաս երեխաներին ուղղափառ մկրտելու: Տեղի հայ հոգևորականներից պահանջում է նմանօրինակ դեպքերում անմիջապես դիմումներ հղել ուր հարկն է:

Քիչ չէին դեպքերը, երբ ռուսանում էին հայ եկեղեցականները: Արղությանն ամեն գնով նրանց դարձի էր բերում հայ եկեղեցու գիրկը՝ նախևառաջ դավանափոխներին՝ հնարավորություն տալով ինքնակամ զոջալու և ներում հայցելու, չզոջալու դեպքում՝ կալանքի տակ պահելով կարգազանց անել՝ եկեղեցական կոչումն իջեցնել կամ կոչումազրկել: Իսկ ռուսացած հայ երիտասարդներին առաջին հերթին խրատում էր խոսքով:

Հայոց դավանանքի նկատմամբ ոսնձգության օրինակ էր Մոզդոկի հայկական Ս.Ստեփանոս եկեղեցու շուրջ բորբոքված վեճը: 1781 թ. հոկտեմբերի 9-ին Մոզդոկի հայերը գրությամբ դիմում են արքեպիսկոպոսին՝ ներկայացնելով եկեղեցու երեցփոխ Գեորգիի և նրա մարդկանց «տգեղ արարմեանց» մասին, որոնք սեփական քահանայություն էին հիմնել, Վրաստանից քահանա հրավիրել, իսկ հայ բնակչությունից ու հոգևորականներից պահանջել եկեղեցին ազատել:

Զայրացած արքեպիսկոպոսն անմիջապես հարցում է անում հայ հոգևորականությանը, թե ինչու են նրանք եկեղեցին լքել առանց Սուրբ Սինոդի կամ նահանգապետի հրահանգի, այլ ըստ «մէկ չիք մուժիկի»<sup>1</sup> հրամանով: Ի վերջո երկարատև պայքարից հետո հաջողվում է եկեղեցին վերադարձնել հայոց դավանանքի գիրկը:

Հայոց դավանանքի պահպանման ու ամրապնդման ճանապարհին արքեպիսկոպոսն ստիպված էր գաղափարական պայքար մղել թե՛ ռուսական եկեղեցու ու նրանց հետևորդների, թե՛ Ռուսաստանում առկա այլ դավանանքի եկեղեցիների դեմ: Արղությանի առջև լուրջ մարտահրավեր էր նաև Եվրոպայից եկող կաթոլիկության և աղանդների վտանգը:

<sup>1</sup> Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4496, թ. 16:

**Асмик АМИРДЖАНЫН(Армения)**

Институт истории НАН РА (Ереван)

e-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

## **ВОПРОСЫ ВЕРООТСТУПНИЧЕСТВА В ДЕЯТЕЛЬНОСТИ ОВСЕПА АРХИЕПИСКОПА АРГУТЯНА**

Статья посвящена экуменическим взглядам видного религиозного деятеля, епархиального предстоятеля армянской церкви в России - Иосифа Аргутяна.

Архиепископ (1779-1801) играл важную роль в основании городов Новый Нахичевань и Григориополь, а также в деле организации переселения армян в России в конце XVIII в. Его усилиями были установлены права и обязанности духовной власти Новой Нахичевани, Астрахани и т. д., в том числе урегулированы вопросы становления института семьи и наследия.

В статье, в частности, рассматриваются подходы и взгляды архиепископа к примирению в христологическом споре. Несмотря на многовековую связь Русской православной и Армянской апостольской церковей, русская церковь использовала любую возможность для вероотступничества, пользуясь тяжелым социальным положением народа и обещая им безбедное существование. С этой целью русское духовенство использовало молодежь.

В концепции вероотступничества Иосиф Аргутян выделяет роль традиционной веры, как ценность семейно-культурной среды, и его роль в жизни местного армянского населения. Особое внимание он обращает на единство церкви, на правомочия армянской епархии.

Благодаря его деятельности армяне сохранили свою веру. Его усилиями были установлены права и обязанности духовной власти армянской диаспоры, урегулированы духовные дела епархии.

**Hasmik AMIRJANYAN (Armenia)**

Institute of History NAS RA (Yerevan)

e-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

## **ECUMENICAL ACTIVITY OF ARCHBISHOP HOVSEP ARGHUTYAN**

The paper presents the ecumenical views of the prominent religions figure, the leader of Armenian eparchy in Russia Archbishop Hovsep Arghutyan.

Hovsep Arghutyan (1779-1801) was the founder of New Nakhichevan, Grigoriopol and resettled Armenians in these new cities in the last quarter of the XVIII centuries. One of the main activities of Hovsep Arghutyan was the improving in the religious-administrative regulations of New Nakhichevan, Astraghan, etc. and the development for the Familie Institution.

Here, in particular, the Archbishops' and approaches concerning the issue of reconciliation in Christological disputes are examined. In spite of the close relationship between the Russian Orthodox and Armenian Churches, the Russian church used any opportunity to impose apostasy

on Armenians taking advantage of their hard social conditions and promising them a prosperous life. The Russian clergy also had the support of the youth.

In his concept of apostasy issues, Hovsep Arghutyan paid special attention to the influence of tradition and beliefs on the formation of personality and preservation of family traditions for Armenian diaspora. One of the main activities of Hovsep Arghutyan was the improvements in unit of Armenian Church, and in the diocesan legacy of Armenian eparchy.

He played significant role in the organization of the spiritual life of Armenian diaspora, of the propagation of the Armenian Belief.

### Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)  
Էլ. փոստ՝ ayg.84@mail.ru

### Յ.Վ.ԳՅՈԹԵՒ «ՖԱՈՒՍ»-Ի ԲԵՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

XIX դարի կեսերի արևելահայ թատրոնի խաղացանկը կազմված էր կրթադաստիարակչական հնացած մեթոդներն ու ձևերը, հասարակական վատ սովորույթները վերացնելու դիտավորությամբ: Սկզբնական մտահղացմամբ այն պետք է զարգացներ քաղաքացիների բարերարության ջիղը, ճիշտ կազմակերպեր նրանց ժամանցը և սերմաներ հայրենասիրություն: Նույն խնդիրներն էր լուծում նաև Ալեքսանդրապոլի թատրոնը, երբ 1865-1876թթ. բեմադրում էր Հ. Կարենյանի («Շուշանիկ», «Վարդանանց պատերազմ» կամ «Վարդան Մամիկոնյան»<sup>1</sup>), Մ. Տեր-Գրիգորյանցի («Վոյքի իմ վեջեր», «Էս էլ քի մօցիքլոթին»), Մ. Պատկանյանցի («Շկոլի վարժապետ»), Ս. Հեքիմյանի («Մամել»), Մ. Պեշիկթաշյանի («Արշակ Երկրորդ», «Երեք քաջեր»), Թ. Թերզյանի («Սանդուխտ»), Թ. Ֆասուլաճյանի («Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք» կամ «Երկու քաղցածներ»), Հ. Տեր-Աբրահամյանի («Ժլատ»), Հ. Մուշեղյանի («Մարդ իմանա աս տեղ փրչուվուդ ալ կբսնի»<sup>2</sup>), Հ. Խոջայանի («Արիություն») և Կ. Ջալալյանի («Թատրոնաշեն») ստեղծագործությունները:

Հայ ազատագրական պայքարը գովերգող քնարը 1860-1870-ական թվականներին շարունակում էր հնչել թատերական ներկայացումներում: Ալեքսանդրապոլում թատերական գործի սկզբնավորողները<sup>2</sup> ևս դրանով սպասարկում էին Հայաստանի շա-

<sup>1</sup> Պիեսը հայտնի է նաև «Հազկերտ և քրիստոնեություն» անունով:

<sup>2</sup> Հոգևոր դպրոցի ուսուցիչներ և աշակերտներ, Ալեքսանդրապոլում ծառայող սպաներ և պետական պաշտոնյաներ, հոգևորականներ, աշխույժ և հետաքրքրասեր երիտասարդներ:

հր: 1865թ. մայիսի 23-ին՝ «Շուշանիկ»<sup>1</sup> ներկայացման ժամանակ, նրանք բեմում կախել էին հայ ազատագրական շարժման խորհրդանիշ «Ոգի Հայաստանի» պատկեր-վարագույրը:<sup>2</sup> Պոլսաբնակ վիմագիր Ճ.Արամյանի հեղինակային և պաշտոնաթող սպա Մ. Կեստների վրձնին պատկանող նկարը ֆաուստյան բարձրագույն Ոգին էր ազգային ընկալմամբ:

Նոր զգացողությունների, ազատության ծարավ դոկտոր Ֆաուստի թեման արծարծեցին, գերմանական նոր քնարերգությանը տուրք տվեցին արևելագիտության պատանի թատերասերներ և ազատագրական պայքարի գաղափարախոսներ Ալեքսանդր Մանուկյանցը և Արսեն Կրիստյանցը՝ 1868թ.<sup>3</sup> կամ 1869թ. բեմադրելով գրող և պետական այր Յ.Վ.Գյոթեի «Ֆաուստ» ողբերգությունը:

XIX դարի ընթացքում Ալեքսանդրապոլում առաջին և վերջին անգամ «Ֆաուստ»-ի բեմադրության մասին եղած տեղեկություններից մենք հիմք ենք ընդունում բժիշկ, ժամանակի մշակութային գործիչ Գ.Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերունի) հիշողությունները:<sup>4</sup>

Սկզբնաղբյուրի համաձայն՝ նշանավոր երկը տեղական պայմաններին հարմարեցրել էր Ալեքսանդր Մանուկյանցը: Նա պիեսի ազատ փոխադրության ձեռագիրը ներկայացնում է Ալեքսանդրապոլի գավառապետ Ի. Աբամելիքյանցին,<sup>5</sup> իսկ վերջինս այն վերաքննելու նպատակով հանձնում է գավառական ոստիկանական վարչության աշխատակից (պրիստավ) Մնացական Նավասարդյանին: Նավասարդյանը ձեռագրից հանում է գրող Ռաֆայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը՝<sup>6</sup> այն որակելով «շատ զարհուրելի բան»,<sup>7</sup> ապա թույլատրում պիեսը ներկայացնել հանդիսատեսին: Պետական պաշտոնյաների այդ «աչալրջությունը» երևի պայմանավորված էր այն հանգամանքով, որ Նիկոլայ I-ի օրոք (1825-1855թթ.) «Ֆաուստ»-ը եղել էր գրաքն-

<sup>1</sup> Շուշանիկ: Դուստր Մեծին Վարդանայ հայոց սպարապետի: Ողբերգութիւն Ազգային պատմութիւնից: Գործ Յակովբայ Կարենեանց, Թիֆլիզ, 1860:

<sup>2</sup> Քոչարեանց Մ., Հայկական թատրոն Ալեքսանդրոպոլում, «Հայկական աշխարհի կոունկ», Թիֆլիս, 1865, №5 մարտ եւ №6 ապրիլ, էջ 183: Պատկերը 1870-ական թթ. հայտնի էր «Հրեշտակ Հայաստանի» անունով: Տե՛ս նոր երգարան կամ Քնար Հայաստանի, Կ.Պոլիս, 1872, էջ 172:

<sup>3</sup> Ըստ արվեստագիտության դոկտոր Բաբկեն Հարությունյանի՝ 1868թ. նոյեմբերի 30-ին: Տե՛ս Հարությունյան Բ., XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն, հատոր առաջին (1801-1900), Եր., 1980, էջ 84: Նույն տեսակետին է հակված նաև պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանը: Տե՛ս Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն, XIXդ. Եր., 2010, էջ 478:

<sup>4</sup> Քաջբերունի, Հայկական ներկայացումներ Ալեքսանդրապոլում (Յիշողութիւններ), «Արձագանք», Թիֆլիս, 1892, №54, ուրբայթ, մայիսի 8 (20), էջ 2:

<sup>5</sup> Իշխան, մայրո Իսահակ Աբելի Աբամելիքով (1814-1874թթ.): Ամուսնացած էր Միխայիլ Ս.Լոռի-Մելիքովի քրոջ՝ ազնվական հայուհի Սալոմե Ս.Լոռի-Մելիքովի հետ: Ալեքսանդրապոլի գավառապետի պաշտոնը (1868-1869թթ.) ստանձնելուց առաջ եղել է Երևանի նահանգի Նախիջևանի (1863թ.) և Նոր-Բայազետի (1864-1866թթ.) գավառների գավառապետ:

<sup>6</sup> Ազգային երգարան: Աշխատասիրեաց Գամառ-Քաթիպա, Ս.Պետերբուրգ, 1857, էջ 98-102:

<sup>7</sup> Քաջբերունի, նշվ. աշխ., էջ 2:

նության կողմից արգելված ստեղծագործություն, իսկ հետագայում ընդունվել մեծ վերապահումներով:<sup>1</sup>

Ալեքսանդրապոլում «Ֆաուստ»-ը բեմադրվում է, ինչպես նշվեց, 1868թ. կամ 1869թ.<sup>2</sup> Գր. Տեր-Անտոնյանցի հյուրանոցում: Ներկայացումը ունեցել է «ընտանեկան բնատրոբին»: Ֆաուստի դերակատարը Ա.Մանուկյանցն էր, իսկ Ա.Կրիտյանցը կատարում էր Մարգարիտի (Գրետխենի) եղբոր՝ Վալենտինի դերը: Արվեստաբան Հ.Հովհաննիսյանը, սկզբնաղբյուրը չնշելով, գրում է, որ Ա.Կրիտյանցը կատարել է Ֆաուստի աշակերտ Վազների դերը, որը այդպես չէ:<sup>3</sup> Ինչպես հաղորդում է Գ.Տեր-Հովհաննիսյանը, Ֆաուստի հետ մենամարտի տեսարանի ժամանակ<sup>4</sup> Վալենտինի դերակատար Ա.Կրիտյանցը կոտրում է Մ.Նավասարդյանի թրի պատյանը: Պատանին «սրտաճագ լինելով Նաւասարդեանի ահից, թողեց բեմը և աներևութացաւ»՝ ներկայացումը թողնելով կիսատ: Գ. Տեր-Հովհաննիսյանը սարկագմով ավարտում է. «Եւ այդքան հանդիսականների մէջ չգտնուեց մի արդար մարդ, որ վճարէր Նաւասարդեանին կոտրած պատեանի գինը»:<sup>5</sup>

Իր ստեղծագործությամբ Նոր ժամանակը խորհրդանշող, ազատության երգիչ Յ.Վ.Գյոթեի «Ֆաուստ»-ի ներկայացումն Ալեքսանդրապոլում հետաքրքիր է մի քանի առումով: Նախ՝ լրացնում է արևելահայ կրթամշակութային ընկերություններից մեկի՝ «Բարենպատակի», համահիմնադիր Ա.Կրիտյանցի մասին եղած տեղեկությունները՝ բացահայտելով գերմանական ռոմանտիզմին նրա և ընկերների հակվածությունը: Այն նաև ուշագրավ հաղորդում է Ալեքսանդրապոլի մշակութային կյանքում առանցքային դեր կատարած Ա.Մանուկյանցի և ընդհանրապես Մանուկյանների (Համբարձում, Ալեքսանդր, Հարություն) գործունեության մասին: Եվ վերջապես, այն տեղի ուժերով գերմանական դասական թատերգության միակ ներկայացումն է:

<sup>1</sup> Жирмунский В.М., Гете в русской литературе. Л., 1982, с. 394:

<sup>2</sup> Դժվար է ճիշտ տարեթիվ նշել, քանի որ սկզբնաղբյուրների պակաս կա: 1868թ. օգոստի կարող է վկայել այն փաստը, որ 1869թ. վերաբերյալ «Կովկասյան օրացույցում» Ալեքսանդրապոլի պրիստավներ են հիշատակվում Իվան Մարկարին և Մնացական Նավասարտովը (Տե՛ս Կавказский календарь на 1869 годъ. XXIV годъ. Тифлисъ, 1868. Адресь-календарь, с.40): Հաջորդ՝ 1870թ. համար տպագրված օրացույցը նրանց մասին լռում է:

<sup>3</sup> Հովհաննիսյան Հ., նշվ. աշխ., էջ 478:

<sup>4</sup> Ֆաուստ: Ողբերգություն Գեթեի: Թարգմանեց գերմաներենից Գեորգ Բարխուդարեանց, Թիֆլիզ, 1902, էջ 166-167:

<sup>5</sup> Քաջբերունի, նշվ. աշխ., էջ 2:

**Геворг АЙВАЗЯН (Армения)**

Ширакский центр арменоведческих исследований НАН РА (Гюмри)

e-mail: ayg.84@mail.ru

## **ТЕАТРАЛЬНАЯ ПОСТАНОВКА «ФАУСТА» И.В.ГЕТЕ В АЛЕКСАНДРОПОЛЕ**

Первоначальным замыслом составителей репертуара восточно-армянского театра XIX века было просвещение и патриотическое воспитание общества. Такие задачи ставили перед собой и деятели театра Александрополя. Они в 1865-1876 гг. сыграли спектакли по произведениям А. Каренянца, М. Тер-Григорянца, С. Экимяна, Т. Терзяна, Т. Фасулачяна, М.Пешикташляна, М. Патканянца и т.д.

В 1860-1870-х годах в спектаклях продолжала звучать лира армянской освободительной борьбы. Во время постановки «Шушаник» в Александрополе 23 мая 1865 года на полотнянном занавесе сцены был нарисован символ армянского освободительного движения - портрет «Дух Армении», который представлял интерпретацию философского Духа знаменитого доктора Фауста.

Тему свободного брожения мыслей Фауста развивали увлекающиеся театром уроженцы Александрополя - юношы Александр Манукянц и Арсен Критянц. В 1868 или 1869 году они подготовили представление трагедии И.В.Гёте «Фауст». Текст сочинения перевел А.Манукянц. Он добавил стихи Рафаэла Патканяна «Слёзы Аракса». Текстовые ремарки вызвали бурную реакцию Александропольского уездного начальника Исаака Абамеликова и городского пристава Минай Навасартова. Подвергнувшаяся цензуре пьеса была сыграна в спектакле в гостинице Григора Тер-Антонянца. Роль Фауста сыграл А.Манукянц, а А.Критянц воплотил роль брата Маргариты - Валентина. В своих воспоминаниях доктор Г. Тер-Оганесян сообщает: «При явлении дуэля Фауста с Валентином исполнитель роли Валентина А.Критянц сломал ножны меча М. Навасартова и убежал - оставив представление недоконченным».

Факт постановки трагедии - символа Нового времени И.В. Гёте в Александрополе дополняет существующее сведение о А.Критянце - одного из основоположников восточно-армянского культурно-образовательного «Общества благой цели» - выявляя его склонность к немецкому романтизму. Этот фрагмент является единичным спектаклем немецкой классической драматургии в культурной жизни Александрополя XIX века.

**Gevorg AYVAZYAN (Armenia)**

Shirak Center for Armenological Studies RA (Gyumri)

e-mail: aayg.84@mail.ru

## **THEATRICAL PRODUCTION OF "FAUST" BY J.W.GOETHE IN ALEXANDRAPOL**

The original intention of the compilers of the 19th century Eastern Armenian theater repertoire was enlightenment and the patriotic education of society. Such tasks were set for themselves by the actors of the theater of Alexandropol. They are in the years 1865-1876 performances based on works by A. Karenlyants, M. Ter-Grigoryants, S. Hekimyan, T. Terzyan, T. Fasulachyan, M. Peshiktashlyan, M. Patkanyants, etc.

In the 1860s-1870s the lyre of the Armenian liberation struggle continued to play in the performances. Within the time of the "Shushanik" in Alexandropol, on May 23, 1865, the scene was painted by a symbol of the Armenian liberation movement portrait of "Spirit of Armenia", which was interpreted by the interpretation of the philosopher Spirit, which is described by Dr. Faust.

The subject of free ferment of Fausts thoughts was developed by the theater-born natives of Alexandropol - the youths Alexander Manukyants and Arsen Krityants. In 1868 or 1869 they prepared the presentation of the tragedy of J.W. Goethe "Faust". The text of the essay was translated by A. Manukyants. He brought there the verses of Rafael Patkanyan "Tears of Araks".

The text remarks caused a strong reaction from the Alexandropol district chief Isaak Abamelikov and the city bailiff Mnacakan Navasartyan. The censored play was performed in a play at the hotel Grigor Ter-Antonyants. The role of Faust was played by A. Manukyants, and A. Krityants embodied the role of Margarity-Valentin's brother. As Dr. G. Ter-Ogannesyan tells in his memoirs, during the appearance of duel Faustus with Valentin, the performer of the role of Valentin A. Krityants broke the sword of M. Navsartov's sword and ran away, leaving the performance unfinished.

The fact of setting the tragedy of the symbol of the new time J.W. Goethe in Alexandropol complements the existing information about A. Krityants one of the founders of the Eastern Armenian cultural and educational "Society of the Good Purpose" revealing his penchant for Germanic romanticism. This fragment is the only indicator of German classical drama in the cultural life of the 19th century Alexandropol.



**Գրիգորի ԱՅՎԱԶՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ. փոստ՝ grigoriayvazyan@gmail.com

**ԱՐԲԵՋԱՆԻ ԱՂՎԱՆԱ-ՈՒԴԻՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ  
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Գիտական զեկույցը նվիրված է Ադրբեջանում Աղվանա-ուդիական եկեղեցու «վերստեղծմանը», այս գործընթացի ճշմարիտ պատճառների, նպատակների եւ դրանում ներգրավված հիմնական դերակատարներին, ինչպես նաև դրան առնչվող պատմության հարցերին ու պատմական իրադարձություններին: Ջեկույցում ներկայացվում են առաջարկություններ, որոնք ապահովում են նշված հարցերի կոնկրետ և իրական լուծումներ:

**Григорий АЙВАЗЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)  
e-mail: grigoriayvazyan@gmail.com

**АЛБАНО-УДИНСКАЯ ЦЕРКОВЬ АЗЕРБАЙДЖАНА  
В КОНТЕКСТЕ АРЦАХСКОГО ВОПРОСА**

Руководство Азербайджана, преследуя цель внести раскол в единство армянского народа<sup>1</sup>, в последние годы активно муссирует тему «восстановления» Албанского Католикосата и церкви, под эгидой азербайджанских властей. Азербайджанские эмиссары стали появляться в местах компактного проживания диаспоры азербайджанских и арцахских армян (Россия, прочие страны СНГ, США, Европа) и по поручению официального Баку убеждать их в том, что они по своему этническому происхождению не армяне, а потомки арменизированных чуть ли не в XIX веке албано-удин, а значит скорее азербайджанцы, чем армяне. На данную тему большими тиражами издается многочисленная научная<sup>2</sup> и псевдонаучная<sup>3</sup> литература призванная обосновать «албано-удинскую» гипотезу<sup>4</sup>. По ини-

<sup>1</sup> Стремясь обосновать свои претензии на территорию Утика и Арцаха (Карабаха), Сюника, памятники их богатой материальной и духовной культуры.

<sup>2</sup> W. Schulze, Towards a history of Udi, International journal of diachronic linguistics, 2005, V. 1 p. 55 – 91; The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai. Vol. I-II. Edited by J. Gippert, W. Schulze, Z. Aleksidze, J.-P. Mahé, Turnhout, Brepols Publishers, 2008; Albania Caucasica. Москва, 2015; Ю. Б. Коряков, Атлас кавказских языков, Москва. 2006; Y. B. Koryakov, Atlas of Caucasian languages. Moscow, 2002.

<sup>3</sup> Мамедова Ф., Кавказская Албания и албаны, Баку, 2005; Гаджиева У., Деэтнизация кавказских албан в XIX веке. –Баку, 2004.

<sup>4</sup> Среди работ последнего времени, вдохнувших «новую жизнь» в концепцию, можно отметить работы В. Шульце. (см. W. Schulze, Towards a history of Udi, – International journal of diachronic linguistics,

циативе руководства Азербайджана, в Европе, странах СНГ, на данную тему периодически организовываются различные круглые столы, научные конференции и симпозиумы. Весьма щедро вознаграждаются ученые последовательно отстаивающие выгодные Азербайджану позиции. Целенаправленно пытаясь противопоставить один армянам, они «запустили» процесс учреждения Удинской церкви, который в свою очередь стал прологом к «восстановлению» так называемой «Албанской церкви Азербайджана»<sup>1</sup>. Будущая Албано-удинская церковь рассматривается исключительно как один из основных инструментов антиармянской пропаганды и фальсификации истории региона<sup>2</sup>. Данный проект получил большую материальную и организационную поддержку со стороны властей Азербайджана<sup>3</sup>.

Идет активная «обработка» общественного мнения и т.д. Между тем этот процесс и те угрозы, которые он в себе потенциально таит, остался вне сферы должного внимания армянской общественности и научного сообщества. Дело в том, что после обнаружения грузино-албанского палимпсеста<sup>4</sup> и его дешифровки<sup>5</sup> в науке, принято считать, что удины были народом-доминантным периода Албанского царства с центром в Кабале и Шаки-Эрети. Однако эта находка также «вдохнув новую жизнь» в албано-удинскую концепцию происхождения армян Арцаха и Азербайджана. Практически все видные лидеры удинской общины<sup>6</sup>, в Азербайджане и в диаспоре, в той или иной степени, политически ангажированы,

2005, V. 1 p. 55 – 91.); (Сборник *Albania Caucasica*. Москва, 2015, с. 22-23, 66-67, 93, 94-97, 102-105, 108, 111-114, 184-187, 192; (Ю. Б. Коряков, Атлас кавказских языков, Москва, 2006, 76, с.: 20 цветных карт; Y. B. Koryakov, *Atlas of Caucasian languages*, Moscow, 2002).

<sup>1</sup> Азербайджанское руководство полагает, что как правопреемник исторической Албанской церкви, проектируемая Удинская церковь вправе заявить о своих претензиях на всё имущество, ранее принадлежавшее ей (не только религиозное имущество, книги и храмы в восточных провинциях Великой Армении (Арцахе и Утике), но и Иерусалимское «наследство»).

<sup>2</sup> Первым действенным шагом, предпринятым к «воссозданию Албанской церкви Азербайджана» была регистрация 10 апреля 2003 года в госкомитете по работе с религиозными образованиями (ГКРО) Албано-удинской христианской общины Азербайджанской республики, отделения которой действуют в селе Нидж и городе Огуз (бывш. Вардашен), затем в 2010 году была зарегистрирована Удинская христианская община г. Огуз (Вардашен). Ее главной задачей заявлено «возрождение Албанской Апостольской Автокефальной церкви», а также сохранение культуры, языка, традиций удинов, «показать, что удины – это не армяне».

<sup>3</sup> Курирование этого стратегически важного дела было поручено главе администрации президента Азербайджана академику Рамизу Мехтиеву, директору Института истории Ягубу Махмудову, член-корреспонденту НАН Фариде Мамедовой, государственному советнику по межнациональным вопросам, вопросам мультикультурализма и религии Камалу Абдуллаеву, руководителю Бакинского Международного центра мультикультурализма Азаду Мамедову, председателю Госкомитета по работе с религиозными образованиями – (ГКРО) Мубаризу Гурбанлы и др.

<sup>4</sup> Палимпсест датируется между концом VII и X вв. (поздняя датировка более вероятна). Находка содержит около 120 страниц албанского текста, который представляет собой богослужебный сборник, синаксарий, включающий и объемные отрывки из Нового Завета.

<sup>5</sup> О палимпсесте см.: Aleksidze Z., Mahé J.-P., *Découverte d'un texte albanien: une langue ancienne du Caucase retrouvée*, Comptes rendus de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, Paris, 1997, p. 517-532; *The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai*, Edited by J. Gippert, W. Schulze, Z. Aleksidze, J.-P. Mahé, Vol. I, Brepols Publishers n. v., Turnhout, 2008 (с. 32, раздел I – «Общая характеристика двух найденных палимпсестов»); Renoux Ch., *Le lectionnaire Albanien des manuscrits géorgiens palimpsestes N Sin. 13 et N Sin. 55 (X<sup>e</sup>-XI<sup>e</sup> s.). Essai d'interprétation liturgique*, Brepols, Turnhout /Belgique, 2012 [*Patrologia Orientalis*, t. 52, fasc. 4, № 234].

<sup>6</sup> Руководитель Албано-удинской христианской общины Азербайджана Р. Мобили, директор удинского культурного центра «Ораин» Олег Данакари, председатель Волгоградской областной общественной организации удин «Нидж» Ричард Данакари, руководители Московской общины удин Вла-

вовлечены в активную антиармянскую пропагандистскую компанию<sup>1</sup>, развязанную Азербайджаном. Что касается самих удин, в общем, то братского армянам народа<sup>2</sup>, то они стали невольными заложниками данной ситуации. Ярким примером хваленной азербайджанской «толерантности» и «мультикультурализма» в действии, наряду с исторической судьбой армян Азербайджана, может послужить судьба удинского народа<sup>3</sup>.

**Grigori AYVAZYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: grigoriayvazyan@gmail.com

## **UDI- ALBANIAN CHURCH OF AZERBAIJAN IN THE CONTEXT OF THE ARTSAKH ISSUE**

The scientific report is devoted to the "recreation" of the Udi-Albanian Church in Azerbaijan, the true causes of this process and its objectives, the main participants involved in its implementation, as well as the history of the issue and the historical events associated with it. The paper presents suggestions which provide the exact and concrete solution of the mentioned issues.

---

димир Куранов (канд.техн.наук) и Артем Куранов (канд. филологических наук), председатель удинской общины г. Шахты Ростовской области Олег Данилов и сопредседатель Оник Даллари, представитель Казахстанской общины удин Вячеслав Казаров, представитель удин в Азербайджанской диаспоре Белоруссии Роман Л. Гукалари, председатель удинской общины с. Зинобиани (Октомбери) Кварельского района Мамули (Симон) Нешумашвили и др.

<sup>1</sup> Составной частью которой является вопрос о Удинской церкви. Что касается ее религиозной направленности, то по этому вопросу внутри удинской общины нет единого мнения. Часть членов общины (З. Кананчев из диофизитской семьи и др.) считает, что «восстановленная» церковь должна быть диофизитской (православной), большинство же членов общины (Р. Мобили и др.) по этому вопросу придерживаются иного мнения резонно полагая, что новая Албанская церковь, как и прежняя должна принадлежать к числу не халкедонских (монофизитских) восточных православных церквей и быть полностью автономной. При этом количество паствы новой Азербайджанской Албанской церкви, инициаторами планируется увеличить за счет привлечения этнических удин-ингилойцев.

<sup>2</sup> Удины компактно проживают в северной части современной Азербайджанской республики – в селе Нидж Куткашенского (ныне Кабалинского) района и в районном центре Варташен (ныне Огуз), а также в Грузии (с. Зинобиани, бывшее Октомбери, Кварельского района; это переселенцы из Варташена, откуда часть удин диофизитов бежала в Грузию еще в 1922 г.). Удины дисперсно проживают также в России, Армении, Казахстане и т.д. Антропонимика (имена, фамилии, отчества) удин, последователей ААЦ, до недавнего времени была преимущественно идентична армянской. Язык современных удинов относится к лезгинской группе нахско-дагестанской семьи языков (или подсемьи северокавказской семьи языков, по другой классификации). См. В.Л. Гукасяна Удинско-азербайджанско-русский словарь, Баку, 1974, с. 251; Ворошил Г., Ниджский диалект удинского языка (звуковой состав и некоторые фонетические процессы), – «Известия» АН Азерб. ССР, серия обществ. наук, № 3. Баку, 1963, с. 79-89.

<sup>3</sup> Как и в начале XX века, сразу же после известных событий 1988-1990 гг. в Азербайджане начался массовый исход коренного удинского населения с территории своей исторической родины. Даже не касаясь зеркальных событий начала XX в. достаточно только упомянуть о том, что в конце 1980-х – начале 1990-х гг. число удин в Азербайджане было около 6.120 чел., после чего резко сократилось до 3.800 чел., в 2009 г., (перепись населения 1989 г.; перепись 2009 г.).

**Լիլիթ ԱՍՈՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն

Էլ. փոստ՝ lilitasoyan@rambler.ru

**ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.****ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ**

Կամավորությունը Հայաստանի համար նոր երևույթ չէ. այն ավելի շատ կյանքի նորմա է՝ թելադրված անցած պատմական ուղիով և ավանդույթներով: Մինչև 20-րդ դարի սկիզբը Հայաստանը հիմնականում ագրարային երկիր էր, որտեղ միշտ գոյություն է ունեցել գյուղացիական համայնքը, որը որևէ փոփոխություն չէր կրել ո՛չ թուրք-պարսկական տիրապետության ժամանակ, ո՛չ էլ Ռուսական կայսրությանը միանալուց հետո: Փոխօգնության պայմաններում կամավորությունը ձևավորվում էր որպես հասարակական երևույթ, սակայն այն չէր առանձնանում որպես գործունեության առանձին տեսակ, առավել ևս այդ տերմինի ժամանակակից ընկալմամբ:

Հայաստանի պարագայում հարց է առաջանում հստակ սահմանելու «կամավոր» տերմինը, քանի որ դրանով հիմնականում հասկացվում է ի պաշտպանություն Հայրենիքի ռազմական գործողություններին մասնակցելու կամավոր ցանկություն հայտնած մարդ:

Գրեթե նույն ենթատեքստում է դիտարկվում նաև բուժքույրերի, հոգևորականների, հասարակական կազմակերպությունների գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին, չնայած նրանց գործունեությունը տիպիկ կամավորություն է:

Այսօր Հայաստանում ներկայացված են կամավորներ տարբեր երկրներից, հիմնականում նրանք կամավորներ են տարբեր կազմակերպություններից և հրավերով Հայաստան են ժամանել տարաբնույթ ծրագրերի ու նախագծերի շրջանակներում:

Հայաստանն ամենամեծ սփյուռք ունեցող երկրներից է, ինչը հնարավորություն է տվել ստեղծելու, մեր կարծիքով, Հայաստանի համար հատուկ, տիպիկ, բայց ընդհանուր առմամբ առանձնահատուկ կամավորության տեսակ՝ ծանոթություն Հայրենիքին, քանզի սփյուռքի երիտասարդությունն աղոտ պատկերացում ունի Հայրենիքի մասին:

Մյուս մասը տեղի կամավորներն են, որոնք երևան են գալիս առանձին խմբերով՝ ելնելով իրավիճակի ընդհանուր համատեքստից, ինչպես, օրինակ, բժշկական համալսարանի և ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողները, որոնք օգնում էին վերականգնվելու 2016թ.-ի ապրիլյան ճգնաժամի ժամանակ ծանր վիրավորված և Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում վերականգնման կուրս անցնող ժամկետային զինձառայողներին:<sup>1</sup>

<sup>1</sup> Ахназарян М., Волонтеры помогают героям, Голос Армении, 07.12.2017// <http://www.golosarmenii.am/article/60968/volontery-pomogayut-geroyam> .

Հայաստանում զարգանում է նաև «իրադարձային» կամավորությունը. Յեղապանության 100-ամյակի միջոցառումների ժամանակ կազմակերպչական աշխատանքներին աջակցելու համար ձևավորվեց կամավորների խումբ: Ընտրական փուլին մասնակցում էին մեծ թվով ուսանողներ, սակայն ԵՊՀ պրոռեկտոր Մարկոսյանի խոսքերով, ընտրվեցին համապատասխան մասնագիտացում ունեցողները:<sup>1</sup>

Միանգամայն նոր երևույթ էր «քաղաքական» կամավորությունը. 2018թ. ապրիլի 15-ի ցույցի ժամանակ «Ելք» կուսակցության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը կոչ արեց կամավորներին մասնակցելու ընդդիմադիր ակցիային:<sup>2</sup>

**Лилит АСОЯН (Армения)**

Международный научно-образовательный центр НАН РА (Ереван)

e-mail: lilitasoyan@ Rambler.ru

## **ВОЛОНТЕРСТВО В АРМЕНИИ: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ**

Волонтерство для Армении явление не новое, это скорее норма жизни, продиктованная пройденным историческим путем и традициями. До начала XX века Армения была в основном аграрной страной, где всегда существовала сельская община, не претерпевшая никаких изменений ни в период турецко-персидского владычества и не после присоединения к Российской империи. В условиях взаимопомощи и взаимовыручки складывалось волонтерство как общественное явление, но оно не выделялось как отдельный вид деятельности или, тем более, как общественное движение в современном понимании этого термина. Именно факт существования взаимопомощи и взаимовыручки на протяжении всего исторического пути привело к восприятию и осознанию самого волонтерства, как явления само собой подразумевающегося и не нуждающегося в акцентировании, выделении как отдельного общественного явления. И это далеко не единственная отличительная черта, особенность в подходах к вопросу волонтерства.

В плане Армении встает вопрос четкого определения термина волонтер – доброволец, так как под словом доброволец в первую очередь подразумевается человек, записавшийся добровольцем для участия в военных действиях во имя защиты родины. Армения исторически почти постоянно была вынуждена отражать нападения соседей, разного рода кочевников, принимала участие во всех военных кампаниях России против Турции и Персии. Во время Первой мировой войны армяне сформировали 7 добровольческих отрядов в составе русской армии.

<sup>1</sup> Студентам-волонтерам были представлены основные проблемы армянского геноцида// Новости// ЕГУ, 24.23.2015// <http://ysu.am/news/ru/Armenian-Genocide100> .

<sup>2</sup> Оппозиция намерена сорвать заседание парламента Армении: Пашинян сделал заявление, Sputnik, 15.04.2018// <https://ru.armeniasputnik.am/society/20180415/11454733/oppozitsiya-pashinyan-armenia-parlament-zasedanie-zayavleie-protest-akctsiyamiting.html> .

Таким образом, термин доброволец скорее применим к сфере военной, что нашло свое отражение даже в интернет-поисковиках: при запросе «добровольческое движение в Армении» в Google приводятся данные о численности и участии армян в разных военных кампаниях, особенно в Первой мировой войне.

Практически в том же контексте рассматривается деятельность медсестер, священников, общественных организаций во время Первой мировой войны, хотя их деятельность - типичное волонтерство. Добровольцами называли и тех, кто поспешил на помощь Армении в зону бедствия после разрушительного спитакского землетрясения 7 декабря 1988 года. Однако с термином «волонтер» в Армении впервые столкнулись в конце 90-х годов прошлого столетия, когда в независимую Республику Армения по приглашению правительства прибыли первые волонтеры из европейских и американских организаций.

Сегодня в Армении представлены добровольцы из разных стран: в основном это волонтеры других организаций прибывших в Армению по разным проектам или приглашениям.

Армения страна с самой большой диаспорой, что создало возможность для формирования на наш взгляд типичным для Армении, но специфичным для остального мира видом волонтерства - знакомства с Родиной, так как молодежь диаспоры имеет слабое представление о родине предков.

Другая часть – это местные волонтеры, которые выступают в основном инициативными группами исходя из контекста ситуации, как например волонтеры-студенты медицинского университета и института физической культуры, помогавшие реабилитироваться солдатам-срочникам, тяжелораненым во время апрельской эскалации 2016г. и проходивших курс реабилитации в Центральном клиническом военном госпитале<sup>1</sup>.

В Армении развивается так же «событийное» волонтерство. Так, например, для содействия работе мероприятий, посвященных 100-летию Геноцида была создана группа студентов волонтеров. В отборе участвовало огромное количество студентов, однако выбор по словам проректора ЕГУ Маркосяна остановился на студентах соответствующих специальностей.<sup>2</sup>

Новым явлением стало «политическое» волонтерство: 15 апреля 2018г. на митинге лидер партии «Елк» Никол Пашинян призвал волонтеров участвовать в акциях протеста<sup>3</sup>.

---

<sup>1</sup> Ахназарян М., Волонтеры помогают героям, Голос Армении, 07.12.2017// <http://www.golosarmenii.am/article/60968/volontery-pomogayut-geroyam> .

<sup>2</sup> Студентам-волонтерам были представлены основные проблемы армянского геноцида// Новости// ЕГУ, 24.23.2015// <http://ysu.am/news/ru/Armenian-Genocide100> .

<sup>3</sup> Оппозиция намерена сорвать заседание парламента Армении: Пашинян сделал заявление, Sputnik, 15.04.2018//<https://ru.armeniasputnik.am/society/20180415/11454733/oppozitsiya-pashinyan-armenia-parlament-zasedanie-zayavleie-protest-akctsiyamiting.html>.

**Lilit ASOYAN (Armenia)**

International Scientific and Educational Center NAS RA

E-mail: lilitasoyan@rambler.ru

## **VOLUNTARY WORK IN ARMENIA: THE PAST AND THE PRESENT**

Voluntary work in Armenia is not a new phenomenon; this is a norm of life formed by the country's history and traditions. Until the twentieth century, Armenia used to be a rural country with a strong agricultural community, which was not changed either under the Turkish-Persian invasion, or later under the period of the Russian Empire domination. Under the circumstances of cooperation and give-and-take practices voluntary work was gradually becoming a social phenomenon, but it never became a separate activity type or, let alone, civil society movement in the present definition of this term.

When it comes to Armenia, there is always a need for a more precise definition of the term 'volunteer', as in most of the cases this term refers to a person listed to take part in military services to protect the country.

The activities produced by the nurses, priests and NGOs during the 1<sup>st</sup> World War are considered in the above stated context, though their work illustrates typical voluntary activities.

Today there are volunteers from different countries in Armenia; most of them represent different organizations and arrived in Armenia due to various projects needs or by invitations.

Armenia is the country with one of the largest Diasporas in the world, which provided opportunities to create a very typical for Armenia, but at the same time a very specific for the rest of the world type of voluntary work – introduction to the Native Land, as the youth of the Armenian Diaspora has a very vague knowledge of their native land history and traditions.

The other part of Armenian volunteers is local people, who gather in initiative groups depending on the needs of different projects, for example, volunteering students of medical universities or institutes of physical education, who were helping to the active-duty soldiers heavily injured during the conflict escalation in April 2016 during their rehabilitation period, those soldiers were signed up for a rehabilitation course in the Central Clinical Military Hospital.

A trend of 'event' volunteering is also currently observed in Armenia. For instance, during the events organized to commemorate a 100 anniversary of the Genocide in Armenia, a group of volunteers was formed. The number of people willing to take part in such events as volunteers was quite significant, but according to the vice-principal of Yerevan State University only those applicants, who had profile professions were chosen for such work.

Political voluntary work has become a new phenomenon in Armenia as well. On April 15<sup>th</sup>, 2018, "Yelk" party leader Nikol Pashinyan called the citizens to participate in protest activities.

**Մարիամ ԱՐՊԵՆՏԵՎԱ (Ռուսաստան)**

Կալուգայի պետական համալսարան

e-mail: mariam\_rav@mail.ru

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հայոց պատմությունը համաշխարհային պատմության կարևորագույն մասն է: Այդ մասին են վկայում ոչ միայն այդ երկրի հաջողություններն ու ձեռքբերումները, այլև զարգացման դժվարությունները: Դրանցից մեկը Ղարաբաղյան հակամարտությունն է՝ էթնոքաղաքական միջհամայնքային կոնֆլիկտն անդրկովկասյան տարածաշրջանում ադրբեջանական և հայկական էթնիկ խմբերի միջև, որոնք ունեն վաղնջական պատմական և մշակութային արմատներ: Արդի պետական էթնոքաղաքականության կենտրոնական հիմնախնդիրն է իրավական և էթիկական գրագետ վերաբերմունքը էթնիկ վերածննդի և ինքնորոշման ֆենոմենների, էթնիկ դիմադրության և անջատողականության, էթնիկ ոչնչացման և «հիբրիդիզացիայի» հանդեպ: Այս հարցը հատուկ նշանակություն ձեռք բերեց XX-XXI դդ. սահմանագլխին շատ երկրների ու մայրցամաքների համար՝ ներառյալ Եվրասիան, Հայաստանը և Ադրբեջանը, «էթնիկ վերածննդի», նաև «կրոնական վերածննդի», այդ թվում և ազգաշինության ու ազգաստեղծման, ինչպես նաև կրոնական ու կեղծկրոնական ստեղծագործության և շինարարության լույսի ներքո: Անցյալի և ներկայի Հայաստանում տարբեր ազգերի մարդիկ ապրում են միասին՝ ընտրելով տարբեր ռազմավարություններ, որոնք հանգեցնում են տարբեր արդյունքների: Սակայն առկա է նաև Հայաստանի և Ադրբեջանի տարածքներում մոնոազգային պետությունների ձգտման միտումը, որի արդյունքում երկու մեծ ժողովուրդներ չեն կարողանում լուծել իրենց միջև եղած հակասությունները, ինչը վկայում է այն, որ այդ հակասություններն իրենց համար նշանակալի են, պայմանավորված են արժեքային-իմաստային տարբերություններով. մերձեցման ճանապարհը մոտ չէ և ուղիղ չէ: Ըստ գիտնականների՝ առավել արդյունավետ է «զսպված ինտեգրացիայի» ճանապարհը, որը նկատի ունի «մեծամասնության» մշակույթի պահպանման մասին հոգածությունը՝ նոր մշակույթների՝ «փոքրամասնությունների խմբերի» հետ համատեղ ընդհանուր քաղաքական ինքնության ձևավորման և ամրապնդման շրջանակներում, որը խոչընդոտում է սահմանների ու պետության ազգային մշակույթի ավանդույթների վերացումը: Հենց այս ճանապարհով պետք է շարժվեն Հայաստանը և Ադրբեջանը: Մյուս կողմից՝ Հայաստանը՝ որպես հնագույն մշակույթ ունեցող երկիր, պետք է ուշադրություն դարձնի «էթնիկ» վերածննդին այն առումով, որ գործածվում էր ԽՍՀՄ-ում՝ էթնիկ մշակույթի վերածնունդ, հայ համայնքի կյանքն իր իսկ մեջ, ներքին խնդիրների լուծում: Այսօր Հայաստանը, ցավոք, ինտենսիվ միգրացիաների ժամանակաշրջանում է. դրանք տարբեր տիպերի միգրացիաներ են, որոնք հանրագումարում հազեցնում են նրան, որ հայերը,



ինչպես և շատ մյուս էթնոսներ, ենթարկվում են հիբրիդիզացիայի բոլոր մակարդակներում և հարաբերություններում: Չնայած հնագույն արմատներին և հայ մշակույթի ընդհանուր դիմադրողականությանը՝ նման «հիբրիդիզացիաների» բացասական հետևանքներն ակնբախ են: Առաջին հերթին դա երկրի մշակութային և հոգևոր էլիտայի կրճատումն է:

**Мариям АРПЕНТЬЕВА (Россия)**

Калужский государственный университет

e-mail: mariam\_rav@mail.ru

## **КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ И ПРОБЛЕМЫ АРМЕНОВЕДЕНИЯ**

История Армении – важная часть мировой истории. Об этом свидетельствуют не только успехи и достижения этой страны, но и проблемы и трудности ее развития. Одна из них - Карабахский конфликт (на азербайджанском - Qarabağ münaqişəsi, на армянском - Արցախյան հակամարտություն) — этнополитический межобщинный конфликт в Закавказском регионе между азербайджанской и армянской этническими группами, имеющий давние исторические и культурные корни. Центральной проблемой современной государственной этнополитики является проблема этически и юридически грамотного отношения к феноменам этнического возрождения и самоопределения, этнического противостояния и сепаратизма, этнического разрушения и «гибридизации». Особую значимость этот вопрос обрел на рубеже XX-XXI веков в свете переживаемого многими странами и континентами, включая Евразию, Армению и Азербайджан, «этнического ренессанса» или «этнического возрождения», а также религиозного «возрождения», в том числе нациестроительства и нациетворчества, а также религиозного и псевдорелигиозного творчества и строительства. В Армении прошлого и настоящего люди разных наций живут вместе, выбирая разные стратегии, которые приводят к разным результатам. Однако, современная тенденция к мононациональности государств на территориях Армении и Азербайджана также присутствует, в результате два больших народа до сих пор не могут решить противоречий в своих отношениях, говорит о том, что противоречия эти носят значимый для них характер, обусловлены важными ценностно-смысловыми различиями, путь к сближению народов – не близкий и не прямой. Наиболее продуктивен, по мнению ученых, вариант сдержанной интеграции», подразумевает заботу о сохранении культуры «большинства» наряду с принятием новых культур - групп «меньшинств» в рамках формирования и укрепления общей гражданской идентичности, препятствующей размыванию границ и традиций национальной культуры государства. По этому пути и важно двигаться Азербайджану и Армении. С другой стороны, Армении как стране с древней культурой, важно обратить внимание на «этническое возрождение» в смысле, практиковавшемся во времена СССР: возрождение этнической культуры, жизнь армянского сообщества внутри самого себя, решение внутренних проблем. На сегодняшний день, к сожалению, Армения, как и многие страны бывшего СССР переживает период интенсивных иммиграций: это миграции разного типа, в сумме приводящие к тому,

что армяне, как и многие иные этносы, подвергаются интенсивной гибридизации (на всех уровнях и во всех отношениях). Несмотря на древние корни и общую резистентность армянской культуры, негативные последствия таких «гибридизаций» очевидны. В первую очередь, это сокращение культурной и духовной элиты страны.

**Mariam ARPENTIEVA (Russia)**

Kaluga State University  
e-mail: mariam\_rav@mail.ru

## **KARABAKH CONFLICT AND PROBLEMS OF ARMENOLOGICAL STUDIES**

The history of Armenia is an important part of world history. This is evidenced not only by the successes and achievements of this country, but also by the problems and difficulties of its development. One of them is the Karabakh Conflict (in Azerbaijani, Qarabağ münaqişəsi, in Armenian, Արցախյան հակամարտություն) - an ethno-political intercommunal conflict in the Transcaucasian region between the Azerbaijan and Armenian ethnic groups, which has old historical and cultural cultures. The central problem of modern state ethnopolitics is the problem of ethically and legally competent attitude to the phenomena of ethnic rebirth and self-determination, ethnic confrontation and separatism, ethnic destruction and “hybridization”. Of particular importance this issue has found at the turn of the XX-XXI centuries in the light of the experience of many countries and continents, including Eurasia, Armenia and Azerbaijan, “ethnic renaissance” or “ethnic revival”, as well as religious “revival”, including nation-building and national creativity, as well as religious and pseudo-religious creativity and construction. In Armenia, past and present, people of different nations live together, choosing different strategies that lead to different results. However, the current trend towards mononationality of states in the territories of Armenia and Azerbaijan is also present, as a result, two large nations still cannot resolve contradictions in their relations, says that these contradictions are significant for them, due to important value-sense differences. The path to the rapprochement of nations is not close and not direct. The most productive, according to scientists, is the option of restrained integration, “implies a concern for preserving the culture of the majority” along with the adoption of new cultures — minority groups - in the framework of the formation and strengthening of a common civic identity that impedes the blurring of borders and traditions of the national culture of the state. It is important to move Azerbaijan and Armenia along this path. On the other hand, Armenia is a country with an ancient culture. It is important to pay attention to the “ethnic revival” in the sense practiced during Soviet times: the revival of ethnic culture, the life of the Armenian community within itself, the solution of internal problems. Today, unfortunately, Armenia, like many countries of the former USSR, is experiencing a period of intensive immigration: these are migrations of a different type, which can lead to the fact that Armenians, like many other ethnic groups, undergo intensive hybridization (at all levels and in all relationship). Despite the ancient roots and the general resistance of the Armenian culture, the negative consequences of such “hybridizations” are obvious. First of all, this is a reduction of the cultural and spiritual elite of the country.

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ (Հայաստան)

Էօրնեկեան հանրակրթական դպրոց (Էջմիածին)

Էլ.փոստ՝ ggalstyan123@gmail.com

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՋԵՌՆԸ ԵՎ ՆՐԱ**

**«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐԻ...» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Մեր աշխատանքը նվիրված է Հովհաննես Կոզեռնին և վերջինիս «Մեկնություն տոմարի...» աշխատությանը: Հովհաննես Կոզեռնի X-XI դարերի անվանի վարդապետ է, որի մասին, ցավոք, շատ քիչ տեղեկություններ են մեզ հասել՝ հակառակ իր համբավին, անհայտ են նաև նրա ծննդյան և մահվան թվականները: Կոզեռնի անվանը առաջին անգամ հանդիպում ենք պատմիչ Արիստակես Լաստիվերցու «Պատմության» մեջ: Կոզեռնի անվան հիշատակության հաջորդ հանգրվանը Մատթեոս Ուռեայեցու «Ժամանակագրություն» աշխատությունն է, որտեղ վարդապետը հիշատակվում է մի քանի անգամ տարբեր առիթներով: Կոզեռնի մասին տեղեկություններ կան նաև Ասողիկի և Մմբատ Գունդստարի աշխատություններում: Գիտենք, որ անվանի վարդապետը գրել է «Հավատոյ գիր», որը մեզ չի հասել, «Ծոպատկի բացատրություն», «Տեսիլ» աշխատությունը, որի հեղինակությունը հետագայում վերագրվեց XII դարի կեսերին ապրած մի հեղինակի: Պետրոս Գետադարձ կաթողիկոսի պատվերով գրել է նաև «Բագրատունյաց պատմություն», որը կրկին մեզ չի հասել: Կոզեռնի մատենագրության գոհարներից է նրա «Մեկնություն տոմարի, զոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականունն Կոզեռն կոչեցեալ» աշխատությունը, որի սկզբում հեղինակը բացատրում է Շ-եակ թվականի առաջին տարվա համապատասխանությունը հուլյան տոմարի 552/553 թվականին՝ Նավասարդի 1-ը գուգադրելով դինաստիական տարբեր թվականներին, որոնք միարժեքորեն ցույց են տալիս 552 թվականը: Իսկ Քրիստոսի ծննդյան ամիս-ամսաթվի՝ Արաց 30-ի քննությամբ՝ վկայում է Հայոց թվականության 2-րդ հատվածի՝ 553 թվականին համապատասխանելու մասին: Անդրադառնում է կրկնակին, բացատրում այն հաշվելու կարգը, խոսում է վերադրի և յոթներյակի, նաև գարնանամուտի ու ձմեռնամուտի մասին, մեկնում է ամառնամուտի կանոնը, անդրադառնում է նաև մի շարք տոների՝ Սուրբ Խաչին, Աստվածածնի տոնին, Հայտնության ամսաթվին, Զատկի տոնին և նրանց հաստատունների վերլուծությանը: Իսկ արդեն «Յոհաննիսի վարդապետի, որ մականունն Կոզեռն ի ինդրոյ Անանիայի աշակերտաց...» մեկնության մեջ ևս քննում է շատ կարևոր խնդիրների որոնցից են, օրինակ, նահանջը և անկաստեղը: Մեր աշխատանքում առավել մանրամասն կխոսենք այս 2 մեկնությունների մասին, որոնք կարելի է միմյանց շարունակություն համարել: Կանոնադառնանք այս մեկնություններում առկա բոլոր տոմարական խնդիրներին և դրանց մեկնաբանությանը: Նշենք, որ Հովհաննես Կոզեռնի դարեր շարունակ հետաքրքրել է հետազոտողներին: Նրան և նրա աշխատություններին անդրադարձել են մերօրյա անվանի տոմարագետ Ռաֆիկ Վարդանյանը, Հ. Քյուրտյանը, Զ. Էյնաթյանը և այլք:

**Гор ГАЛСТЯН (Армения)**

Общеобразовательная школа Эорнекян (Эчмиадзин)

e-mail: ggalstyan123@gmail.com

**ОГАННЕС КОЗЕРН И ЕГО ТРУД «ТОЛКОВАНИЕ КАЛЕНДАРЯ»**

Наша работа посвящена литературной деятельности архимандрита Оганнеса Козерна, а именно исследованию его труда «Толкование календаря». Оганнес Козерн известный архимандрит X-XI веков, о котором, к сожалению, до нас дошло очень мало информации, неизвестны также даты его рождения и смерти. Имя Козерна впервые упоминается в труде Аристакеца Ластиверци «История».

В следующий раз имя Козерна упоминается в труде Матеоса Ураеци «Хронология». Здесь архимандрит упоминается несколько раз по разным поводам. Информация о Козерне есть и в трудах Асохика и Смбата Гундстабла. Мы знаем, что известный архимандрит написал «Послание Веры», которая не дошла до нас, «Объяснение лжепасхи» и труд «Видение», который впоследствии был приписан автору, жившему в середине XII века. По заказу Католикоса Петроса Гетадарца он написал также «Историю Багратидов», которая тоже не дошла до нас. Одним из жемчужин библиографии Козерна является его труд «Толкование календаря» в начале которого автор объясняет соответствие первого года III-ека с юлианским календарем - 552/553г. В труде объясняется порядок подсчета кркнука, автор пишет о верадире, толкует правило осеннего и весеннего равноденствия, также ряд праздников, затрагивает также религиозные праздники: Святой Крест, праздник Богородицы, дату Откровения, Пасху и анализ их константов. Следующая часть календаря касается многих других важных вопросов, таких как високосие и анкастег. В нашей работе мы более подробно обсудим эти два понятия, которые можно считать продолжением друг друга. Необходимо отметить, что Оганес Козерн на протяжении веков интересовал исследователей. К нему и его трудам обратились известный современный летописец Рафик Варданян, А. Кюртян, Дж. Эйнамян и другие.

**Gor GALSTYAN (Armenia)**

Eurnekian Public School (Echmiadzin)

e-mail: ggalstyan123@gmail.com

**HOVHANNES KOZERN AND HIS WORK "CALENDAR INTERPRETATION"**

Our work is dedicated to Hovhannes Kozern and his work "Calendar Interpretation...". Hovhannes Kozern is a well-known exegete of the X-XI centuries. Despite his fame, little information is preserved, even the dates of his birth and death are unknown. For the first time we come across the name Kozern in the work of historian Aristakes Lastivertzi "History".

The name of Kozern is mentioned in the "Chronology" of Matthew Uhrhain, where the exegete is mentioned several times on different occasions. There is also information about Kozern in the works of Asoghik and Smbat Gundstabl. We know the renown exegete wrote "The Book of

Faith" of which no surviving copies are known to exist; "The Explanation of the Tsrazatik"; and the work "Vision", the reputation of which later was ascribed to an author who lived in the middle of the XII century. At the request of the Catholicos Petros Getadardz, he also wrote the "Bagratunyats Story", while none of which has survived to the present date.

One of Kozern's famous work is his "Calendar Interpretation...", which explains the correspondence at the beginning of the sheakn years 552/553 of the Julian calendar. His work touches upon the *krknak*, explaining the way of counting. He also speaks about *veradir* and the *seventh*, explaining the rules of the summer, spring and winter; he speaks about a number of holidays, the Holy Cross, the Feast of the Holy Virgin, the Day of Revelation, the Easter holiday and their analysis.

The next part of the commentary addresses many other important issues, such as *retreat* and *ankastegh*. In our work, we discuss in details two commentaries that can be considered a continuation of each other. We touch upon all the logical problems and interpretations in these commentaries. It should be noted that many researchers have been interested in Hovhannes Kozern for centuries. Nowadays, renowned topographers including Rafik Vardanyan, H. Kyurtyan, J. Einatian and others have studied his works.

**Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ ( ՀՀ )**

Շիրակի պետական համալսարան (Գյումրի)  
Էլ.փոստ՝ ArshavirGasparyan@mail.ru

**Անահիտ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ( ՀՀ )**

ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց

## **ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

15-րդ դարի հայ պատմագրության միակ ներկայացուցիչը նշանավոր մատենագիր, եկեղեցական գործիչ, վարդապետ ու բարոնապետ Թովմա Մեծոփեցին է: Պատմագիրը մեծ հեղինակություն է վայելել ժամանակակից հոգևոր ու աշխարհիկ վերնախավերի շրջանում: Նրա պատմագրական ժառանգությունը չնայած ծավալով մեծ չէ, բայց պարունակած նյութով իհիստ կարևոր ու արժեքավոր է 14-րդ դարի վերջի և 15-րդ դարի առաջին կեսի Հայաստանի ու Անդրկովկասի պատմության ուսումնասիրության համար: Նա ընդարձակ ձևով ներկայացնում է Լենկ Թեմուրի ավերածությունները Հայաստանում, բնակչության գերեվարումը և կոտորածները, իրադարձություններ, որոնք անտեսվել են օտար պատմիչների կողմից: Այս տեսանկյունից Թովմայի աշխատություն-

նը, թերություններով հանդերձ, պատմության ուսումնասիրության համար անգնահատելի աղբյուր է, քանզի այն ականատեսի ստուգապատում նկարագրություն է:

Թովմա Մեծոփեցու նկարագրած ժամանակաշրջանում Հայաստանն ու հայ ժողովուրդը գտնվում էին օրհասական վիճակում, երկրում շարունակվում էին կործանիչ ու ավերիչ ասպատակությունները, բնակչության զանգվածային ոչնչացումը, զավառների ամայացումը և զանգվածային արտագաղթը: Երկիրն անընդմեջ ոստնատակ էր լինում բիրտ ու վայրագ նվաճողների կողմից՝ Հայաստանում իրենց գերիշխանությունը հաստատելու կամ վերահաստատելու համար: Խարխլվել էր հայ եկեղեցու միասնությունը:

Լենկ Թեմուրին վիճակված էր ստեղծել մի բռնապետություն, որ համաշխարհային պատմության մեջ նմանը չուներ: Դա տեսանելի է ոչ միայն մատենագրության (գեղարվեստական, պատմագրական երկեր, ձեռագրերի հիշատակումներ), այլև ժողովրդական բանահյուսության մեջ, որտեղ պահպանվել են ավանդություններ ու գրույցներ:

Նման իրադարձությունների ժամանակակիցն է եղել նաև Թովմա Մեծոփեցին, որը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում այդ ծանր ժամանակահատվածի մասին:

Ոչ պակաս արգասավոր է եղել Մեծոփեցու հասարակական-քաղաքական ու հոգևոր գործունեությունը: 1441թ. Հայրապետական աթոռը Մսից տեղափոխվել էր Էջմիածին: Մա իրոք կարևոր իրադարձություն էր հայոց եկեղեցու և արևելահայ հոգևորականության կյանքում: Այս կարևոր իրադարձության միակ ու ամբողջական նկարագրությունը տրված է Թովմա Մեծոփեցու Հիշատակարանում: Լինելով հիմնական գործող անձերից մեկը՝ նա ներկայացնում է մանրակրկիտ իրադարձություններ, որոնք ամենայն իրավամբ համարվում են ստուգապատում տեղեկություններ Էջմիածնում կաթողիկոսության վերականգնման պատմության ուսումնասիրության համար:

15-րդ դարի առաջին կեսին ջլատվել էր հայկական եկեղեցու միասնությունը: Հայկական առաքելական եկեղեցու ջատագովները բացահայտ պատերազմ էին հայտարարել մի կողմից՝ պապականության միսիոներների և հայ ունիթոնների, մյուս կողմից՝ Մսի կաթողիկոսության և քաղկեդոնության հետ միաբանվելու կողմնակիցների դեմ: Ժամանակի հոգևորականության առաջավոր թևը քաջ գիտակցում էր այդ պայքարի անհրաժեշտությունը, քանի որ կենսական պահանջ էր զգացվում միավորելու երկրի հոգևոր ուժերը, ապահովելու հայոց եկեղեցու միասնությունը: Այդ էին պահանջում նաև ազգային մշակույթի ինքնուրույն զարգացման ու ինքնատիպության պահպանման շահերը: Մա շատ լավ էր հասկացել Թովմա Մեծոփեցին, որն էլ Հովհաննես Հերմոնացու հետ գլխավորեց Էջմիածնում կաթողիկոսության վերահաստատման գործընթացը:

Մատենագիրը անգուսպ աստելությամբ վեր է հանում հոգևորականության մեջ արմատացած արատավոր բարքերը, աներկյուղ խստությամբ քննադատում ու դատապարտում դրանք:

Մեծոփեցին որոշակի տեղեկություններ է հաղորդում Հայաստանում ունիթոնական շարժման ծավալման և նրա դեմ կազմակերպված պայքարի ձևերի մասին:

Պատմագրի վկայությամբ ունիթորների դեմ պայքարը զլխավորում էին Հովհան Ռրոտնեցու երեք աշակերտները՝ Գրիգոր Տաթևացին, Սարգիս և Վարդան վարդապետները, որոնք իրենց ուսուցչի նման համախմբել էին համախոհներին ու աշակերտներին՝ տալով նրանց հստակ առաջադրանքներ:

Մղձավանջային այն ժամանակներում պատմագրին ուրախացրել է այն ամենը, ինչ պատիվ է բերել իր ժողովրդին ու հայրենիքին, լինի դա անցյալից թե իր ապրած օրերից, լինի դա հաղթանակ թե փոքրիկ ձեռքբերում: Նա առիթը բաց չի թողել այդ ամենը գրի առնելու և հետագա սերունդներին փոխանցելու առաքելությունը:

Մատթևոս Ուտհայեցուց հետո Թովման երկրորդ պատմագիրն է, որ գովերգում է հայ կնոջ արիությունը: Նա գրում է նաև ժողովուրդների համատեղ պայքարի անհրաժեշտության մասին, հատկապես համակրանքով է խոսում հայկական իշխանական տների, առանձնապես Օրբելյանների շառավիղների մասին, գովեստով է արտահայտվում ուսումնական կենտրոններ դարձած վանքերի, մասնավորապես Տաթևի և Մեծոփի վարդապետարանների մասին:

Պատմագիրը շատ լավ գիտակցել է իր շարադրանքի թերի կողմերը, նա կարծես գրում է առանց նախնական ծրագրի՝ ապավինելով թույլ հիշողությանը: Թովմա Մեծփեցին ապրել է բուն ստեղծագործական կյանքով, նվիրվել է հարազատ ժողովրդին ու եկեղեցուն, թողել մատենագրական հարուստ ժառանգություն, իսկ նրա պատմագրական երկերը մշտապես մեծ հետաքրքրություն են առաջացնում ուսումնասիրողների շրջանում:

**Аршавир ГАСПАРЯН (Армения)**

Ширакский государственный университет (Гюмри)

E-mail: ArshavirGasparyan@mail.ru

**Анаит МУСАЕЛЯН (Армения)**

Цахкашатская основная школа Лорийского марза РА

## **ИСТОРИОГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ ТОВМА МЕЦОПЕЦИ**

Знаменитый летописец Товма Мецопеци пользовался авторитетом среди духовной и мирской слоев верховного общества.

Историограф жил и творил в сложные времена. В его историографическом наследстве красной нитью проходит, с одной стороны, безграничная любовь и преданность к своей родине, к своему вероисповеданию, к своей культуре, с другой – несдержанная ненависть к чужеземным захватчикам и тиранам.

Историограф очень хорошо осознавал неполные стороны своего изложения, он будто писал без предварительного плана, уповая на свою слабую память. Товма Мецопеци развивал также бурную общественно-политическую и духовную деятельность, о которой оставил очень интересные и примечательные сведения. Его историографические сочинения

вызывают большой интерес среди исследователей, поскольку они являются правдивым описанием очевидца.

Историографическое наследство Товма Мецопеци не настолько велико, однако по содержанию оно является бесценным первоисточником для исследования истории 14-ого и первой половины 15-ого веков Армении и соседних стран.

**Arshavir GASPARYAN (Armenia)**

Shirak State University (Gyumri)

e-mail: ArshavirGasparyan@mail.ru

**Anahit MUSAYELYAN (Armenia)**

Tsaghkashat Primary School of Lori Region, RA

## TOVMA METSOPETSI'S HISTORIOGRAPHIC HERITAGE

Prominent historian Tovma Metsopetsi gained authority in the spheres of clerical and secular societies.

The historian lived and worked in hard historical period. In his historical legacy we can clearly see his love and devotion towards his native country, religion, and culture on the one hand, and severe hatred towards foreign invaders and dictators on the other hand.

The historian realized the weaknesses of his work, as if writing without having an arranged plan, relying on his weak memory. He was also deeply involved in social, political, and clerical activities, about which he left remarkable and interesting information. His historical works always attract the attention of interested people as they are depictions made by a true witness.

The historical heritage of Tovma Metsopetsi is not large, but due to its detailed material it is valuable source for studying the history of the first half of 14<sup>th</sup> and 15<sup>th</sup> centuries in Armenia and neighboring countries.

**Ռուբեն ԳԱՍՊԱՐՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

Էլ. փոստ՝ rige55@mail.ru

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆՅԱՑ ԻՇԽԱՆ ՏԱՐՍԱՅԻՃ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԱԹԱԲԵԿ ՏԻՏՂՈՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սյունյաց պատմագիր Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ աթաբեկության պատիվը տրվել է հորը՝ Տարսայիճ Օրբելյանին, երբ Հուլավյան չորրորդ դինաստիայի տիրակալ, իշխան Աբաղայի որդի Արդունը հաստատվել էր իր հայրական գահին: Սկզբնաղբյուրի հավաստմամբ, արարողությանը ներկա վրաց թագավոր Դեմետրե (Բ)



Անձնուրացը վերստին հաստատվում է «Գյուրջիստանի վիլայեթի» տիրակալ. «գոր սիրեաց Արդունն, և ետ նմա զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն Աւագեան և զտունն Շահնշահեան և զԳագեցին և զորդիսն Սադուն աթաբեկին»<sup>1</sup>: Նույն աղբյուրի տեղեկացմամբ, վրաց թագավորին Հորդայից վերադառնալիս Շարուրում «մեծամեծ պատուով և արքունական ընծայիւք» դիմավորում է Տարսայիճ Օրբելյանը. «... Դարձաւ Դեմետրէ մեծաւ խնդրութեամբ և ամենայն ազատօք, և մեծամեծք Վրաց և Հայոց ընդ նմա: Եւ եկեալ ի Շարուր՝ զնաց նմա ընդ առաջ Տարսայիճն մեծամեծ պատուով, և արքունական ընծայիւք մեծարեաց զթագաւորն»<sup>2</sup>: Վրաց թագավոր Դեմետրե Բ-ը Սյունաց իշխանի ուղեկցմամբ եկել է «յերկիրն Աւագեան՝ յԱյրարատ» և թախանձագին համոզումով վերջինիս շնորհել երկրի աթաբեկության պատիվ. «Եւ նա առեալ տարաւ ընդ իւր զնա յերկիրն Աւագեան՝ յԱյրարատ. և բազում թախանձանօք բռնազբօսեաց զնա, և եղ Աթաբեկ ի վերայ ամենայն տէրութեան իւրոյ մինչև ի Տփղիս և յԱնի և ի Կարս»<sup>3</sup>:

Հավանական է՝ վերոնշյալ վկայությունը նկատի ունենալով՝ վրաց գիտնական Ռ. Կիկնաձեն զարգացնում է այն իրատեսական ու համոզիչ կարծիքը, թե Տարսայիճ Օրբելյանը դարձել էր «ռչ թե Վրաց թագավորության, այլ միայն Հայաստանի աթաբեկ»<sup>4</sup> Սահիբ Դիվանի մահվանից հետո:

Պատմագրի վերոնշյալ վկայությունից կարելի է հետևեցնել, որ այդ պաշտոնի նվիրման մենաշնորհը պատկանում էր վրաց թագավորին՝ «և եղ (Դեմետրե Բ.- Ռ.Գ) Աթաբեկ ի վերայ ամենայն տէրութեան իւրոյ»<sup>5</sup>, սակայն չի բացառվում, ինչպես իրավամբ նշում է Պ. Մուրադյանը, որ վերջինս իրականում այդ որոշումը «համաձայնեցնում» կամ կատարում էր իշխանության «թելադրանքով»<sup>6</sup>:

Սյունյաց պատմագրի վկայությամբ հոր՝ Տարսայիճ Օրբելյանի աթաբեկությունը բնորոշվում է որոշակի տարածքային իրավասությանը<sup>7</sup>. «...եղ Աթաբեկ ի վերայ տէրութեան իւրոյ մինչև ի Տփղիս և յԱնի և ի Կարս»<sup>8</sup>: Հավանական է՝ ուսումնասիրողները պատմագրի «ի վերայ տէրութեան իւրոյ մինչև ի Տփղիս և յԱնի և ի Կարս» նախադասությունն ընկալել են ուղղակի, սակայն, մեր կարծիքով, պատմագիրը նշյալ դարձվածն օգտագործել է փոխանունաբար՝ նկատի ունենալով Վրաց Բագրատունյաց նստոցը՝ «ի

<sup>1</sup> Օրպելեան, Ստեփաննոս, Պատմութիւն տանն Սիսական, Փարիզ 1859, էջ 173:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> Մարգարյան Հ, Մահկանաբերդցիների (Սադունյանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում, Հայկազեան հայագիտական հանդես, հ ԺԸ, Պէյրուք, 1998: Այսուհետ՝ Մահկանաբերդցիների (Սադունյանների) իշխանական տունը, էջ 38:

<sup>5</sup> Ստեփանոս Օրբելեան, էջ 426:

<sup>6</sup> Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 233:

<sup>7</sup> Ակադ. Մ. Աբեղյանը շեշտում է, որ «իբրև ուսյալ գրող՝ նա Սիսականի պատմությունն սկսելուց դնում է այդ նահանգի աշխարհագրությունը, որ հազվադեպ մի գործ է մեր հին պատմագիրների մեջ», Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. II, Երևան, 1946, էջ 213:

<sup>8</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 426:

Տփղիս» Վրաստան, ողջ թագավորությունը, իսկ «յԱնի և ի Կարս»՝ Հայաստան<sup>1</sup>: Նկատելի է, որ պատմիչն ընդգծում է «Հայոց և Վրաց» (Վրաստան և Հայաստան) դարձվածը:

Լ. Մելիքսեթ-Բեկի թարգմանած մեծածավալ աշխատությունը, Վրաց ժամանակագրությունը և «Քարթլիս ցլտվրեբա»-յի ռուսերեն հրատարակությունը Տարսայիճ Օրբելյանի աթաբեկ դառնալու մասին որևէ տեղեկություն չեն հայտնում: Թեև վրաց գիտնականը գրում է, որ Սադուն Արծրունու մահվանից հետո Դիմիտրե Բ-ը տվեց աթաբեկությունը ոչ թե վերջինիս որդուն՝ Խուրթուբուղային, այլ նրանց մրցակից իշխան Տարսայիճ Օրբելյանին. «Արդեն, 1281թ. Սադունի մահից հետո, թագավոր Դիմիտրիին աթաբեկությունը տվեց ոչ թե վերջինիս որդուն՝ Խուրթուբուղային, այլ նրա մրցակից ֆեոդալ Տարսայիճ Օրբելյանին, իսկ Սադունի որդի Խուրթուբուղային հանձնեց միայն ամիրսպասալար տիտղոսը: «Лишь в 1281г., уже после смерти Садуна, царь Димитрий передал атабагство не его сыну Хутлубуге, а соперничавшему с ним феодалу Тарсаичу Орбели, а сын Садуна- Хутлубуга получил только титул амирспаслара»<sup>2</sup>:

Ուշագրավն այն է, որ «Գյուրջիստանի վիլայեթում» այդ բարձր պաշտոնների մասնատումը փաստացի իրականացվել է այն ժամանակ, երբ մահացել էր մեծ իշխան Սադուն Բ Արծրունին, և Հորդայում մահվան էր դատապարտվել վերջիններիս «հովանավոր», իշխանության ֆինանսների դիվանապետ խոջա Սահիր դիվան Շամս-ադ-դին Ջուվեյնին:

Տարսայիճ Օրբելյանի աթաբեկության մասին Ս. Բարխուդարյանը նշում է, որ Ամադուի Նորավանքում եղել է արձանագիր մի հարթ տապանաքար, որից այսօր պահպանվել են ջարդված անընթեռների փոքր մասեր, և որ ինքը տապանագրի բնագիրը վկայակոչելիս օգտվել է տեղագրողներից. «*Այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին, հզար և մեծ գործակալին, քաջ մենամարտին, Աթաբեկ տարսայիճին, ի թվ.:* ՉԼԸ (1289)»<sup>3</sup>: ԺԴ դ. պատվիրված Ավետարանի հիշատակարանում, ընդօրինակող գրիչ Թորոս փիլիսոփան գրում է, որ հանդիպել է «տեառն Ստեփաննոսին» իմաստուն գիտնականին՝ Հայոց և Վրաց աթաբեկ Տարսայիճի որդուն. «Գրեալ ձեռամբ Թորոս փիլիսոփայի, զոր տեսեալ տեառն Ստեփաննոսի՝ հզար և իմաստուն գիտնականի, որդի իշխանաց իշխան՝ քաջ սպառազէն մենամարտիկ զինարի Ջալալին, թոռին մեծ աթաբակին Հայոց և Վրաց վեհ Տարսայիճին, ի ՉԸ (1331)»<sup>4</sup>: Հիշատակարանի անառարկելի վկայու-

<sup>1</sup> Արձանագիր բնագրերում փոխանունաբար օգտագործված վաղագույն օրինակն է Բյուրականի տաճարի ՆՂԳ (1044թ.) իշխանաց իշխան Ջաքարե Պահլավունու արձանագիրը. «ՆՂԳ թուակա- նութեանս հայոց այս իմ գիր է Ջաքարե իշխանաց իշխանի, որդոյ Վահրամ, որ ազգաւ Պախղաւ, որ ետու զԲիւրականի զլթաստակն Շահնշահի՝ իմ պատրոնին հոգոյն», Տեր-Մինասյան Եհ., Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Թ, Ե, էջ 48: «Շահնշա պատրոնի» փոխարեն պետք լինէր Բագրատունի՝ Հովհաննես-Սմբատ թագավորի անունը:

<sup>2</sup> Бердзенишвили Н. А. Дондуа В. Д. История Грузии. 1, էջ 246. «Որոշ ժամանակ հետո մահացավ աթաբազ Սադունը և թագավորը նրա կալվածը տվեց որդուն՝ Խուրթուբուղային և սպարապետության պատվի բարձրացրեց», «Картлис Цховреба», էջ 386:

<sup>3</sup> Վիմական տարեգիր, էջ 131:

<sup>4</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, կզմ. Խաչիկյան Լ. Ս, Երևան, 1950, էջ 42, 231:

թյամբ՝ Տարսայիճ Օրբեյանը հորջորջվել է «Հայոց և Վրաց» աթաբակ: Օրբեյան Տարսայիճն աթաբակ տիտղոսով հայտնի է նաև Ազարակաձորի մի խաչքարի բնագրից, որտեղ ունի Աբասու «այլ եղբարքս», հավանական է եկեղեցու սպասավոր-հոգևորականները, կանգնեցրել են կոթողը Մարկոսի ու Վարդամիրայի հիշատակին ՉԼ (1281). «Պարոն աթաբակ Տարսայիճիս, ես Աբասու այլ եղբարքս կանգնեցաք խաչս թվ.:ՉԼ:»<sup>1</sup>: Բնագիրը կարևորվում է նրանով, որ արձանագրում, փաստարկում է 1281թ. Տարսայիճ Օրբեյանի աթաբակ լինելու իրողությունը, մինչդեռ վերջինս, համաձայն գրավոր աղբյուրների, աթաբակ պետք է լինի ոչ շուտ, քան 1284/5 թթ., քանի որ վրացական աղբյուրի և Մյունխենյաց պատմիչի հավաստմամբ՝ Արդունը վրաց թագավոր Դիմիտրե Բ-ի թագավորական իրավունքները հաստատել է այդ ժամանակ, երբ 1284 թ. հաստատվել է Իշխանության հայրական գահին:

Տարսայիճ իշխանն այդ տիտղոսով է հիշատակված նաև Ամադուի Նորավանքի Թամթա խաթունի «կանգնեցրած» խաչքարի չորստողանոց արձանագրությունում (քանդակագործ, գծող ու փորագրողն է Մումիկ վարդպետ). «Ես՝ Թամթա խաթունս կանգնեցի զխաչս ի փրկութի հոգո աթապակ Տարսայիճին և յարևշատութի, որդոց իմոց Բիրթելին և Բուդտային, Թվին: ՉՄԷ (1308)»<sup>2</sup>: Հիշյալ տիտղոսը ևս վավերագրված է և իշխանի տապանաքարին. «Ի թվիս ՉԼԸ (1289), այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին, հզար և մեծ գործակալին և քաջապահ մենամարտին Աթաբակ Տարսայիճին»<sup>3</sup>: Մակայն զարմանալին այն է, որ Տարսայիճ Օրբեյանի ժառանգներից ոչ մեկը չեն կրել աթաբակ-գործակալ տիտղոսը:

Այսպիսով, ինչպես նկատելի է, մատենագիր և արձանագիր սկզբնաղբյուրները փաստում են Մյունխենյաց իշխան Տարսայիճ Օրբեյանի «Հայոց և Վրաց» աթաբակ լինելու իրողությունը:

**Рубен ГАСПАРЯН** (Армения)

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: riges55@mail.ru

## **КОММЕНТАРИЙ О ТИТУЛЕ АТАБЕК СЮНИКСКОГО КНЯЗЯ ТАРСАИЧА ОРБЕЛЯНА**

По свидетельству летописца Степаноса Орбеляна, сюникский князь Тарсаич Орбелян был удостоен атабекского титула от грузинского царя Деметра Самоотверженного. Вернувшись из Иордании, он передал князю Сюника, который встретил его в Шаруре, дело

<sup>1</sup> Դիվան, պրկ., III, էջ 26:

<sup>2</sup> Անդ՝ էջ 243: Կոթողի բնագիրն առաջին անգամ ընդօրինակել է Գ. Հովսեփյանը, տես՝ Հովսեփյան Գ, Նյութեր, հ. Բ, «Մումիկ սարկավազ», էջ 220:

<sup>3</sup> Վիմական տարեգիր, էջ 131:

атабекства страны. Грузинский ученый Р. Кикнадзе развивает мнение, что Тарсаич Орбелян, после смерти Сахиба Дивана, стал атабеком только Армении, а не грузинского царства. Судя по источникам, присуждение этого звания было привилегией грузинского царя. Как справедливо утверждает П. Мурадян, это не исключает того факта, что грузинский царь, в действительности, будучи под влиянием монгольских завоевателей, согласовывал это решение с ними.

Подлинник хачкара Агаракадзора доказывает, что почетного титула атабек Тарсаич Орбелян был удостоен в 1281 году, в то время, как он, согласно письменным источникам, мог быть титулован в атабеки не ранее чем 1284/5 гг. Согласно грузинским и армянским источникам, монгольский царь Аргун подтвердил царские права Дмитрия II в 1284 году, когда его возвели на отцовский трон. Таким образом, библиографические и протокольные источники после 1284 года подтверждают получение Сюникским князем Тарсаичем Орбеляном титула «Атабек Армении и Грузии» после 1284 года.

**Ruben GASPARYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: rige55@mail.ru

#### **REGARDING SYUNYATS PRINCE TARSAYICH ORBELYAN'S ATABEK TITLE**

According to historian Stepanos Orbelyan, Syunyats Prince Orbelyan received the title of Atabek from the Georgian king Demetrius. When he was coming back from Jorda / Horde, in Sharur he honored Syunyats Prince with the title of Atabek. Georgian scientist R. Kiknadze is of the opinion that after the death of Shahab Divan, Tarsayich Orybelyan had become “the Atabek of Armenia, and not of Georgia”. The commitment of this title, judging from the sources, was to the Georgian king, but it was not excluded, as P. Muradyan is rightly stating, that the latter “agreed” that decision with conquering Mongols. The script on Agarakadzor Khachkar dating back to 1281, indicates Tarsayich Orbelyan's Atabek honorable title, whereas the latter, according to written sources, there shouldn't be atabeks not earlier than 1284-85, referring to Armenian and Georgian sources, Arghun confirmed royal rights of Demetrius B that time, when in 1284 he was promoted to his father's throne. It is notable that after 1284 bibliographers and historical sources prove the fact that Syunyats Prince Tarsayich Orbelyan was the Armenian and Georgian Atabek.

**Խորեն ԳՐԻԳՈՐՅԱՆ** (Հայաստան)

Պատմամշակութային արգելոց-թանգարանների և  
պատմական միջավայրի պահպանության ծառայություն (Երևան)  
Էլ.փոստ՝ khorenethnography@gmail.com

**ՄՈՒՍԱԼԵՌԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ  
ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱՅԻՆ  
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Օսմանյան կայսրությունում 1915թ. Հայոց ցեղասպանության ընթացքում Իսկանդերուն-Ալեքսանդրեթի Սանջակի Մուսա լեռ կոչվող լեռան մոտի հայկական գյուղերը չենթարկվեցին քստրի հրամանին և բարձրացան Մուսա լեռ, ռազմական դիմադրություն ցույց տվեցին թուրքական կանոնավոր զորքերին և կարողացան ֆրանսիական նավերի օգնությամբ տեղափոխվել Եգիպտոս՝ Պորտ Սայիդ: Առաջին աշխարհամարտում՝ Օսմանյան կայսրության պարտությունից հետո, Իսկանդերուն-Ալեքսանդրեթի Սանջակը հանձնվեց Ֆրանսիային, և Ֆրանսիան Պորտ Սայիդում ապաստանած հայերին վերադարձրեց իրենց բնակավայրերը: 1938-ին՝ Երկրորդ աշխարհամարտից առաջ, Ֆրանսիան Ալեքսանդրեթի սանջակը հանձնեց Թուրքիայի Հանրապետությանը և հայրենիք վերադարձած հայերին 1939թ. օգնեց տեղափոխվելու Լիբանան և հիմնադրելու Այնճար գյուղը, որը հայտնի է որպես մուսալեոցիների գյուղ: Գյուղը հիմնադրելուց մոտ քսան տարի հետո միայն հայերի այս խումբն սկսեց վերագնահատել իր ինքնապաշտպանական անցյալը՝ որպես հերոսական դրվագ, և հիմա հպարտորեն կրում է «մուսալեոցի» անունը:

Մույն պատմական դեպքերը տեղ են գտել ինչպես գեղարվեստական, այնպես էլ պատմական աշխատություններում: Այս պատմական դեպքերի վերաբերյալ առավել ուշագրավ են ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հուշագրությունները: Այս հեղինակները, ի սկզբանե չունենալով համակարգված, գիտական աշխատանք շարադրելու պատվեր կամ շարժառիթ, փորձել են ներկայացնել տեղի ունեցած դեպքերը իրենց տեսանկյունից՝ հաճախ «իրենց տեսանկյուն» եզրույթի մեջ առնելով շրջապատում կարծրացած պատկերացումները:

Մուսալեռան ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ հրատարակված գրականությունը կարելի է բաժանել երկու մեծ խմբի.

1. առաջնային սկզբնաղբյուրներ, որոնք նախապես ունեցել են մեծ մասամբ միմիայն ինքնապաշտպանական մարտերի ընթացքը շարադրելու միտում,
2. ժամանակին մրցակցող (19-20-րդ դդ.) հայկական ավանդական կուսակցությունների՝ ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման գործում դերը առանձնահատուկ նշելու միտում ունեցող աղբյուրներ:

Իհարկէ, երկրորդ խմբի աղբյուրներում քիչ չեն նաև դեպքեր, երբ հեղինակները, ազդված լինելով Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40» օրը գրքից, որոշակիորեն օգտագործել են վեպի խորհրդանշական դրվագները: Մակայն այս աղբյուրներն ավելի ուշ շրջանի հրատարակություններ են և ավելի կենդանի են այսօր մուսավեղիների պատմություններում:

Այսպիսով՝ վերոնշյալ խմբերի գրական աշխատություններն էլ տեղ են գտել «մուսավեղի» ինքնության առաջացման ու զարգացման գործում, որոնց ներկայացումը և ուսումնասիրությունն էլ հենց սույն հետազոտության խնդիրն են:

Նպատակ ունենք ներկայացնելու Մուսա լեռան վրա տեղի ունեցած դեպքերի պատմական հակիրճ նկարագիրը՝ ըստ սկզբնաղբյուրների՝ զերծ մնալով անձերին կամ առանձին խմբերին առանձնահատուկ դերակատարում շնորհելուց:

Մրանից գատ՝ վերոնշյալ երկրորդ խումբ աղբյուրների միջոցով ներկայացնել, թե ինչպիսի ազդեցություն են թողել սույն կուսակցական գրական աշխատությունները «պատմական իրականության» տարբեր ընկալում ունենալու և մեկնաբանվելու վրա: Մա կօգնի ներկայացնելու «մուսավեղի» ինքնության երկու տարբերվող պատումներ, որոնցում ինքնապաշտպանական մարտերի հերոսներից մինչև տեղի ունեցող դեպքերի հերթականությունը չեն համընկնում միմյանց, հաճախ առաջ են բերում հակասություններ ու հակադրություններ:

**Хорен ГРИГОРЯН (Армения)**

Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников (Ереван)  
e-mail: khorenethnography@gmail.com

## **САМООБОРОНА МУСАЛЕРА В ПЕРВОИСТОЧНИКАХ И ИХ ВЛИЯНИЕ НА ТРАНСФОРМАЦИЮ ЛОКАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ И СОЦИАЛЬНОЙ ПАМЯТИ**

1915 году во время Геноцида армян в Османской империи армянские деревни возле Санджака Искендерун-Александретта не выполнили приказ переселения. Они отправились в Муса-Даг, оказали сопротивление регулярным турецким войскам и смогли перебраться на порт Саид, Египет, на французских кораблях. После поражения Османской империи в Первой мировой войне Санджак Искендерун-Александретта был сдан Франции, а Франция вернула армянам, которые приютились в Порт-Саиде. В 1938 году, Франция передала Санджак Александретта-Искендерун Турецкой Республике, а армянам, которые вернулись на родину еще в 1919 году, помогла в 1939 году переехать в Ливан и основать деревню Айнджар, известную как деревня Мусадагцев. Только через двадцать лет после основания деревни, эта группа армян начала рассматривать свою «самооборону» как героический эпизод и теперь гордо носит имя «Мусадагци-мусалерци». Эти исторические события встречаются как в ху-

дожественных, так и исторических произведениях. Более интересны воспоминания участников боевых действий самообороны. У этих авторов изначально не было мотивации изложить систематическую, научную работу: они пытались представить события с их точки зрения, а термин «с их точки зрения» часто демонстрировал стереотипы того периода времени.

Литературу, опубликованную о боях самообороны Мусалера, можно разделить на две основные группы:

1. Первоисточники, которые изначально имели тенденцию описывать ход сражений самообороны;
2. источники, которые были опубликованы традиционными армянскими партиями (XIX-XX вв.), где в основном указывалась их особенная роль в организации самообороны.

Конечно, в источниках второй группы часто авторы находились под влиянием книги Франца Верфеля «40 дней Муса-Дага», в которой, однозначно, использовались символические эпизоды романа. Тем не менее, эти источники более свежи и живы сегодня в рассказах мусадагцев.

Таким образом, литературные произведения вышеупомянутых групп были также включены в создание и развитие местной идентичности «Мусалерцы», чьи презентации и исследования являются предметом данного доклада.

Наша цель-дать краткое историческое описание событий в Муса-Даге в соответствии с источниками, не подчеркивая определенные роли отдельных лиц или определенных групп. Кроме того, с помощью второй группы источников мы покажем, как эти партийные литературные произведения до сих пор влияют на восприятие и интерпретацию «исторической реальности». Это поможет представить две разные истории местного самосознания «Мусалерцы», где герои сражений самообороны, последовательность событий не совпадают друг с другом, а часто противоречат.

**Khoren GRIGORYAN (Armenia)**

Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations (Yerevan)

e-mail: khorenethnography@gmail.com

## **MUSALER'S SELF-DEFENSE BATTLES IN PRIMARY SOURCES AND THEIR INFLUENCE ON THE TRANSFORMATION OF LOCAL IDENTITY AND SOCIAL MEMORY**

In 1915, during the Armenian Genocide in the Ottoman Empire, Armenian villages near Sanjak Iskenderun-Alexandretta did not fulfill the order of exile. They climbed to Musa Dag and resisted regular Turkish troops and were able to move to the port of Said, Egypt, with the help of French ships. After the defeat of the Ottoman Empire during the First World War, Sanjak Iskenderun-Alexandretta was surrendered to France, and France returned the Armenians who sheltered in Port Said. In 1938, before World War II, France handed over Sanjak Alexandretta-Iskenderun to the Republic of Turkey and the Armenians, who returned to their homeland in 1919, helped move to Lebanon in 1939 and establish the village of Ainjar, known as village of Musa-

daghians. Only twenty years after the founding of the village, this group of Armenians began to revise their past of self-defense as a heroic episode and now proudly bears the name "Musadagci-musalertsi". These historical events are found in both artistic and historical works. The memories of the participants's self-defense battles are of great importance. These authors initially did not have the motivation to portray systematic, scientific work: they tried to present events from their point of view, often the term "from their point of view" showed stereotypes of that period of time.

The literature published on the Musaler self-defense battles can be divided into two main groups:

1. The original sources, which initially tended to describe the course of self-defense battles.
2. Sources that were published by traditional Armenian parties (19th and 20th centuries) in the survey field, to indicate the special role of organizing self-defense battles.

There are quite a few cases in the sources of the second group, when the authors were influenced by the book by Franz Werfel "40 Days of Musa-Dag," which uniquely used the symbolic episodes of the novel. However, these sources are more recent and more alive today in the stories of the Musadagian Armenians.

Thus, the literary works of the above-mentioned groups were also included in the creation and development of the local identity of Musalertsi, whose presentation and research is the subject of this study.

We have a goal to provide a brief historical description of the events in Musa Dag in accordance with the sources, refusing to give a certain role to individuals or certain groups.

In addition, with the help of the second group of sources, we will show how these party literary works influence the perception and interpretation of "historical reality". This will help to present two distinctive stories of local identity "Musalertsi", where from the heroes of self-defense battles to the sequence of events do not coincide, often bringing contradictions.

**Դմիտրի ԴԻՄԻԴՅՈՒԿ (Ուկրաինա)**

Լվովի ազգային համալսարան  
Էլ. փոստ՝ dymydyuk\_da@ukr.net

## **ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՇՐՋԱՆԻ ԳՈՒՐԶԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (IX դ. վերջ-XI դ. կես)**

Բագրատունյաց ռազմական պատմությունը երկար ժամանակ վրիպել էր գիտնականների տեսադաշտից, ինչը բացասաբար էր ազդում միջնադարյան Հայաստանի պատմության սոցիալ-քաղաքական և այլ ասպեկտների ուսումնասիրման վրա: Կարինե Ոսկանյանի վերջերս պաշտպանած ատենախոսությունը՝ «Հայոց բանակը Բագրատունյաց շրջանում IX -XI դդ.», (2010), որոշակիորեն լրացրեց այդ բացը, սակայն հետա-



գոտողը, ցավոք, իր ատենախոսության մեջ չի օգտագործել պատկերային կամ գեղանկարչական աղբյուրներ, որի պատճառով մի շարք հարցեր՝ կապված այն ժամանակի զենքերի տեսակների և գործառնությունների հետ, ինչպես նաև դրանց համեմատությունը թուրքական և բյուզանդական զենքերի հետ, մնում են չլուծված: Թեման արդիական է նաև այն պատճառով, որ համալիր միջդիսցիպլինար հետազոտություն է, որում եկեղեցական պատմության և արվեստագիտության տեսակետից են դիտարկվում միջնադարյան հայ ռազմիկների զինվածության հարցերը:

Հետազոտության խնդիրն է հայտնի պատկերային աղբյուրների վերլուծությունը, որոնցում ներկայացված են գուրգերի տարբեր տեսակներ: Այդպիսիք հանդիպում են «Հուդայի համբույրը» Ավետարանի 4 մանրանկարներում (IX դ. վերջ-XI կես), որոնցից երկուսը պահվում են Մատենադարանում, մեկը՝ Երուսաղեմի հայոց պատրիարքարանում, մյուսն էլ՝ Արեգ գյուղում: Բացի այդ, գուրգի պատկերներ ենք հայտնաբերում Մշո Առաքելոց վանքի դռների (1134) վրա և Կարսի Ավետարանի «Հիսուսը Պիղատոսի առջև» մանրանկարում:

Այս գործերի վարպետները հիմնականում կղերականներ էին, որոնք այնքան էլ խորամուխ չէին ռազմի գործերում, սակայն պատկերում էին իրենց հայտնի զենքի նմուշները, ինչով և արժեքավոր են դառնում այդ պատկերները: Համեմատական վերլուծություն անցկացնելու համար ներառվել են նաև այլ աղբյուրներ՝ Մադրիդյան Սկիլիցայի (XII դ.) և Թեոդորոսի Սաղմոսը (1066), Նեա-Մոնի մենաստանի «Հուդայի համբույրը» խճանկարը (XI դ.) և այլն:

Հարկ է նշել նաև այն պատմաբաններին, որոնք զբաղվել են Բյուզանդիայի և մահմեդական աշխարհի ռազմական պատմությամբ. Նրանք են Ջ. Խալլոն, Պ. Գրտովսկի, Տ.Կոլիաս, Թ. Դոուսոն, Դ. Նիկոլ և այլք: Հատուկ ուշադրության է արժանի իտալացի պատմաբան Ռաֆայել Դ.Ամատոյի բյուզանդական գուրգերի մասին հոդվածը, որն արժեքավոր է համեմատական վերլուծության համար:

Շնորհիվ համընդհանուր վերլուծության հաջողվեց վերականգնել Բագրատունյաց շրջանում Հայաստանում տարածված գուրգերի տեսակները, տրվել է դրանց մարտական բնութագիրը, ցույց տրվել կապը մարտական փայտի հետ, ինչպես նաև անցկացվել են զուգահեռներ Բյուզանդիայի և Ռուսիայի գուրգերի հետ: Ապացուցվել է, որ Հայաստանը անջրպետ էր մահմեդական և բյուզանդական աշխարհների միջև՝ ներառելով այդ երկու մշակույթների լավագույն ձեռքբերումները. գուրգերի տեսակների մեծ մասը տարածված էր Արևելյան Եվրոպայի, Բյուզանդիայի, Հայաստանի, Արևելքի մյուս տարածքներում:

**Дмитрий ДИМИДЮК (Украина)**Львовский национальный университет имени Ивана Франко  
e-mail: dymydyuk\_da@ukr.net**БУЛАВЫ В АРМЕНИИ ЭПОХИ БАГРАТИДОВ  
(КОНЕЦ IX – СЕРЕДИНА XI вв.)**

Военная история эпохи Багратидов долгое время не находилась в поле зрения историков<sup>1</sup>, что негативно влияло на изучение социально-политических и других аспектов средневековой истории Армении. Недавно защищённая диссертация Карине Восканян о военной организации эпохи Багратидов (Հայոց բանակը Բագրատունյաց շրջանում (IX–XI դարեր, 2010) немного заполнила «белые пятна» в этой теме, но к сожалению, исследовательница практически в своей диссертации не использовала изобразительные источники, из-за чего остаются не решенные вопросы о виде и функциях тогдашнего оружия, а также их сравнение с византийскими и мусульманскими образцами. Тема актуальная еще и тем, что представляет комплексное междисциплинарное исследование, где с точки зрения церковной истории и искусствоведения рассматриваются вопросы вооружения средневековых армянских воинов.

Задача исследования заключается в анализе известных изобразительных источников, где представлены разные виды булав. Такие изображения мы встречаем на 4 миниатюрах «Поцелуй Иуды» из Евангелий конца X – середины XI вв.<sup>2</sup>, две из которых хранятся в Матенадаране<sup>3</sup>, одна в библиотеке Армянского патриархата в Иерусалиме<sup>4</sup> и еще одна в деревне Арег<sup>5</sup>. Кроме этого, одно изображение булавы находим на рельефе дверей церкви Мшо Аракелоц (1134)<sup>6</sup>, а еще одно - на миниатюре «Иисус перед Пилатом» Карского Евангелия<sup>7</sup>.

Мастера этих произведений часто были клириками, которые не очень сильно разбирались в военной сфере и использовали Библию как главный источник для своих творений, но помимо этого, они изображали известные им образцы оружия (в данном случае булавы), и поэтому эти изобразительные источники являются ценным материалом для изучения вооружения эпохи Багратидов. Их ценность возрастает еще и потому, что нам не известны

<sup>1</sup> Автору известна лишь одна краткая статья о средневековом армянском вооружении, где косвенно рассмотрена эпоха Багратидов – Արրահավյան Վ., Միջնադարյան Հայաստանի զենքերի տեսակները /Վալենտինա Արրահավյան//Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, Երևան, 1950, № 2, էջ 37–98:

<sup>2</sup> Большая часть миниатюр из манускриптов, относящихся к временам Багратидов, опубликованы Тиграном Коюмджяном (Dickran Kouymjian) на сайте Гамбургского университета (Index of Armenian Art: Database of Armenian Manuscript Illuminations – <https://mycms-vs04.rz.uni-hamburg.de/sfb950/content/IAA/Start.xml>).

<sup>3</sup> Мелитинское или Севастийское Евангелие (XI ст.). Матенадаран, №. 974. л. 2; Евангелие из монастыря св. Григория (1057). Матенадаран, №. 3784. л. 24 (XLVII);

<sup>4</sup> Мелитинское Евангелие (1041). Армянский патриархат в Иерусалиме, №. 3624. –л. 25 (XLVII).

<sup>5</sup> Kouymjian D. The Melitene Group of Armenian Miniature Painting in the Eleventh Century // Armenian Kesaria/Kausegi and Cappadocia. Costa Mesa, 2013. fig. 20.

<sup>6</sup> Двери находятся в Национальном музее в Ереване.

<sup>7</sup> Карское Евангелие (Евангелие Гагика) (1029–1064). Собор святого Иакова (Ерусалим), Ms. 2556 – 1, л. 125.

археологические находки булав, а письменные источники не содержат подробного описания этого оружия.

Для проведения сравнительного анализа были изучены также другие изобразительные источники, а именно: миниатюры Мадридского Иоанна Скилицы (XII ст.) и Псалтыря Теодора (1066); мозаика «Поцелуй Иуды» из монастыря Неа-Мони (XI в.); «Orprianus Sunegetica» из библиотеки Марчиана в Венеции (X в.), фреска «Поцелуй Иуды» из галереи Уффици (XII в.) и т.д.

Стоит вспомнить историков, которые занимаются изучением военной истории Византии и мусульманского мира – Джон Халдон, Пётр Гротовски, Таксиархис Колиас, Тимоти Доусон, Девид Николь, Ян Хит, Валерий Йотов и другие. Особое внимание заслуживает итальянский историк Рафаэль Д’Амато, который опубликовал отдельную статью о Византийских<sup>1</sup> булавах, и которая была очень полезна при проведении компаративного анализа.

Благодаря общему анализу удалось реконструировать популярные типы булав в Армении эпохи Багратидов (простые шарообразные, с шипами, перьями и т.д.). Определены боевые характеристики булав и их генетическая связь с боевой палкой, а также проведены параллели с булавами Византии и Руси (на основе трудов Анатолия Кирпичникова). Доказано, что Армения была фронтиром между мусульманским и византийским мирами и вобрала в себя лучшие достижения этих двух культур. Большинство типов булав были популярны на территории Восточной Европы, Византии, Армении и далее на Востоке.

**Dmitro DYMYDYUK (Ukraine)**

National University of Lviv  
e-mail: dymdyuk\_da@ukr.net

## **MACE IN BAGRATID ARMENIA (END OF IX – MIDDLE OF XI CC.)**

The military history of the Bagratid era for a long time was not the object of the historical research<sup>2</sup>, what in turn had negative impact on the socio-political studies and other aspects of the medieval history of Armenia. A few years ago, Armenian historian Karine Voskanyan defended dissertation about the military organization of the Bagratid era (Հայոց բախակը Բագրատունյաց շրջանում (IX–XI դարեր, 2010). The researcher partially analyzed arms and armor of the Bagratid Armenia, but she almost did not use graphic sources in the thesis, that left many questions unresolved about the form and functions of the weapons of that time.

<sup>1</sup> D’Amato R. Σιδηροράβδιον, βαρδούκιον, ματζούκιον, κορύνη. the war-mace of byzantium, 9th -15th c. ad: new evidence from the balkans in the collection of the world museum of man, florida / Raffaele D’Amato // Acta Militaria Mediaevalia. 2011. Tom 7. S. 7–48; D’Amato R. The Betrayal: military iconography and archaeology in the Byzantine paintings of XI-XV centuries AD representing the arrest of Our Lord / Raffaele D’Amato // Weapons bring peace? Warfare in Medieval and early Modern Europe. Wroclaw, 2010. P. 69–95.

<sup>2</sup> The author knows only one article about medieval Armenian weapons, where the Bagratid epoch was indirectly considered: Աբրահամյան Վ. Միջնադարյան Հայաստանի զենքերի տեսակները [in:] Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի. Եր., 1950, № 2, էջ 37–98.

The main task of the research is to analyze all types of maces, which are represented in Armenian pictorial sources:

1) At four miniatures “Kiss of Judas” from Gospels (10–11 c.)<sup>1</sup>, two of which are stored in the Matenadaran<sup>2</sup>, one in the library of the Armenian Patriarchate in Jerusalem<sup>3</sup> and the last one in the village Areg (Armenia)<sup>4</sup>.

2) In the miniature “Jesus before Pilate” at the Kars Gospel (1029–1064)<sup>5</sup>.

3) One depiction of the mace are located on the relief of the door from the church Msho Arakelots (1134)<sup>6</sup>.

These miniatures or reliefs were made by clergy who were not specialists in military sphere. In return they used Bible as the main source for their masterpieces. Besides, we believe that artists presented only those types of weapons which were popular at that time and which they could see somewhere. Despite some inaccuracies, these sources are valuable material for studying the weapons of the Bagratid Armenia. These sources are also of great value because we do not know any archaeological finds of maces from that period and written sources do not provide us with detailed description of this weapon.

In order to make comparisons, we take Byzantine and Muslim figurative sources: miniatures from Madrid Skylitzes (12 c.) and Theodore Psalter (1066); mosaic “Kiss of Judas” from Nea-Moni monastery (Greece) (11 c.); miniature “Oppianus Cynegetica” from Marciana library (X c.), fresco “Kiss of Judas” from Uffizi Gallery (XII c.), etc.

The military history of the Byzantine Empire and Muslim world are well investigated by John Haldon, Piotr Grotowski, Taxiarchis Koliass, Timothy Dawson, David Nicole, Ian Heath, Valery Yotov and other historians. Special attention has to be paid to Italian historian Raffaele D’Amato who published separate article about maces in Byzantine<sup>7</sup>, which was useful for making comparisons with Byzantine sources.

Thanks to general analysis, popular types of maces in Bagratid Armenia (round and smooth shape, with wings, spikes etc.) were reconstructed. Fighting characteristics of the clubs and their genetic link with the battle stick were defined. For the first time in historiography, Armenian weapons will be not the subject but the object of research, where under the sight of Church and art history, the issues of armament of medieval Armenian soldiers were analyzed and their comparisons with Rus’, Byzantine and Muslim samples were made since the topic of this article has become relevant.

<sup>1</sup> Most of the miniatures from the manuscripts relating to the Bagratid times were published by Dickran Kouymjian on the Hamburg University website (Index of Armenian Art: Database of Armenian Manuscript Illuminations. – <https://mycms-vs04.rz.uni-hamburg.de/sfb950/content/IAA/Start.xml>)

<sup>2</sup> Melitene or Sebastia Gospel (11 c.) [in:] Matenadaran, №974, f. 2; Gospel St. Grigor Monastery. (1057) [in:] Matenadaran, №3784, f. 24.

<sup>3</sup> Melitene Gospel (1041) [in:] Armenian cathedral of Saint James (Jerusalem), №3624, f. 25.

<sup>4</sup> Kouymjian D. The Melitene Group of Armenian Miniature Painting in the Eleventh Century [in:] Armenian Kesaria/Kayseri and Cappadocia, Costa Mesa, 2013, fig. 20.

<sup>5</sup> The King Gagik and Kars Gospel (1029–1064) [in:] Armenian cathedral of Saint James (Jerusalem), Ms. 2556 – 1, f. 125.

<sup>6</sup> Door are located in History Museum of Armenia

<sup>7</sup> D’Amato R. Σιδηροράβδιον, βαρδούκιον, ματζούκιον, κορύνη. the war-mace of Byzantium, 9th -15th c. ad: new evidence from the balkans in the collection of the world museum of man, florida [in:] Acta Militaria Mediaevalia, 2011, Tom 7, pp. 7–48; D’Amato R. The Betrayal: military iconography and archaeology in the Byzantine paintings of XI-XV centuries AD representing the arrest of Our Lord [in:] Weapons bring peace? Warfare in Medieval and early Modern Europe. Wrocław, 2010, pp. 69–95.

**Ռոին ԿԱՎՐԵԼԻՇՎԻԼԻ (Վրաստան)**

Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարան (Ախալցխա)

Էլ. փոստ՝ roinkav@gmail.com

**ՄԻ ՔԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ**

**ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (12. 02 – 01. 12. 1920 թ.)**

Հողվածում քննարկվում են մի քանի արխիվային փաստաթղթեր, որոնք պատկանում են Վրաստանում Հայաստանի դիվանագիտական առաքելությանը 1918-1920 թվականներին: Փաստաթղթերը պահված են Վրաստանի պատմության կենտրոնական արխիվում և պարունակում են հետաքրքիր փաստեր ու տեղեկություններ այդ ժամանակաշրջանի հայ-վրացական հարաբերությունների մասին, բնօրինակների պատճենները հայերեն և ռուսերեն են: Հաստատված են առաքելության աշխատակցի կողմից: Փաստաթղթում քննարկվում են հարցեր Հայաստանի ու Վրաստանի ռազմական դաշինքի վերաբերյալ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ էր հստակեցնել Հայաստանի ու Վրաստանի միջև լիարժեք տարածքային համաձայնությունը: Ներկայացվում են երկու կողմերի դիրքորոշումները՝ ելնելով ազգային շահերից:

Փաստաթղթերից մեկում նշվում է, որ հայկական կողմը այս համաձայնագիրը դիտարկում է որպես Հայաստանի կողմից զիջում Ալավերդիի հարցում: Հարց է առաջանում, թե արդյոք Վրաստանի կողմից արված այս առաջարկը թելադրված չէ՞ հայկական կողմից տարածքային հարցի շուրջ զիջումներ ստանալու ցանկությամբ, ինչպես նաև Վրաստանին հնարավորություն տալու լրացուցիչ գորքեր մտցնելու Արդահան: Հայաստանի արտաքին գործերի նախարարի ներկայացրած հանձնարարականում, որը նա տվել էր Վրաստանում Հայաստանի ներկայացուցչին, առաջարկվում էր քննարկել Վրաստանի ու Հայաստանի միջև հնարավոր ռազմական համագործակցությունը, որը բաղկացած էր 3 կետից: Առաջարկների հիմնական գաղափարը հետևյալն էր. Հայաստանը Վրաստանի հետ ռազմական համագործակցությունը համարում էր օգտակար՝ միևնույն ժամանակ չցանկանալով գնալ տարածքային զիջումների, բացառելով անջատողական համաձայնագիրը Արդահանում Վրացական կայսրության ուժեղացմանը: Պահանջում էր Արդահանի հարավային մասից դուրս բերել վրացական զորքերը: Որոշ փաստաթղթեր հանդիսանում են դիվանագիտական նամակագրություն՝ երկու երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների միջև, որոնցում քննարկվում է Բորչալիի շրջանի և դրանից դուրս ստեղծված իրավիճակը:

Այն ժամանակ տպագրված թերթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս վրացական և հայկական կողմերի մոտեցումը դեռևս չլուծված հարցերի վերաբերյալ, և այդ հարցերի չլուծման պարագայում երրորդ ուժի հայտնվելու անհանգստության առկայությունը:

Պետք է նշել, որ երկու կողմերն էլ ստեղծված իրավիճակը նկարագրելու համար նշում են որոշակի հանգամանքներ, որոնք կրում են բացառապես ստրատեգիական նշանակություն և փորձում են խաղաղ լուծում գտնել վիճելի հարցերի լուծման համար:

**Рои́н КАВРЕЛИШВИЛИ (Грузия)**

Самцхе-Джавахетский государственный университет (Ахалцихе)  
e-mail: roinkav@gmail.com

### **НЕСКОЛЬКО АРХИВНЫХ ДОКУМЕНТОВ ИЗ ИСТОРИИ ГРУЗИНО-АРМЯНСКИХ ОТНОШЕНИЙ (12. 02 – 01. 12. 1920 г.)**

«Это память Махпари в церкви Пресвятой Богородицы, которая называется Норак-нунк, в селе Ханатсах (стр. 338b)».

**ЗАПИСЬ ПОЛУЧАТЕЛЯ** - «Я, Махапари, та кто получила это Святое Евангелие в церкви Пресвятой Богородицы, воспоминание моей души, о том что я посвятила церкви всю свою жизнь ... » (стр. 339а).

В «Евангелии» есть много прекрасных религиозных миниатюр, посвященных жизни и деятельности Иисуса Христа. Из миниатюр достойны внимания «Благовещение» («Аветум» - стр. 3б), «Рождество» («Цнунд» - стр. 4а), «Теарнэндарач» (стр. 5б), «Крещение» (стр. 6а), «Пайцаракерпутюн» (стр. 7б), «Въезд в Иерусалим» («Мутк Ерусаягем» - стр. 9б), «Последний ужин» (стр. 10а), «Мытье ног» («Вотгнлва» - стр. 11б), «Распятие» (стр. 13б), «Снятие Господа с креста» (стр. 14а), «Воскресение» (стр. 15б), «Вознесение» («Амбарцум» - стр. 16а), «Явление ангела» (стр. 17б), «Алтарь» (стр. 19б, 20а, 21б, 22а, 23б, 24а, 25б, 26а, 27б, 28а), «Титульный лист» (стр. 33а, 118а, 119а, 173а, 266а), «Евангелист» (стр. 32б, 112а, 113а, 117б, 172б, 265б), «Украшения» (34б, 35б, 36б, 37б, 40а, 41б, 42б, 45б, 47а 50а, 51б, 53б, 55а, 120б, 121б), «Божественный» (16а).

Итак, изучив эстетическую структуру «Евангелия», подчеркнем, что в произведениях бросается в глаза гармония симметрии и форм, оригинальные подражания цветов, анатомическая структура лиц, объёмные задачи.

**Marine HARUTYUNYAN (Armenia)**

Institute of History NAS RA (Yerevan)

e-mail: marina-arutunyan@mail.ru

## **THE GOSPEL OF KHANATSAKH VILLAGE OF ARTSAKH ACCORDING TO № 7840 MANUSCRIPT OF MATENADARAN**

Written culture has its special place in the centuries-old history of the Armenian people. Artsakh is considered one of the oldest centers of the Armenian written culture and literature. The art of writing, miniature, painting continued to develop in many centers of the manuscripts of Artsakh. Hundreds of manuscripts have been written and copied there for centuries. Due to the enthusiastic efforts of the prominent representatives of the Armenian culture, some of those manuscripts were saved (from the enemies' attacks) and brought to the Matenadaran named after Mesrop Mashtots.

In the paper we present one of the manuscripts that has not been studied thoroughly. The manuscript is kept in the Matenadaran under the number 7840. The latter is remarkable for perfection of his artistic language. The "Gospel" was written in Khanatsakh (Khnatsakh) village in 1693 by scribe Priest Ephrem. The recipient of the manuscript was Melik Hakhnazar's wife Mahpari Shintaghtsi. Pages -341, material - parchment, magnitude -12,6 X 9, writing form - with two columns, writing - bolorgir, line -21. According to the record on the inside of the cover, the manuscript was moved to the Matenadaran from Zangezur (cover **B**). It has come to us in a rebuilt, silver-covered composition. There are religious small sculptures on both sides of the cover: images of Crucifixion, Virgin Mary as well as hemispheres, angular and edge plating, lateral coverings. The manuscript has metallic chains. There is sculpture of "Christmas" on the cover **A**. Virgin Mary and Joseph are beside the manger, Jesus is on the manger, the lamb and the donkey are on her left. Virgin Mary is pictured in the sitting position looking at her baby. Images of a few shepherds are carved on the other side of the manger, and in part of frontal of cover there are images of flying angels. There is a sculpture of "Crucifixion" on the cover **D**. This image symbolizes Christ's principal activity end on the cross. By Christ nailed on a wooden cross affirms the victory of life over death. Jesus Christ is in the center, on the cross, down from him, on the right side, at the diagonal, is the Christian church.

The Gospels of the four evangelists are described in the manuscript: Matthew, Mark, Ghukas (Luke), John. The records of the scribe, receiver have been preserved, which provide an opportunity to clarify some issues.

**THE RECORD OF THE TIME OF WRITING** - 'In 1693, the scribe is Priest Ephrem, receiver is Mrs. Mahpari' (page 1a).

**RECORD OF THE SCRIBE** - '....blessed is the person who is reading the praise, who is listening to the person giving glory to God and let be the memory of the scribe, Amen' (p. 264).

'.... pious and God-fearing, generous and Christ-loving Mahpari, the wife of great Melik Hakhnazar .... the daughter of Biniatin from the village of Shinatagh with good will and pleasantness, a craving heart was the most precious pearl stone .... having received the manuscript, she dedicated to the memory of her and her whole family: sons, daughters, parents and all their relatives. Remember the believer Mrs. Mahpari and give glory to God. Glory to the Lord of all and everying, the soul of the recipient Mahpari and the whole family, Hakhnazar who is the great prince and the devout Christian of the great nation and also the sons: Pakhtam, Aghajan, Phatur, Agham. Again about the parents of Mahpari and her brothers: Priest Grigor, Hovanes, and the son of Grigor. It was written by the hand of the Priest Ephrem. I ask readers to remember me (the scribe) and my parents, Amen. Again about the daughters of Mahpari: Mirasei, Parighati, Sultanasla and the grandchilds of Mahpari: Havtandil, Mahpari. Havtandil is the son of Bakhtam bek. Remember also about Barkhutar who is the son Aghachan bek' (p. 337a - 338 a).

'This is the remembrance of Mahpari in the church of the Holy Mother of God, which is named Noraknunq, in the village of Khanatsakh (p. 338b).'

**RECORD OF THE RECIPIENT** - 'I, Mahpari, who has received this Holy Gospel in the church of Holy Mother of God, it is a remembrance of my soul that I have come to the church all my life...' (p. 339a).

**MINIATURE** - There are many beautiful church galleries in the "Gospel", which dedicated to the life and activities of Jesus Christ. The following miniatures are remarkable: "Annunciation" ("Avetum" - p. 3b), "Christmas" (p. 4a), "Tearnyndaraj"(p. 5b), "Baptism" (p.

6a), “Pajtsarakerputyun”(p. 7b), “Entry into Jerusalem” (p. 9b)”, “The last supper”(p. 10a), “The washing of the foot ”(p. 11b) , “ Crucifixion” (p. 13b), “The removal of the Lord from the cross” (p. 14a), “Resurrection” (p. 15b), “Ascension” (“Hambardzum” - p. 16a) , “The Appearance of the Angel”(p. 17 b) , “Altar” (p. 19b, 20a, 21b, 22a, 23b, 24a, 25b, 26a, 27b, 28a), “Titulny sheet”(p. 33a, 118a, 119a, 173a, 266a), “The Evangelist” (p. 32b, 112a, 113a, 117b, 172b, 265b), “Ornaments”(34b, 35b, 36b, 37b, 40a, 41b, 42b, 45b, 47a, 50a, 51b, 53b, 55a, 120b, 121b), “Divine” (16a).

So, having studied the aesthetic structure of the “Gospel”, we want to emphasize that there are harmony of symmetry and forms, original imitation of colors, anatomical structure of people, volume tasks in the works.

### Արտակ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ (Հայաստան)

Շիրակի պետական համալսարան (Գյումրի)

Էլ.փոստ: artakh76@mail.ru

### ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԽՍՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Երուսաղեմի կարգավիճակի հարցն առավել սուր է դեռևս չլուծված արաբա-իսրայելական հակամարտության ֆոնին: Չնայած բազմաթիվ պայմանագրերին՝ վերջնական համաձայնություն չկա: Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ առաջին (N181 (II)) բանաձևը ՄԱԿ-ի ԳԱ կողմից ընդունվեց 1947թ. նոյեմբերի 29-ին, ըստ որի՝ Երուսաղեմը պետք է ստանար միջազգային կարգավիճակ ՄԱԿ-ի վերահսկողության ներքո: Սակայն 1948-49թթ. արաբա-իսրայելական պատերազմի արդյունքում Հին քաղաքի հրեական բնակավայրերը մեկուսացվեցին, իսկ Նոր քաղաքը բաժանվեց ազդեցության գոտիների: 1948թ. հունիսի 11-ին հրադադարի համաձայնագիր կնքվեց, ըստ որի Արևելյան Երուսաղեմը գտնվելու էր Հորդանանի, իսկ Արևմտյան Երուսաղեմը՝ Իսրայելի հսկողության ներքո: 1948թ. սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի ԳԱ-ն ընդունեց թիվ 194 բանաձևը՝ հաստատելով քաղաքի միջազգային կարգավիճակը: Սակայն, դեռ 1948թ. օգոստոսի 2-ին Բեն Գուրիոնը հրապարակել էր թիվ 12 հռչակագիրը, ըստ որի՝ Արևմտյան Երուսաղեմը հայտարարվեց Իսրայելի իրավասության ներքո տարածք: Իսկ 1948 թ. դեկտեմբերի 13-ին Հորդանանի խորհրդարանն ընդունեց Արևելյան Երուսաղեմի անեքսիայի մասին օրենքը: Երուսաղեմի կարգավիճակի հարցը կրկին քննարկվեց 1967թ. արաբ-իսրայելական պատերազմից հետո, երբ ամբողջ Երուսաղեմը Իսրայելի վերահս-

կողմության տակ էր: ԱՄՆ-ն առաջարկեց, որ քաղաքը միավորվի, և նրա ապագա կարգավիճակը որոշվի հակամարտող կողմերի առաջարկությունների հիման վրա: Մինչև նույն ժամանակ, ՄԱԿ-ն առաջարկեց, որ կողմերը ձեռնպահ մնան քաղաքի կարգավիճակի որոշման հարցում միակողմանի քայլերից: Սակայն 1980թ. հուլիսի 30-ին Իսրայելը պաշտոնապես հայտարարեց Երուսաղեմի անեքսիայի մասին՝ հայտարարելով քաղաքը Իսրայելի միակ և անբաժանելի մայրաքաղաքը: Հետագա քննարկումներում արդեն խոսվում էր Արևելյան Երուսաղեմի, այլ ոչ թե ամբողջ քաղաքի մասին: 1993 և 1995թթ. Օսլոյում և 1998թ. Ուայ-Փլանթեյշնում Երուսաղեմի խնդիրը համարվում էր սուկ հարց, որը պետք է քննարկվի արաբա-իսրայելական հակամարտության համապարփակ կարգավորման վերջնական փուլում: ԱՄՆ նախագահ Բիլ Կլինթոնը 2000 թ. դեկտեմբերի 24-ին նոր առաջարկ արեց՝ Արևելյան Երուսաղեմը բաժանել մահմեդական, հայկական կամ քրիստոնեական և հրեական թաղամասերի կամ հատվածների: Հայկական գործոնի կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, Յասեր Արաֆաթը պաշտոնական և ոչ պաշտոնական տարբեր ուղիներով փորձեր կատարեց ստանալ հայկական կողմի աջակցությունը և դրանով իսկ ամրապնդել իր դիրքորոշումը բանակցությունների ընթացքում (Քոչարյան-Արաֆաթ հանդիպումը Նյու Յորքում): Ըստ ծրագրի՝ պաղեստինցիներն ստանալու էին արաբական թաղամասերը, ներառյալ Հարամ-աս-Շարիֆը, Արևելյան Երուսաղեմի 25%-ը: Իսրայելը պահելու էր հայկական և հրեական թաղամասերը և Արևելյան Երուսաղեմի հրեական արվարձանները, ներառյալ Արևմտյան պատը: Ինչպես սպասվում էր, մերժվեցին նաև այս առաջարկությունները: Այսպիսով, Երուսաղեմի կարգավիճակի հարցը ՄԱԿ-ի կողմից գրեթե դադարում է քննարկման առարկա լինելուց: Այժմ՝ ՄԱԿ-ը Երուսաղեմի կարգավիճակի հարցը քննարկելիս, սահմանափակվում է սուկ բանաձևերի ընդունումով, որոնք պարզապես կոչ են անում Իսրայելին դադարեցնելու Արևելյան Երուսաղեմում հրեական նոր թաղամասերի շինարարությունը: Մեր կարծիքով, Երուսաղեմի կարգավիճակի հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել հետևյալ երեք իրողությունները՝

1. Երուսաղեմի փաստացի դրությունը, այն է՝ քաղաքի՝ ամբողջովին Իսրայելի վերահսկողության տակ գտնվելը:
2. Արաբների պահանջները: Պաղեստինցիները չեն ուզում հրաժարվել Արևելյան Երուսաղեմից, որը համարում են ապագա պաղեստինյան պետության մայրաքաղաք:
3. ՄԱԿ-ի բանաձևերը Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ, որոնք իրավաբանորեն հաստատում են քաղաքի միջազգային կարգավիճակը:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ 3 դրույթները գրեթե ամբողջովին հակասում են միմյանց: Մեր կարծիքով, Երուսաղեմի կարգավիճակի որոշման հարցում լավագույն տարբերակ կարող է լինել ԱՄՆ-ի նախկին նախագահ Բիլ Կլինթոնի նախագիծը: Կարծում ենք՝ Երուսաղեմի կարգավիճակի վերջնական որոշումը կնպաստի նաև իսրայելա-պաղեստինյան հակամարտության վերջնական կարգավորմանը:

Երուսաղեմի կարգավիճակի հարցը հայերի համար կենսական նշանակություն ունի, քանի որ հայկական թաղամասը զբաղեցնում է Հին Երուսաղեմի 4 թաղամասերից մեկը, որն ունի մոտ 150.000 քառ.մ տարածք՝ 2000-ից ավել բնակչությամբ, որի մեծ մասը ցայսօր չունի Բարայելի քաղաքացիություն: Քաղաքի կարգավիճակի և իսրայելապաղեստինյան հակամարտության լուծմամբ պայմանավորված՝ այսօր հայկական համայնքը հայտնվել է ոչ շահեկան վիճակում: Հայկական պատրիարքարանին դարեր շարունակ պատկանում է Փրկչի գերեզմանի պահապանի պատվավոր դերը: Բացի այդ, Սբ Հակոբի մենաստանի միաբանությունը մեծ հեղինակություն ունի ոչ միայն Երուսաղեմում, այլև ամբողջ քրիստոնեական աշխարհում: Երուսաղեմի հայոց պատրիարքության հողերի բռնագրավումն Բարայելում բնակվող հայազգի բնակչության նկատմամբ ճնշում գործադրելու առաջին փորձը չէ: Բարայելի իշխանությունները հնարավորության դեպքում խոչընդոտել են պատրիարքարանի կամ հայկական թաղամասի տարածքում վերանորոգումների և նոր շինությունների կառուցումը: Նպատակն ակնհայտ է՝ ստիպել հայերին վաճառել իրենց պատկանող տարածքները: Այդ քաղաքականության հետևանքով կմեծանա Հին Երուսաղեմի հրեական թաղամասը, և կապահովվի այդտեղ բնակվող հրեաների անվտանգությունը: Բարայելական իշխանությունները հմտորեն խաղում են ներքրիստոնեական (հույն օրթոդոքսների և հայերի) հակասությունների վրա և Երուսաղեմի թնջուկի լուծման ճանապարհին այս կրոնական համայնքների հակամարտությունը դարձնում են տակտիկական ու ստրատեգիական խնդիրների լուծման միջոց: Մի բան, սակայն, պարզ է, որ այս թնջուկի քանդմանն անպայման իր մասնակցությունը տարբեր մակարդակներով պետք է բերի նաև հայկական կողմը: Համոզված ենք, որ հայկական կողմին որպես լիիրավ խաղացող ճանաչելու համար անհրաժեշտ է Սփյուռքի և ՀՀ դիվանագիտական կորպուսի մեթոդական անընդհատ աշխատանք այս ուղղությամբ, որը բխում է հայ ժողովրդի և հայոց պետության աշխարհաքաղաքական շահերից:

**Артак ОГАННИСЯН (РА)**

Ширакский государственный университет (Гюмри)  
e-mail: artakh76@mail.ru

## **ФАКТОР ИЕРУСАЛИМА В АРАБО-ИЗРАИЛЬСКОМ МИРНОМ ПРОЦЕССЕ И АРМЯНСКАЯ ОБЩИНА**

На фоне еще не урегулированного арабо-израильского конфликта наиболее остро стоит вопрос о статусе Иерусалима. Первую (N181 (II)) резолюцию о статусе Иерусалима ГА ООН обнародовала 29.11 1947г. Согласно этой резолюции, Иерусалим должен был получить международный статус, так называемый *Coprus separatum*, быть единым и находиться под контролем ООН. Вопрос о статусе Иерусалима вновь стал предметом обсуж-

дения после арабо-израильской войны 1967г. Вместо статуса *Corpus separatum* США при обсуждении вопроса о статусе Иерусалима в ООН предложили принять за основу то, что город должен быть единым и его будущий статус должен быть определен исходя из предложений противоборствующих сторон. Президент США Бил Клинтон 24 декабря 2000г. выступил с новым предложением: разделить Восточный Иерусалим на мусульманский, армянский или христианский и еврейский секторы. Не случайно, лидер Палестины Ясер Арафат по разным официальным и неофициальным каналам пытался добиться поддержки армянской стороны и тем самым укрепить свои позиции в ходе переговоров. В последние десятилетия при обсуждении вопроса о статусе Иерусалима ООН ограничивалась только принятием резолюций, которые просто призывали Израиль прекратить строительство новых еврейских поселений в Восточном Иерусалиме. По нашему мнению, при обсуждении вопроса о статусе Иерусалима нужно учитывать следующие известные реалии:

1. Фактическое положение города, т.е. его полную подконтрольность Израилю.
2. Требования арабов. Палестинцы никак не хотят отказаться от Восточного Иерусалима, который считают столицей будущего палестинского государства.
3. Резолюции ООН о статусе Иерусалима, юридически подтверждающие международный статус города. Три вышеперечисленных положения практически полностью противоречат друг другу. В этом плане, как нам кажется, лучшим вариантом при определении статуса Иерусалима может стать проект экс-президента США Била Клинтона.

Вопрос статуса Иерусалима имеет жизненно важное значение и для армян, поскольку Армянский квартал занимает один из IV районов Старого Иерусалима, с территорией около 150.000 м<sup>2</sup> и населением более 2000 человек, большая часть которых до сих пор не имеет израильского гражданства. В связи с урегулированием вопроса о статусе города и арабо-израильского конфликта армянская община на сегодня оказалась в невыгодном положении, Армянской патриархии веками принадлежала роль хранителя гробницы Спасителя. Кроме того, конгрегация обители Св. Иакова пользуется большим авторитетом не только в Иерусалиме, но и во всем христианском мире. Однако ясно одно – в распутывание этого клубка свою лепту на разных уровнях обязательно должна внести и армянская сторона. Мы убеждены, что для признания армянской стороны полноценным актором этого процесса необходима методичная и непрерывающаяся работа диаспоры и дипломатического корпуса РА, исходящая из геополитических интересов армянского народа и армянского государства.

**Artak HOVHANNISYAN (Armenia)**

Shirak State University (Gyumri)

e-mail: artakh76@mail.ru

## **THE FACTOR OF JERUSALEM IN THE ARAB-ISRAELI PEACE PROCESS AND THE ARMENIAN COMMUNITY**

The issue of the status of Jerusalem is most acute in the background of the still unresolved Arab-Israeli conflict. The first (N181 (II)) resolution on the status of Jerusalem was presented by

the UN General Assembly on November 29, 1947. According to this resolution, Jerusalem was to receive international status, the so-called Corpus separatum, to be united and controlled by the UN. The question of the status of Jerusalem again became the subject of discussion after the 1967 Arab-Israeli war. Now all of Jerusalem was under the control of Israel. Instead of the status of the Corpus separatum, the United States suggested that the city should be united and its future status be determined on the basis of proposals from the opposing sides. US President Bill Clinton on December 24 2000 made a new proposal: to divide East Jerusalem into the Muslim, Armenian or Christian and Jewish sectors. The Palestinian leader Yasser Arafat, through various official and unofficial channels, tried to gain support from the Armenian side and thereby strengthen his position during the negotiations. Thus, the question of the status of Jerusalem has practically ceased to be the subject of discussion by the UN. In recent decades, when discussing the status of Jerusalem, the UN was limited only to the adoption of resolutions that simply called on Israel to halt the construction of new Jewish settlements in East Jerusalem and did not touch on the status or ownership of the city. In our opinion, when discussing the status of Jerusalem, the following known realities:

1. The actual position of the city, i.e. his complete control over Israel.
2. The requirements of the Arabs. The Palestinians do not want to abandon East Jerusalem, which they considered the capital of the future Palestinian state.
3. UN resolutions on the status of Jerusalem, legally confirming the international status of the city. Three of the above provisions almost completely contradict each other. In this regard, it seems to us, the best option in determining the status of Jerusalem could be the project of former US President Bill Clinton. It seems that the final determination of the status of Jerusalem also contributes to the final settlement of the Arab-Israeli conflict. The question of the status of Jerusalem is of vital importance for the Armenians, since the Armenian community in Jerusalem has existed since time immemorial. The Armenian quarter occupies one of the IV districts of Old Jerusalem, with a territory of about 150,000 m<sup>2</sup> and a population of over 2000 people, most of which still do not have Israeli citizenship. In connection with the settlement of the status of the city and the Arab-Israeli conflict, the Armenian community today was at a disadvantage, the Armenian Patriarchate for centuries had been the guardian of the Tomb of the Savior. In addition, the congregation of the Monastery of St. Jacob has great authority not only in Jerusalem, but also in In addition, the congregation of the monastery of St. Jacob has great authority not only in Jerusalem, but throughout the Christian world. However, one thing is clear - the Armenian side must also contribute to the unraveling of this tangle on different levels. We are convinced that in order to recognize the Armenian side as a full-fledged actor of this process, the methodical and ongoing work of the Diaspora and the diplomatic corps of the Republic of Armenia, proceeding from the geopolitical interests of the Armenian people and the Armenian state, is necessary.

**Հայկանուշ ՂԱԶԱՐՅԱՆ (Հայաստան)**

Հայաստանի ազգային գրադարան (Երևան)

Էլ.փոստ՝ matyan60@mail.ru

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆ-ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՎԱՔ  
ԳՐԱՅՈՒՑԱԿՈՒՄ**

Հայ լրագրության պատմության սկիզբը 1794 թվականն է, երբ Հնդկաստանում սկսեց հրատարակվել «Ազդարար»ը (Մադրաս, 1794-1796թթ., իսբ.՝ Հարություն Շմավոնյան): Հայ մամուլի վերաբերյալ մատենագիտական տեղեկությունների հանդիպում ենք XIX դ. 40-ական թթ. լույս տեսնող «Բազմավեպ», «Ելրոպա», «Փարիզ» պարբերականներում: Այդ ժամանակ հայ պարբերականների թիվը չէր անցնում մի քանի տասնյակից: XIX դ. վերջերին հայ պարբերական մամուլի ուսումնասիրությունը նոր փուլ մտավ: Մամուլի պատմության գիտակ անձինք ձեռնամուխ եղան մամուլի ցանկերի կազմմանն ու հրատարակությանը (Գ. Լեւոնեան, Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, 1895, տպ. Աբրահամ Մալխասեանի): Վերջին 125 տարում աշխարհի տարբեր երկրներում հրատարակվել են հայ մամուլի ցանկեր, իսկ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում XXդ. Կեսերից են սկսել մամուլի համահավաք մատենագիտական տպագիր ցանկերը կազմելու աշխատանքները:

Ներկայում կազմվում է էլեկտրոնային համահավաք «Հայկական շարունակական հրատարակությունների գրացուցակը», որը հաջողությամբ փոխարինում է տպագիր տարբերակներին և ունի անվիճելի առավելություններ: Բազմադաշտ որոնման արդյունքում հնարավոր է ստանալ աշխարհի տարբեր վայրերում, այդ թվում նաև Գյումրիում (Ալեքսանդրապոլ, Լենինական, Կումայրի), լույս տեսած պարբերականների վերաբերյալ ոչ միայն մատենագիտական տեղեկություններ: Մատենագիտական գրառումներին կցված են մամուլի անունների թվային պատճենները, ստեղծվում են անձնանունների, աշխարհագրական անունների, թեմատիկ (խորագրերի) տեղեկատվական շտեմարաններ: Բաց մատչելիության՝ մատենագիտական գրառումների լրիվ տեքստային այս շտեմարանին կարող եք ծանոթանալ՝ այցելելով հետևյալ համացանցային հանգույց <http://tert.nla.am>:



**Айкануш КАЗАРЯН (Армения)**

Национальная библиотека Армении (**Ереван**)

e-mail: matyan60@mail.ru

## **ПЕРИОДИКА АЛЕКСАНДРОПОЛЬ-ЛЕНИНАКАНА В ЭЛЕКТРОННОМ СВОДНОМ КАТАЛОГЕ НАЦИОНАЛЬНОЙ БИБЛИОТЕКИ АРМЕНИИ**

Началом истории армянской периодики является 1794 г., когда в Индии был издан журнал «Аздарар»/ Мадрас, 1794-1796гг., ред. Арутюн Шмавонян /. Первые сведения об армянской периодике на страницах армянской прессы «Базмавер», «Европа» и «Париж» появляются в 40-ы годы XIX в. В то время количество армянских периодических изданий не превышало нескольких десятков. К концу XIXв. известные знатоки истории армянской периодики берутся за составление и издание библиографических списков /Г. Левонян, Армянская периодическая печать, Александрополь, 1895, тип. Абраама Малхасяна/.

На протяжении последних 125 лет в разных странах мира составлялись библиографические списки армянской периодики, а в НБА и в Фундаментальной библиотеке НАН стартовали работы по составлению сводных каталогов армянской прессы в середине XX в. В настоящее время создается электронный каталог армянской периодики, успешно заменяющий печатные аналоги и обладающий бесспорными преимуществами.

В результате многополюсного поиска можно получать не только библиографические данные о той или иной газете и журнале, изданные в разных местах мира, в том числе и в Гюмри /Александрополь, Ленинакан, Кумайри/. К библиографической записи прикрепляются оцифрованные копии подшивок, создаются вспомогательные списки имен, географических и тематических данных. Для ознакомления с библиографическими записями и полными текстами открытого доступа необходимо зайти на интернет портал по адресу <http://tert.nla.am>.

**Haykanush GHAZARYAN (Armenia)**

National Library of Armenia (**Yerevan**)

e-mail: matyan60@mail.ru

## **PERIODICALS OF ALEXANDRAPOL - LENINAKAN-GYUMRI ON THE UNION ELECTRONIC CATALOG OF THE NATIONAL LIBRARY OF ARMENIA**

The beginning of the history of Armenian periodicals dates back to 1794 when the first Armenian magazine “Azdarar” /Madras, 1794-1796, edt. Harutyun Shmavonyan/ was published in India. The first bibliographical information about the Armenian periodicals appears in the 40s of XIX century in the pages of Armenian press, “Bazmaver”, “Europe” and “Paris”. At that time the number of Armenian periodicals did not exceed several dozens. At the end of XIX century the research of the Armenian press entered a new stage. Prominent researchers of the history of

Armenian periodicals undertook the process of compiling and publishing bibliographies /G. Levonyan, Armenian Periodical Press, Alexandropol, 1895, typ. A. Malkhasyan/.

For the last 125 years the bibliography catalogs of Armenian periodicals have been compiled in different parts of the world. In the NLA and in the Library of NAS researchers started working on the compilation of united catalog of the Armenian press in the mid-twentieth century. Nowadays the electronic catalog of Armenian periodicals successfully replaces printed analogues and has significant advantages. As a result, you can read bibliographic record of the periodicals published in other parts of the world, including Gyumri. The program provides indices of the editors, cities and countries. The database is available on <http://tert.nla.am/>.

### **Ռոբերտ ՂԱԶԱՐՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ (Երևան)

Էլ.փոստ՝ rghazaryan1976@gmail.com

### **ՔԱՆԵՍԻ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ Մ.Թ.Ա. XX-XVIII դդ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐ**

Քանես (Քանեշ) կամ Նեսա քաղաքը գտնվել է Փոքր Ասիայի հարավ-արևելքում: Քաղաքը բնակեցված է եղել պղնձեքարեդարյան ժամանակաշրջանից և ծաղկման է հասել հատկապես մ.թ.ա. 20-18-րդ դդ., երբ այն տարածաշրջանում աշտուրական առևտրականների կենտրոնատեղին էր և Քանեսի պետության մայրաքաղաքը: Այն որոշ ժամանակ նաև խեթական պետության մայրաքաղաքն էր:

Փոքր Ասիայի և հարակից տարածքների պատմության համար անգնահատելի սկզբնաղբյուրներ են Քանեսից գտնված, այսպես կոչված, «կապաղովկյան աղյուսակները»: Դրանք աքքադերենով գրված տասնյակ հազարավոր սեպագիր սալիկներն են, որոնք ներկայացնում են մ.թ.ա. 20-18-րդ դդ. Փոքր Ասիայի տարբեր շրջաններում գտնվող Աշտուրի առևտրական գաղութների գործունեությունը: Դրանք վաղագույն գրավոր փաստաթղթերն են, որոնք վեր են հանում տվյալ ժամանակաշրջանի տարածաշրջանի պատմությունը և մասամբ լուսաբանում նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների պատմությունը: Այդ աղյուսակներից պարզ է դառնում, որ Աշտուրից դեպի Քանես և Փոքր Ասիայի այլ շրջաններ միջազգային առևտուր էր իրականացվում:

Հայկական լեռնաշխարհը, գտնվելով Առաջավոր Ասիայի հյուսիսային մասում, հնուց ի վեր բնական կամրջի դեր է խաղացել Արևելքի և Արևմուտքի միջև: Այստեղով

են անցել Հին աշխարհի միջազգային քարավանային առևտրի ճանապարհները: Լեռնաշխարհը հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք կտրում էին մի քանի հիմնական մայրուղիներ, որոնցից յուրաքանչյուրի նշանակությունը տարբեր ժամանակաշրջաններում փոփոխվում էր՝ ըստ քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ հանգամանքների: Միջագետքի, Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի միջև տարաբնույթ հարաբերություններ վկայված են դեռևս նորքարեդարյան շրջանից: Մակայն այդ փոխհարաբերություններն առավել հստակ և նպատակամղված բնույթ ստացան Հայկական Տավրոսից հարավ ընկած հյուսիսմիջագետքյան տարածաշրջանում վաղ պետականությունների ձևավորումից հետո: Այս առումով Աշշուրից դեպի Քանես և Փոքր Ասիայի այլ շրջաններ միջազգային առևտուրն իր նպաստն է բերել նաև Հայաստանի հարավարևմտյան շրջանների տնտեսական զարգացմանը:

Պատմական Շոփքի և Աղձնիքի տարածքների հնավայրերի նյութերը ցույց են տալիս, որ քաղաքային մշակույթը, առնվազն մ.թ.ա. III հազարամյակից, ակտիվ զարգացում է ապրել և շարունակվել նաև հետագա դարերում: Հնավայրերում հայտնաբերված փոքրասիական և միջագետքյան բազմաթիվ առարկաները վկայում են, որ չնայած այս կենտրոնները գտնվել են Աշշուր-Քանես հիմնական առևտրական ճանապարհից հյուսիս, սակայն դրանք նույնպես ակտիվ ներգրավված են եղել տարանցիկ միջազգային առևտրում: Առավել ևս որ Հայաստանի այդ տարածքները հայտնի են իրենց մետաղահանքերով, որոնք հնուց ի վեր շահագործվել են և, բնականաբար, չէին կարող աշշուրցի առևտրականների տեսադաշտից դուրս մնալ: Այս տարածքներում ձևավորվեցին նաև Իսուվա և Ալզի պետական միավորները, որոնց պատմության մեջ նույնպես կարևոր դեր են խաղացել միջազգային առևտրական ճանապարհներին մոտ գտնվելը և Հայկական Տավրոսի մետաղահանքերի շահագործումը:

Հավանական է, որ այդ կապերը չեն սահմանափակվել միայն Հայաստանի հարավարևմտյան մասերով, այլ հասել են մինչև նրա կենտրոնական և հյուսիսային շրջանները՝ ներգրավելով նաև Տուրուբերանի և Բարձր Հայքի տարածքները, որտեղ հետագայում (մ.թ.ա. 15-13-րդ դդ.) խեթական սկզբնաղբյուրները հիշատակում են Հայասա (Ազգի) թագավորությունը:

**Роберт КАЗАРЯН (Армения)**

Институт востоковедения НАН РА (Ереван)

e-mail: rghazaryan1976@gmail.com

## **ПИСЬМЕННЫЕ ТАБЛИЧКИ КАНЕСА КАК ИСТОЧНИК ИСТОРИИ ЗАПАДНЫХ РЕГИОНОВ АРМЯНСКОГО НАГОРЬЯ В XX-XVIII ВВ. ДО Н.Э.**

Город Канес (Канеш) или Неса находился в юго-восточной части Малой Азии. Город был населен еще во время энеолита, но достиг процветания особенно в XX-XVIII веках до н.э., когда он был центром ашшурских торговцев в регионе и столицей Канесского государства. В течение некоторого времени город был также столицей хеттского государства.

Бесценными источниками для истории Малой Азии и прилегающих районов являются так называемые «каппадокийские таблички», найденные в Канесе. Это десятки тысяч клинописных табличек, написанных на аккадском языке, представляющих деятельность ашшурских торговых колоний в разных частях Малой Азии в XX-XVIII вв. до н. э. Это самые древние письменные документы региона, которые дают понятие об истории региона и частично охватывают историю западных областей Армянского нагорья. Из этих таблиц становится ясно, что осуществлялась международная торговля из Ашшура до Канеса и других частей Малой Азии.

Армянское нагорье, расположенное в северной части Передней Азии, с древних времен являлось естественным мостом между Востоком и Западом. Здесь проходили некоторые из древнейших международных караванных торговых путей региона. Нагорье с юга на север и с запада на восток было прорезано несколькими основными путями, значимость каждой из которых менялась в разные периоды в зависимости от политических, военных, экономических и других факторов. Между Месопотамией, Армянским нагорьем и Малой Азией различные отношения были еще с неолита. Однако эти отношения стали более четкими и целенаправленными после образования ранних государств на севере Месопотамии. В этой связи международная торговля от Ашшура до Канеса также способствовала экономическому развитию юго-западных регионов Армянского нагорья.

Археологические находки из поселений на территории исторического Цопка и Агдзника указывают, что городская культура, по крайней мере с III тысячелетия до н.э., активно развивалась на этих территориях. Многочисленные обнаруженные артефакты из поселения Малой Азии и Месопотамии показывают, что, хотя эти центры были расположены к северу от основного торгового пути Ашшур-Канеса, они также активно были вовлечены в транзитной торговле. Более того, эти территории Армянского нагорья хорошо известны своими металлическими рудниками, которые эксплуатировались веками и, естественно, не могли быть вне поля зрения ашшурских торговцев. В этих районах также были сформированы государства Исува и Алзи. Вполне вероятно, что торговые связи не были ограничены лишь южно-западной частью Армянского нагорья и включали также ее центральные и северные районы, в том числе территории Туруберана и Высокой Армении, где позднее (XV-XIII вв. до н.э.) хеттские источники упоминают царство Хайаса (Аззи).

**Robert GHAZARYAN (Armenia)**

Institute of Oriental Studies of NAS RA (Yerevan)

e-mail: rghazaryan1976@gmail.com

**THE WRITTEN SOURCES OF KANEŠ AS A SOURCE OF HISTORY OF THE  
WESTERN REGIONS OF THE ARMENIAN HIGHLAND IN  
THE XX-XVIII CENTURIES BC**

The city of Kaneš (Kanesh) or Nesa was located in the southeastern part of Asia Minor. The city was inhabited during the Eneolithic period, but it reached prosperity especially in the 20<sup>th</sup>-18<sup>th</sup> centuries BC, when it was the center of Assyrian merchants in the region and the capital of the Kaneš city-state. For some time the city was also the capital of the Hittite state.

Invaluable sources for the history of Asia Minor and the surrounding areas are the so-called “Cappadocian tablets” found in Kaneš. These are tens of thousands of cuneiform tablets written in the Akkadian language, representing the activities of the Assyrian trade colonies in different parts of Asia Minor in the 20<sup>th</sup>-18<sup>th</sup> centuries BC. These are the most ancient written documents of the region, which give concepts of the history of the region and partially cover the history of the western regions of the Armenian Highland. From these tablets it becomes clear that international trade was carried out from Assur to Kaneš and other parts of Asia Minor.

The Armenian Highland, located in the northern part of South-Western Asia, has been a natural bridge between the East and the West since ancient times. Here were some of the most ancient international caravan trade routes of the region. The Highland from south to north and from west to east was crossed by several main paths, the significance of each of which changed in different periods depending on political, military, economic and other factors. There were various relations between Mesopotamia, the Armenian Highland and Asia Minor from the Neolithic period. However, these relationships became clearer and more focused after the formation of early states in the northern Mesopotamia. In this regard, international trade from Assur to Kaneš also contributed to the economic development of the south-western regions of the Armenian Highland.

Archaeological findings from settlements on the territory of the historic Tsopk and Agdznik indicate that urban culture from at least III millennium BC actively developed in these areas. The numerous artifacts discovered from the settlements of Asia Minor and Mesopotamia show that, although these centers were located north of the main Assur-Kaneš trade route, they were also actively involved in transit trade. Moreover, these territories of the Armenian Highland are well known for their metal mines, which were exploited for centuries and, naturally, could not be beyond the sight of Assyrian merchants. The states of Isuwa and Alzi also formed in these areas. It is likely that trade relations were not limited only to the southwestern part of the Armenian Highland; they included also the central and northern regions, with the territories of Turuberan and Upper Armenia, where later (15<sup>th</sup>-13<sup>th</sup> centuries BC) the Hittite sources mention the kingdom of Hayasa (Azzi).

**Քրիստինե ՂԱԶԱՐՅԱՆ (Հայաստան)**

Վանաձորի պետական համալսարան

Էլ. փոստ՝ christine-ghazaryan@yandex.ru

**ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՑԹՐ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ**

Թեմայի ընտրությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին ակտիվորեն ընթացող սոցիալ-քաղաքական, գաղափարական, իրավական, արժեհամակարգային, ինքնագիտակցության վերափոխումներով, դրանց արդյունքում նոր քաղաքական մշակույթի, հետևաբար նոր իրավագիտակցության և իրավական մշակույթի ստեղծմամբ:

Իրավական մշակույթն ու իրավագիտակցությունը, գործող օրենսդրության և նորմատիվային կարգավորման նկատմամբ հանրության ակտիվ դիրքորոշումը, հայացքներն ու դիրքորոշումը իրենց իրավական հոչակած պետությունների իրավաքաղաքական կյանքում գոյություն ունեցող անհերքելի իրողություններ են, որոնց ազդեցությամբ էլ պարբերաբար վերափոխվում է իրավական մշակույթը:

Իրավական պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության զարգացման աստիճանը մեծապես պայմանավորված է հասարակության, դրանում ընդգրկված խմբերի և հատկապես անհատների գիտակցական վերաբերմունքի, իրավունքի նորմերի ոչ միայն պարզունակ ընկալման, այլև դրանց գոյության ու կատարելագործման, պաշտպանության և երաշխավորման, դրանց նկատմամբ դրական իրավաչափ վարքագիծ դրսևորելու անհազ ձգտմամբ, ինչը հանգեցնում է իրավական մշակույթի ստեղծմանը:

Իրավական մշակույթը հասարակության իրավական կյանքի որակական ցուցանիշի արտահայտությունն է, որով պայմանավորված է հասարակության սոցիալական, մտավոր, հոգևոր, քաղաքական զարգացվածությունը: Այն առավել ընդգրկուն հասկացություն է, քան իրավագիտակցությունը, գործող իրավական համակարգն ու օրենսդրությունը, քանի որ միանգամից ընդգրկում է հասարակության տնտեսական, քաղաքական, կազմակերպակառավարչական, դատական, դաստիարակչական, կրթական և այլ ոլորտներ:

Իրավական մշակույթի գոյության հիմնական ցուցիչներն են՝

1. իրավական կրթվածությունը, այսինքն՝ հասարակության իրավաչափ վարքագիծն ու բարձր ինքնագիտակցությունը, իրավագիտակցությունը, հանդուրժողականությունը, իրավական համակարգին պատկանելությունն ու այդ համակարգի նկատմամբ անսասան վստահությունը:
2. Իրավաստեղծագործության արդյունավետությունը, ինչը իրավական կրթվածության, գիտելիքի ամենաբարձր դրսևորումն է, այսինքն՝ երբ անհատներն ու խմբերը սկսում

են կատարելագործել ու ստեղծագործել նոր իրավական ակտեր ու նորմեր: Իրավաստեղծագործությունը իրավական մշակույթի պայմաններում պետք է լինի հնարավորինս արդունավետ, այսինքն՝ ստեղծված իրավական ակտերը մշտապես պետք է համապատասխանեն հասարակության պահանջներին, բխեն նրանից և ծառայեն նրան, իսկ դրանցում փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը պետք է թելադրված լինի բացառապես հասարակական հարաբերությունների զարգացմամբ:

3. Իրավական դաստիարակությունը, որն արտահայտվում է իրավական մշակույթի ստեղծման հարցում պետության որդեգրած քաղաքականությամբ, մանկուց ապագա քաղաքացու մեջ իրավունքի, իրավական նորմերի և առհասարակ գործող օրենսդրության նկատմամբ հարգանք սերմանելով: Անժխտելի է այն փաստը, որ նման միջավայրում դաստիարակվող երեխաների մեջ ձևավորվում է պատկանելության զգացողություն, այսինքն՝ համայնքը, պետությունը, իր իրավունքներն ու պարտականությունները ամբողջ ծավալով ընկալելու ողջամիտ ձգտում, ինչն արտահայտվում է ապագայում օրինապահ հասարակության տեսքով: Պետության ուղղորդված քաղաքականությունն ընտանիքի՝ իբրև հասարակության հիմնական բջջի իրավական դաստիարակությանը, հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող հաստատություններում իրավական մշակույթի ձևավորումը արդյունավետորեն են անդրադառնում պետության ապագայի վրա:
4. Իրավական մշակույթի առանցքն են կազմում իրավունքի սուբյեկտները, որոնց դերում կարող են լինել հասարակությունը, խմբերն ու անհատները: Հետաքրքրություն են ներկայացնում անհատները՝ իբրև անհատական մակարդակով ակտիվություն ցուցաբերողներ, որոնք ոչ միայն իրավաչափ վարքագիծ ունեցող ակտիվ անհատներ են, այլև մտավոր հզոր ներուժի տեր և իրավաստեղծ գործունեության վրա ազդեցություն ունեցող մարդիկ: Մասնավորապես, մասնագիտական գործունեությամբ զբաղվող իրավաբանները, որոնք նպաստում են իրավակիրառ պրակտիկայում իրավանորմերի և իրավակարգավորումների թերությունների հայտնաբերմանը, իրավական բացերի լրացման առաջարկների և օրենսդրական լրացումների գործընթացի ջատագովներ են, այսինքն՝ իրավական համակարգը բարելավողներ:
5. Իրավական մշակույթի ցուցիչը իրավական ակտերի և իրավական համակարգի զարգացվածության մակարդակն է: Պետության իրավականության և ժողովրդավարական լինելու մասին հիմնական ցուցանիշները գործող իրավական ակտերն ու դրանցում ամրագրված արժեքներն են: Պետք է նշել, որ իրավական արժեհամակարգը իրավական մշակույթի միջուկն է:
6. Պետության և պետական իշխանության մարմինների, հասարակության անդամների միջև գոյություն ունեցող իրավական մշակույթ, ինչն արտահայտվում է երկկողմանի ողջամիտ փոխհարաբերությունների կառուցմամբ, բոլորի կողմից օրենքի, իրավա-

կան համակարգի, իրավապահպան գործառույթ իրականացնող մարմինների նկատմամբ ընդգծված հարգանքի մթնոլորտի ստեղծմամբ: Անհատի կողմից պետության դերի, պետական իշխանության մարմինների դերի ու նշանակության, գործառույթների իրականացման, իրավական համակարգի, իրավաչափ կամ ոչ իրավաչափ վարքի վերաբերյալ վերաբերմունքի, գիտելիքների պակասը կամ բացակայությունը, օրենքն արհամարհելու, այն պարբերաբար շրջանցելու, հակասոցիալական վարքի դրսևորումը խրախուսելու միտումը իրավական մշակույթի բացակայության ցուցիչներն են:

7. Իրավական մշակույթի գոյությունը հասարակության իրավական հասունության և չափահասության ցուցանիշն է: Անհատի գործողությունները պետք է բխեն հանրության շահից, իրավական համակարգը կամովին պահպանելու բացառիկ վարքագծից: Իրավական համակարգի նկատմամբ անհատների մեջ առողջ իրավական աշխարհայացքի ձևավորումը, սեփական իրավունքների գիտակցությունն ու ինքնապաշտպանությունը, պաշտպանության իրավական մեխանիզմների իմացությունը, անարդարության նկատմամբ վերաբերմունք ունեցող անհատի ձևավորումը, օրենքների, իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ հարգանքն ինքնաբերաբար հանգեցնում է դրանց հրամայականների կատարման, ինչը իր հերթին խոստն վկան է իրավական մշակույթի գոյության վերաբերյալ: Հակառակ դեպքում իրավանորմերը պահպանվում են մահակով:

**Кристине КАЗАРЯН (Армения)**

Ванадзорский государственный университет

e-mail: christine-ghazaryan@yandex.ru

## **ПРАВОВАЯ КУЛЬТУРА КАК ОСНОВА СОВРЕМЕННОГО ПРАВОВОГО ГОСУДАРСТВА**

Выбор темы обусловлен некоторыми социально-политическими, идеологическими, правовыми, ценностными, самосознательными преобразованиями, которые активно происходят в последние годы в Республике Армения, вследствие которых была создана новая политическая культура и следовательно, новое правосознание и правовая культура.

Правовая культура и правосознание являются неоспоримыми индикаторами и указателями правового государства, так-как они постоянно отражают активную правовую и политическую позицию, взгляды и идеи общества, по отношению к действующему законодательству и нормативному регулированию жизни государства и общества, под влиянием которых правовая культура постоянно трансформируется.

Степень развития правосоздательной и правоприменительной деятельности правового государства в значительной степени обусловлена амбициозным стремлением и сознательным отношением общества, групп, и особенно отдельных лиц, не только примитивного восприятия норм права, но также их разумным существованием и совершенствованием, за-



щитой, гарантией и правомерного поведения, которые сами по себе подразумевают создание правовой культуры.

Правовая культура является качественным выражением показателя правовой жизни общества, с которой обусловлено социальное, интеллектуальное, духовное и политическое развитие общества. Правовая культура - более широкое понятие по сравнению с правосознанием, правовой системой и законодательством, поскольку она одновременно охватывает экономическую, политическую, организационно-административную, судебную, образовательную и другие сферы общества.

Основными показателями правовой культуры являются уровень правового воспитания общества, эффективность правоохранительных органов, полноценные отношения между государством, государственными подразделениями и индивидами, уважение правовой системы, законодательства, правоохранительных органов, зрелость общества, а также наличие гражданского общества, обладающего высоким правосознанием и правомерным поведением.

**Christine GHAZARYAN (Armenia)**

Vanadzor State University

e-mail: christine-ghazaryan@yandex.ru

## **THE LEGAL CULTURE AS A BASIS FOR CURRENT LEGAL COUNTRY**

The choice of the theme is conditioned by the social-political, ideological, legal, value-system, self-cognitive transformations of the Republic of Armenia that have been active in recent years and, as a result, the creation of new political culture, hence new legal consciousness and legal culture.

Legal culture and consciousness express the active position, views and position of the public towards the current legislation and normative regulation, that are undeniable realities of the legal and political life and their legitimate states, under which influence the legal culture is constantly being transformed.

The degree of development of legal and law-enforcement activities of the legal state is largely conditioned by the ambitious aspiration of the society, by the conscious attitude of the involved groups, and especially individuals, not just elementary perception of the norms of the law, but also their existence and perfection, protection and guarantee, and law-obedient behavior towards them, which highly contributes to the creation of legal culture.

Legal culture is the qualitative expression and a vital indicator of the legal life of society, which is conditioned by the social, intellectual, spiritual and political development of the society. It is a more comprehensive concept than legal consciousness, the existing legal system and the legislation, as it embraces the economic, political, organizational, administrative, judicial, educational and other spheres of society at once.

The main indicators of the existence and the development level of legal culture are the level of legal education of the society, the effectiveness of law enforcement, the conscious relationship between the state, government authorities and individuals, respect to the legal system, legislation, the existence of a civil society, which has a high level of consciousness.

**Արման ՄԱԼՈՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ (Երևան)

Էլ. փոստ՝ armanmaloyan@mail.ru

**ԿԱՐՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՇՈՒՂՋ (XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ – XIX ԴԱՐԻ ՍԿԻՋԲ)**

Զեկույցում քննության են առնվել XVIII դարի վերջին քառորդի և XIX դարասկզբի Կարսի պատմության պատմաժողովրդագրական մի քանի տվյալներ, և կատարվել են համապատասխան եզրահանգումներ, ճշգրտումներ ու լրացումներ:

Հավանական ենք համարում, որ XVIII դարավերջին և XIX դարասկզբին Կարսի բնակչությունը կազմել է մոտ 2300 տուն կամ մոտ 12000 մարդ, որից շուրջ 3000-ը (600 տուն)՝ հայեր: Հետագայում Կարսի բնակչության թիվը փոփոխվել է. դա արդյունք էր ինչպես 1807 – 1809 թթ. և 1820 – 1823թթ. քաղաքական իրադարձությունների (քրդական ցեղերի ավերիչ արշավանքներ և 1820 – 1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմ), այնպես էլ 1812 թ. նոյեմբերից սկսված սովի, որն ընդգրկել էր նաև Կարսը:

Փաստորեն, Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովրեֆի այն հաղորդումը, թե Կարսն ավելի շուտ պատերազմի քաղաք էր, քան առևտրի, իրոք, համապատասխանում էր իրականությանը, և քաղաքում XVIII դարի վերջին քառորդին ու XIX դարի սկզբին քրիստոնյաները շատ քիչ էին:

**Арман МАЛОЯН (РА)**

Национальный институт образования РА (Ереван)

e-amil: armanmaloyan@mail.ru

**О НЕКОТОРЫХ ДЕМОГРАФИЧЕСКИХ ДАННЫХ ИСТОРИИ КАРСА  
(ПОСЛЕДНЯЯ ЧЕТВЕРТЬ XVIII – НАЧАЛО XIX ВЕКОВ)**

В статье проведен анализ некоторых демографических данных и сделаны соответствующие обобщения, уточнения и дополнения касательно истории Карса последней четверти XVIII и начала XIX века.

Мы полагаем, что в конце XVIII и в начале XIX веков население Карса составляло около 2300 домов или приблизительно 12000 человек, из коих около 3000 (600 домов) были армяне. Впоследствии численность населения Карса изменилась – это было результатом политических событий как 1807 - 1809 гг. и 1820 - 1823 гг. (разрушительные набеги курдских племен и 1820 - 1823гг. персидско-турецкая война), так и начавшимся в ноябре 1812г. голода, который охватил также и Карс.

Фактически, заявление Л.-Ф. Ферьер-Совбефа о том, что Карс является скорее городом войны, нежели торговли, соответствовало действительности. В городе в последней четверти XVIII и в начале XIX веков христиан было очень мало.

**Arman MALOYAN (ARMENIA)**

National Institute of Education (Yerevan)

e-mail: armanmaloyan@mail.ru

**ON SOME DEMOGRAPHIC DATA RELATED TO THE  
HISTORY OF KARS (LAST QUARTER OF THE 18<sup>TH</sup> – EARLY 19<sup>TH</sup> CC.)**

The paper dwells on certain historical demographic data related to the last quarter-18<sup>th</sup> and early-19<sup>th</sup> centuries of Kars, and corresponding conclusions, clarifications and additions have been made.

We think it probable that by the end of the XVIII century the population of Kars amounted to approximately 2,300 households or 12,000 people, of which about 3,000 (600 households) were Armenians. Later the number of population has changed, as a result of political events of 1807 – 1809 and 1820 – 1823 (the disastrous raids of Kurdish tribes and the Ottoman – Persian war), and the subsequent famine throughout the province, including Kars, that started in November 1812.

In fact L.-F. Ferrières-Sauveboeuf's announcement that Kars was rather a city of warfare than that of trade was not far from truth, and the number of Christians in the town were few in the last quarter of XVIII and beginning of XIX cc.

**Աշոտ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

Էլ.փոստ՝ ashot.manucharyan.1959@mail.ru

**ՄԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՅՈՒՏԱՆԻ ՏԱՊԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ**

Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանի Ս. Կարապետ եկեղեցուն կից հայկական գերեզմանոցում կա մի հուշակոթողի պահպանված պատվանդան: Դրա սյունաձև բնին փորագրված 14-տողանոց արձանագրություն է: Այդ հիշատակագրությունից իրազեկվում ենք, որ շիրմաքարի ներքո ամփոփված է աճյունը մի երիտասարդ ալեքսանդրապոլցու՝ Մկրտիչ Կիրակոսյանց անունով, որն սպանվել է 1919 թվականին 34 տարեկան հասակում՝ ավազակի մահացու գնդակից:

Դոնահայրության կյանքին քաջատեղյակ հեղինակների՝ Ս. Նալբանդյանի, Ե. Շահագիրի, Վ. Բարխուդարյանի վկայություններով՝ Դոն գետի անմարդաբնակ ձախափնյա եղեգուտներում հաճախ ապաստանում էին գողեր, ավազակներ, որոնք ծածուկ

հարձակվում էին խաղաղ բնակիչների վրա, կողոպտում նրանց, սպանություններ կատարում: Իսկ Ռուսաստանում 1918-1920 թթ. ընթացող քաղաքացիական կռիվների պատճառով ստեղծված խառնաշփոթից կարող էին ճարպկորեն օգտվել գողերն ու ավազակները:

Տապանագրությունում նշված չէ, թե ի՛նչ խավի ներկայացուցիչ, ի՛նչ զբաղմունքի տեր է եղել Մկրտիչ Կիրակոսյանցը՝ բայց դատելով նրա շիրմաքարի պահպանված պատվանդանից, որը զրանիտից է՝ թանկարժեք և պատրաստված բարձարվեստ մշակմամբ, պետք է ենթադրել նրա՝ հասարակության ունևոր դասին պատկանած լինելը: Նա, ամենայն հավանականությամբ, առևտրական չի եղել, քանի որ հիշատակագրությունում նշված է, որ ննջեցյալն անգուր ճակատագրի բերումով է օտար երկրում հայտնվել: Սակայն մի բան պարզ է՝ Մկրտիչ Կիրակոսյանցն սպանվել է կողոպուտի նպատակով:

**Ашот МАНУЧАРЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: ashot.manucharyan.1959@mail.ru

## **НАДГРОБНАЯ НАДПИСЬ ОДНОГО АЛЕКСАНДРОПОЛЬЦА ИЗ НОВОГО НАХИЧЕВАНА**

В армянском кладбище при церкви Св. Карапета Нового Нахичевана в Ростове-на-Дону есть сохранившийся пьедестал надгробия. На его колоннообразном стволе высечена 14-строчная надпись. Из этой памятной записи узнаем, что под надгробием покоится прах одного александропольца по имени Мкртич Киракосянц, который был убит 1919 г. в возрасте 34 лет от смертельной пули разбойника.

По сведениям авторов (М. Налбандян, Е. Шахазиз, В. Бархударян), хорошо осведомленных о жизни донских армян, в камышах необитаемого левого берега реки Дон часто находили себе убежище воры и разбойники, которые тайно нападали на мирных жителей, грабили их и убивали. Воры и разбойники ловко пользовались хаосом, создавшимся по причине гражданской войны в России 1918-1920 гг.

В надгробной надписи не отмечается, из какого сословия был или чем занимался Мкртич Киракосянц, но судя по сохранившемуся пьедесталу памятника, который построен из дорогого камня гранита и обработан высокохудожественной техникой, можно предположить, что он был из имущего класса общества. Он, по всей видимости, не был торговцем, так как в надписи говорится, что он по воле безжалостной судьбы оказался в чужой стране. Но одно ясно, что Мкртич Киракосянц был убит с целью грабежа.

**ASHOT MANOUCHARYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: ashot.manucharyan.1959@mail.ru

Հայության համար կենսական խնդիրներից մեկը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության հարցը, երկար տարիներ քննարկվել է Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովում: Վերջինիս հոգևոր գործառույթներից մեկը Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունների մասնակցելն էր, որն ամրագրված էր Ազգային սահմանադրությամբ: Սակայն կաթողիկոսական ընտրությունների անցկացման վերաբերյալ հակասություններ կային 1863 թ. Ազգային սահմանադրության և Ռուսաստանի Նիկոլայ Ա ցարի (1825-1855 թթ.) կողմից 1836 թ. հաստատված եկեղեցական կանոնադրության՝ «Պոլոժենիե»-ի միջև:

Ազգային ժողովում կաթողիկոսի ընտրության կարգը առաջին անգամ քննարկման է դրվում 1865 թ. դեկտեմբերի 24-ին կայացած նիստում (նիստ 20-րդ): Թեժ քննարկումներ են տեղի ունենում հատկապես արևմտահայության մասնակցության շուրջ: Այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը հինգ ամիս աշխատելով՝ 1866 թ. մայիսի 27-ի նիստում ներկայացնում է երեք մասից բաղկացած տեղեկագիր (Տեղեկագիր ի վերայ կաթողիկոսին խնդրոյ), որում մանրամասն վերլուծված էին «Պոլոժենիե»-ի հոդվածները, նրա համապատասխանությունն ազգային ավանդույթներին, Ազգային Սահմանադրությանը<sup>1</sup>:

Չնայած հակասական կարծիքներին՝ Ազգային ժողովը հաստատում է տեղեկագիրը և որոշում կաթողիկոսական ընտրությանը ներկայացուցչական ձևով մասնակցել (1866թ. հուլիսի 22-ին), այսինքն՝ Ազգային ժողովը գավառները ներկայացնող երես-

<sup>1</sup> Ատենագրությունք Ազգային ժողովոյ, Կ. Պոլիս, 1860-1870, էջ 290-314:



փոխանների միջոցով պետք է ընտրություն կատարեր և ներկայացներ մեծամասնությունն ստացած ընտրելիների եռանուն ցանկը<sup>1</sup>:

Էջմիածին մեկնած պատգամավորները հրահանգ են ստանում վերջնական ընտրության ժամանակ Արևմտյան Հայաստանի 65 վիճակների 130 ձայները տալ եռանուն ցուցակի այն թեկնածուի օգտին, որին ներքին կարգով մատնանշելու էր Ազգային ժողովը: Երեք թեկնածուներից առավելագույն ձայներ է հավաքում Գևորգ արքեպիսկոպոս Քերեստեճյանը, որը համարվում է Հայոց միակ բացարձակ ընտրելին<sup>2</sup>:

Փաստորեն, այնպես է ստացվում, որ իրականում Կ. Պոլսի Ազգային ժողովն է ընտրում կաթողիկոսին, քանի որ ուներ ձայների բացարձակ մեծամասնություն և կարողանում է իր վճիռը պարտադրել Էջմիածնին:

Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության հարցը առժամանակ փակվում է: Խնդիրն Ազգային ժողովում կրկին բարձրացվում է 1883 թ.՝ կաթողիկոսական նոր ընտրությունների առնչությամբ: Կազմված հանձնաժողովը 1883թ. սեպտեմբերի 13-ին տեղեկագիր է ներկայացնում, որով առաջարկվում է կաթողիկոսի ընտրության այլ կարգ՝ նպատակ ունենալով ընտրություններին մասնակից դարձնել աշխարհի ողջ հայությանը՝ դրանով իսկ դադարեցնելով «Պոլոժենիե»-ի կիրառումը: Սակայն ընտրության այս ձևը մերժվում է Ազգային ժողովում: Չի ընդունվում նաև 1866թ. ընտրակարգին վերադառնալու առաջարկը (1883թ. նոյեմբերի 25-ի նիստում): Կաթողիկոսական հանձնաժողովը 1884թ. ապրիլի 2-ի նիստում միանգամայն այլ առաջարկով է հանդես գալիս: Ազգային ժողովն ընտրելու էր Եկեղեցական Համագումար հանձնաժողովի կողմից քվեարկված երեք թեկնածուների, որոնց ստացած քվեների արդյունքներն ուղարկելու էին Էջմիածին, և այդ քվեներին գումարվելու էին Ռուսաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի հայության քվեները: Ընտրված էր համարվելու այն թեկնածուն, որ կստանար ձայների մեծամասնությունը:

Նման ընտրակարգով էլ տեղի ունեցած ընտրություններում (1884թ. մայիսի 9-ին) ձայների մեծամասնություն ստացած թեկնածուներից ցարը հաստատում է Ներսես Վարժապետյանին՝ որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի, սակայն վերջինս, պատճառաբանելով վատառողջ վիճակը, հրաժարական է ներկայացնում<sup>3</sup>:

Ազգային ժողովը նորից կանգնում է կաթողիկոսական ընտրության բարդ խնդրի առաջ: Երկարատև վիճաբանություններից խուսափելու նպատակով 1885թ. մարտի 1-ին Ազգային ժողովը որոշում է ընտրություններին մասնակցել 1884թ. ընտրակարգով: Արևմտահայության կողմից ներկայացված եռանուն ցանկից Մելիքսեդեկ Մուրադյանը 1885թ. ապրիլի 21-ին Էջմիածնում կայացած ընտրությունների ժամանակ ստանում է 30 քվե, սակայն Ռուսաստանի Ալեքսանդր Գ ցարը Ամենայն Հայոց կաթողիկոս է հաստա-

<sup>1</sup> Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), ձեռագիր N 3721, էջ 60ա:

<sup>2</sup> Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4756:

<sup>3</sup> Մատենադարան, Իզմ. արխիվ, ց. 34, թղթ. 12, վավ. 308:

տում 16 ձայն ստացած Մակար արքեպիսկոպոս Տեր-Պետրոսյանին: «Ցարընտիր» կաթողիկոսի ընտրությունը մեծ դժգոհություն է առաջացնում հատկապես արևմտահայության շրջանում, ուստի 1885 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ազգային ժողովում քննարկումներ են անցկացվում այս հարցի շուրջ: Եկեղեցու պառակտում թույլ չտալու նպատակով Ազգային ժողովը որոշում է ընդունել Մակարի կաթողիկոսությունը՝ պայմանով, որ նա եկեղեցական ընդհանուր ժողով հրավիրի և հայության բոլոր հատվածների համար ընդունելի կաթողիկոսական ընտրության նոր կարգ ընդունի:

Այսպիսով, Կ. Պոլսի Ազգային ժողովն իր գործունեության ընթացքում այդպես էլ չի կարողանում կաթողիկոսական ընտրության վերջնական ձև մշակել և արևմտահայերի մասնակցությունն այդ խնդրին ապահովել մի ընտրակարգով: Դա է պատճառը, որ Մակար Ա կաթողիկոսի մահից հետո (1891թ.), երբ Աբդուլ Համիդը արգելում է Ազգային ժողովի կանոնավոր նիստեր անցկացնել, արևմտահայությունն առաջին անգամ կաթողիկոսական ընտրություններին մասնակցում է «Պոլոժենիե»-ի սկզբունքներով:

**Маня НАДЖАРЯН (Армения)**

Институт истории НАН РА (Ереван)

e-mail: manya.najaryan@mail.ru

## **АРМЯНСКОЕ НАЦИОНАЛЬНОЕ СОБРАНИЕ КОНСТАНТИНОПОЛЯ И ВЫБОРЫ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН**

В течении многих лет в армянском Национальном собрании Константинополя обсуждалась одна из жизненно важных для армян проблем - выбор Католикоса Всех Армян. Участие в выборах Католикоса Всех Армян было одной из духовных функций Национального Собрания, что было закреплено в Национальной Конституции. Однако были противоречия относительно проведения выборов Католикоса между Национальной Конституцией 1863г. и утвержденным царем Николаем I (1825-1855) церковным уставом «Положение» 1836 года.

Процедура выборов Католикоса впервые обсуждается на заседании Национального Собрания 24 декабря 1865 года. Особо жаркие дискуссии ведутся относительно участия западных армян. Национальное собрание утверждает бюллетень, составленный созданной с этой целью комиссией, и решает участвовать в выборах представительным образом, а именно -Национальное собрание должно было посредством представляющих уезды депутатов сделать выбор и представить список из трех избираемых,получивших большинство голосов.

Из трех кандидатов наибольшее количество голосов набирает архиепископ Геворг Керестечьян и провозглашается всеармянским единственным абсолютно избранным.

Получается, что на самом деле Константинопольское национальное собрание избрало Католикоса, потому что оно имело абсолютное большинство и могло навязать свое решение Эчмиадзину.

Вопрос об избрании Католикоса Всех Армян вновь поднимается в Национальном собрании в 1883 году в связи с выбором нового Католикоса. По рекомендации комиссии католикосата Национальное собрание избирает трех кандидатов, результаты полученных ими голосов отправляют в Эчмиадзин. К ним будут добавлены голоса армян из России, Персии и Индии. Кандидат, который получит большинство голосов, будет избран.

В результате выборов, проведенных таким образом (9 мая 1884г.), большинством голосов был избран Нерсес Варжапетян, которого царь утвердил Католикосом Всех Армян, но последний из-за слабого здоровья уходит в отставку.

Национальное собрание вновь предстало перед сложной проблемой выбора католикоса. Чтобы избежать длительных споров, 1 марта 1885 года Национальное собрание решает принять участие в выборах по избирательной системе 1884 года. Царь в конце концов утверждает Архиепископа Макара Тер-Петросяна, набравшего меньшее количество голосов. Избрание Католикосом назначенного царем кандидата вызвало большое недовольство, но для предотвращения раскола церкви Национальное собрание решило принять католикосат Макара.

Как видно, Национальное собрание Константинополя не смогло выработать окончательную форму выборов Католикоса и участия западных армян в избирательном процессе. По этой причине после смерти Католикоса Макара (1891 г.), когда султан Абдул Гамид запретил проведение регулярных заседаний Национального собрания, западные армяне впервые участвовали в выборах Католикоса по принципам «Положения».

**Manya NAJARYAN (RA)**

Institute of History NAS RA (Yerevan)

e-mail: manya.najaryan@mail.ru

## **THE ARMENIAN NATIONAL ASSEMBLY OF CONSTANTINOPLE AND THE ELECTIONS OF THE CATHOLICOS OF ALL ARMENIANS**

For many years one of the vital issues for Armenians, that of electing the Catholicos of All Armenians, has been discussed at the Armenian National Assembly of Constantinople. One of its spiritual functions was to participate in the elections of the Catholicos of All Armenians, which was enshrined in the National Constitution. However, there were contradictions on the conduct of the Catholicos's elections between the National Constitution and the church charter (Polozheniye) confirmed by Tsar Nikolay I (1825-1855).

The procedure for electing Catholicos in the National Assembly is first debated in 1865 at the December 24 sitting. Hot discussions are being held especially on the participation of Western Armenians.

The National Assembly affirms the bulletin issued by the commission for that purpose and makes a decision to participate in the Catholicosative elections in a representative way, that is, the National Assembly should elect and submit the tricycle of the majority of the eligible voters

through the delegates representing the provinces. Archbishop Gevorg Kesterjian, who is the only absolute choice of Armenia, gets the highest number of votes from three candidates.

In fact, it turns out that in reality The National Assembly of Constantinople elected the Catholicos because he had an absolute majority and could impose his verdict on Ejmiatsin.

The issue of the election of the Catholicos of All Armenians is raised again in the National Assembly in 1883 regarding the new Catholicosate elections. By the recommendation of the Catholicosate, the National Assembly would elect three candidates, who would send their votes to Etchmiadzin. The votes of Russia, Persia and India would be added to it. The candidate who would receive the majority of votes was selected.

Candidates who have won the majority of the votes in the elections (May 9, 1884) confirm Nerses Varzhapetyan as Catholicos of All Armenians, but the latter, by reason of the ill health, resigns.

The National Assembly is again facing a complicated issue in the Catholic Church. In order to avoid long-term disputes, in 1885, On March 1, the National Assembly decides to take part in the elections in 1884 by the electoral system, though Tsar finally confirms Archbishop Makar Ter-Petrosyan, who collected less votes. The election of Catholicos Makar I caused great dissatisfaction, but in order to prevent the division of the church, the National Assembly decided to adopt the Catholicosate of Macar, provided that he invites a church general assembly and adopts a new order of the Catholicosate acceptable to all parts of the Armenian nation.

The National Assembly of Constantinople was never able to process a final procedure of Catholicos's elections, and every time provided the participation of Western Armenians in this issue in different ways. This is the reason why after the death of Catholicos Makar I (in 1891), when Abdul Hamid banned holding regular sessions of the National Assembly, the Western Armenians first participated in the Catholicos's elections by the principles of Polozheniye.

**Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆ (Հայաստան)**

Շիրակի պետական համալսարան (Գյումրի)

Էլ.փոստ՝ hajarmen77@gmail.com

### **ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՑԻԿԼԱՅԻՆ ՇԱՐԺԸՆԹԱՅՈՒՄ**

Հոդվածում քննարկվել են համաշխարհային քաղաքակրթության և հայկական քաղաքակրթության կյանքի ցիկլային շարժնթացների համադրումները: Ըստ այդմ, որպես հետազոտական առաջին խնդիր հիմնավորվում է հայկական լոկալ քաղաքակրթության ինքնուրույն գոյությունը: Հոդվածի շրջանակներում այն ներկայացված է հայկական քաղաքակրթության ինքնատիպ բաղադրիչների համառոտ վերլուծությամբ:

Հետազոտական հաջորդ խնդիրը վերաբերում է «քաղաքակրթություն» համակարգի կյանքի ցիկլային շարժընթացի նոր տեսության հիմնավորմանը: Ընդ որում, նոր տեսության առաջադրումը վերաբերում է քաղաքակրթության ողջ եռահամակարգին՝ և՛ լոկալ քաղաքակրթություններին, և՛ համաշխարհային քաղաքակրթությանը, և՛ համամարդկային քաղաքակրթությանը: Նկատենք, որ հասարակական համակարգերի կյանքի ցիկլերը միմյանցից տարբերվում են ըստ տարածաժամանակային ընդգրկվածության: Վերջինիս մեծությունն ուղիղ համեմատական է համակեցության ենթակարգային աստիճանների մեծությանը: Այսինքն՝ որքան բարձր է այդ աստիճանը, այնքան մեծ են համակարգի տարածական ընդգրկվածությունը և ցիկլի ժամանակային տևողությունը: Հետևաբար, քաղաքակրթությունները՝ իրենց եռամակարդակ դրսևորմամբ, առանձնանում են ցիկլային շարժընթացի առավել մեծ պտույտներով: Այս տրամաբանության համաձայն՝ առանձնացվել են քաղաքակրթական ցիկլերի երեք տիպ՝ **Լոկալ ցիկլեր**, որոնք լոկալ քաղաքակրթությունների կյանքի ցիկլերն են և ներառում են վերջիններիս ողջ շարժընթացը՝ ծնունդից մինչև կյանքի փուլի ավարտ: **Մեծ ցիկլեր**, որոնք համապատասխանում են համաշխարհային քաղաքակրթությունների շարժընթացին: Մեծ ցիկլերը պարբերականություն են հաղորդում ժամանակի մեջ տիրապետող քաղաքակրթական տիպերին, որոնք պայմանավորում են տվյալ ժամանակում գործառվող լոկալ քաղաքակրթությունների բնույթը, միաժամանակ փոխպայմանավորված են համամարդկային քաղաքակրթության շարժընթացով: Եվ վերջինը՝ **Գերցիկլեր**, որոնք բնութագրական են համամարդկային քաղաքակրթության շարժընթացին: Տարածաժամանակային ամենամեծ ընդգրկվածություն ունեցող ցիկլերն են, որոնք ամբողջացնում են (ամբողջացնելու են) համամարդկային քաղաքակրթության կյանքի փուլերը: Բոլոր ցիկլերը գտնվում են փոխպայմանավորվածության մեջ: Ենթակարգային առավել բարձր ցիկլի յուրաքանչյուր փուլ ամբողջանում է ցածր մակարդակի կյանքի ամբողջական ցիկլով: Այսինքն՝ համամարդկային քաղաքակրթության կյանքի յուրաքանչյուր փուլի ժամանակային ընթացքում ամբողջապես իրացվում է համաշխարհային քաղաքակրթության կյանքի ողջ ցիկլը՝ փուլերի հերթափոխման ամբողջ շարժընթացը: Իսկ վերջինիս յուրաքանչյուր փուլ ամբողջանում է լոկալ քաղաքակրթությունների մեկ լրիվ սերնդափոխությամբ՝ կյանքի ամբողջական ցիկլով: Այլ կերպ ասած՝ բարձր աստիճանի յուրաքանչյուր փուլի ժամանակային տևողությունը համապատասխանում է ստորին աստիճանի կյանքի ողջ ցիկլին: Արդյունքում առաջարկվել է մարդկության պատմաաշխարհագրական շարժընթացի նոր սխեմա, որի շրջանակներում էլ քննարկվել է հաջորդ՝ հիմնական, հետազոտական խնդիրը: Այն վերաբերում է Հայկական լոկալ քաղաքակրթության կյանքի ցիկլային շարժընթացին, որը նախ դիտարկվել է սեփական շարժընթացի տրամաբանության հիմքով: Այսինքն՝ առանձնացված են հայկական քաղաքակրթության կյանքի սեփական փուլերով հաջորդականությամբ ամբողջացած ցիկլերը, որոնք համադրված են Համաշխարհային և Համամարդկային քաղաքակրթությունների ցիկլային շարժընթացներին:

**Армен НЕРСИСЯН (Армения)**

Ширакский государственный университет (Гюмри)

e-mail: hajarmen77@gmail.com

## **АРМЯНСКАЯ ЦИВИЛИЗАЦИЯ В ЦИКЛИЧЕСКОМ ДВИЖЕНИИ МИРОВОЙ ЦИВИЛИЗАЦИИ**

В докладе будут обсуждены сопоставления циклических движений мировой цивилизации и армянской цивилизации. Предложены три взаимосвязанные друг с другом исследовательские задачи.

Первая касается обоснования самостоятельного существования локальной армянской цивилизации. Она представлена кратким анализом самобытных компонентов армянской цивилизации.

Вторая исследовательская задача касается обоснования новой теории циклического движения жизни системы “цивилизация”. При этом выдвижение новой теории касается всей трехмерной системы цивилизации: локальные цивилизации, мировая цивилизация и общечеловеческая цивилизация. Кратко проанализированы сопоставления циклических и поэтапных движений жизни цивилизаций.

В соответствии с логикой вышеизложенного, мы возражаем против новой схемы историко-географического движения человечества. В рамках последнего будет обсуждена следующая, основная исследовательская задача. Она относится к циклическому движению жизни локальной цивилизации Армении, которая сначала была рассмотрена на основе логики собственного движения. То есть, выделены циклы, обобщенные в последовательности собственными этапами жизни армянской цивилизации, которые соотнесены с циклическими движениями мировых и общечеловеческих цивилизаций.

**Armen NERSISYAN (Armenia)**

Shirak State University (Gyumri)

e-mail: hajarmen77@gmail.com

## **THE ARMENIAN CIVILIZATION IN THE CYCLICAL MOVEMENT OF WORLD CIVILIZATION**

The report touches upon the comparison of cyclic movements of world civilization and Armenian civilization. In accordance with this, three interrelated research tasks have been proposed.

The first concerns the substantiation of the independent existence of the Armenian local civilization. It is represented by a brief analysis of the original components of the Armenian civilization.

The second research task concerns the substantiation of the new theory of cyclic movement of life of the system “civilization”. At the same time, the advancement of a new theory concerns the entire three-dimensional system of civilization: local civilizations, world civilization

and human civilization. The comparisons of cyclic and step-by-step movements of the life of civilizations are briefly analyzed.

In accordance with the logic of the above, we have objected to the new scheme of historical and geographical movement of mankind. Within the framework of the latter, the following main research task has been discussed. This refers to the cyclic movement of life of the local civilization of Armenia, which was first considered on the basis of the logic of its own movement. That is, the selected cycles are summarized in a sequence of their own life stages of Armenian civilization, which correlated with the cyclical movements of the world and human civilizations.

**Գայանե ՇԱԽԿՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ  
Էլ.փոստ՝ gayane-shaxkyan@mail.ru

**ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Ա. ՖՐԱՅՅԵՐ ՖՈՆ ՀԱՔՍՏԻԱՆՈՒԶԵՆԻ «ԱՆԴՐԿՈՎԿԱՍ» ԵՐԿՀԱՏՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Թեմայի շրջանակներում անդրադարձել ենք Աուգուստ Ֆրայիեր ֆոն Հաքստիանուզենի «Անդրկովկաս» աշխատությանը, որը լույս է տեսել երկու մասով՝ 1856թ. Լայպցիգում:

Աշխատությունը ներառում է հիմնականում Սև և Կասպից ծովերի ավազաններում ապրող մի քանի ժողովուրդների սոցիալական վիճակներին, ընտանեկան և տոհմային կյանքին, նաև ժողովրդական տեղաշարժերին վերաբերող տվյալներ:

Որպես գյուղատնտեսության լավ գիտակ՝ ռուսական ցար Նիկոլայ Առաջինը 1843-1844 թթ. նրան հրավիրում է Ռուսաստան՝ հողային հարցերը ուսումնասիրելու նպատակով: Ճանապարհորդության ֆինանսավորումը մեկ տարվա համար նրան վճարում էր պետությունը, սակայն մնացյալ միջոցները նա պետք է անձամբ հայթայթեր: Այդ ընթացքում նա մտադրվում է կատարել ուսումնասիրություններ Ռուսաստանի և Անդրկովկասի մասին: Իր ուսումնասիրությունները Հաքստիանուզենը հրատարակել է տարբեր մենագրություններում: Նրա վերջին աշխատանքը եղել է Ռուսաստանի հողային սահմանադրությունը: Հաքստիանուզենը ակտիվ մասնակցել է նաև 1861 թ. ռուսական գյուղացիական ազատագրական շարժումներին: Բացի դրանից, լույս է տեսել նաև նրա կողմից հավաքագրված բազմաթիվ՝ հոգևոր և աշխարհիկ ժողովրդական երգերի հավաքածուն:

Աշխատության մեջ ներառված են Հաքստհաուզենի՝ ականատեսի վկայությամբ գրի առնված հուշերն ու տպավորությունները հայերի, նրանց կենցաղի, ընտանեկան ավանդույթների, տեղական կառավարման համակարգի ու ժողովրդի տեղաբաշխման վերաբերյալ: Նրա վկայությունները կարող են լուրջ աղբյուր հանդիսանալ թեմայով հետաքրքրվող հետազոտողների համար:

Հայաստանում գտնվելու ընթացքում Հաքստհաուզենը ծանոթանում է Խաչատուր Աբովյանի հետ, որը նրան ներկայացնում է հայ ժողովրդի կենցաղն ու ավանդույթները:

Հեղինակը, հետաքրքրված լինելով ժողովուրդների կառավարման հարցերով, առանձնակի ուշադրություն է դարձնում հայերի կառավարման համակարգին, մանրամասն ուսումնասիրում է երկրում տիրող հարկային քաղաքականությունը, դատական համակարգը, վճարվող աշխատավարձերը:

Ինչպես գերմանացի ուղեգիրը, այնպես էլ օտարերկրյա բազմաթիվ այլ հետազոտողներ, փաստում են, որ դարեր շարունակ հայերի կարևոր զբաղմունքներից են եղել առևտուրն ու արհեստագործությունը: Տեղում ստեղծվող կամ պատրաստվող ապրանքները վաճառում էին ոչ միայն երկրի ներսում, այլև արտահանվում էին:

Ըստ Հաքստհաուզենի՝ հայերի շրջանում, ի տարբերություն մահմեդականների, մշակույթի բարձր գնահատականը համարվում է կնոջը՝ որպես իրավահավասարի ընդունելու փաստը, խորը հարգանքը նրա նկատմամբ: Կնոջ դերը մեծ է նաև այն պարագայում, որ հայերը, սփռված լինելով աշխարհի բոլոր կողմերում, երբեք չեն կորցնում իրենց ինքնությունը և չեն միաձուլվում իրենց շրջապատող այլազգի ժողովուրդներին: Հայերի հավատքն անգամ ազգային բնավորություն ունի, ինչը նրանց թույլ է տալիս մշտապես լինել միասնական:

Ինչ խոսք, ամեն ինչ ավելի հետաքրքիր է դառնում, երբ դրական վերաբերմունք ու կարծիք մեր ազգի մասին լսում ենք հենց օտարներից:

**Гаяне ШАХКЯН (Армения)**

Институт истории НАН РА (Ереван)

e-mail: gayane-shakkyan@mail.ru

## **СВИДЕТЕЛЬСТВА ОБ АРМЯНАХ И АРМЕНИИ В ДВУХТОМНОМ ТРУДЕ «ЗАКАВКАЗСКИЙ КРАЙ» АВГУСТА ФОН ГАКСТГАУЗЕНА**

Доклад посвящен вопросам социального положения, демографии армян, судебной и управленческой системы, а также налоговой политики на территории Восточной Армении в 40-ых годах XIX в., изложенным Августом фон Гакстгаузенем.

Август фон Гакстгаузен посетил Российскую империю в 1843 г. с целью изучения аграрных отношений, быта и особенностей ведения сельского хозяйства. В 1845-1846 гг.



Гакстгаузен побывал в Восточной Армении и описал свои наблюдения, посвященные особенностям земельных отношений, в двухтомном труде.

Излагая особенности ведения сельского хозяйства на вышеуказанной территории Гакстгаузен отмечает, что армяне-крестьяне в основном занимались садоводством, виноградарством, возделыванием зерновых культур на арендованных у государства землях.

Также автор в том же труде повествует о культуре, вере, быте и традициях, роли женщины в обществе восточных армян, отмечая, что армянка помимо прочего имела право на получение образования в отличие от мусульманских женщин Кавказа.

Необходимо отметить, что вышеуказанный труд содержит подробную информацию о социально-экономической и культурной жизни восточных армян середины позапрошлого века, изложенную очевидцем, и посему заслуживающую особенного доверия и пристального изучения.

**Gayane SHAKHKYAN (Armenia)**

Institute of History of NAS RA (Yerevan)

e-mail: gayane-shakkyan@mail.ru

### **TESTIMONIES ABOUT ARMENIANS AND ARMENIA IN TWO-VOLUME WORK BY A. VON HAXTHAUSENS “TRANSCAUCASUS”**

The report is devoted to the issues of social status, demography of Armenians, judicial and administrative systems, as well as tax policy of Eastern Armenia in the first quarter of the XIX century, described by August von Haxthausen.

August von Haxthausen visited the Russian Empire in 1843 to study agrarian questions, way of life and characteristics of agriculture. In 1845-1846 Haxthausen arrived in Eastern Armenia, and described his observations on the characteristics of land policies in his two-volume work.

Outlining the peculiarities of agriculture in the above-mentioned territory, Haxthausen notes that the Armenian peasants were mainly engaged in gardening, wine growing, cultivation of grain crops on the land leased from the state.

The author also describes the culture, faith, life, traditions, the role of women in the society of Eastern Armenia. In his observation, he noted that the Armenian woman, among other things, had the right to receive education unlike the Muslim woman of the Caucasus.

It should be noted that the above-mentioned work contains detailed information about the socio-economic and cultural life of the Eastern Armenians of the first quarter of the XIX century, presented by an eyewitness, and therefore deserves special trust and further research.

**Ամալյա ՊԵՏՐՈՍՅԱՆ (Հայաստան)**

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ amalya.petrosyan@ysu.am

**ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ**

Պատմական վայրիվերումների բերումով հայ ժողովուրդը ստիպված է եղել երբեմն լքել իր բնօրրանն ու բնակություն հաստատել օտար երկրներում: Հայերի մի սովոր գանգված պատմական իրադարձությունների բերումով բնակություն է հաստատել ներկայիս Թուրքմենստանի տարածքում, որը դարձել է վերջիններիս երկրորդ հայրենիքը: Ի տարբերություն այլ հայ համայնքների, որոնց խնդիրները շատ հաճախ են լուսաբանվում, Թուրքմենստանի հայ համայնքը երբեմն սովերում է մնում:

Այսօր, երբ Հայաստանի ու Թուրքմենստանի միջև հաստատված են դիվանագիտական և բարիդրացիական հարաբերություններ, մեր կարծիքով, խիստ օրակարգային է հայ համայնքի պատմության ուսումնասիրումն ու վերջինիս խնդիրների վերհանումը:

Մեր զեկույցում փորձել ենք ընդհանուր գծերով ներկայացնել Թուրքմենստանի հայ համայնքի ձևավորման պատմությունն ու գտնել հետևյալ հարցերի պատասխանները. որո՞նք են Թուրքմենստանի հայ համայնքի ձևավորման պատճառները, ի՞նչ դեր է խաղացել հայ համայնքը Թուրքմենստանի պատմության մեջ, ինչպիսի՞ն է եղել Հայ առաքելական եկեղեցու ազգապահպան գործունեությունը հայ համայնքում:

Թուրքմենստանի համայնքը եղել է և այսօր էլ շարունակում է կարևոր կապող օղակ լինել Թուրքմենստանի ու Հայաստանի Հանրապետության միջև: Հատկապես Ադրբեջանի Հանրապետության հետ լարված հարաբերությունների պայմաններում էլ ավելի է մեծանում Թուրքմենստանի դերը՝ որպես թյուրքալեզու բարեկամական երկիր, որտեղ հայ համայնքը կարևոր դերակատարում կարող է ունենալ:

**Амалья ПЕТРОСЯН (Армения)**

Ереванский государственный университет

e-mail: amalya.petrosyan@ysu.am

**АРМЯНСКАЯ ОБЩИНА В ТУРКМЕНИСТАНЕ**

Из-за бурных исторических событий армянскому народу пришлось покинуть свою колыбель и поселиться в разных концах света. Большое количество армян поселилось, в частности, на территории нынешнего Туркменистана, который стал для них второй родиной.

Сегодня, когда между Арменией и Туркменистаном существуют дипломатические и дружеские отношения, по нашему мнению, изучение армянской общины и ее проблем, является наиболее существенным и актуальным.

Целью нашего исследования является основательное изучение истории становления и деятельности армянской общины в Туркменистане. Для достижения поставленной цели автором ставятся, в частности, следующие вопросы:

1. Каковы причины формирования армянской общины в Туркменистане,
2. Какую роль сыграла армянская община в истории Туркменистана,
3. Какую роль сыграла Армянская Церковь в жизни армянской общины.

**Amalya PETROSYAN (Armenia)**

Yerevan State University  
e-mail: amalya.petrosyan@ysu.am

## THE ARMENIAN COMMUNITY OF TURKMENISTAN

In the course of historical ups and downs, the Armenian people have been obliged to leave their motherland and settle in foreign countries. A large number of Armenians has settled in the territory of today's Turkmenistan, which has become their second homeland.

Today, when diplomatic and good-neighborly relations are established between Armenia and Turkmenistan, in our opinion, the study of the history of the Armenian community in Turkmenistan and the disclosure of its problems are very important.

In our report, we have tried to present the general history of the formation of the Armenian community of Turkmenistan and find the answers to the following questions: What are the reasons for the formation of the Armenian community of Turkmenistan? What role has the Armenian community played in the history of Turkmenistan? What kind of activities have been realized by the Armenian Apostolic Church in the Armenian community to preserve the nationality?

**Գևորգ ՊԵՏՐՈՍՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ (Երևան)  
Էլ.փոստ՝ [GevorgERC@gmail.com](mailto:GevorgERC@gmail.com)

## «ՆՈՐ ԶԱՐԹՈՆՔ». ԳԵԶԻ ԶԲՈՍԱՅԳԻՆ ԵՎ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԹՈՒՐԿՄԵՆԻՍՏԱՆԻՄ

2013թ. Գեզի զբոսայգում իրականացվող բողոքի ցույցերի առաջին իսկ օրվանից հայ համայնքի երիտասարդ ներկայացուցիչները ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին: Հայերը պատմականորեն կենսական դեր են խաղացել Օսմանյան կայսրության

սոցիալական եւ տնտեսական կյանքում: Թուրքիայի Հանրապետության օրոք հայերի կարևորությունն ու ազդեցությունը ավելի քիչ էին, սակայն Գեզիի բողոքները առանցքային նշանակություն ունեին հայերի քաղաքական ու հասարակական կյանքում:

Գեզի զբոսայգու բողոքի ցույցերի ակտիվ մասնակիցների թվում էին «Նոր Զարթոնք» հայկական խմբի անդամները, որոնք ձախակողմյան առաջադեմ երիտասարդական կազմակերպությունից էին: Հայերի մասնակցությունը Գեզիի բողոքի ցույցերին աննախադեպ էր և պայմանավորված էր Թուրքիայում ազգային փոքրամասնությունների ակտիվության ներկա փոփոխություններով:

Աշխատանքում անդրադարձ կկատարվի հայերի՝ Գեզիի բողոքի ցույցերին ակտիվ մասնակցությանն ու դերակատարմանը: Կներկայացվեն վերոնշյալ քաղաքական գործողություններին հայերի ներգրավման պատճառները, ինչպես նաև կընդգծվի Գեզիի բողոքի ազդեցությունը հայկական համայնքի վերափոխման գործընթացների վրա:

Զեկուցման մեջ կներառվեն նաև մեր կատարած հետազոտության արդյունքները, որոնք իրականացվել են Ստամբուլում բողոքի գործողությունների ժամանակ:

**Геворг ПЕТРОСЯН (Армения)**

Институт востоковедения НАН РА (Ереван)

e-mail: GevorgERC@gmail.com

## **«НОР ЗАРТОНК» (НОВОЕ ПРОБУЖДЕНИЕ): ПАРК ГЕЗИ И СТИМУЛИРОВАНИЕ АКТИВИЗМА АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ В ТУРЦИИ**

В 2013г. с первых дней митингов протеста в парке Гези молодые представители армянской общины приняли активное участие. Армяне исторически играли значимую роль в социальной и экономической жизни Турции. В Турецкой республике значимость и влияние армян было несколько меньше, однако протесты Гези имели ключевое значение в политической и общественной жизни армян.

В числе активных участников протестов парка Гези были члены армянской группы «Нор зартонк» (Новое пробуждение). Участие армян в митингах протеста Гези было беспрецедентным и обусловленным современными изменениями активности национальных меньшинств в Турции.

В работе будут рассмотрены вопросы, касающиеся роли и активного участия армян в митингах протеста Гези. Будут представлены причины вовлеченности армян в вышеуказанные политические действия, а также подчеркнута влияние протестов Гези на процессы трансформации армянской общины.

В доклад будут включены также результаты проведенного нами исследования, которое было осуществлено в Стамбуле во время протестных действий.

**Gevorg PETROSYAN (Armenia)**  
Institute of Oriental Studies NAS RA (Yerevan)  
e-mail: GevorgERC@gmail.com

## **“NEW AWAKENING”: GEZI PARK AND TRANSFORMATIONS OF ARMENIAN YOUTH ACTIVISM IN TURKEY**

In 2013, when the Gezi Park Protests began, younger representatives of the Armenian Community actively participated from the very first day. Historically, Armenians played a vital role in the social and economic life of the Ottoman Empire. During the years of the Turkish Republic, the importance and influence of the Armenians was less, but the Gezi Protests was one of the breakpoints in the political and social life of Armenians living in Turkey.

Among the active participants in the protests in Gezi Park were the members of the Armenian group “*Nor Zartonk*” (“New Awakening”), which is a leftist, progressive youth organization. The Armenian participation in the Gezi Protest was unprecedented, and underlined the ongoing changes and transformations within the minority activism in Turkey.

In our paper we show the reasons for the active involvement of Armenians in the Gezi Protests. The paper will focus on the activities of “*Nor Zartonk*,” as it is the most active organization of Turkey’s Armenians. The paper will show the influence of the Gezi Protests on the transformation processes within the Armenian community, especially on younger generations. The activities of Armenian youth in the Kamp Armen protests, which followed the Gezi Protests will also be included in the paper as a bold example of Gezi transformation. As we did research on this topic while we were in Istanbul during the protests, the results of the research will be also included in our paper.

**Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)  
Էլ.փոստ՝ vahe1996@mail.ru

## **ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՍԵՆՈՓՈՆԻ ՀԻՇԱՏԱԿԱԾ ԹԱՐԳՄԱՆԻ ՄԱՍԻՆ**

Քսենոփոնի «Անաբասիս» աշխատության (Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը Ս.Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 243) մեջ Հայաստանում հայտնված հույն վարձկանների և հայ գեղջկուհիների միջև տեղի ունեցած երկխոսության ընթացքում հիշատակված է նաև նրանց միջնորդ պարսկերեն խոսող թարգմանը: Մրա առնչությամբ պատմագրության մեջ, մեր կարծիքով, առկա է մի թյուրըմբռնում: «Խելյրիստփո-

սը... աղբյուրի մոտ պատահեց գյուղի կանանց և աղջիկների, որոնք ջուր էին տանում: *Սրանք հարցրին հելլեններին, թե ովքե՞ր են: Իսկ թարգմանը պարսկերեն ասաց, որ թագավորի (իմա՛ Արտաքսերքսես II-ի) կողմից գնում են սատրապի (իմա՛ Օրոնտաս-Երվանդի) մոտ: Եվ կանայք պատասխանեցին, թե նա այստեղ չէ, այլ գտնվում է գրեթե մեկ փարսախ հեռու» (Anabasis, IV,V,7-10): Երկխոսությունն այնպես է ընկալվել, թե լեռնային գյուղի բնակիչ հայ գեղջկուհիների և հույների թարգմանի միջև խոսակցությունն ընթացել է պարսկերեն:*

Դրանում համոզված էին անգամ մեծանուն գիտնականներ Վ. Ստրուվեն, ըստ որի՝ հայերենն այնքան մոտ էր պարսկերենին (հին պարսկերենին), որ պարսկերեն խոսող անձը կարող էր հասկանալի լինել հայ ժողովրդի շարքային ներկայացուցիչներին (Струве В., Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, Л., 1968, стр. 13-14), Ն. Աճառյանը՝ պարսկերեն լեզուն նույն իսկ գյուղացիք՝ գոնե մասամբ գիտեին... (Աճառյան Ն., Հայոց լեզվի պատմություն, հ. I, Եր., 1940, էջ 223), Մ. Աբեղյանը՝ Քսենոփոնի ժամանակից արդեն, V դարի վերջում մեր թ.ա. պարսկերեն լեզուն անհասկանալի չի եղել հայերի մեջ (Աբեղյան Մ., Երկեր, հ. 1, Եր., 1966, էջ 28), Աստ. Խաչատրյանը՝ Քսենոփոն 401 (ն. մ. թ.) Արմենիայում բնիկների հետ պարսիկ թարգմանների միջոցով էր խոսում, որ ասել է, թե պարսկերեն հասկանում էին հայերը... ( Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Եր., 1933, էջ 47), Ն. Մանանդյանը՝ մեր գեղջկուհիները հարցնում են հույներին, թե ովքե՞ր են, իսկ վերջիններս, թաքցնելով իրենց ով լինելը, պարսկախոս թարգմանի միջոցով ասում են, որ իրենք թագավորի կողմից գնում են սատրապի մոտ: Կանայք հայտնում են, որ սատրապն այստեղից մի փարսախ հեռու է (Մանանդյան Ն., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Եր., 1944, էջ 77), «Անաբասիս»-ի նոր թարգմանությունն իրականացրած Մ.Կրկյաշարյանը՝ Քսենոփոնի այս վկայությունը ցույց է տալիս, որ արմենական գյուղերի բնակիչները, նույնիսկ կանայք, գիտեին պարսկերեն կամ ծայրահեղ դեպքում հասկանում էին այդ լեզուն (Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Մ. Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 261, ծան. 21):

Կարծում ենք՝ մ.թ.ա. V-րդ դարի վերջին հայերենը չէր կարող պարսկերենին փոխադարձ հասկանալիության աստիճանի մոտ լինել, առավել ևս անհավանական է, որ մ.թ.ա. V դարի լեռնցի հայ գեղջկուհիները պարսկերեն ոչ միայն հասկանային, այլև պարսկերենով հարցեր տային և իրենց տրված հարցին պարսկերենով պատասխանեին: Լեռնային գյուղում անձանթ մարդկանց տեսած հայ գեղջկուհիները հարցն ուղղելու էին իրենց մայրենի լեզվով՝ հայերեն: Հույների թարգմանը, քանի որ Հայաստանում իրենց ուղղված հայերեն հարց էր լսել, պատասխանելու էր հայերեն: Իսկ հույն վարձկանների մեջ և նրանց մոտ կային պարսկերեն իմացողներ: Պարսկերեն իմացող հայերը լինելու էին Արևմտյան Արմենիայի հյուպարքոս Տիրիբազոսի մոտից գերված հացարարներն ու մատռվակները: Սրանց՝ պարսկերենի իմացությունը հավանական է, քանի որ Տիրիբազոսի զորքում ծառայում էին նաև պարսիկ զինվորներ: Դրանցից մեկին

գերի էին վերցրել վարձկան հույները: Իսկ որ հույն հրամանատարներն ու զինվորները ևս ինչ-որ չափով իմանալու էին պարսկերեն, ընդունելի է, քանի որ ժամանակին նրանցից ոմանք ծառայել էին Կյուրոս Կրտսերի բանակում: Ստացվում է, որ հույն վարձկանների թարգմանը հայ գեղջկուհիների հետ հաղորդակցվել է հայերենով, իսկ հույներին փոխանցել պարսկերենով:

Ամենայն հավանականությամբ, սխալմունքը գալիս է «Անաբասիս»-ի ձեռագիրն արտագրողներից, ապա՝ նաև «Անաբասիս»-ի թարգմանիչներից և ծանոթագրողներից: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո, հունարենի տարածմանը զուգընթաց, այն միջազգային լեզվի կարգավիճակ ստացավ: «Անաբասիս»-ն արտագրած գրիչները, իսկ ավելի ուշ այն եվրոպական տարբեր լեզուներով թարգմանած ու ծանոթագրած մասնագետները չէին կարծում, թե Արևելքում հայտնված հույն վարձկանները կարող էին «բարբարոս» պարսիկների լեզուն իմանալ և «պարսկերեն խոսող թարգման» ունենալ ոչ թե պարսկերենից հունարեն կամ հունարենից պարսկերեն թարգմանելու համար, այլ մեկ ուրիշ օտար լեզվից իրենց՝ հույներին, հասկանալի պարսկերեն թարգմանելու համար: Այսպիսով, հույն վարձկանների ու հայ գեղջկուհիների հանդիպման դրվագը նկարագրող «Անաբասիս»-ի բնագրում կարող էր «թարգմանը պարսկերեն ասաց (գեղջկուհիներին)»-ի փոխարեն լինել՝ «պարսկերենի թարգմանը ասաց (գեղջկուհիներին)»:

**Лусине ПЕТРОСЯН (Армения)**

Ширакский центр арменоведческих исследований НАН РА (Гюмри)  
e-mail: vahe1996@mail.ru

## **О ПЕРЕВОДЧИКЕ В АРМЕНИИ УПОМЯНУТЫМ КСЕНОФОНТОМ**

Согласно «Анабасису» Ксенофонта, диалог между греческими наемниками и армянскими крестьянками в Армении проходил через персидскоязычного переводчика. «На этом переходе Хейрисоф в сумерки пришел к деревне и перед источником натолкнулся на женщин и девушек, носивших воду. (10) *Те спросили эллинов, кто они такие. Переводчик ответил по-персидски*, что они идут от царя (т.е. Артаксерсеса II) к сатрапу (т.е. Оронту-Ерванду). *Женщины сказали*, что сатрапа здесь нет и что он находится на расстоянии примерно 1 парасанга».

В связи с этим, по нашему мнению, в историографии существует недоразумение. Диалог был воспринят так, как будто разговор между армянскими крестьянками с горного села и переводчиком велся на персидском языке. В этом были убеждены даже выдающиеся ученые В. Струве, Г. Ачарян М. Абебян, А. Хачатрян, А. Манандян, С. Кркияшарян.

Скорее всего, ошибка исходит от переписчиков «Анабасиса». Известно, что после походов Александра Македонского и с распространением греческого языка в Передней Азии, этот язык получал статус международного. Переписчики «Анабасиса» не думали, что

наемники-греки оказавшиеся на Востоке могли знать язык «варварских» персов и иметь персоязычного переводчика не для перевода с персидского на греческий или с греческого на персидский, а для перевода с другого иностранного языка на персидский, с которым были знакомы наемники-греки.

И так, в оригинале рукописи «Анабазиса», в котором описывается эпизод встречи греческих наемников и армянских крестьянок, вместо «переводчик ответил по-персидски» могло быть «переводчик персидского ответил».

**Lusine PETROSYAN (RA)**

Shirak Center for Armenological Studies NAS RA (Gyumri)

e-mail: vahe1996@mail.ru

### **ABOUT AN INTERPRETER FOUND BY XENOPHON IN ARMENIA**

According to Xenophon's book "Anabasis", the dialogue in Armenia about Greek journeymen and Armenian countrywomen was mediated by a Persian-speaking interpreter. Xenophon saw countrywomen by the source, who were taking away water. Those women asked Hellenes who they were. And the interpreter said in Persian 'to the satrap (to Orontes-Ervand) and were sent by the king (by Artakses the Second)'. And the countrywomen told that he wasn't there and moreover he was one league far. Connected with this story, we think, there is a misunderstanding in historiography. The misunderstanding is that at first sight the dialogue between Armenian countrywomen and Greeks was in Persian. Many famous scientists as V. Struven, H. Acharian, M. Abeghian, Ast. Khachatrian, H. Manandian and the translator of the book "Anabasis" S. Krkiasharian shared the same opinion.

In all likelihood the misunderstanding is because of the rewriters of "Anabasis". After the raids of Alexander the Great, Persian became an international language and the rewriters of "Anabasis" thought that the Greek journeymen in East couldn't know the language of "barbarian" Persians and that they couldn't have an interpreter who would translate not from Persian into Greek or vice versa, but who would translate from another language into Persian from Greek. Thus, the episode of dialogue between Armenian countrywomen and Greek journeymen described in the original "Anabasis" could be the interpreter of Persian told countrywomen "instead of" the interpreter told in Persian.



Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)  
 էլ.փոստ՝ vaha1996@mail.ru

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՎԱԾ ԵՂՋՅՈՒՐԻ ԵՎ ՄԻԵՂՋՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Շատերին է հայտնի Գրիգոր Լուսավորչի մշտավառ կանթեղից ցոլացող Արագածի լույսի մասին ավանդազրույցը, որի հնադարյան արմատների մասին է խոսում լեռան հյուսիսարևելյան լանջերն ու ստորոտը զբաղեցրած *Նիզ* գավառի անունը: Մրա հիմք *նիզ* բառը գրաբարում ուներ երկու հիմնական նշանակություն. «ճանր քաներ տեղահան անելու՝ շարժելու լծակ, լինգ» և «ձողաձև կամ գերանաձև լույս, որ երևում է ամպերում»: Ընդ որում, այս բառը ծագած է համարվում հ.-ե. «հենվել», «ծռել, թեքել» նշանակող արմատից: Անշուշտ, սովորական լինգը չէր կարող երկնային լույսին համադրվել, բայց դա կարող էր տեղի ունենալ լինգի տեսքով այնպիսի առարկայի հետ, որին մեր նախնիների առասպելաբանական մտածողությունը լուսառաք է համարել: Դա եղել է Հայկական լեռնաշխարհի բնիկ քարայծի (բեզոարյան այծ) երկար (մինչև 130 սմ) կեռված եղջյուրը, որը և լինելու էր մեր քարիդարյան նախնիների առաջին լինգը: Նրանց պատկերացմամբ, մեր լեռները քարացած եղջերավորներ էին, իսկ լեռնագագաթները՝ նրանց եղջյուրները: Լուսաբացին նախ լուսավորվում էին դրանք և քարափներին կանգնած առաջնորդ քարայծերի եղջյուրները՝ տպավորություն ստեղծելով, թե լույսը նրանցից է տարածվում: Ըստ այդմ, մեր նախնիների մտածելակերպում տեղի է ունեցել «լեռնագագաթ»/«եղջյուր»/«լույս» հասկացությունների առասպելաբանական գուգորդումը:

Թե ինչքան վաղ ժամանակներում է դա տեղի ունեցել, ցույց են տալիս վաղինդեվրոպական DY արմատից ծագած բառերը, որոնք ազգակից լեզուներում թե՛ «այծ» են նշանակում և թե՛ «լույս», «աստված», «երկինք»: Հայերենում ունենք *տիկ* (նախնական իմաստով «այծ») և *տիւ* «օրվա լույս մասը», *Տիւր* «դպրության աստծու անունը», *բուծ* «կաթնակեր գառնուկ կամ ուլ» (մանկական թոթովանքով՝ *բրժո*) և *բուզի* «արեգակ» (նաև *բրժո* «ճրագ»), *անդեայ/անդի* «արջառ, եզ, նախիր» և *անթայր* «կայծ», *անթեղ* «տաք մոխիր, մոխրացած կրակ», *ճոլ/ճոլ* «ոչխարի հոտ» և *ճոլի* «ծիածան», *ճողճել* «փայլ արձակել, ցոլք տալ»: Թվարկվածներից *անդեայ* (<ան-դ-եայ) բառն իր արմատով առնչվում է շումեր. AN «երկինք» բառին, որով մատնացույց է անում երկուսում ընդհանուր հիմքի «կամար» հասկացության առկայությունը: Առաջինի դեպքում ի նկատի է առնված խոշոր եղջերավորի եղջյուրը, երկրորդի դեպքում՝ երկնակամարը: Հմմտ. հ.-ե. \**āno-* «օղակ, կամար»: Այդ հասկացությունների առասպելաբանական համադրման մեջ լինելու տեսանկյունից հմմտ. հետևյալ արցախյան և շիրակյան հանելուկները.

1. «Էն հինչըն ա՝ Կամար ա, սուն չունի» (երկինք),

2. «Բուռըմ ավագ ունիմ՝ /Թիվ համար չունի/, Կովի կաշիմ ունիմ՝ ծավվելիք չունի» (երկինք և աստղեր):

Արցախյան մի հեքիաթում (Հայ ժող. հեք., V, էջ 540-541) գույգ արջառ ծնած կովը նրանց եղջուրների համար ասում է. «էտ պոզերը լուս ըն տա՛մ»:

Հայաստանի ժայռապատկերները լի են քարայծերի, դրանց թվում և առասպելաբանված այծերի պատկերներով: Այս դեպքում մեր ուշադրության կենտրոնում դրանցից նրանք են, որոնք նախատիպ են ծառայել առասպելաբանական միեղջյուրի համար: Ինչպես հայ, այնպես էլ եվրոպական ժողովուրդների առասպելաբանություններին բնորոշ այս կերպարի համար Աս. Մնացականյանը գրում է, որ դրանց «Ամենատարածված տեսակները կապ ունեն եղջերուի կամ այծի հետ» (Բանբեր Մատենադարանի, թիվ 12, էջ 27), և որ «Միեղջյուրը կամ միեղջերուն ոչ միայն հզոր ու երևակայական գազան է, այլև դիցաբանական կույսերի հումանին» (էջ 29):

Էրեբունի-Արինբերդի պեղումներից հայտնաբերվել է մի բրոնզե գլանաձև պատվանդան, որի վրայի սեպագիր արձանագրությունը Մ. Իսրայելյանը թարգմանել է հետևյալ կերպ. «Խալդիին՝ տիրոջն – իր այս նվիրական եղջյուր-ուղերձը (որպես) հատուցում, Արգիշթին Մինուայան պատրաստեց, երբ Էրեբունին կառուցեց»: Նա շարունակում է. «Մեզ հասած այս հոյակապ պատվանդանը, ըստ երևույթին, իր վրա կրել է ցուլը խորհրդանշող եղջյուր...» [Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական ու հնագիտական տվյալների), Եր., 1971, էջ 70]: «Մեր ենթադրությամբ,- գրում է Մ. Իսրայելյանը,- Էրեբունի բերդ-քաղաքի կառուցման առթիվ Արգիշթի Ա-ը պատրաստել է Թեյշեբա աստծու խորհրդանիշը կազմող եզան մի «նվիրական եղջյուր», որը նվիրել է Խալդիին՝ իր տիրոջը» (նույն տեղում): Եղջյուրը եթե Խալդիին է նվիրվել, ուրեմն այն լինելու էր ոչ թե եզան, այլ արու քարայծի եղջյուրի կրկնօրինակ, որովհետև Խալդիին դիցալծ էր. հիշենք նրան զոհաբերվող ուլերը և Hal-di «այծ-աստված» անունը: Քանի որ եղջյուրը մեկն էր, ապա այն ընկալվելու էր որպես միաեղջյուրի եղջյուր:

**Саргис ПЕТРОСЯН (Армения)**

Ширакский центр арменоведческих исследований НАН РА (Гюмри)

e-mail: vahe1996@mail.ru

## О МИФОЛОГИЧЕСКОМ РОГЕ И ЕДИНОРОГЕ

Многие знают легенду о священном свете над горой Арагац. О древних корнях легенды гласит имя древнеармянского гавара *Ниг*, который занимал северо-восточные склоны горы и его предгорья. Основа этого имени слово *ниг* в грабаре имела два основных значения: «рычаг для перемещения тяжелых предметов, лом» и «стерженовидный или бревновидный свет, который виден в облаках». Это слово считается возникшим от индоевропейского корня обозначающего «опираться», «кривить, сгибать, наклонять». Конечно,

обычный лом не мог ассоциироваться с небесным светом, но это мог быть ломообразный такой объект, которого мифологическое мышление наших предков считало светопересылающим.

Это был изогнутый длинный рог туземного горного козла (безоарский козел) Армянского нагорья. Это и был первый лом наших предков каменного века. В их воображениях наши горы воспринимались окаменевшими рогатыми животными. На рассвете сначала освещались горы и рога вожаков горных коз стоящих на макушке скал. Было впечатление, что свет распространяется от их рогов. Соответственно, в мышлении наших предков состоялось ассоциирование мифологических понятий вершина горы-рог-свет.

На каком раннем периоде это происходило, показывают слова происходящие из индоевропейского корня DY, которые в родственных языках обозначают и «козел», и «свет», «бог», «небо». В пиктограммах Армении полны изображения горных коз, среди которых есть и мифологические козлы. В данном случае в центре нашего внимания те изображения, которые служили прототипом для мифологического единорога. Про единорога, который характерен как для армянской мифологии, так и для европейской, А. Мнацаканян пишет, что самые распространенные виды связаны с оленем или с козлом, что единорог не только могучий и фантастический зверь, но и возлюбленный мифологических дев. Единороги, встречающиеся в искусстве Урарту, скорее всего изображают зооморфное проявление бога Халди.

**Sargis PETROSYAN (RA)**

Shirak Center for Armenological Studies NAS RA (Gyumri)

e-mail: vahe1996@mail.ru

## **ABOUT THE MYTHOLOGICAL HORN AND THE UNICORN**

The legend of holy light hanging above Aragats is widely known. The legend's ancient roots are stated by Old Armenian state Nig, which occupied northeastern slopes of the mountain and its foothill. The stem of the word Nig in garbar had two main meanings "lever for transfer the heavy subjects, crowbar" and "a light seen in the clouds having form of kernel or beam". This word is considered to have been originated from Indo-European root meaning "to lean", "to twist, to bend, to tilt". Certainly, average crowbar cannot be associated with heavenly light, but it could have been an crowbar-like object, which the mythological mindset of our ancestors presumed to be light-reflecting. It was a long curved horn of aboriginal goat (bezoar goat) of Armenian highland. It should have been the first crowbar of our Stone Age ancestors. In their imagination our mountains were perceived as petrified horned animals. During sunrise first to be illuminated were the mountains and the horns of montane bellwethers standing on the mountain peaks. It gave an impression of light flow from their horns. Accordingly, in our ancestor's mindset took place a processing of mythological mountains-horn-light association.

To note how far period did it take we can observe words originating from Indo-European stem DY meaning "goat", and "light", "god", "heaven". In Armenian pictographs there are many images of jaal goats, among which also mythological ones. In this case we observe images serving

as prototypes for mythological unicorn. About the unicorn which is typical both for Armenian and European culture, A. Mnatsakanyan states, that they are related to a deer or a goat, and that unicorn is not only mighty and fantastic creature, but also a mythological virgins' lover. Unicorns found in art of Urartu, most likely are images of zoomorphic manifestation of god Haldi.

### Լուսինե ՍԱՀԱԿՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան  
Էլ.փոստ՝ lkhastur@yahoo.com

### ՀԱՄՇԵՆԸ XV-XVII դԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Համշենի գավառը եղել է հայոց հոգևոր և գրչության կենտրոններից մեկը, որտեղ XV-XVII դարերում ստեղծվել են բարձրարժեք ձեռագրեր, որոնցից քսանը փրկվել և գտնվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների մատենադարաններում, Լոնդոնի Բրիտանական թանգարանում և Ֆիլադելֆիայի Ազատ գրադարանում, Փրինստոնի համալսարանի գրադարանում պահվող Ռոբերտ Գարրետի և հայկական ձեռագրերի՝ Եվրոպայի մասնավոր հավաքածուներում:

Համշենի պատմության ուսումնասիրման համար անգնահատելի արժեք ունեն այս ձեռագրերում թողնված համշենցի գրիչների հիշատակարանները, որոնք հաղորդում են բացառիկ տեղեկություններ գավառի իշխանության, հոգևոր, մշակութային և առօրյա կյանքի մասին: Համշենցի գրիչների հիշատակարանների հաղորդած վկայությունների վերլուծությունը և նոր փաստերի համադրությունը հնարավորություն են ընձեռում ներկայացնելու XV-XVII դարերում Համշենի գավառի հայկական իշխանության, հոգևոր-մշակութային, քաղաքական կյանքի, բնակչության զբաղմունքի, ժողովրդական հավատալիքների և ժողովրդական բժշկության համապատկերը, ինչպես նաև գրանցվել են տեղանուններ ու անձնանուններ՝ Համշենի տեղական բարբառի հնչարտասանական յուրահատկությամբ: Այս ձեռագրերի հիշատակարանները եզակի տեղեկություններ են հաղորդում, մասնավորապես, XV-XVII դարերում Համշենի Եղնովիտ (այժմ՝ Յայլաքոյ) գյուղի Սուրբ Խաչիկ հոր (կամ Խաչեքարի), ինչպես նաև Խուժկա (Խուժիկ) և Քոշտենց վանքերի գործունեության վերաբերյալ:

Համշենցի գրիչները, որոնք միննույն ժամանակ հոգևոր գործիչներ էին, պահպանել և զարգացրել են հայ գրչության բազմադարյան արվեստը: Անգամ խառնակ և դժնդակ ժամանակներում՝ Համշենի հայկական իշխանության անկումից հետո, այնտեղ, մասնավորապես, Եղնովիտ գյուղի Խաչիկ հոր վանքում շարունակվել է հայ գրչությունը, և համշենցի գրիչներն անմասն չեն մնացել նախնյաց ավանդույթները սերունդներին փոխանցելու հայապահպանության գործում: Նրանց հաղորդած բացառիկ տեղեկությունները պարզում են, որ Համշենը եղել է Հայ եկեղեցու թեմերից մեկը՝ ունենալով իր գրչության ինքնատիպ օջախները՝ Քոշտենց, Խուժկա Խաչիկ հոր վանքերը, և այս վիճակը պահպանվել է մինչև 1630-ական թթ.: Համշենը հիշվում է որպես հայոց սրբատեղի, որտեղ ամփոփվել են Քրիստոսի վարջամակը, Սուրբ նշանները, ինչպես նաև՝ Վարդանանց նահատակ հերոսների նշխարները:

The fact that the historian Khorenatsi was under the influence of the Greek school and had the works of Herodotus and Xenophon, is a well-known fact. As we have already mentioned, the narration of the conquest of Armenia by Media and in the Armenian-Marian relations in general by Khorenatsi (Movses Khorenatsi, I, 25-26) was influenced by the Greek school.

The description of the relationship between the founder of the Persian Empire the Cyrus Great and the Tigran Haykazuni (Ervanduni) is derived from Xenophon's “Kyuropedia”. According to this work, the Armenian king Tigran passed his adolescence in the palace of the Midian king Astiages and was his peer and comrade in arms.

The fact of the Armenian crown prince in Media from supposes that in some historical period there was a collision between Armenia and Media, and in a result of which the Armenian king sent his son – the crown prince, **as a hostage**. This is the only explanation of the presence of the Armenian king in the opponent state. It was in a case when cuneiform sources attest on a profit of Babylonian-Sebeosyan version.

**Լիլիթ ՔՈՍՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան)

Էլ. փոստ՝ L.Qosyan@gmail.com

#### **Կ. ՊՈԼՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ (1890-ական թթ.)**

Ժամանակի մամուլի և արխիվային նյութերի հիման վրա լուսաբանվում է համիդյան ջարդարար քաղաքականության արդյունքում որբացած շուրջ 50.000 երեխաների փրկության՝ պատասպարման ու հայեցի դաստիարակման հիմնահարցը: Կոտորածի ժամանակ և հատկապես ավարտից հետո աշխարհի մի շարք երկրների բարեգործական և հասարակական կազմակերպություններ օգնության շտապեցին՝ իրականացնելով հանգանակություն, որը նպատակ ուներ օգնելու ջարդերից փրկվածներին գոյատևելու, սակայն կարիքը այնքան մեծ էր, որ ցուցաբերած օգնությունը աննշան էր: Հարկ ենք համարում նշել նաև, որ օտար տերությունների օգնությունը ուներ իր բացասական

հետևանքը՝ օտարացումը մայր եկեղեցուց: Ուստի հարկավոր էր կազմակերպել հայեցի օգնություն և ազգային հաստատություններում խնամել այդ երեխաներին:

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանը իր պաշտոնավարման առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ որբերի փրկության և պատսպարման ծանր գործին: 1897 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում մինչ այդ գործող «Որբոց առժամանակեայ խնամակալութեան» հանձնաժողովի փոխարեն պատրիարքի նախաձեռնությամբ կազմվում է «Կարոտելոց եւ Որբոց մնայուն յանձնաժողով», որի նպատակն է առաջնորդանիստ տեղերում հիմնել որբանոցներ: Եվ արդեն 1898 թ. Արևմտյան Հայաստանում կար թվով 22 որբանոց, որոնցից 14-ի ամսական ծախսը հոգում էր Կ. Պոլսի պատրիարքարանը, իսկ 7-ը պահվում էին բնակչության շրջանում կատարված հանգանակությունների և բարեգործական ընկերությունների հաշվին: Այս բոլոր որբանոցների ծախսերի մատակարարման և հսկողության համար ստեղծվել է հոգաբարձություն՝ բաղկացած մեկ հոգևորականից և երկու աշխարհիկներից, նախագահությամբ տեղական թեմական առաջնորդի կամ տեղապահի, որոնք ամեն վեց ամիսը մեկ տեղեկագիր են ուղարկում պատրիարքին:

Համիդյան ջարդերից հետո հայ որբերի փրկության գործին մասնակցում էին միսիոներական տարբեր հաստատություններ: Մ. Օրմանյանը, գնահատելով նրանց գործադրած ջանքերը, միաժամանակ զգուշացնում էր, որ նրանք բարեգործության քողի տակ չզբաղվեն դավանափոխությամբ: Նա համապատասխան շրջաբերականներով դիմում է նաև արտասահմանի հայությանը՝ հորդորելով նպաստել այնտեղ պատսպարված հայ որբերի հայեցի դաստիարակմանը:

Ծավալած գործունեության շնորհիվ, արդեն 1901թ. միայն պատրիարքի հովանավորության տակ գործում էր 37 որբանոց՝ 1813 որբերով, որոնցից 1680-ը տղաներ են, իսկ 133-ը՝ աղջիկներ: Իսկ 1902թ. սկսած՝ թեմական կենտրոններում բացվում են արհեստանոցներ, որտեղ որբերին ուսուցանում են տարբեր արհեստներ:

Այսպիսով, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, օգտագործելով ժամանակի հնարավոր բոլոր միջոցները, որոշակի աշխատանք ծավալեց հայ որբերին փրկելու համար, որը, ցավոք, ստեղծված բարդ քաղաքական պայմաններում հնարավոր չէր ավելի արդյունավետ կատարել:

**Лилит КОСЯН (Армения)**

Институт истории НАН РА (Ереван)

e-mail: L.Qosyan@gmail.com

## **ИЗ ИСТОРИИ ПОПЕЧЕНИЯ СИРОТ, ОРГАНИЗОВАННОГО КОНСТАНТИНОПОЛЬСКИМ ПАТРИАРХАТОМ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В 1890-ые ГОДЫ**

В докладе на основании архивных документов и материалов прессы освещается спасение 50.000 детей, осиротевших в результате Геноцида армян, организованного режимом Абдул-Гамида. В годы резни и после них общественные и благотворительные организации ряда государств осуществляли сбор средств с целью оказания помощи спасшимся от резни. Однако, необходимо отметить, что нужда была столь велика, что собранные средства составляли ее ничтожную часть.

Считаем необходимым отметить, что иностранные организации оказывали помощь сиротам, часто имея целью обратить последних в другую веру.

Армянский патриарх Константинополя М. Орманян с первых дней своего служения приступил к тяжелой миссии по спасению и защите сирот и уже к 1888 году в Западной Армении благодаря его усилиям действовало 22 сиротских приюта.

После гамидской резни в деле спасения армянских сирот участвовали и миссионерские организации. Орманян, давая оценку их деятельности, одновременно предупреждал, что те под прикрытием благотворительности занимаются обращением сирот в другую веру.

Благодаря развернутой Орманяном деятельности уже к 1901 году только под патронатом патриархии действовало 37 сиротских приютов с 1813 сиротами. А начиная с 1902 года в патриархальных центрах действовали мастерские, где сироты обучались различным ремеслам.

Таким образом, Константинопольский патриархат Армянской апостольской церкви, используя все возможные средства своего времени, организовал работу по спасению армянских сирот. Работу, которую в сложившихся политических условиях невозможно было выполнить эффективнее.

**Lilit KOSYAN (RA)**

Institute of History NAS RA (Yerevan)

e-mail: L.Qosyan@gmail.com

**FROM THE HISTORY OF THE ACTIVITY FOR THE CARE OF ORPHANS OF  
THE ARMENIAN PATRIARCHATE OF CONSTANTINOPLE (in the 1890s)**

The issue of salvation and Armenian education of about 50.000 children orphaned by the Hamidian pogrom policy on the basis of the Time Press and archival materials is elucidated in the paper. During the massacre and especially after the end of one charitable and social organizations from a number of countries hastened to help carrying out donations aimed at helping the survivors survive but the need was so great that the help was negligible. It is worth mentioning that help from foreigners sometimes used to change the religion of Armenians, especially orphans. Armenian Patriarch of Constantinople M. Ormanyan since the first days of his tenure had taken measures for the salvation and protection of orphans. There were 22 orphanages in Western Armenia in 1898.

After the Hamidian massacres, various missionary institutions were involved in the works of the salvation of Armenian orphans. M. Ormanyan appreciating their efforts, at the same time warned them not to change the religion of Armenians under the name of charity. He also appealed to the Armenians from abroad with appropriate notes urging them to contribute to the upbringing of Armenian orphans.

Thanks to his efforts, under the patronage of the Patriarch there were 37 orphanages with 1813 orphans, of which 1680 boys and 133 girls were already in 1901. And workshops had been opened in the diocesan centers since 1902 where orphans were taught different crafts.

Thus, the Armenian Patriarchate of Constantinople using all possible means of the time had done some work to save Armenian orphans, which, unfortunately, could not be performed more efficiently in the difficult political conditions.

**Հասմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

Էլ. փոստ՝ hasmikabrahamyan@yandex.ru

**ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՅԻԿ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՆԱՎԱԿԱՏԻՔՈՒՄ**

Բոլոր ժամանակներում մշակութային տարբեր համակարգերում մարդը ձգտել է մերձենալ Արարչին՝ ցանկանալով նմանվել նրան, արժանանալ նրա բարեհաճությանը: Այդ ջանքերի հատուցումը պետք է լինեին երկրային բարեկեցությունը և երկնային անմահությունը: Աստծուն միավորվելու ամենակարճ ուղին եղել է նրա հետ «հաղորդվելը», որը տարբեր մշակույթներում ունեցել է ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրատիպ դրսևորումներ. հաղորդություն ընկղմվելով, ճաշակելով, ըմպելով, հպվելով, աղոթելով և այլն:

Քրիստոնեությունը, հաշվի նստելով հաղորդության արդեն իսկ առկա դրսևորումների հետ, մշակել է հաղորդության իր ծիսակարգը: Սակայն հաղորդության նախաքրիստոնեական ձևերը շարունակել են գոյատևել քրիստոնեության ընդունումից հետո՝ հասնելով ընդհուպ մինչև մեր օրերը:

Մույն զեկուցման նպատակն է ուսումնասիրել՝ ա) Նավակատիքի ուտեստը՝ որպես նախաքրիստոնեական շրջանի հաղորդության նյութեր, բ) Եկեղեցու կողմից դրանք պահքից դեպի ուտիս անցման միջոց սահմանելու ժամանակն ու պատճառները:

Հարցն ուսումնասիրվել է ազգագրական, բանագիտական, պատմական, մատենագրական, կանոնագիտական, ծիսական սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական մշակույթների համապատկերներում: Կիրառվել են պատմահամեմատական, ֆենոմենոլոգիական, համադրական-վերլուծական մեթոդները:

Հաղորդության խորհրդի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն բոլոր սննդատեսակները, որոնց ճաշակումը պահքի ընթացքում արգելվել է, համարվել են սրբազան, և ըստ այդմ՝ եղել են հաղորդության նյութեր:

«Նավակատիք» բառն ունի մի քանի նշանակություն: Տվյալ դեպքում՝ խոսքը Սբ Ծնունդից և Սբ Հարությունից առաջ կատարվող նախատոնակ Նավակատիքի մասին է, որով պահքի խստությունը մեղմացվում է, և թույլատրվում է ճաշակել ձուկ, հավկիթ, կթեղեն՝ բացառելով միսը: Ըստ այդմ՝ Նավակատիք է կոչվում նաև մեղմացված պահքի սնունդը: Մույն զեկուցման մեջ խոսքը վերաբերում է վերջինիս:

Մեզ հայտնի տվյալներով, սկսած V դարից մինչև XIII դարը, արդիական են եղել Մեծ պահքը կամ Մեծ պահքի ընթացքում շաբաթ և կիրակի օրերը ձկնեղենով,

յուղեղենով (նաև՝ ձեռքով), կթեղենով մեղմացնելու և դրանցով հաղորդություն տալու խնդիրները: Այդ մասին վկայում են Հայոց հայրապետների կանոնական հրահանգները և խրատական բնույթի գրվածքները (Հովհան Մանդակունի, Հովհան Օձնեցի, Ներսես Շնորհալի, Հովհաննես Երզնկացի և այլն), որոնք հրահանգում են հետևյալը. ա) պահքի ընթացքում կթեղեն, ձուկ, հավկիթ, յուղ և գինի չօգտագործել, բ) յուղը, ձուկը, կաթը, պանիրը չգործածել եկեղեցում, չդնել Սուրբ Խորհրդի համար նախատեսված խորհրդանոցում և չբարձրացնել սուրբ սեղան: Տրամաբանական է, որ այդ կանոնները գրելը պայմանավորված էր ժողովրդի մեջ տարածված պասը խախտելու և որոշ բնակավայրերում եկեղեցական ծիսակարգ ներթափանցած ոչ կանոնական հաղորդության դեմ պայքարելու անհրաժեշտությամբ:

Հայտնի է, որ Կիլիկյան շրջանում Հայ Եկեղեցու ծեսում փոփոխություններ են կատարվել: Ունիթորական շարժման ժամանակ եկեղեցիների միության խնդրի վերաբերյալ Հայ Եկեղեցու հոգևոր դասը բաժանվել էր երկու թևի՝ միության կողմնակիցներ՝ ի դեմս Կիլիկյան Հայաստանի հոգևորականության, և ավանդականի ջատագովներ՝ ի դեմս Արևելյան վարդապետների: Երկու թևերի միջև ծավալված երկխոսության և հակաճառական բնույթի գրվածքներից պարզ է դառնում, որ Նավակատիքի հարցը նույնպես քննարկվել է: Արևելյան վարդապետները մերժել են պահքի ժամանակ կենդանական ծագման որևէ սննդատեսակի, իսկ Նավակատիքին՝ միայն յուղի և մսի գործածումը: Ըստ այդմ՝ վիճահարույց ձեռք, ձուկը, հավկիթը, կթեղենն ընդունվել են որպես Նավակատիքի ուտեստներ: Այսպիսով՝ կարգավորվել է երկու հարց. ա) հստակեցվել է այդ ուտեստները ճաշակելու ժամկետը, որն է՝ Սբ Ծննդյան և Սբ Հարության Նավակատիքներ, բ) ճրագալույցի պատարագի ժամանակ կանոնական հաղորդություն ստանալուց հետո Նավակատիքի ընթրիքին պահքի մեղմացում՝ ժողովրդական կենցաղում տարածված ոչ կանոնական հաղորդության սննդատեսակների՝ կթեղենի, հավկիթի, ձկան ճաշակմամբ:

Կաթով և հավկիթով ոչ կանոնական հաղորդության վերապրուկները շարունակել են գոյատևել հետագայում՝ ի դեմս Համբարձման տոնից առաջ կաթ չգործածելու և տոնի օրը՝ կաթնով ապուր մատաղ անելու, ինչպես նաև Ավագ հինգշաբթի հավկիթ ուտելու ձևով և այլն:

Асмик АБРААМЯН (Армения)

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: hasmikabrahamyan@yandex.ru

## АРХАИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ПРИЧАЩЕНИЯ В РАЗГОВЕНЬЕ ПОСЛЕ ПОСТА (НАВАКАТИК)

В течении истории в разных культурных системах человек стремился приблизиться, к Творцу, желая быть похожим на него, удостаиваться его милости, веря, что за усилия Всевышний наградит его земными благами и жизнью после смерти. Самый короткий путь к Богу - это причащение, которое проявлялось в разных культурах по-разному: погружаться, вкушать, пить, трогать, молиться и т. д.

Христианство, учитывая уже существующие виды причащения, разработало свой собственный ритуал. Тем не менее, дохристианские формы причащения продолжали существовать после принятия христианства, вплоть до наших дней.

Цель данного доклада: (а) изучить блюда Разговенья как часть дохристианского религиозного таинства причащения, (б) время и причины, по которым Церковь устанавливала данные виды пищи для перехода от поста к скоромному дню.

Вопрос изучался на основе этнографических, фольклорных, исторических, летописных, канонических, ритуальных источников и исследований в контексте дохристианской и христианской культур. Используются историко-сравнительные, феноменологические, сравнительно-аналитические методы.

Всестороннее изучение причащения показывает, что все виды питания, которые когда то были запрещены во время поста, считались священными и следовательно, носили таинства причащения.

Слово Разговенье имеет несколько значений. В данном контексте обозначает предпраздничное богослужение - Разговенье до Св. Рождества и Св. Пасхи, во время которого смягчается жесткость поста и позволено есть рыбу, яйцо, молочные продукты, исключая мясо. Соответственно, словом Разговенье называется еда смягченного поста, чему посвящен данный доклад.

Согласно известным нам фактам, в течении V-XIII веков, в числе других спорных вопросов был и вопрос о том, можно ли во время Великого поста есть рыбу, масло и т.д. Об этом свидетельствуют канонические заповеди и поучительные сочинения армянских католосов (Ован Мандакуни, Ован Одзнеци, Нерсес Шнорали, Ованнес Ерзнкаци и др.), в которых говорится: а) во время поста нельзя использовать рыбу, яйцо, молоко, масло, вино, б) масло, рыбу, молоко, сыр не ставить на отведенное место, которое предназначено для канонического причащения. Логично, что необходимость написания этих правил было обусловлено не только борьбой с нарушением поста, но и с борьбой некоторых неканонических видов питания во время причащения.

Известно, что в ритуалах Армянской церкви Киликийского государства были введены некоторые изменения. Мнения духовной иерархии Армянской Церкви разделились на два течения: а) сторонники союза с Католической Церковью в лице армянского духовенства Киликийского Католикосата которая вела к изменению в традиционных ритуалах, б) сторонники в лице церковных отцов Восточной части Армении, выступающие против изме-

нений в традиционных ритуалах. Из письменного диалога между двумя сторонами становится ясно, что обсуждался также вопрос Разговенья. Восточные отцы отказались использовать любой вид пищи животного происхождения во время поста, а во время Разговенья неупотребляли масло и мясо. Из этого следует, что масло, рыба, яйца, молочные продукты стали едой Разговенья. Таким образом были решены два вопроса: а) уточнилось время употребления даты выше упомянутых блюд - Разговенье Рождества Христова и Святой Пасхи, б) во время Сочельника получить каноническое причащение, после чего пост смягчить рыбой, молочными продуктами, яйцом и растительным маслом.

Неканоническое таинство причащения молоком и яйцом продолжало существовать в народных праздничных ритуалах: молоко не использовалось до дня Вознесения, а в день праздника приносилась в жертву молочная рисовая каша, а в Страстной Четверг использовались яйца и т.д.

**Hasmik ABRAHAMYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA  
e-mail: hasmikabrahamyan@yandex.ru

## ARCHAIC MANIFESTATIONS OF COMMUNION IN NAVAKATIQ<sup>1</sup>

In different cultural systems during the all periods of history, man sought to approach the Creator, wanting to be like him, to receive his mercy, believing that God will give him earthly blessings and life after death. The Communion is the shortest way to “communicate” with God, which manifested itself in different cultures in different ways: to dive, eat, drink, touch, pray, etc.

Christianity, taking into account the already existing manifestations of Communion, cultivated its own Communion ritual. However, pre-Christian Communion variants continued to exist after the adoption of Christianity, up to the present day.

The purpose of this report is: (a) to study the dishes of Navakatiq as materials of the pre-Christian Communion, (b) the time and reasons why the Church chose these types of food for Navakatiq.

The question was studied on the basis of ethnographic, folklore, historical, bibliographical, canonical, ritual sources and research in the context of pre-Christian and Christian cultures. Historical comparative, phenomenological, comparative analytical methods have been used.

A comprehensive study of Communion shows that all the food that were forbidden during the Fast were considered sacred and, therefore, were the materials of Communion.

According to the facts known to us, during the V-XIII centuries, among other controversial issues there was a question about eating fish, oil during the Lent. That is known by the canonical commandments and instructive works of Armenian Chatholicoses (Hovhan

<sup>1</sup> The word Navakatiq has several meanings. In this context, refers to the pre-feast service, which preceded St. Christmas and St. Easter, during which the rigidity of the Fast is softened and allowed to eat fish, eggs, dairy products, excluding meat. Accordingly, the word Navakatiq means also the food of a lighten Fast. The report is dedicated to this question.



Mandakuni, Hovhan Odznetsi, Nerses Shnorhali, Hovhannes Erznkatsi, etc.), which instruct: (a) eggs, fish, milk, butter, wine cannot be used during Lent, b) do not put oil, fish, milk, cheese in the place, which is intended for canonical Communion. It is logical, that the need of writing such rules was due not only to fight against of breaking the Fast, but also to meed against some types of non-canonical Communion.

It is known that during the Cilician state there were some changes in the rituals of the Armenian Church. The opinion of the spiritual hierarchy of the Armenian Church was divided into two sides: a) supporters of coordinating the adoption of traditional rites with the Catholic Church, represented by the Armenian clergy of the Cilician Catholicosate, b) advocating the non-acceptance of changes in traditional rituals represented by the church fathers of the Eastern part of Armenia. From the written dialogue between the two parties, it becomes clear that the issue of Navakatiq was also discussed. Eastern fathers refused to use any kind of food of animal origin during Navakatiq, and during Peregrenia not to use only butter and meat. From this it follows that butter, fish, eggs, and dairy products have become food of Navakatiq. Thus, two issues were resolved: a) clarification of the dates of the above-mentioned dishes - Navakatiq of Christmas and Holy Easter, b) during the Christmas Eve get the canonical moistening, then soften the post with fish, dairy products, eggs and vegetable oil.

The non-canonical sacrament of milk and eggs continued to survive in different rituals of national feasts: non-use of milk before the Ascension Day in order to sacrifice milk soup in the Ascension Day, eating egg the Holy Thursday and so on.

**Թորգոմ ԱՂԱՆՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ.փոստ՝ aghanyan.torgom@gmail.com

## **ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻՈՒՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՓՈՐՁ**

Ինքնասպանությունը մշակութային-սոցիալական երևույթ է, մի երևույթ, որը ըստ ամենայնի գնահատված չէ ո՛չ հասարակության և ո՛չ էլ գիտական շրջանակների կողմից: Այս խնդրիը առավել առկա է Խորհրդային և հետխորհրդային երկրներում, որտեղ երկար ժամանակ այն տաբուացված ու արգելված թեմա էր: ԽՍՀՄ-ում դա արվում էր քաղաքական-գաղափարախոսական տեսանկյունից, սոցիալիստական իդիլիան չխաթարելու մտայնությամբ, իսկ հետխորհրդային շրջանում, հատկապես մեր երկրում, այն ուղղակի գտնվում է բարձիթողի վիճակում:

Անկախության առաջին 7-8 տարիներին նույնիսկ արգելված էր ինքնասպանությունների վերաբերյալ վիճակագրական որևէ տվյալ հաղորդել մամուլում կամ ոստիկանության հաղորդագրություններում, իսկ հետագայում թե՛ ինքնասպանությունների, թե՛ դրանց փորձերի թիվը արհեստականորեն իջեցվել է, սակայն արդեն 2009թ.-ից սկսած՝ ներկայացվող թվերն սկսեցին համապատասխանել իրականությանը:

Մյուս կողմից, թե՛ վերոհիշյալ հանգամանքից, թե՛ սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակից ելնելով, ո՛չ հանրության, ո՛չ էլ համապատասխան մասնագետների կողմից ինքնասպանությունների նկատմամբ առանձնապես հետաքրքրություն չէր դրսևորվում: Թեման՝ որպես առօրյա լուր, արձարծվում էր թերթերում ու ամսագրերում՝ այդպիսով, դառնալով կյանքի մի մաս ու նորմալիզացվում: Մա այն դեպքում, երբ ընդամենը մեկ դար առաջ այս երևույթը ոչ միայն արգելված էր, անթույլատրելի ու պարսավելի, այլև ամոթալի:

Ինքնասպանության թեման Հայաստանում գրեթե ուսումնասիրված չէ ո՛չ սոցիալ-հոգեբանական, ո՛չ սոցիոմշակութային տեսանկյունից, ուստի այս զեկուցումը մի փորձ է՝ ինչ-որ առումով լուսաբանելու այդ երևույթը՝ մասնագետների ու պատկան մարմինների ուշադրությունը խնդրին կենտրոնացնելու միտումով, քանի որ օրեցօր այն դառնում է ավելի հրատապ: Մենք փորձել ենք խնդրին նայել սոցիալական մարդաբանության տեսանկյունից, որը քիչ է հանդիպում նաև ռուսական ու միջազգային գիտական գրականության մեջ: Մեր նպատակն է խնդրահարույց հարցը մտցնել գիտական քննարկումների ասպարեզ:

Զեկուցման մեջ, միջազգային գիտական հետազոտությունների մեթոդաբանության հիման վրա, վերլուծվելու և ընդհանուր գծերով ներկայացվելու է «ինքնասպանության մշակույթը» Հայաստանում: Ուսումնասիրության մեջ, երևույթի ընդհանուր պատկերը տալու համար, համեմատականներ են անցկացվել Հայաստանի ու մի շարք այլ երկրների միջև:

**Торгом АГАНЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: aghanyan.torgom@gmail.com

## **ПОПЫТКА СОЦИОКУЛЬТУРНОГО ИССЛЕДОВАНИЯ САМОУБИЙСТВА В ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ**

Самоубийство — это культурно-социальный феномен, который не был достойно оценен ни наукой, ни социумом, особенно в СССР и в постсоветском пространстве. В СССР это было обусловлено государственной цензурой и всеобщим замалчиванием, а в постсоветской среде, в странах СНГ, в частности, в Армении — полным безразличием. В Армении первые публикации на эту тему, в основном, были в прессе, а позже, во втором

десятилетия XXI в., после провозглашения независимости, тема начала обсуждаться также и в научных кругах. Однако, предмет обсуждения всё еще недостаточно изучен. В работе сделана попытка поставленную задачу проанализировать с точки зрения этносоциологии, при этом, приглашая исследователей к более широкому обсуждению, дискуссии.

**Torgom AGHANYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yereva)

e-mail: aghanyan.torgom@gmail.com

## **SOCIO-CULTURAL RESEARCH ABOUT THE SUICIDE IN POST-SOVIET ARMENIA**

Suicide is a socio-cultural phenomenon, which has not been evaluated by the society nor by the science, especially in the USSR and post-Soviet space. In the USSR it resulted from the State censorship and public silence, but in the post-Soviet environment and particularly in Armenia it resulted from the total indifference to the topic by the society and the science.

In Armenia the topic under our discussion was first discussed and published in the press. Only in the second decade of the 21st century the topic has been discussed by the scholars. Nonetheless, the subject matter is not well studied. This paper tries to analyze the problem as an ethno sociological phenomenon and thus to attract the attention of the scholars for more broad discussions.

**Կարինե ԲԱԶԵՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

Էլ. փոստ՝ bazeyan60@mail.ru

## **ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏԱՂՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX դ. ՎԵՐՁԻ - XX դ. ՄԿԶԲԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ**

Լուսանկարը՝ մարդու աչքի համար աննկատելի մանրամասները վերարտադրելու հնարավորությամբ, կարող է դառնալ իրականությունը ներկայացնող անկողմնակալ և ճշգրիտ փաստաթուղթ, որի տվյալները կարելի է համեմատել ինչպես այլ նկարների, այնպես էլ կենցաղի վերաբերյալ տարբեր նյութերի հետ: Լուսանկարի՝ որպես սկզբնաղբյուրի նշանակությունն ու կարևորությունը դրա բնօրինակության, փաստավավերագրման, իրականությունը ճշգրիտ վերարտադրելու մեջ են:

Ալեքսանդրապոլ քաղաքի մշակութային պատկերը լավագույնս ներկայացված է XIX դ. վերջի - XX դ. սկզբի լուսանկարներում, որոնց միջոցով ակնառու կարելի է տեսնել և՛ քաղաքն իր ձևավորման ընթացքում, և՛ քաղաքային կենցաղը՝ ամենատարբեր դրսևորումներով:

Քանակապես ամենամեծաթիվը դիմանկարային ֆոտոներն են, որոնք միաժամանակ նաև ամենահին ժանր են համարվում լուսանկարչության մեջ: Ճարտարապետական կառույցների և լանդշաֆտի լուսանկարումը՝ որպես ժանր, նույնպես վաղ է սկսվել, քանի որ դրանց օրինակները հանդիպում են քաղաքը ներկայացնող առաջին լուսանկարների մեջ: Դա պայմանավորված էր նրանով, որ ֆոտոնկարչական գործի արշավույսին առավել հարմար էր անշարժ օբյեկտների լուսանկարումը, հատկապես մի քանի բոլորակ տեղ ֆիքսման դեպքում: Ավելի փոքր թիվ են կազմում սյուժետային լուսանկարները, որտեղ պատկերված են աշխատանքային, ժամանցային պահեր և այլն:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ լուսանկարն ինքնին սոցիալական հիշողության կրողն է, ապա դա կարող է դիտարկվել նաև որպես կոլեկտիվ հիշողության և, ըստ այդմ, կոլեկտիվ ինքնագիտակցության կրող մշակութային արժեք:

Այս տեսանկյունից առավել ուշագրավ են ընտանեկան դիմանկարները, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ոչ միայն ընտանիքի արտաքին բնութագրիչների, այլև նրա անդամների ինքնաներկայացման ձևի, վարքի նորմերի և կատարելության չափանիշների մասին: Այն տեղեկությունները, որոնք կարելի է ստանալ լուսանկարներից, վերաբերում են ինչպես այդտեղ պատկերված մարդուն կամ մարդկանց (արտաքին նկարագիր, հագուստ, սոցիալական կարգավիճակ, ընտանեկան դրություն և այլն), այնպես էլ նրանց կյանքի որոշ կողմերի, սովորույթներին, ճաշակին ու նախասիրություններին: Այդ տեղեկությունները հնարավորություն են տալիս լրացնելու և նոր գույներով հարստացնելու անցյալի առօրեականության պատկերը:

**Карине БАЗЕЯН (Армения)**

Ширакского центра арменоведческих исследований НАН РА (Гюмри)

e-mail: bazeyan60@mail.ru

## **ГОРОДСКОЙ БЫТ И КУЛЬТУРА АЛЕКСАНДРОПОЛЯ НА ФОТОГРАФИЯХ КОНЦА XIX - НАЧАЛА - XX ВВ.**

Фотография, с её возможностью воспроизводить детали, не всегда замечаемые человеческим глазом, может стать документально беспристрастным и точным протоколом регистрации действительности, данные которой можно сравнивать как друг с другом, так и с остальными известными способами фиксации бытия. Важность и значимость фотографии как первоисточника состоит в её документализме, подлинности и реальности.

Вся полнота городской культуры Александрополя лучше всех представлена в фотографиях конца XIX- начала XX вв., через которые можно видеть и становление города, и городской быт в разных проявлениях.

Самые многочисленные - это портретные фотографии, которые считаются и наиболее ранним жанром. Архитектурная съёмка как жанр фотографии также появляется очень рано и встречается среди самых первых фотоматериалов. На заре фотодела проще всего было снимать статичные объекты, особенно при выдержке в несколько минут. В более меньшем количестве сохранились сюжетные фотографии, на которых показаны моменты работы, досуга и многое другое.

Если учесть то, что фотография сама уже носитель социальной памяти, то она может представляться как носитель коллективной памяти, так и коллективного самосознания.

С этой точки зрения особенно интересны семейные фотографии, как визуальные свидетельства, которые дают представление не только о внешних характеристиках образа семьи, но и о технике саморепрезентации, образах поведения и заветных идеалов. Сведения, которые можно «читать» со снимков касаются как самого человека или людей, запечатленных на снимке (внешний облик, характеристики одежды, определение социального статуса, семейного положения и т.д.), так и некоторых сторон их жизни, традиций, вкусов и пристрастий. Эти сведения способны дополнить и обогатить новыми красками картину повседневности былого.

**Karine BAZEYAN (Armenia)**

Shirak Center for Armenological Studies NAS RA (Gyumri)

e-mail: bazeyan60@mail.ru

## **CITY LIFE AND CULTURE OF ALEXANDRAPOL IN THE PHOTOS OF THE END OF XIX –THE BEGINNING OF XX CC.**

A photograph, with its ability to reproduce details that are not always noticed by the human eye, can become a documented impartial and accurate protocol for recording reality, the data of which can be compared both with each other and with other known methods of fixing being. The importance and significance of photography as a primary source lies in its documentism, authenticity and reality.

The whole picture of the city culture of Alexandropol is best represented in the photographs of the late XIX-early XX centuries, through which one can see the formation of the city, and the urban life in various manifestations.

The most numerous are portrait photos, which are considered the earliest genre. Architectural photography as a genre of photography also appears very early and is found among the very first photographic materials. At the dawn of photography, it was easiest to shoot static objects, especially at a shutter speed of a few minutes. In a smaller number of preserved plot photographs, which show moments of work, leisure and much more.

If we take into account the fact that photography itself is already a carrier of social memory, then it can be represented as a carrier of collective memory as well as of collective self-consciousness.

From this point of view, family photographs are particularly interesting, as visual evidence that gives an idea not only about the external characteristics of the image of the family, but also about the technique of self-representation, behaviors and cherished ideals. Information that can be “counted” from photographs concerns both the person himself or the people imprinted in the photograph (appearance, characteristics of clothes, determination of social status, marital status, etc.), and some aspects of their life, traditions, tastes and addictions. This information can complement and enrich with the new colors a picture of the everyday life of the past.

### Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
Շիրակի երկրագիտական թանգարան (Գյումրի)  
Էլ. փոստ՝ a.boyajyan@mail.ru

### ՇԻՐԱԿԻ ԲՆԱԿՇՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XXդ.

Հայտնի է, որ բնակչության թվի փոփոխությունների վրա էական ազդեցություն ունեն ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, մշակութային, հոգեբանական և աշխարհաքաղաքական գործոնները: Բնակչության շարժի օրինաչափությունները բնութագրող ցուցանիշներն են՝ բնակչության թվի շարժընթացը, բնական վերարտադրությունը, բնակչության կազմը, տարաբնակեցումը և միգրացիան:

Երկար ժամանակ Շիրակի մարզի ներկայիս տարածքը բնութագրվել է բնակչության բավականին բարձր աճով՝ չնայած նրան, որ աճի ցուցանիշի մեծությունը պատմական առանձին ժամանակահատվածներում տարբեր է եղել: Ըստ առաջին համառոտական մարդահամարի տվյալների՝ Շիրակի մարզի ներկայիս տարածքում բնակվել է 125,5 հազար մարդ, այդ թվում 30,6 հազարը կամ 24,4%-ը՝ Ալեքսանդրապոլ (ներկայիս մարզկենտրոն Գյումրի) քաղաքում<sup>1</sup>: Մինչև 1914թ. մարզում և Գյումրի քաղաքում գրանցվել է բնակչության թվի կայուն աճ: Աղյուսակ 1-ի թվային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ 1897-1914թթ. ընկած ժամանակահատվածում մարզի բնակչության տարեկան միջին աճը կազմել է 2,6%, 1914-1926թթ. նվազել է 1,7%-ով,

<sup>1</sup> Ա. Պոտոպյան, ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Եր. 2013թ., էջ 254:

1926-1959թթ. աճել է 1,6%-ով, ինչը զիջել է հանրապետական միջին ցուցանիշին<sup>1</sup>, 1959-1988թթ. աճել է 2,5%, և 1988-2001թթ. նվազել է 2,3%-ով: Բերված թվերից երևում է, որ բնակչության վերարտադրության վրա ժողովրդագրական երկարատև բացասական ազդեցություն է ունեցել 1915-1921թթ. և 1941-1945թթ., 1993-2001թթ. բնակչության թվի նվազումը՝ պայմանավորված Առաջին և Երկրորդ աշխարհամարտերով, 1990-ական թվականների սոցիալ-տնտեսական ճգնաժամով՝ աշխատունակ բնակչության զանգվածային արտագաղթով և այլ գործոններով:

XXդ. առաջին կեսին բնակչության աճի հիմնական աղբյուրներն էին բնական ընդլայնված վերարտադրությունը, հայրենադարձությունը և ԽՍՀՄ հանրապետություններից բնակչության ներգաղթը: 1926-1959թթ. մարզում ծնունդների թվի աճի (բացառությամբ 1942-1945թթ., երբ գրանցվեցին ծնունդների շեշտակի անկում ու մահացությունների թվի աճ՝ պայմանավորված Երկրորդ աշխարհամարտով) վրա ազդող հիմնական գործոններն են եղել աղքիկների վաղ ամուսնությունը և ԽՍՀՄ-ում 1936թ. ընդունված օրենքը հղիության արհեստական կասեցումը արգելելու և այն քրեորեն պատժելու իրողություն համարելը: Նշենք, որ 1956թ. այդ օրենքի չեղարկումը մարզում հանգեցրեց ծնունդների թվի կտրուկ նվազման: 1970-1980-ական թվականներին Շիրակը բնութագրվում է բնակչության ամենացածր մահացությամբ: Ծնունդների բարձր ցուցանիշը և ցածր մահացությունը մինչև 1970-ական թվականներն ուղեկցվել են միգրացիայի դրական մնացորդով, իսկ 1982թ. սկսած՝ բացասական: Ներկայացվող ժամանակահատվածում մարզում բնակչության ընդլայնված բնական վերարտադրությունից անցում է կատարվել պարզ վերարտադրության: Ժողովրդագրական զարգացման ներկայիս միտումների պահպանման դեպքում բացառված չէ, որ մոտ ապագայում բնակչության պարզ բնական վերարտադրությունից անցում կատարվի նեղացված վերարտադրության:

Վերջին տասնամյակներին, մասնավորապես 1988թ. սկսած, Շիրակի ժողովրդագրական իրավիճակում տեղի ունեցան արմատական տեղաշարժեր, հատկապես արտագաղթողների թվի շեշտակի ավելացման ուղղությամբ, որոնք էական ազդեցություն թողեցին բնակչության վերարտադրության վրա: Անշուշտ, բնակչության թվի նվազումը կարելի է բացատրել Սպիտակի աղետալի երկրաշարժից մահացածների թվի շեշտակի աճով, սակայն բնակչության թվի արագընթաց նվազումը հիմնականում պայմանավորված է 1990-ական թվականների սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական անկայունությամբ: Ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների առումով կիրառական է Շիրակի բնակչության թվաքանակի շարժընթացի պատկերը XXդ. վերջին, մասնավորապես հանրապետության անկախացումից հետո: ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալներով, մարզի բնակչության թիվը 1988թ. համեմատությամբ նվազել է 111,1 հազարով կամ 30,1%-ով:

<sup>1</sup> Ա. Բոյաջյան, Ժողովրդագրական գործընթացները Շիրակում 1926-1959թթ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր. 2011թ., հ.14, էջ 112:

Աղյուսակ 1

Շիրակի մարզի բնակչության թվի շարժընթացը 1897-2001թթ.

	1897թ.	1906թ.	1914թ.	1926թ.	1959թ.	1979թ.	1988թ.	1989թ.	2001թ.
<b>Ընդամենը</b>	<b>125475</b>	<b>137633</b>	<b>169358</b>	<b>135130</b>	<b>214294</b>	<b>329551</b>	<b>368260</b>	<b>334381</b>	<b>257242</b>
Քաղաքային բնակչություն	30616	33879	51316	42313	122235	226494	261919	213415	161298
Գյուղական բնակչություն	94858	103754	118042	92817	92059	103060	106341	120966	95444

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ Մ. Մանասյան, Ա. Գրիգորյան, Ս. Պոտոսյան, Շիրակի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը), Եր. 2002թ., էջ 52, Ա. Պոտոսյան, ՀՀ գյուղական բնակչությունը և տարաբնակեցումը, Եր., 2013թ., էջ, 403-406, Ա. Հայրապետյան, Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Եր., 2011, էջ 203-210: Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986-2001, 2001թ. մարդահամարի նյութերը:

Խորհրդային իշխանության տարիներին առավել արագ տեմպերով աճել է Շիրակի մարզի քաղաքային բնակչությունը: 1926-1988թթ. քաղաքային բնակչության տարեկան միջին աճը կազմել է 8,3%, իսկ գյուղական բնակչության թիվը համապատասխանաբար՝ 0,2%: 1980-ական թվականներին քաղաքային բնակչության աճը դանդաղել է, գյուղական բնակչությանը գրեթե նույնն է մնացել: Երկրաշարժով պայմանավորված՝ 1988-1989թթ. Գյումրու բնակչության թիվը շեշտակի նվազում է, իսկ գյուղականը (մասնավորապես Ախուրյանի և Արթիկի տարածաշրջանների)՝ աճում: Այսպիսով, նշված ժամանակահատվածում մարզի քաղաքային բնակչության թիվը պակասել է 18,5%-ով, իսկ գյուղական բնակչության թիվն ավելացել է 13,7%-ով: 1988-2001թթ. Շիրակի մարզի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը նվազել է: 1988թ. ուրբանիզացման մակարդակը կազմել է 71,2%, 2001թ.՝ 62,7%:

**Аргашес БОЯДЖЯН (Армения)**

Ширакский центр арменоведческих исследований НАН РА,  
Ширакский краеведческий музей (Гюмри)  
e-mail: a.bojayjan@mail.ru

**ДИНАМИКА РОСТА НАСЕЛЕНИЯ ШИРАКА В XXв.**

Известно, что демографические, социально-экономические, культурные, психологические и геополитические факторы оказывают существенное влияние на изменение численности населения. Показатели, характеризующие движения населения - это рост населения, естественное воспроизводство, состав, расселение и миграция.



В течении долгого времени на нынешней территории Ширака отмечался довольно высокий рост населения, хотя численность его в отдельные исторические периоды была различной. По данным первой всероссийской переписи населения 1897г., на нынешней территории Ширакской области проживало 125,5 тыс. человек, из которых 30,6 тыс. человек (24,4%) в г. Александрополе (ныне областной центр Гюмри). В целом, до 1914 г. в Гюмри и Ширакской области был зарегистрирован стабильный рост населения. Анализ таблицы показывает, что в 1897-1914гг. среднегодовой рост населения марза составлял 2,6%, в 1914-1926гг. он уменьшился на 1,7%, в 1926-1959гг. на 1,6%, что ниже среднего по стране, с 1959 по 1988г. увеличился на 2,5%, а в 1988-2001гг. снизился на 2,3%. Из представленного в таблице ясно, что на динамику роста населения и его сокращение оказали негативное воздействие такие исторические события, как Первая мировая война (1914-1918гг.), годы становления первой Армянской республики(1918-1920гг), Великая Отечественная (1941-1945гг.) и социально-экономический кризис 1990-х годов, который привел к массовой эмиграции трудоспособного населения региона, в частности г. Гюмри.

Основными источниками роста населения в первой половине XX века были: естественное расширенное воспроизводство, репатриация и иммиграция населения из СССР. С 1926-1959гг. основными факторами, влияющими на уровень рождаемости в области (исключая 1942-1945 годы когда резко снизилась численность рождаемости и возрос уровень смертности), были ранние браки девочек и принятый закон 1936 года, запрещающий искусственное прерывание беременности. Заметим, что в 1956 году отмена этого закона в регионе привела к резкому снижению рождаемости. В 1970-х по 1980-ые годы в Шираке был отмечен самый низкий уровень смертности. Высокий уровень рождаемости и низкая смертность сопровождалась положительным сальдо миграции до 1970-х годов, а с 1982 года сальдо миграции стало отрицательным. В течение вышеуказанного периода был осуществлен переход от расширенного естественного воспроизводства населения к простому. В случае сохранения современных тенденций демографическое развитие не исключает в ближайшем будущем преобразование возможности развития населения путем узкого воспроизводства.

Исходя из демографической ситуации в Шираке, за последние десятилетия, особенно в 1988 году, произошли радикальные сдвиги в направлении роста численности эмигрантов, что оказало негативное влияние на воспроизводство населения. Безусловно, сокращение населения резко возросло за счет числа погибших во время Спитакского землетрясения, но его ускоренный темп сокращения численности населения в значительной степени обусловлен социально-экономической и геополитической нестабильностью 1990-х годов. В контексте прироста населения Ширака, особенно после провозглашения независимости республики практическое значение имеет изучение демо-

графических и социально-экономических проблем. С 1988г. по 2001г численность населения Ширака снизилась на 111,1 тыс. или 30,1%.

Таблица 1

Прирост численности населения Ширакской области с 1897-2001 гг.

	1897г.	1906 г.	1914 г.	1926 г.	1959 г.	1979 г.	1988 г.	1989 г.	2001 г.
<i>Всего</i>	<i>125475</i>	<i>137633</i>	<i>169358</i>	<i>135130</i>	<i>214294</i>	<i>329551</i>	<i>368260</i>	<i>334381</i>	<i>257242</i>
Городское население	30616	33879	51316	42313	122235	226494	261919	213415	161298
Сельское население	94858	103754	118042	92817	92059	103060	106341	120966	95444

*При составлении таблицы были использованы: М. Манасян А. Григорян С. Потосян, Ширакская область (Природа, Население, Экономика), Ер. 2002, стр. 52, А. Потосян, Сельское население и расселение РА, Ереван, 2013, с. 403-406, А. Айрапетян, Александропольский уезд в статистических материалах (XIX - XX вв.), Ер. стр. 203-210, Т. Акопяна, С. Мелик-Бахсян Х. Барсебян, Словарь топонимов Армении и прилегающих областей, Ер, 1986-2001, 2001гг.*

В советское время городское население Ширака росло более быстрыми темпами. 1926-1988гг. среднегодовой рост городского населения составил 8,3%, а численность сельского населения - 0,2%. В 1980-х годах рост городского населения замедлился, а рост сельского оставался практически неизменным. После землетрясения 1988г. численность населения Гюмри резко сократилась, а сельского (в особенности районов Ахуряна и Артика) возрасла. Таким образом, с 1988 по 1989гг, городское население области сократилось на 18,5%, а численность сельского населения увеличилась на 13,7%. В 2001г. доля городского населения Ширака по сравнению с 1988г. пошла на убыль. В 1988г. уровень урбанизации марза составил 71,2%, а в 2001 году - 62,7%.

**Artashes BOYAJYAN (Armenia)**

Shirak Center for Armenological Studies NAS RA,

Shirak Museum of Regional Studies (Gyumri)

e-mail: a.boyajyan@mail.ru

## THE POPULATION MOVEMENT PATTERNS OF SHIRAK REGION IN XX c.

It is known that demographical, social and economic, cultural, psychological and geopolitical features have essential effect on the population's amount changes. The characterizing indicators of population movement patterns are population number's movement, natural reproduction, population composition, resettlement and migration.

For a long period of time current territory of Shirak region had shown quite population growth, although the amount of growth indicators were different depending on periods. According

to the first one, all-Russian census the population of Shirak region was 125,500 people, among them 30,600 or 24,4% in Aleksandrapol (currently Gyumri) city. Untill 1914 in province and Gyumri city occurred stable population growth. In chart 1, the reserach shows us that from 1897 - 1914 the annual average population growth was 2,6%, from 1914- 1926 declined by 1,7%, but from 1926- 1959 increased by 1,6%, which was less than average number, from 1926-1959 the amount was grown up again by 2,5%, and from 1988-2001 decreased by 2.3%.

We can clearly see that some negative effects had their influence on demographic reproduction from 1914- 1921 and from 1941- 1945. The population decline from 1993-2001 was the result of first and second World wars, in 1990s it was due to the socio-economical crisis, when the working class migrated and such other cases.

During the Soviet Union period, the urban population number of Shirak region had increased fastly. From 1926-1988 the annual average growth of urban population was 8.3%, and the rural population number respectively by 0.2%. In the 1980s the urban population growth was slowing down but the rural population remained the same. As a result of earthquake from 1988-1989 the population of Gyumri sharply declined but rural one, especially in the regions of Akhuryan and Artik had increased. So, in the mentioned period the rural population amount was declined by 18.5% , and the rural was increased by 13.7%. From 1988-2001 the specific weight of urban population of Shirak region declined. In 1988 the urbanization level was 71,2 % in 2001- 62,7%.

#### **Ռուզաննա ԾԱՏՈՒՐՅԱՆ, Մխիթար ԳԱԲՐԻԵԼՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

Երևանի պետական համալսարան

Էլ.փոստ՝ [\\_m.gabrielyan@ysu.am](mailto:_m.gabrielyan@ysu.am); [ruzantsaturyan@yahoo.com](mailto:ruzantsaturyan@yahoo.com)

#### **1829-30թթ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԳԱՂԹՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ**

1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմն ու Ադրիանապոլսի պայմանագրի կնքումը միայն ռազմաքաղաքական հետևանքներ չէ, որ ունեցան: Ռուսների կողմից գրավված տարածքների մեծ մասի վերադարձով սկիզբ դրվեց արևմտահայության խոշորագույն գաղթերից մեկին (Էրզրումի, Կարսի ու Բայազետի տարածքներից):

Գաղթը կամ քրիստոնյաների վերաբնակեցումը, ինչպես և դրան նախորդած պարսկահայերի ներգաղթը, կազմակերպված էին, ցարական իշխանությունների գործողությունները՝ նպատակային: Հայերի վերաբնակեցմամբ լուծում էին կոնկրետ՝ ռազմաքաղաքական, տնտեսական խնդիրներ, նախադրյալներ էին ստեղծվում նորանվաճ

երկրամասերի տնտեսությունը, հասարակական ու մշակութային կյանքը ակտիվացնելու համար:

Հայ պատմագիտությունը տարբեր տեսանկյուններից քննարկել է այս իրադարձությունները, տրվել են տարբեր, երբեմն խիստ հակասական ու իրարամերժ գնահատականներ: Մինչև օրս, սակայն, մասնագիտական քննության առարկա գրեթե չեն դարձել այս գործընթացի խիստ կարևոր ազգաբանական, մշակութաբանական առումները: 19-րդ դարի Կովկասի պատմության կարևորագույն աղբյուրներից մեկի՝ AKAK-ի (Կովկասի հնագրական հանձնաժողովի հավաքած նյութերի ժողովածու) հատորներում հրատարակված նամակագրությունը ռուս պաշտոնյաների ու զինվորականների միջև, զեկուցագրերը, վերլուծական նյութերը ցույց են տալիս, որ բազմաթիվ այլ խնդիրների շարքում գաղթի/վերաբնակեցման ժամանակ կարևորվում էին այնպիսի հարցեր, ինչպես նոր բնակավայրի ընտրությունը, վերջինիս նմանությունը նախկին բնակավայրին, գաղթականների բնակեցումը միմյանց հարևանությամբ: Այսպիսով, ռուսական իշխանությունները փորձում էին նվազագույնի հասցնել հնարավոր բարդությունները, որ անպայման պետք է լինեին վերաբնակեցման կամ գաղթի արդյունքում (միայն այն, որ գաղթը նախատեսվածից շատ ավելի երկար տևեց, դրա վկայությունն է): Մեր գրառած ազգագրական նյութերը, որոնցում պահպանված պատահիկներ կան նաև գաղթի պատմությունից, ցույց են տալիս, որ գաղթականների համար իսկապես կարևոր էր նմանությունը նախկին գյուղին, բնակավայրին:

Ազգագրական նյութերի, աղբյուրների, հրապարակի վրա եղած այլ տվյալների համադրումն ու վերլուծությունը ցույց են տալիս, որ գործ ունենք ոչ թե բնակչության մեխանիկական տեղաշարժի, այլ «մշակութային վերաբնակեցման» յուրօրինակ գործընթացի հետ, երբ փորձ էր արվում նոր բնակավայրում ևս պահպանել ու վերարտադրել այն, ինչ ստեղծվել էր այնտեղ՝ նախկին Հայրենիքում: Այդպես ավելի հեշտ էր նաև նոր տարածքը Հայրենիք դարձնել, քանի որ նվազագույնի էին հասցվում տարբերությունները, ու տպավորություն էր, որ մարդիկ շարունակում էին ապրել «այստեղ ու այնտեղ, կամ այստեղի ու այնտեղի միջև»:

Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ այս տարբերակը ձեռնտու էր նաև ռուսական իշխանություններին, որոնք փորձում էին նվազագույնի հասցնել հնարավոր սոցիալական լարվածությունը, ընդվզումներն ու դժգոհությունները:

Ազգագրական նյութը, արխիվային վավերագրերը, մամուլում տեղ գտած թղթակցությունները, ճանապարհորդական վկայություններն ու տարբեր հետազոտությունները (Հ. Լինչ, Մ. Բրոսսե և ուրիշներ) ցույց են տալիս, որ Ախալցխայի գավառում (որ ներառում էր նաև Ախալքալակի հայկական գյուղերը) հաստատված հայերը իրապես կարողացան հետագա տասնամյակների ընթացքում պահպանել երզրումյան մշակութային հիմնական գծերը: Բնակելի համալիրի օրինակով պատկերը լավագույնս ներկայացրել է մեծանուն ազգագրագետ Ստ. Լիսիցյանը: «...Սա (Շիրական ու Ջավախքը–հեղ.) այն հայերի բնակության արեալն է, ովքեր Ադրիանապոլսի պայմանագրի կնքումից հետո,

հետևելով գեներ. Պասկևիչի գործերին, համատարած բնակավայրերով զբաղեցրին Ալեքսանդրապոլի, Ախալքալակի և Ախալցխայի նախկին գավառները և այստեղ նոր տներ կառուցեցին, պահպանելով ստրկական հավատարմություն իրենց դարավոր ավանդույթներին»<sup>1</sup>։ Ստրկական տերմինը գուցե ամենահարմարը չէ, սակայն ցույց է տալիս, թե որքան կարևոր էր գաղթականի համար ավանդույթը, ու ինչպես էր նա ամեն ինչ անում նոր վայրում նույնպես ավանդույթը պահպանելու ու փոխանցելու համար։ Պահում էր՝ հակադրվելով նույնիսկ ռուսական իշխանության պահանջին կամ ցանկությանը։

Ազգաբնակական մոտեցումը խնդրին, այսպիսով, հնարավորություն կտա բացահայտելու և վերլուծելու այն մեխանիզմները, որոնց օգնությամբ ոչ միայն գյուղերում, այլև Ախալցխա քաղաքում վերաբնակվածները կարողացան տասնամյակներ շարունակ պահպանել «երզրումյան» մշակույթն ու միաժամանակ «թույլատրել» որոշ նորույթների մուտքն այնպես, որ դրանից չխաթարվի մշակույթի ամբողջականությունը։

**Рузанна ЦАТУРЯН, Мхитар ГАБРИЕЛЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)  
Ереванский государственный университет  
e-mail: m.gabrielyan@ysu.am; ruzantsaturyan@yahoo.com

## **ПЕРЕСЕЛЕНИЕ АРМЯН В 1829-30гг. И МОДЕЛИ ВОСПРОИЗВОДСТВА КУЛЬТУРЫ**

Русско-турецкая война 1828-29гг. и Адрианопольский мирный договор имели не только военно-политические последствия. Возвращение занятых русскими территорий стало причиной массового переселения армян из Эрзерума, Карса, Баязета.

Переселение западных армян было организованным, а действия царских властей имели конкретные цели и задачи. Переселение трудолюбивого армянского населения по замыслу российских чиновников решало не только военно-политические задачи. Оно должно было способствовать также экономическому развитию региона, активизации социальной и культурной жизни. В армянской историографической литературе переселение рассмотрено с разных, иногда противоречивых точек зрения.

Процесс этот, однако, не рассматривался (либо рассматривался недостаточно) с этнографических, культурологических позиций. Анализ этнографического материала, публикаций, официальных документов XIX века позволяет констатировать, что переселение не было процессом «механического передвижения» христиан. Имело место также «переселение культуры». Армяне на новых местах жительства сохраняли и воспроизводили те модели культуры, которые функционировали там-на старой Родине. Так было легче преодолевать

<sup>1</sup> Ст. Лисициан, Крестьянское жилище Высокой Армении//Труды Кавказского Историко-Археологического Института, том IV, Тифлис, стр. 56:

трудности: сводились к минимуму различия и создавалось впечатление жизни «тут и там» или между «новым и старым». Экономические, социальные и культурные реалии следующих десятилетий показали, что такая модель устраивала также и российские власти.

Этнографический материал позволяет констатировать, что в Ахалцихе и селениях существовала своеобразная модель сохранения и воспроизводства культуры в новых условиях, что однако, не означало полную изоляцию. «Эрзерумская модель» со временем воспринимала также многие детали местной «кавказской культуры».

**Ruzanna TSATURYAN, Mkhitar GABRIELIAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

Yerevan State University

e-mail: m.gabrielyan@ysu.am; ruzantsaturyan@yahoo.com

### **FORCED MIGRATION OF ARMENIANS IN 1829-30 AND MODELS OF CULTURAL REPRODUCTION**

The Russian-Turkish war of 1828-29 and Treaty of Adrianopole had not just military and political consequences. It emerged one of the largest displacements of Western Armenians (from Erzurum, Kars and Bayazed provinces).

The analysis of ethnographic sources and materials shows that not only the physical displacement occurred, but the unique process of "culture of resettlement" was followed with an attempt to preserve and reproduce cultural models from the Homeland to make the resettlement and adaptation easier.

The applied ethnographic, anthropological approach gives the opportunity to reveal the mechanisms which allowed the migrants both in urban and rural places to keep alive the "Erzrumian culture" and allow some innovation to "enter" keeping harmonic the complexity of the culture for decades.

**Հասմիկ ԳԱԼՍՑԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

Էլ. փոստ՝ [gasmik@mail.ru](mailto:gasmik@mail.ru)

**ԴԻՎԱԶԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՎԱԶԱԼԱԾՈՒԹՅՈՒՆ.**

**ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒԺՈՒՄ**

**(ԸՍՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՆԱԶԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ)**

Համաձայն ժողովրդական գրույցներում առկա հավատալիքների՝ մարդու գրեթե բոլոր ցավերն ու հիվանդությունները չար ոգիների կամ դևերի ներգործության արդյունք են: Վերջիններիս կարևորագույն գործառույթներից մեկը հիվանդության հարուցիչ լինելն է: Աստվածաշնչում, հայ առասպելաբանության մեջ, միջնադարյան ձեռագրերում, ժողովրդական աղոթքներում, գրույցներում դիվահարությունը կամ դիվագղեցությունն ընկալվում է որպես հիվանդություն: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ դիվահարի ներսում չարքեր ու սատանաներ են բնակվում, որոնք էլ առաջ են բերում ընկնավորություն և այլ հիվանդություններ:

Դիվահարությունը դիվահար լինելն է, դևերի ազդեցությունը կրելը: Հայերենում որպես այս երևույթի հոմանիշներ օգտագործվում են շուրջ երկու տասնյակի հասնող բառեր ու արտահայտություններ: Դեռևս 5-րդ դարում դիվահարության՝ որպես հիվանդության մասին վկայել է Եզնիկ Կողբացին:

Դիվահարությունից խուսափելու համար ժողովրդական գրույցներում ու հավատալիքներում բազմաթիվ միջոցներ ու եղանակներ են առաջարկվում հատկապես կանանց ու երեխաներին, որոնք, ըստ էության, առավել խոցելի խմբեր են համարվում դևերի համար: Գործի են դրվում հմայական բազմաթիվ միջոցներ, և մետաղյա իրերի, չարահալած հատկանիշներով օժտված այլ առարկաների, հմայիլների կիրառությամբ հավատում են, որ զերծ են մնում դևերի ներգործությունից: Ամենագորեղ միջոցը համարվում է խաչակնքելն ու Աստծո անունը տալը:

Դիվահարը համարվում է հիվանդ, և դիվահալած հատուկ գործողությունների ու արարողությունների միջոցով որոշակի հմտություններով ու կարողություններով օժտված մարդիկ (հոգևորականներ, հեքիմներ, կախարդներ) բժշկում են վերջինիս: Ըստ միջնադարյան ձեռագրերի՝ դիվահալածի համար կարևոր նախապայման է իմանալ դևի անունը, ներգործության ոլորտը, որպեսզի ենթարկի երդմնեցման: Արդյունքում դիվահալածը մարդու մեջ բնակվող դևից կորզում է բուժման եղանակը և միջոցները:

Ժողովրդական գրույցների համաձայն՝ դիվահարությունը համարվում է հիվանդություն, որը բուժվում է հմայական և ժողովրդական աղոթքների, դիվահալած ամենատարբեր գործողությունների, մոգական հնարքների, նաև հիվանդին պարեցնելու և ծեծելու միջոցով:

**Асмик ГАЛСТЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: [gasmik@mail.ru](mailto:gasmik@mail.ru)**ОДЕРЖИМОСТЬ ДЕМОНАМИ И ЭКЗОРЦИЗМ. БОЛЕЗНЬ И ИСЦЕЛЕНИЕ  
(ПО АРМЯНСКИМ НАРОДНЫМ СУЕВЕРНЫМ СКАЗАНИЯМ)**

Согласно поверьям народных сказаний, вся боль и болезни человека являются результатом воздействия злых духов или демонов. Одной из важнейших функций последних является порождение болезни. В Библии, в армянской мифологии, средневековых рукописях, народных молитвах и сказаниях одержимость демонами также воспринимается как болезнь. Согласно народным представлениям, в человеке, одержимом демонами, обитают злые духи и черти, которые приводят к эпилепсии и иным заболеваниям.

Под одержимостью демонами подразумевается состояние, в котором человек подчинён их воздействию. В армянском языке в качестве синонима данного явления используются около двух десятков слов и выражений. Еще в V веке об одержимости как о болезни свидетельствовал Езник Кохбаци.

Во избежание одержимости в народных сказаниях и поверьях предлагались многочисленные средства особенно женщинам и детям, которые, по сути, считались наиболее уязвимыми группами для демонов. Применялись многочисленные колдовские средства, а благодаря использованию металлических изделий, талисманов и иных предметов, наделенных силой для изгнания злых духов, верили, что ограждали себя от влияния демонов. Самыми мощными средствами считались осенение крестом и произнесение имени Господа.

Одержимый считается больным, и посредством специальных действий и церемоний во изгнание, люди, наделенные определенным мастерством и умениями (священнослужители, знахари, колдуны), излечивают последних. Согласно средневековым рукописям, предварительным условием для изгоняющего бесов является знание имени демона, сферы воздействия для того чтобы заклясть демона.

В результате изгоняющий бесов выпытывает из демона, обитающего в человеке, метод и средства излечения.

Согласно народным сказаниям, одержимость демонами считается болезнью, которая излечивается благодаря колдовским и народным молитвам, различными действиями экзорцизма, магическими уловками, а также посредством принудительных танцев и побоев.

**Hasmik GALSTYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: [gasmik@mail.ru](mailto:gasmik@mail.ru)**DEMON POSSESSION AND EXORCISM: ILLNESS AND HEALING  
(ACCORDING TO THE ARMENIAN FOLK SUPERSTITIOUS NARRATIONS)**

According to the beliefs in folk stories, all the pain and diseases of the people result from the influence of evil spirits and demons. One of the main functions of the latter is causing illnesses.



In the Bible, Armenian mythology, medieval manuscripts, folk prayers and stories demonic possession is also perceived as an illness. According to the popular perceptions, the evil spirits and demons live inside the demonized person and cause epilepsy and other diseases.

Spirit possession involves condition in which the human is subjected to the influence of demons. Around two dozens of words and expressions are used as synonyms of this phenomenon in Armenian language. As early as in the V<sup>th</sup> century Yeznik Koghbatsi describes demonic possession as an illness.

In order to avoid possession numerous methods and means were suggested in the folk stories and beliefs, particularly for women and children, who are considered the most vulnerable groups for demons. Numerous magic means were applied, and thanks to the use of metallic items, other objects and talismans, given the strength of driving evil spirits, it was believed that they kept themselves away from demon influence. The most powerful means were making the sign of the cross and uttering the name of God.

The demonized person is considered sick, and the people, who have certain mastery and skills (priests, healers, sorcerers) cure the illnesses of the latter through special activities and exorcism ceremonies. According to the medieval manuscripts, the knowledge of the demon's name and sphere of his influence is precondition for the exorcist to conjure the demon.

As a result, an exorcist pries out the method and the means of cure from the demon, living inside the human. Based on the folk stories, the demon possession is considered an illness, which is healed thanks to the magic and folk prayers, various exorcist actions, magical tricks, as well as compulsory dances and beating.

#### Միհրան ԳԱԼՍՏՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ.փոստ՝ akoonk@yahoo.com

#### ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հանրապետությունից դուրս Հայաստանի բնակչության զանգվածային տեղաշարժերը ընտանիքի կայունության առումով առաջ են բերել սոցիալ-հոգեբանական և մշակութային մի շարք լուրջ հիմնախնդիրներ: Դրա հետևանքով Հայաստանում լայն տարածում է ստացել «կիսված» ընտանիքների մոդելը, որի անդամները գտնվում են սահմանի տարբեր կողմերում, իսկ այդ երկատվածությունը բարձրացնում է ամուսնալուծության ռիսկայնությունը: Հետազոտության արդյունքներով, հանրապետության միջին ցուցանիշների հետ համեմատած, միգրանտների մեջ բարձր տոկոս է կազմում ամուսնալուծված ընտանիքների թիվը: Նրանց շրջանում տարածում են ստացել ամուսնալուծության մի քանի ձևեր.

1) ամուսնալուծություններ, որոնք իրավական ձևակերպում են ստացել և վավե-

րացվել Քաղաքացիական ծառայության ակտերի գրանցման բաժիններում:

2) ձևական ամուսնալուծություններ, որոնք կրում են զուտ փաստաթղթային բնույթ. ընտանիքի անդամների համաձայնությամբ միգրանտը Հայաստանում ձևակերպում է կեղծ ամուսնալուծություն, իսկ ՌԴ-ում կեղծ ամուսնություն՝ այնտեղ դուրացված կարգով գրանցում կամ քաղաքացիություն ստանալու նպատակով:

3) իրավական ձևակերպում չստացած, սակայն փաստացի ամուսնալուծված կամ տղամարդու կողմից լքված ընտանիքներ, որոնք միգրացիայի հետևանքով վերջին տարիներին լայն տարածում են ստացել Հայաստանի տարբեր մարզերում: Այդ ընտանիքներում սահմանափակ են միգրանտի շփումներն ընտանիքի անդամների հետ, միգրանտը դադարում է էական դեր կատարելուց երեխաների սոցիալականացման, կենսափորձի փոխանակման և դաստիարակության, սոցիալական պաշտպանվածության և այլ կարևոր գործառույթներում: Միգրանտը ընտանիքին երբեմն ցուցաբերում է զուտ ֆինանսական աջակցություն, հատկապես երեխաներ ունենալու պարագայով:

Էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքներով՝ ամուսնալուծությունները պայմանավորված են աշխատանքային միգրացիայի պատճառով ընտանիքի ձևավորման կենսափուլերի առանձնահատկություններով: Երիտասարդ միգրանտների մինչամուսնական փուլի կտրուկ կրճատումը, ամուսնանալուց ընդամենը մեկ-երկու ամիս անց արտագնա աշխատանքի մեկնելը, երեխայի ծննդյան ընթացքում արտագնա աշխատանքի վայրում գտնվելը իրենց բացասական ազդեցությունն են թողնում ընտանիքի ամրության վրա: Այն հարցին, թե «Ըստ Ձեզ՝ որո՞նք են ամուսնալուծությունների պատճառները», միգրանտների ընտանիքների 38%-ի կարծիքով, դրանք հոգեբանական բնույթի են. ամուսինների նախասիրությունների, բնավորության տարբերությունները, խանդը, սիրո, հարգանքի բացակայությունը, ընտանիքի նկատմամբ անուշադրությունը և այլն: Ըստ նրանց՝ ընտանիքի անդամների շեղված վարքագիծը՝ տղամարդու կամ կնոջ անհավատարմությունը (28.5%), ալկոհոլի չարաշահումը (3.6%), դառնում են ամուսնալուծության պատճառ: Հարցվածների 18.2%-ը որպես պատճառ նշել է տնտեսական գործոնը՝ կապված ոչ բավարար ֆինանսական միջոցների, գործազրկության, բնակարանային-կենցաղային վատթար պայմանների հետ: Նրանց 7.0%-ը որպես ամուսնալուծության պատճառ նշել է երեխա չունենալու հանգամանքը՝ կարևորելով այն տոհմը շարունակելու և ժառանգորդման ավանդական արժեքների համատեքստում: Հարցվածների 4.7%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին: Ամուսնալուծության փաստի նկատմամբ միգրանտների ընտանիքների վերաբերմունքը միանշանակ չէ: Նրանց 63.5%-ը դեմ է արտահայտվել, հատկապես եթե ընտանիքում կան երեխաներ: Միայն 27,8%-ն է, որ ամուսնալուծությունը համարել է ընդունելի, երբ գույզերը երջանիկ չեն, և անգամ ընտանիքում երեխաներ կան: Նրանց 8.7%-ը դժվարացել է պատասխանել: Այսպիսով, աշխատանքային միգրացիան իր ազդեցությունն է թողնում ներընտանեկան հարաբերությունների վրա՝ դառնալով Հայաստանում անկայուն և ամուսնալուծված ընտանիքների տարածման կարևոր պատճառ:

**Мигран ГАЛСТЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: akoonk@yahoo.com

## **РАЗВОДЫ СРЕДИ ТРУДОВЫХ МИГРАНТОВ**

Массовое перемещение населения Армении за пределы республики привело к серьезным социально-психологическим и культурным проблемам с точки зрения стабильности семьи. В результате этого в Армении получила широкое распространение модель «расколотых» семей, члены которых находятся по разные стороны границы, и это явление повышает риск развода. Согласно результатам исследования по сравнению со средним уровнем разводов в республике, процент разведенных семей среди мигрантов высок. Среди них получили распространение несколько форм разводов.

1) Разводы, которые были юридически зарегистрированы и ратифицированы в отделениях Записи актов гражданского состояния.

2) Формальные разводы, которые являются документальными. С согласия членов семьи мигрант оформляет ложный развод в Армении и заключает ложный брак в России с целью получения регистрации или гражданства в упрощенном порядке.

3) Семьи, развод в которых не получил юридическую регистрацию, но де-факто имеют статус разведенных или являются брошенными со стороны мужчины, что в последние годы получило широкое распространение в разных провинциях Армении в результате миграции. В этих семьях контакты мигрантов с членами семьи ограничены, и мигранты перестают играть важную роль в социализации детей, в обмене опытом и воспитании, социальной защите и других важных функций. Иногда мигрант оказывает финансовую поддержку семье, особенно когда есть дети.

По результатам этноциологического исследования разводы обусловлены особенностями жизненного цикла формирования семьи вследствие трудовой миграции. Резкое сокращение добрачного периода жизни молодых мигрантов, отъезд на работу за границу один или два месяца спустя после женитьбы, нахождение за границей во время рождения ребенка оказывают негативное влияние на стабильность семьи. Отвечая на вопрос «Каковы причины развода?», 38% семей мигрантов считают, что они психологического характера: различия в предпочтениях, характеров супругов, ревность, отсутствие любви и уважения, отсутствие внимания по отношению к семье и т. д. По их словам, причиной развода являются девиантное поведение членов семьи: супружеская неверность мужчин или женщин (28,5%) и злоупотребление алкоголем (3,6%). 18,2% респондентов в качестве причины назвали экономический фактор, связанный с недостаточным финансированием, безработицей и плохими условиями жизни и быта. 7,0% из них заявили, что причиной развода является отсутствие ребенка, подчеркивая важность этого факта в контексте продолжения рода и традиционных ценностей наследственности. 4,7% респондентов затруднились ответить на этот вопрос. Отношение семей мигрантов к разводу не является однозначным. Около 63,5% из них против, особенно если в семье есть дети. Только 27,8% считают, что развод приемлем, когда пары не счастливы и даже имеют детей в семье. 8,7% из них затруднились с ответом. Таким образом, трудовая миграция оказывает влияние на семейные отношения, становясь важной причиной распространения нестабильных и разведенных семей.

**Mihran GALSTYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: akoonk@yahoo.com

**DIVORCES AMONG LABOR MIGRANTS**

The mass migration of Armenia's population has led to serious social-psychological and cultural problems in terms of family stability. As a result, the model of "split" families where members are on different sides of the borders has become widespread in Armenia, and this divergence raises the risk of divorce. According to the results of the survey, the percentage of divorced families among migrants is high in comparison with the average rates.

There are a few forms of divorce that have been spread among labor migrants that are presented hereinafter:

1) Divorces that have been legally registered and validated in the Civil Service Registration Department;

2) False divorces that are purely documentary. With the consent of family members, the migrant is formulating a false divorce in Armenia and fraudulent marriage in Russia with a simplified registration or citizenship;

3) Families that have been abandoned by men without formal registration of the divorce. This form has become widespread as a result of labor migration especially rural areas of Armenia. In these families, migrant contacts are limited to family members, and migrants stop playing a vital role in the socialization and upbringing of children, social protection of family and other vital functions. Migrant sometimes provides financial support to the family, especially when there are children.

According to the results of ethno-sociological research, divorces are conditioned by the peculiarities of the family-forming procedure due to labor migrants. Usually, couples significantly reduce the pre-marriages phase due to labor migration, migrants leave the family one or two months after the marriage, migrants are not present for childbirth. These factors have a negative impact on family strength.

In response to the question, "What are the reasons for divorce?", 38% of migrant families think the reasons are of mainly psychological, nature such as differences of spouses' preferences, differences in character, jealousy, lack of love, respect, neglect of family, etc. According to them, the deviant behavior of the family members also becomes a reason for divorce, that is infidelity (28.5%) and the abuse of alcohol (3.6%). 18.2% of the respondents mentioned the economic factor, such as insufficient funding, unemployment, and poor living conditions reasons for divorce.

7.0% of respondents reported that the reason for divorce was the absence of a child, highlighting the continuity of the family in the context of traditional values of inheritance. 4.7% of the respondents found it difficult to answer the question. The attitude of migrant families towards divorce is quite diverse. Some 63.5% of them are against, especially if there are children in the family. Only 27.8% think that divorce is acceptable when couples are not happy and even have children in the family. 8.7% of them found it difficult to answer. Thus, labor migration has an impact on family relationships, becoming an essential cause for the growing number of unstable families in Armenia.

**Լիաննա ԳԵՎՈՐԳՅԱՆ (Հայաստան)**

Պատմամշակութային արգելոց - թանգարանների և  
պատմական միջավայրի պահպանության ծառայություն (Երևան)  
Էլ. փոստ՝ gkp61@mail.ru

**ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԱՐԴԻ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Վերջին տարիներին թանգարանին՝ որպես սոցիալական հիշողության ինստիտուտի, առանձնահատուկ տեղ է հատկացվում՝ հասարակության՝ իր արմատների ու ինքնության նկատմամբ աճող հետաքրքրությամբ պայմանավորված: Թանգարանային հավաքածուներն ու դրանց հիման վրա ստեղծված թանգարանային ցուցադրությունները յուրահատուկ գիտագեղարվեստական հաղորդակցական միջավայր են, որտեղ վերականգնվում է առարկայացված հիշողությունը:

Առաջին հերթին խոսքը վերաբերում է ազգագրության և ազգագրական հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող թանգարաններին, որոնք ավելի քիչ են ուսումնասիրված, քան գեղարվեստական, պատմության և այլ տիպի թանգարանները:

Ազգագրության և ազգագրական հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող թանգարանները կարելի է համարել ազգային ինքնության ձևավորման ու ակտիվացման գործիքներից մեկը: Սակայն թանգարանների աշխատակիցներն արդյոք գիտակցում են իրենց դերն արդի հայ ինքնության ձևավորման գործում: Ի՞նչ միջոցներ, գործունեության ոլորտներ, նոր մեխանիզմներ կան դրա համար: Արդյոք թանգարանները պատրաստ են ստանձնելու այդ դերը՝ հաշվի առնելով XXI դարի նոր միտումներն ու մրցակցությունը:

Հայ ինքնության ձևավորման և ակտիվացման գործում ազգագրության, ինչպես նաև ազգագրական իրերի հավաքածուներ և ցուցադրություններ ունեցող թանգարանների դերը պայմանավորված է մի քանի հանգամանքով.

- Թանգարանը՝ որպես սոցիոմշակութային ինստիտուտ, կոչված է պատմամշակութային ժառանգության պահպանմանը, ուսումնասիրմանն ու փոխանցմանը և իր կայացման ընթացքում միշտ համարվել է սոցիալական հիշողության՝ ինքնության ձևավորման բաղադրիչներից մեկի պահպանման ու վերականգնման վայր,
- XX դարավերջի - XXI դ. սկզբի հասարակական կյանքի տնտեսական և քաղաքական բարեփոխումների հետևանքով պատմաազգագրական թանգարանները զգալի փոփոխություններ են կրում: Հասարակության դեմոկրատացման և գլոբալացման գործընթացների արդյունքում Հայաստանում տեղի ունեցող սոցիոմշակութային փոփոխություններն իրենց հերթին երբեմն հանգեցնում են հայ ինքնության «աղավաղմանը»: Սրանով պայմանավորված՝ խնդիր է առաջանում որոշակի շտկում կատարել ժամանակակից աշխարհում թանգարանի առաքելության և նրա գիտական, կրթամշա-

- կութային, գիտացուցադրական գործունեության մեջ, ինչը կնպաստի ձեռք բերելու այնպիսի գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են զարգացնելու ազգային ինքնության մաս կազմող ներկայի ու անցյալի էթնոմշակութային ընկալումը,
- ազգագրական ցուցադրությունների յուրահատկությունն ու արժեքը ներկայացվող բնօրինակ հավաքածուներն ու դրանց դիտողական լինելն են: Նման ցուցադրություններով են իրականացվում մի սերնդից մյուսին տեղեկության փոխանցումը, դրա զարգացումն ու վերափոխումը ժամանակի ու տարածության մեջ՝ նյութական և ոչ նյութական մշակույթի տարրերով, որոնք հետագայում վերածվում են հայ ինքնության խորհրդանիշների,
  - ժամանակակից տարբեր հարթակներում թանգարանում պահվող ազգագրական իրերի նմանօրինակների լայն կիրառությունն անհրաժեշտություն է առաջացնում դիտարկելու դրանք պատմամշակութային տեսանկյունից՝ անդրադառնալով ազգային ինքնության ձևավորման կամ ակտիվացման գործընթացի վրա դրանց հնարավոր ազդեցությանը:

**Лианна ГЕВОРГЯН(Армения)**

Служба по охране исторической среды  
и историко-культурных музеев-заповедников (Ереван)  
e-mail: glp61@mail.ru

## **ЭТНОГРАФИЧЕСКИЕ КОЛЛЕКЦИИ В КОНТЕКСТЕ ПРОЦЕССА ФОРМИРОВАНИЯ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ**

В последние годы, в связи с возрастающим вниманием общества к своим корням и национальной идентичности особое место выделяется феномену музея как института социальной памяти. Музейные собрания и созданные на их основе музейные экспозиции представляют собой особую научно-художественную коммуникационную среду, в которой реконструируется опредмеченная память.

В первую очередь, это касается этнографических музеев и музеев, имеющих этнографические коллекции и экспозиции как наименее представленные и изученные по сравнению с художественными, историческими и др. типами музеев.

Этнографические музеи можно признать одним из инструментов в деле формирования и активизации национальной идентичности. Однако, осознают ли музейные сотрудники свою роль в формировании современной идентичности армян? Какие средства, сферы деятельности, методы, новые инструменты имеются в их распоряжении? Готовы ли музеи выполнять эту роль и в XXI веке, учитывая новые веяния и конкуренцию?

Роль этнографических музеев и музеев, имеющих этнографические экспозиции, в формировании и активизации национальной идентичности армян обуславливается несколькими обстоятельствами:

- музей как социокультурный институт, предназначенный для сохранения, изучения и трансляции историко-культурного наследия, в процессе своего становления всегда являлся мес-

том сохранения и восстановления социальной памяти, которая является одной из составляющих формирования и/или активизации национальной идентичности;

- историко-этнографические музеи на рубеже XX-XXI вв. претерпевают значительные изменения, связанные с экономическим и политическим реформированием общественной жизни. В Армении, в условиях демократизации общества и в связи с процессом глобализации, происходят социокультурные изменения, что в свою очередь, иногда, приводит к «размыванию» национальной идентичности. Этим объясняется необходимость корректировки научной, культурно-образовательной и экспозиционной деятельности музея и его миссии в современном мире, что будет способствовать приобретению знаний и навыков, необходимых для развития этнокультурного восприятия как неотъемлемой части формирования идентичности, в том числе национальной;
- ценность и специфичность этнографических экспозиций в современной социокультурной ситуации заключается в достоверности коллекций, наглядности артефактов, посредством которых осуществляется процесс презентации передаваемой из поколения в поколение информации, их развития, трансформации во временном и ареальном срезе элементов материальной и нематериальной культуры, которые со временем становятся символами армянской идентичности;
- сегодня повсеместное использование на разных площадках предметов, схожих с музейными этнографическими артефактами создаёт необходимость рассмотреть их в историко-культурном аспекте возможного влияния на формирование или активизацию национальной идентичности.

**Lianna GEVORGYAN (Armenia)**

Service for the Protection of Historical Environment  
and Cultural Museum-Reservations (Yerevan)

e-mail: glp61@mail.ru

## **ETHNOGRAPHIC COLLECTIONS IN THE CONTEXT OF THE PROCESS OF FORMATION OF ARMENIAN IDENTITY**

In recent years, the museum has a special place as a social memory institution, with increasing attention and interest to the roots and the national identity. Museum collections and museum expositions created on their basis represent the unique scientific and art communication environment where recollected memory is restored.

First of all, it concerns the ethnographic museums and the museums having ethnographic collections and expositions as the least presented and studied in comparison with art, historical, and other types of museums.

Ethnographic and ethnographic collections and exhibitions of museums collections have a real possibility to impact on the process of Armenian national identity formation and activation.

However, whether museum employees realize their role in the formation of modern Armenian identity? What means, spheres of activity, methods, new tools are at their order? Are the museums ready to carry out this role considering the new tendencies and competition of the 21st century?

The role of ethnographic museums in the formation and activation of Armenian identity, as well as the part of museums with collections of ethnographic items and exhibits, is conditioned by several factors:

- the museum, as a sociological, cultural institution, is called to preserve, study and transmit historical and cultural heritage. During its development, it has always been considered as a component of social memory, a place of preservation and restoration of national identity;
- as a result of economic and political reforms in public life, the historical and ethnographic museums have undergone significant changes at the turn of 20-21st centuries. Sociocultural changes in Armenia as a result of democratization and globalization processes, in turn, sometimes lead to "washing out" of national identity. It is necessary to make some adjustments in the mission and activities of museums in the modern world, which will contribute to the acquisition of knowledge and skills required to develop the ethnocultural perception of the present and the past;
- the value, and specificity of ethnographic exhibitions in a modern sociocultural situation are the original collections and their observation. Such demonstrations are carried out from one generation to another by transferring information, its development and transformation in time and space through elements of material and non-material culture that later transform into Armenian identity symbols;
- today universal use on different platforms of the objects similar to museum ethnographic artifacts creates necessity to consider them in historical and cultural aspect of potential impact on formation or activation of national identity.

**Լուսինե ՂՈՒՇՉՅԱՆ (Ռուսաստան)**

Ռուսաստանի ազգագրության թանգարան (Մանկոտ-Պետերբուրգ)

Էլ. փոստ՝ medievist@yahoo.com

**XX դ. ԿԵՍԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ**

**ԳԻՏԱՐՇԱՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ**

**ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻՑ**

Ռուսաստանի ազգագրական թանգարանը կայսրության դարաշրջանի վերջին խոշորագույն թանգարանային ինստիտուցիաներից մեկն է, որը հիմնադրվել է 1902թ. որպես կայսր Ալեքսանդր III Ռուսական թանգարանի Ազգագրության բաժին: 1948թ. այն ստացավ ԽՍՀՄ ժողովուրդների ազգագրության պետական թանգարան անվանումը, իսկ 1992թ. հաստատությունը վերանվանվեց Ռուսաստանի ազգագրական թանգարան:



Ի թիվս ավելի քան 1 մլն ցուցանմունքների ներկայացված են նաև հավաքածուներ, որոնք վերաբերում են պատմաազգագրական տարբեր շրջանների հայ բնակչության ավանդական մշակույթին: Թանգարանի ստեղծման օրվանից նրա ֆոնդերը համալրվել են մասնավոր նվիրատվություններով, ինչպես նաև գիտարշավներում հավաքած նյութերով: Հայկական հավաքածուները, որոնք հավաքել են XXդ. խոշոր հետազոտողներ Կ.Ա.Բնուտրանցևը, Ա.Ա.Միլերը, Ս.Վ.Տեր-Ավետիսյանը և այլք, 1920-ական թթ. մինչև XXդ. կես համալրվում էին միայն պետական թանգարանային ֆոնդից: Ստեղծված օջախները, ինչպես նաև «Հայերը» նոր ցուցադրության նախագիծը հենք դարձան Հայաստան ուղղված մի շարք գիտարշավների 1956, 1958 և 1959թթ.: Հետազոտական արշավները, որոնք իրենց ծրագրի մեջ ներառում էին ավանդական մշակույթի առարկաների հավաքումը և ֆոտոֆիկսացիան, ղեկավարում էր վերոնշյալ թանգարանի Կովկասի ժողովուրդների բաժնի վարիչ, հայտնի գիտնական-կովկասագետ Ե.Ն.Ստոլդենեցկայան: Դրանցից առավել արդյունավետ եղավ Ա.Լ.Նատանսոնի հետ համատեղ արշավը 1959թ. օգոստոս-սեպտեմբերին, որը ներառեց Ախուրյանի, Թալինի, Արտաշատի շրջանները, Լենինական ու Երևան քաղաքները: Հավաքվել էր հսկա նյութ՝ 169 առարկա, 195 պահպանման միավոր, որն արտացոլում էր տեղական օջախների ազգային մշակույթը: Հավաքածուի մեջ մտնում են դարբնի, մետաղատաղձագործական, հյուսնի, կավագործի, կոշկակարի և քարի մշակման գործիքներ, գյուղատնտեսական գործիքներ, հագուստ և այլն: Հավաքված նյութի վերլուծությունը ցույց է տալիս նրա հիմնական ուղղվածությունը՝ հետաքրքրությունը քաղաքային կյանքի, նրա պատմական հենքի նկատմամբ, որը ներկայացված է «արհեստավորների քաղաքում»՝ Լենինականում: Գիտարշավի նյութերը հիմք հանդիսացան 1970-ականներին Ե.Ն.Ստոլդենեցկայանի ստեղծած ցուցադրության համար:

Лусинэ ГУЩЯН (Россия)

Российский этнографический музей (Санкт-Петербург)

e-mail: medievist@yahoo.com

## **МАТЕРИАЛЫ ЭТНОГРАФИЧЕСКИХ ЭКСПЕДИЦИЙ В АРМЕНИЮ СЕР. XX в. ИЗ СОБРАНИЯ РОССИЙСКОГО ЭТНОГРАФИЧЕСКОГО МУЗЕЯ**

Российский этнографический музей является одним из последних крупных музейных институций эпохи империи, основанным в 1902 г. как Этнографический отдел Русского музея императора Александра III, в 1948 году он получил название Государственного музея этнографии народов СССР, а в 1992 года учреждение было переименовано в Российский этнографический музей.

В составе более чем 1 млн. экспонатов РЭМ представлены также коллекции, относящиеся к традиционной культуре армянского населения различных историко-этнографи-

ческих областей. Со времен создания музея его фонды пополнялись как частными дарами, так и экспедиционными сборами. Армянские коллекции, собранные крупнейшими исследователями начала XX в., такими как К.А. Иностранцев, А.А. Миллер, С.В. Тер-Аветисян и др., с 1920-х годов до середины XX в. пополнялись лишь из государственного музейного фонда. Создавшиеся лакуны, а также проект новой экспозиции «Армяне» стали обоснованием для ряда экспедиций, направленных в Армению в 1956, 1958 и 1959 годах. Исследовательские поездки, включающие в свою программу сбор предметов традиционной культуры и фотофиксацию, возглавляла заведующая отделом этнографии народов Кавказа ГМЭ народов СССР, известный ученый-кавказовед Е.Н. Студенецкая. Наиболее продуктивной из них являлась экспедиционная поездка совершенная ею в августе-сентябре 1959 году совместно с сотрудником отдела А.Л. Натансон. В результате экспедиции, охватившей Ахурянский, Талинский, Арташатский районы Армении, а также города Ленинакан и Ереван, была собрана обширная – 169 предметов, 195 единиц хранения – коллекция, отражающая традиционную культуру указанных локаций. В состав коллекции входят инструменты кузнечного, медночеканного, плотницкого, гончарного, сапожного и камнерезно-строительного ремесел, сельскохозяйственные орудия, утварь, одежда, предметы убранства интерьера, банный комплект и предметы рукоделия. Анализ собранного экспедицией материала демонстрирует основную направленность ее исследовательско-собирательской работы – интерес к городской жизни, его исторической базе, представленной в «городе мастеров» - Ленинакане. Материалы экспедиции стали основой экспозиции, созданной Е.Н. Студенецкой в 1970-х годах, а впоследствии, в 2011 году, были использованы на постоянной экспозиции «Народы Южного Кавказа» и вошли в ряд тем раздела «Армяне», созданного автором сообщения.

**Lusine GHUSHCHIAN (Russia)**

Russian Museum of Ethnography (Saint Petersburg)

e-mail: medievist@yahoo.com

#### **ETHNOGRAPHIC MATERIALS FROM THE COLLECTION OF THE RUSSIAN ETHNOGRAPHIC MUSEUM GATHERED DURING THE EXPEDITION TO ARMENIA IN THE MIDDLE OF THE 20TH CENTURY**

The Russian Museum of Ethnography is one of the last major museum institutions of the Empire era, founded in 1902 as the Ethnographic Department of the Russian Museum of Emperor Alexander III. In 1948, it was named the State Museum of Ethnography of Peoples of the USSR, and in 1992 the institution was renamed the Russian Museum of Ethnography.

Between more than 1 million exhibits of RME, there are also presented collections relating to the traditional culture of the Armenian population of various historical and ethnographic regions. Since the establishment of the museum, its funds were replenished with both private donations and expedition fees.

Armenian collections created by prominent researchers at the beginning of the XX century, such as K.A. Inostrantsev, A.A. Miller, S.V. Ter-Avetisyan et al., were replenished only

from the fund of the state museum from the 1920s to the mid-XX century. The arisen lacunas, as well as the project of the new exposition “Armenians” became the rationale for a number of expeditions sent to Armenia in 1956, 1958 and 1959. Research trips, including in their program the collection of samples of traditional culture and photo fixation, were led by the head of the department of Caucasian Peoples’ Ethnography of the State Museum of Ethnography of the Peoples of the USSR, a well-known scholar Caucasian studies Y.N. Studenetskaya.

The most productive was the expedition trip carried out by her in August-September of 1959, together with a staff member of the department A.L. Natanson. As a result of the expedition covered the Akhuryan, Talin, Artashat regions of Armenia, as well as the cities of Leninakan and Yerevan, was assembled an extensive collection from 169 objects and 195 storage units, reflecting the traditional culture of these locations. The collection includes tools for blacksmith, copper-chasing, carpentry, pottery, shoemaking, stone cutting and construction crafts, agricultural implements, utensils, clothing, interior decoration items, a bath set and handicraft items.

The analysis of the material collected by the expedition demonstrates the main focus of its research and collecting work: interest in the city life, its historical basis represented in the “city of masters” Leninakan. The materials of the expedition became the basis of the exposition created by E.N. Studenetskaya in the 1970s, and later, in 2011, were used for the permanent exhibition “Peoples of the South Caucasus” and were included in a series of topics in the section “Armenians” created by the author.

**Սոսե ԳՐԻԳՈՐՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ.փոստ՝ sosegrigoryan@mail.ru

## **ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԹՈՒԼԻԿ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ**

Հայ հարուստ ծիսաշարի ամենասիրված ծեսերից մեկը հարսանիքն է: Հարսանիքը երկու տարբեր սեռերի միջև ամուսնությունը հաստատող-վավերացնող ծիսակատարություն է, որը տարբեր ժողովուրդների մեջ ունի տվյալ ազգին բնորոշ արտահայտություն: Գրեթե բոլոր ժողովուրդների մեջ ամուսնական արարողությունների շարքի հիմնական առանձնահատկությունը ծնողների տնից հարսին՝ ամուսնու տուն տանելու թատերականացված միջոցառումն է, որը, որպես կանոն, ուղեկցվում է խնջույքներով, նվերների փոխանակությամբ, երգ ու պարով և այլ զվարճություններով:

Հիմնվելով Շիրակի, Լոռու և Ջավախքի պատմազգագրական մարզերի հայ կաթոլիկների բնակավայրերից մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի, ինչպես

նան գրավոր աղբյուրների և համապատասխան ուսումնասիրությունների վրա, սույն հոդվածում կներկայացնենք հայ կաթոլիկների հարսանեկան ծիսակարգերի առանձնահատկությունները, արարողությունների հետևողական կատարումը, իրականացման գործընթացը, դրանց ընդհանրություններն առաքելական հայերի շրջանում գոյություն ունեցող ծիսակարգերի հետ ու տարբերությունները:

Հայ կաթոլիկների հարսանեկան ծեսը բաղկացած է երեք հիմնական փուլերից՝ ինամախոսություն, նշանդրեք և բուն հարսանիք, սակայն ծիսակարգերի անվանումներն ու կատարումը տարբերվում են ըստ շրջանների ու ժամանակաշրջանների՝ ընդգրկելով հայ ավանդական ծիսաշարի բոլոր մասերը՝ աղջկատեսից մինչև հարսանիք, կամ սահմանափակվելու միայն նշանդրեքով ու հարսանիքով:

Հայ ավանդական հարսանիքը հայ կաթոլիկ գյուղերում այսօր բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել: Հոդվածում ներկայացվում են.

- հայ կաթոլիկների գյուղերում ամուսնացողների տարիքային փոփոխությունները՝ ըստ տարբեր ժամանակաշրջանների և տեղանքի, տարեցների և երիտասարդների կարծիքը տարիքային տարբերությունների վերաբերյալ,
- երիտասարդների ծանոթության շրջանակները տարբեր գյուղերում և միջնորդների ու ծնողների դերն այդ հարցում,
- առևանգման դեպքերի հաճախականությունը նախորդ և մեր օրերում դրանց վերացման պատճառները,
- հարսանիքին նախորդող և բուն հարսանեկան արարողակարգի փուլերը, դրանց անվանումները, կատարման յուրահատկություններն ըստ մարզերի և փոփոխություններն ըստ տեղանքի,
- հայ կաթոլիկե եկեղեցու դերն ու գործառույթի փոփոխությունը՝ ծես կատարողից մինչև հարաբերություններ կառուցողի ու հարթողի:

**Сосэ ГРИГОРЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: sosegrigoryan@mail.ru

## **СВАДЕБНЫЙ РИТУАЛ В АРМЯНСКИХ КАТОЛИЧЕСКИХ ДЕРЕВНЯХ**

Свадьба является одним из самых любимых обрядов богатого цикла армянских ритуалов. Свадьба - это ритуал, подтверждающий брак между двумя полами, который имеет характерную особенность определенной нации среди разных народов. Главной особенностью церемонии бракосочетания почти всех народов является театрализованное мероприятие проводов невесты из родительского дома в дом мужа, которое обычно сопровождается пикниками, обменом подарками, песнями, танцами и другими развлечениями.

На основе полевых этнографических материалов, собранных в исторических регионах армянских католических общин в Шираке, Лори и Джавахке, а также на основе письменных источников и соответствующих исследований, мы представляем особенности свадебных церемоний армян-католиков, последовательное проведение церемоний, процесс их проведения, различия между ними и обрядами армян, последователей Армянской Апостольской церкви.

Церемония бракосочетания армян-католиков состоит из трех основных этапов: обручение, празднование и свадьба, но названия и исполнение ритуалов различаются по регионам и периодам, включая все части армянской традиционной свадьбы, от показа невесты до свадьбы, или ограничиваются только торжествами и свадьбами.

Армянская традиционная свадьба в армянских католических деревнях сегодня претерпела много изменений. В статье представлены:

- возрастные различия между брачующимися в армянских католических деревнях, в зависимости от разных периодов и регионов, мнения пожилых людей и молодежи о возрастных различиях;
- круг знакомств молодежи в разных деревнях и роль посредников и родителей в этом вопросе;
- частота случаев похищения невесты в прошлом веке и причины их устранения сегодня;
- этапы предсвадебных и свадебных обрядов, их названия, особенности исполнения по регионам и изменения по локации;
- роль Армянской Католической церкви и смена функций: от исполнителя ритуалов до конструирования и сглаживания взаимоотношений.

**Sose GRIGORYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: [sosegrigoryan@mail.ru](mailto:sosegrigoryan@mail.ru)

## WEDDING RITUAL IN ARMENIAN CATHOLIC VILLAGES

One of the most favourite rituals of the Armenian rich cemetery is the wedding. The wedding is a marriage-confirming ritual between two different sexes that has a characteristic of a particular nation among different peoples. The main peculiarity of the marriage ceremony among almost all nations is that of a parent's bride-to-house event, which is usually accompanied by picnics, gift exchanges, songs and dances and other entertainments.

Based on the field ethnographic materials collected from the historical regions of Armenian Catholic communities of Shirak, Lori and Javakhq, as well as on written sources and relevant studies, we present the peculiarities of the wedding ceremonies of the Armenian Catholics, the consecutive fulfillment of ceremonies, the implementation process, the differences between rites of apostolic Armenians.

The wedding ceremony of the Armenian Catholics consists of three main stages: matchmaking engagement and wedding, but the names and performances of rituals differ by

periods and regions, including all parts of the Armenian traditional ceremonies from engagement to wedding or restricted only by celebrations and weddings.

Armenian traditional wedding in Armenian Catholic villages has undergone many changes today. The paper presents:

- age differences of marriages in Armenian Catholic villages, according to different periods and locations, elderly and youth opinion about age differences;
- acquaintance of young people in different villages and the role of mediators and parents in this issue;
- frequency of girl kidnapping cases in the past and present, reasons for their elimination in nowadays;
- pre-wedding and wedding ritual stages, their names, peculiarities of performance by regions and changes by location;
- the role of the Armenian Catholic Church and the change of function from the Ruler to the Constructor and the Founder.

**Տորք ԴԱԼԱԼՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ. փոստ torqdal@yahoo.com

## **ՄԻԱՉՔԱՆԻ ՀՍԿԱՅԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՍՊԵԼԻ ՓՈՓՈԽԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԿՈՎԿԱՍՈՒՄ**

Միաչքանի հսկայի առասպելի ամենավաղ օրինակը հայտնի Պոլիփեմոսի (*Πολύφημος*) դրվագն է հին հունական «Ողիսական» (*Օδύσσεια*) պոեմում, որը վերագրվում է Հոմերոսին և թվագրվում է մ.թ.ա. VIII դարով: Այս պոեմի իններորդ երգում պատմվում է մարդակեր կիկլոպ Պոլիփեմոսի մասին, որը բնակվում է մի կղզու վրա՝ քարանձավում: Գլխավոր հերոս Ողիսեսը հաղթում է հսկային և ոչխարի տակ թաքնված՝ փախչում քարանձավից: Ինչպես ցույց են տվել հետազոտողները, «Ողիսական»-ում օգտագործվել են հեքիաթային բազմաթիվ թափառող պլոմեներ: Պատահական չէ, որ միաչքանի հսկայի մոտիվը վկայված է նաև հայ ժողովրդական ավանդազրույցներում և գրի է առնվել Ախալցխայի բարբառով Ստ. Մալխասյանցի կողմից: Հայկական տարբերակում գլխավոր հերոսի անունը չի նշվում, իսկ միաչքանի հսկան կոչվում է *թօփօզոզ*: Այստեղ հերոսը փրկվում է ոչ թե ոչխարի տակ թաքնվելով, այլ ոչխարի մորթի: Նույն մոտիվը բազմիցս հանդիպում է հայ ժողովրդական հեքիաթներում, մանավանդ Գուգարքում և Արարատյան դաշտում: Առասպելը վկայված է նաև

օսական «Նարթյան» դիցավեպում, որտեղ այդ դրվագը կոչվում է «Վրրրզմագն ու շիլ հսկան» («*Wərazmæg əmæ soqqwər wəyæg*»): Վրրրզմագը նարթերի մայր, նշանավոր Սարթանայի (= հայկ. *Մարենիկ*) ամուսինն է, իսկ «շիլ հսկան» այստեղ ունի երկու աչք, պարզապես դրանցից մեկը վատառողջ է: Վրրրզմագը կուրացնում է հսկայի առողջ աչքը և այժի մորթի մեջ մտնելով՝ փրկվում:

Զեկուցման մեջ մանրամասնորեն վերլուծվում են բոլոր հայտնի պատումները, փորձ է արվում վերականգնելու դրանցում արտացոլված դիցաբանական մտածողության զարգացումն ու փոխակերպումը:

**Торк ДАЛАЛЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)  
e-mail: torqdal@yahoo.com

## **ВАРИАНТЫ ЛЕГЕНДЫ ОБ ОДНОГЛАЗОМ ВЕЛИКАНЕ В АРМЕНИИ И НА КАВКАЗЕ**

Самым ранним зафиксированным вариантом легенды об одноглазом великане является известный эпизод о Полифеме (*Πολύφημος*) в древнегреческой поэме «Одиссея» (*Ὀδύσσεια*), которая приписывается Гомеру и восходит к VIII веку до н.э. В девятой песне этой поэмы рассказывается о циклопе-каннибале Полифеме, который живет на острове в пещере. Главный герой Одиссей побеждает великана и, спрятавшись под овцой, спасается из пещеры. Как показали исследователи, в «Одиссее» были использованы многочисленные сказочные бродячие сюжеты. Неслучайно, что мотив одноглазого великана засвидетельствован также в армянских народных легендах и записан на ахалцихском диалекте Степаном Малхасянцем. В армянской версии имя главного героя не упоминается, а одноглазый великан называется *mān'äğz*. Здесь герой спасается, спрятавшись не под овцой, а под овчиной. Тот же мотив неоднократно встречается в армянских народных сказках, особенно в Гугарке и в Арагатской долине. Легенда засвидетельствована и в осетинском «Нартском эпосе», где данный эпизод называется «Уырызмаг и косо́й великан» («*Wərazmæg əmæ soqqwər wəyæg*»). Уырызмаг (Урузмаг) - это муж «матери нартов», знаменитой Сатаны (= арм. *Сат'еник*), а «косо́й великан» имеет два глаза, просто один из них плохо видит. Уырызмаг ослепляет здоровый глаз великана и ускользает от него под козьей шкурой. В докладе сделан подробный анализ всех известных вариантов, а также сделана попытка восстановить развитие и трансформацию отраженного в них мифологического мышления.

**Tork DALALYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: torqdal@yahoo.com

## VARIANTS OF LEGEND ON THE ONE-EYED GIANT IN ARMENIA AND THE CAUCASUS

The earliest recorded version of the one-eyed giant' legend is the famous episode about Polyphemus (*Πολύφημος*) in the ancient Greek epic poem "Odyssey" (*Ὀδύσσεια*), which is attributed to Homer and dates back to the 8<sup>th</sup> century BC. The ninth song of this epic poem tells us about the cannibal Cyclops called Polyphemus, who lives in a cave on an island. The protagonist, Odysseus, defeats the giant and escapes from the cave by hiding on the underbellies of the sheep. As researchers have shown, a number of fairy tale roving plots have been used in the "Odyssey". Not surprisingly, the Cyclops motif is also testified in Armenian legendary stories, one of them is recorded in Akhaltsikhe dialect by Stephan Malkhasyants. In the Armenian version, the name of the main character is not mentioned, and the one-eyed giant is referred to as *tāp'ägōz*. Here, the hero is rescued not by the sheep, but by the sheepskin. The same motif is repeatedly encountered in Armenian folk tales, especially from the regions of Gugark and Ararat Valley. The legend is also attested in the Ossetian epic «Nart sagas», in which the episode is called «Verezmag and the oblique giant» (*«Wərazmæg əmæ soqqwər wəyæg»*). Verezmag (Uruzmag) is the husband of famous Sat'ána (Arm. Sat'enik), mother of the Narts, and the «oblique giant» there has two eyes, just one of them is ill. Verezmag blinds the giant's healthy eye and eludes him under the goatskin. The paper analyzes all the known versions in detail and an attempt is made to restore the development and the transformation of mythological thinking reflected in them.

**Գայլա ԴԱՎԻԴՈՎԱ (Հայաստան)**

Հայոց ազգագրության թանգարան (Արմավիր)

e-mail: sv\_ethnomuseum@yahoo.com

## ՀՐԱՎԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԵԿՈՒՄ (ԱՎԱՆԴԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԸ)

Աշխատանքի նպատակն է մարդու կյանքի ամենակարևոր կենսափուլային ծեսերից մեկի՝ ամուսնությանն ու հարսանիքին վերաբերող հրավիրատուների հանրահռչակումը: Աշխատանքի առանցքը կազմում է հարսանեկան հրավերը, որը բացահայտում է ազգաբանության համար արժեքավոր տեղեկություններ: Այս հոդվածը արժևորվում է թե՛ գեղագիտական ճաշակի և թե՛ մշակույթի այս տարատեսակին՝ հրավերի վարվելակարգին, հաղորդակցվելու տեսակետից: Հայոց ազգագրության թանգարանի՝ ամուսնությանը վերաբերող փաստաթղթերի հավաքածուն ընդգրկում է 250 թանգարա-



նային առարկա (XIX-XXդդ.): Դրանց մեջ հատկապես ուշագրավ են հարսանեկան հրավիրատոմսերն ու ամուսնության վկայականները: Հարսանեկան հրավիրատոմսերը բացահայտում են ոչ միայն հարսանյաց խնջույքի, այլ նաև հարսանիքը վավերացնող պսակադրության տեղը, վայրը, հասցեն, եկեղեցին, շաբաթվա օրը, ժամը և այլ մանրամասներ: Հրավիրատոմսերի ուսումնասիրությունը բացահայտում է ազգակցական հարաբերություններ (ազգատոհմերի, խնամիական կապերի, հարսանիքների կատարման ժամանակաշրջանի) և մշակութային արժեքներ: Աշխատանքում ներկայացված են պատմական տեղեկություններ տարբեր պատմաազգագրական շրջանների ավանդական հարսանիքների, հարսանեկան հրավերի մշակութային վարվելակարգի (էթիկետ) վերաբերյալ: Հրավիրատոմսերի աշխարհագրությունը տարածաշրջանային ընդգրկման առումով լայն է՝ Երևան, Շուշի, Գանձակ, Թիֆլիս, Նախիջևան, Դոնի Ռոստով, Եկատերինադար: Հոդվածը կարևորվում է նաև նրանով, որ քննության առարկա հրավիրատոմսերը դիտվում են ոչ միայն որպես մշակութային արժեք, այլ նաև բացահայտում ազգային ու ազգաբնական կարևոր հարցեր, սովորույթներ՝ անցումային ծեսերին առնչվող: Հրավիրատոմսերում պարունակող տեղեկատվությունները վերաբերում են ոչ այնքան բուն հարսնահանդեսին, որքան այնպիսի ոլորտների, ինչպիսիք են, մասնավորապես ազգակցական համակարգը, ամուսնացողների կամ խնամիացող ընտանիքների սոցիալական վիճակը: Հրավիրատոմսը փոքրիկ, բայց շատ խոսուն ու անհրաժեշտ առարկա է, վավերագիր, որը ուսումնասիրողին տալիս է հարուստ գիտելիքներ: Այս տեսանկյունից առանձնանում են XIX դարի վերջի և XX դարասկզբի (Դոնի Ռոստով, Նոր Նախիջևան) հայ իրականության համար հազվագյուտ տեղեկություն պարունակող մի քանի հրավիրատոմսեր: Վերոհիշյալ բնակավայրերում ամուսնացողները միաժամանակ կրել են և՛ մայրական, և՛ հայրական ազգանունները՝ Աննա Հովակիմյան-Խոջաբեկյան, Իսկուհի Հակոբյան-Շաբոշնիկյան, Փիլիպոս Հակոբյան-Դուրգարյան և այլն: XIX դարը փոխեց նաև հրավերի ձևը: Կիրառության մեջ մտան ծրարներ ու փղոսկրագույն հրավիրատոմսեր՝ հարդարված ժանեկանման կտրտված հավելումով: Հրավերի այս ձևը հասել է մինչև մեր օրերը:

**Галя ДАВИДОВА (Армения)**

Национальный музей этнографии Армении (Армавир)

e-mail: sv\_ethnomuseum@yahoo.com

## **РОЛЬ ПРИГЛАШЕНИЯ И ПРИГЛАСИТЕЛЬНОГО БИЛЕТА В АРМЯНСКОЙ СВАДЬБЕ (ТРАДИЦИЯ И СОВРЕМЕННОСТЬ)**

Цель данной работы популяризация пригласительных билетов одного из самых важных обрядов жизненного цикла человека - супружества и свадьбы. Основой для работы

Thus the “laughing image” of Aleksandropol-Leninakan of the 19<sup>th</sup>-20<sup>th</sup> centuries reflects the history of complicated and tense social relations in the city, which was settled mainly by migrants. Local narratives and the image of the laughing Gyumri mark out this city of the line of settlements that were unified as a result of Soviet modernization. Meanwhile the development of tourism and demodernisation of the last thirty years which present rural daily life of the 19<sup>th</sup> century as the last haven of national identity and as an economic alternative in conditions of absence of the average- and large-scale industry, actually exoticize today’s culture and depreciate its modern significance.

The tourist projects of Gyumri which originate from two social poles, from above (state or foreign companies) and from below (low budget local initiatives – grassroot tourisms), defined the following questions of urban development: How position the city in the tourist market in order to avoid the perspective of colonizing one’s own culture? Is it possible to differentiate local texts, images, symbols of inner use from exoticizing commercial brands for tourism? Where is the borderline between the situation when the city uses tourism for its own good and when the tourism exploits and at times distorts the city, creating a “Potemkin village” instead of the fully functioning city?

**Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ.փոստ՝ alpehist@gmail.com

### **ԵՐԳԻԾԱՆՔԻ ՄԿՋԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՇԻՐԱԿՈՒՄ ԸՍՏ ԱԶԳԱԾԻՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ**

Առասպելաբանական խաբեբան՝ տրիքստերը (անգլ. «խաբեբա») բնորոշվում է դիվային և կոմիկական գծերով: Նա հաճախ ծաղրանմանակում է «լուրջ» հերոսի գործողությունները, խորամանկության դիմում ամենալուրջ իրադրություններում: Նրա չարությունները (հաճախ՝ չարաճճիությունները) ծառայում են հիմնականում հագուրդ տալու նրա արտասովոր շատակերությանն ու վավաշոտությանը, որի համար նա խարդախում է, խախտում հասարակական բարոյականության սովորական նորմերի ամենախիստ արգելքները, սրբազերծում սրբությունները: Տրիքստերի տիպում է ամփոփված նաև կոմիզմի գաղափարը, որը տարածվում է և՛ նրա խաբեության զոհերի, և՛ հենց խաբեբայի հակահասարակական և անգուսպ գործողությունների վրա:

Հայ առասպելաբանության մեջ տրիքստերի բացահայտ կերպար չկա, բայց եղած սուղ տեղեկությունները հնարավորություն են տալիս վերականգնելու այն: Հայկ նահապետի թոռ Արամայիսն իր բազմազավակ ու շատակեր որդի Շարային ընտանիքով ուղարկում է բնակվելու Շիրակի արգավանդ ու բերրի դաշտ (Շիրակ անունն էլ բխեցվում է Շարայի անունից): Շարայի մասին հնում խոսք է եղել՝ «թե քո որկորը Շարայի որկորն է, մեր ամբարները Շիրակինը չեն» (Մովսես Խորենացի Ա.Ժբ): Այս կերպարում տրիքստերի շատակերության հատկանիշը ներկա է բացահայտորեն, իսկ վավաշոտությունը կարելի է ենթադրել նրա «բազմաձին» (բնագրում՝ *յոլովածին*) բնորոշումից: Առաջին Հայկյանների ավանդությունում բոլոր նահապետների մեջ շեշտվում է

միայն Շարայի բազմաբեղունությունը, որը շատակերության հետ միասին հատկանշական է համարվել նրան բնութագրելու համար: Այստեղ Շարան կարող է դիտվել որպես Արա Գեղեցիկի ծաղրական հակապատկերը: Արան չի համաձայնում կատարել վավաշոտ Շամիրամի ցանկությունը, իսկ բազմաբեղուն և բազմազավակ Շարան ինքը կարող է բնորոշվել վավաշոտությամբ:

Որկրամուլ տրիքստերին բնորոշ է ուտելիքը «հենց հիմա և այստեղ» ուտելը՝ հակադրվելով հետագայի համար այն հեռատեսորեն ամբարելու գաղափարին, որն ավանդության մեջ ի հայտ է գալիս բացահայտորեն՝ Շարայի և ամբարների հակադրմամբ: Տրիքստերի՝ կոմիզմի ու երգիծանքի հետ կապի համատեքստում հատկանշական է, որ հայ առասպելաբանության հնագույն շերտում՝ Հայկյանների պատմության մեջ սա միակ երգիծական դրվագն է:

Հետաքրքիր է, որ Հայաստանում հումորի նկատմամբ առանձնահատուկ, պաշտամունքի մոտեցող վերաբերմունք կա միայն Շիրակում՝ Գյումրիում: Եվ թեև ժամանակակից գյումրեցիները ծագումով հիմնականում Էրզրումի, Կարսի և Բայազետի շրջաններից թուրքահայ ներգաղթյալների ժառանգներ են, հումորի նկատմամբ այդ վերաբերմունքը, գոնե տեսականորեն, նրանք կարող էին ժառանգել և զարգացնել տեղի հին բնակիչներից:

Առասպելաբանությունից դուրս տրիքստերային հատկանիշներով օժտված կերպարներ կան գրականության այլ ժանրերում, լեզենդից մինչև վեպ, և, ասենք, իրական ու անիրական պատումների դաշտեր են ստեղծվել «ժողովրդական զվարճախոս» կոչվող նրանցից մի քանիսի շուրջը: Հատկանշական է գյումրեցի Պոլոզ Մուկուչի օրինակը, որի անունը տալիս ումանք իրենց պարտավորված էին համարում յոթ անեկդոտ պատմել նրա մասին, ինչը սրբազանի և չսրբազործվածի հետաքրքիր համադրության մի օրինակ է:

**Армен ПЕТРОСЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: alpehist@gmail.com

## **ФОРМИРОВАНИЕ ЮМОРА В ШИРАКЕ СОГЛАСНО ЭТНОГОНИЧЕСКОМУ ПРЕДАНИЮ**

Мифологический плут – трикстер (англ. «плут») характеризуется демоническими и комическими чертами. Он часто пародирует действия «серьезного» героя, прибегая к хитрости в самых серьезных ситуациях. Его злобные действия, часто – шалости, служат в основном для удовлетворения его чрезмерной прожорливости и похотливости, для чего он мошенничает, нарушая самые суровые запреты общественной морали и профанируя святости. В типе трикстера сосредоточена и идея комизма, которая распространяется на действия жертв его а также антиобщественные и необузданные действия его самого.

В армянской мифологии нет явного образа трикстера, но существующие скудные сведения дают возможность для его восстановления. Внук первопредка армян Гайка Арамайис отправляет своего многодетного и прожорливого сына Шара жить с семьей в плодородном поле Ширака (в предании само название Ширак возводится к имени Шара). О Шаре в древности была поговорка: «коль у тебя глотка Шара, то у нас не ширакские амбары». В этом образе черта прожорливости присутствует эксплицитно, а похотливость выявляется в его характеристике *yolovacin* буквально – «многогородный», т.е. «плодовитый, многодетный». В образах первых Гайкидов подчеркивается плодовитость только Шары, которая вместе с прожорливостью посчиталась существенной для его характеристики. В контексте предания Шара может рассматриваться как пародийный антипод Ара Прекрасного: Ара не соглашается исполнить желание похотливой Семирамиды, а многодетный плодовитый Шара сам может характеризоваться похотливостью.

Прожорливому трикстеру свойственно съесть еду «прямо здесь и сейчас», противопоставляя идею ее дальновидного накопления для будущего, что в предании выступает эксплицитно в противопоставлении Шара и амбаров Ширака. В контексте связи трикстера с комизмом и юмором характерно, что в древнейшем слое армянской мифологии – в предании Гайкидах это единственный эпизод связанный с юмором.

Интересно, что в Армении специфическое, доходящее до культа отношение существует только в Шираке – в Гюмри. И несмотря на то, что современные жители Гюмри – в основном потомки турецких армян из районов Эрзерума, Карса и Баязета, это отношение к юмору они, по крайней мере теоретически, могли наследовать и развить от прежних жителей Ширака.

Вне мифов образы характеризующими чертами трикстера существуют и в других жанрах фольклора и литературы – от легенды до романа, и существуют, например, многочисленные действительные и нереальные истории о так называемых «народных шутниках». Характерен пример гюмрийца Полоза Мукуча, после называния имени которого некоторые считали себя обязанными рассказать семь анекдотов о нем, в чем можно видеть интересный случай сопоставления сакрального и профанного.

**Armen PETROSYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: alpehist@gmail.com

## **THE BEGINNING OF HUMOR IN SHIRAK ACCORDING TO ETHNOGONIC TRADITION**

The mythological trickster is characterized by demonic and comic features. He often parodies the actions of a “serious” hero, resorting to tricks in the most serious situations. His evil actions, often pranks, serve mainly to satisfy his excessive gluttony and lustfulness, for which he cheats, violating the most severe prohibitions of public morality and profaning holiness. The trickster type also focuses on the idea of a humor, which extends to his victims as well as his antisocial and unbridled actions.

In Armenian mythology there is no explicit images of the trickster, but the existing scarce information provides an opportunity for its restoration. Aramais, the grandson of the forefather of Armenian Hayk, sends fecund and voracious son Shara to live with his family in the fertile field of Shirak (in the tradition, the very name Shirak is derived from the name of Shara). In ancient times, there was a saying about Shara: “if you have the throat of Shara, we do not have the barns of Shirak”. In this image, the trait of gluttony is explicit, while lustfulness is revealed in his characteristic *yolovacin* (literally: “many-bearing”, i.e. “prolific, having many children”. Among the first Haykids, the fertility of only Shara is emphasized, which, together with the gluttony, was considered to be essential for the characterization of his image. In the context of the ethnogenic tradition, Shara can be regarded as a paradoxical antipode of Ara the Handsome: Ara does not agree to fulfill the desire of the lustful Semiramis, while his prolificity can characterize his lustfulness.

It is common for a gluttonous trickster to eat food “right here and now,” opposing the idea of its far-sighted accumulation for the future, which in the tradition appears explicitly in the opposition of Shara and Shirak's barns. In the context of trickster's association with comic and humor, it is characteristic that in the oldest layer of Armenian mythology, in the tradition of Haykids, this is the only episode associated with humor.

Interestingly, in Armenia, a specific attitude comparable with cult exists only in Shirak, in Gyumri. And despite the fact that the modern inhabitants of Gyumri are mostly descendants of Turkish Armenians from the regions of Erzerum, Kars and Bayazet, this attitude to humor could, at least theoretically, be inherited and developed from the early residents of Shirak.

Beyond myths, the trickster images exist in other genres of folklore and literature, from legend to romance, and there are numerous real and unreal stories about the so-called “folk pranksters”. Typical is the example of Poloz Mukuch of Gyumri, after calling whose name some people considered themselves obligated to tell seven jokes about him, in which one can see an interesting case of the juxtaposition of the sacred and profane.

#### Սվետլանա ՊՈՂՈՍՅԱՆ (Հայաստան)

Հայոց ազգագրության թանգարան,  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
e-mail: sv\_ethnomuseum@yahoo.com

#### ՇԻՐԱԿ-ՋԱՎԱՆՔԻ ԿԱՆԱՆՑ ՏԱՐԱԶԻ ԳԵՂԱԶԱՐԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայկական զարդարվեստի բուսական մոտիվների ամենաբնորոշ արտահայտությունը կենաց ծառն է, որը հանդես է գալիս ծառի, հատիկի/սերմի, ծաղկի, վարսանդի, պտղի գաղափարապատկերներով, քանի որ հենց ծաղիկներից են ստացվում պտուղ-



բերքը և ապագա սերմացուն: Ծաղիկներից անբաժան են բողբոջները և պտղաբերության գաղափարն արտահայտող վարսանդապտղային պատկերաձևերը: Ջարդարվետում հաճախ կարելի է հանդիպել ընդհանրապես ծաղկի գաղափարին, սակայն կան նաև մանուշակի, ձնծաղկի, անթառամի, նունուֆարի, կակաչի, վարդենու, նոնենու ծաղկամոտիվների իրական կամ ոճավորված պատկերներ: Ծաղիկը համարելով որպես աճի և պտղաբերության խորհրդանիշ՝ երիտասարդները համեմատվել են ծաղկելու գործընթացի, բույսերի և ծառերի հետ: Հայկական ավանդական տարազի համակարգում բուսանախշեր առավելապես հանդիպում են Բարձր Հայքի և Այրարատի տարազախմբերում: Կարևոր է, որ ծաղկանախշեր արվել են հատկապես կանանց հագուստին, քանի որ կինը նույնացել և կապվել է բնության հետ: Բույսերի զարգացման օրգաններն ամփոփված են ծաղիկների մեջ, ըստ որում, իգական օրգան վարսանդը, ի տարբերություն արական առեջների, բեղմնավորվելուց հետո օրըստօրե աճում, մեծանում է և դառնում ապագա պտուղը՝ սերմով: Ծաղկանախշերը ունեցել են բեղմնավորության խորհուրդ և կապվել արևի պաշտամունքի հետ:

2. Շիրակ-Ջավախքի կանանց տարազը, որն ընդգրկված է Բարձր Հայքի տարազախմբում, աչքի է ընկնում շքեղ ոսկեթել ասեղնագործ բանվածքներով և բուսական զարդանախշվածությամբ: Երիտասարդ կանանց տոնական մետաքսյա վարտիքի փողաբերանները զարդարվել են ասեղնագործ լայն բանվածքով՝ թռչնաձև ու ծաղկանման նախշերով, որոնք զույգի արգասավորման խորհուրդն ունեին: Եզրերը հարդարվել են ոսկեթել զանգակաձև կախիկներով: Ուշագրավ է ընծայական բարեմադրանքներով մետաքսահյուս գոտու և ծաղկանախշերի եզրաշերտով ու խոշոր նշաձև զարդանախշով գոգնոցի ծիսական կիրարկումը՝ բեղմնավորման ու տղաբերքի սովորույթին առնչվող: Գոգնոցը կրծկալ սրտանոցի հետ կապված է սեռական սիմվոլիկայի հետ, դրանք վրայի բուսական զարդանախշերով հանդերձ, կոչված են եղել զերծ պահելու կրողին չար ուժերից, ապահովելու որդեճնության կարողությունը՝ պաշտպանելով գոտկամասն ու կուրծքը: Հատուկ նրբահյուս բուսանախշերով են հարդարվել տոնական զգեստների եզրերը: Գլխի հարդարանքի մասերը՝ զանգակաձև արծաթե կամ ոսկեթել բռնիչով ծոպավոր կարմիր գդակ-ֆեսը, մարգարտաշար՝ ոսկե դրամներով քունքակախիկները, ճակատագարդը, ճակատի ոսկյա զույգ դրամաշարը և մետաքսյա քողը, նրբահյուս ժանյակե ծաղիկներով «վարդ» կոչված ճակատակալը ամբողջացրել են տարազի համալիրը: Կինը նույնացվել է ծաղկին ու ծառին՝ ներկայացվելով բուսական կողով: Աղջիկները նույնացվել են կոկոն, դեռ չբացված և բողբոջող ծաղկանախշերին: Երիտասարդ կնոջ բաճկոնը ևս զարդարվել է բուսական՝ ճյուղագարդ ծաղիկներ, տերևներ, ծաղկաման, նշաձև և կոնաձև, զարդապատկերներով: Բուսանախշերով են հարդարվել նաև գուլպաները, ըստ որում, ամենատարածվածը կենաց ծառի, ծաղկանախշերի մոտիվն էր: Ծառանման, բազմաճյուղ զարդաձևեր են արվել նաև կանանց ոտնամաններին և հողաթափերին: Կանանց հագուստի վրա եղած կենաց ծառերը և այլ բուսական մոտիվներն աղերսվում են պտղաբերության և արգասավորության հետ: Կինն ու բնությունը

կամ կյանքի նշանագիրը՝ կենաց ծառը, միանձնացել և միաձուլվել են՝ դառնալով կյանքի հավերժությունն ապահովող գորավոր ուժեր:

3. Հարսանեկան հանդերձանքը նշանային համակարգ է՝ հնագույն նմանողական հմայությանն առնչվող՝ սերնդաճի անընդհատությունն ապահովելու միտումով: Հարսն ինքը և նրա տոնածիսական հագուստն ասես ամբողջական կենաց ծառի դրսևորում լինեն: Հարսանեկան հանդերձանքն արտահայտել է կյանքի ամենացնուն հանդեսի խորհուրդը, և այն կրողը համեմատվել է ծաղկող ծառի հետ, իսկ հագուստը հանդես է եկել որպես զարդարանք՝ գույնի, գեղազարդման և ծիսական նշանակություն ունեցող տարրերի (գոգնոց, գոտի, քող, ճակատակալ, գուլպա) պարտադիր առկայությամբ: Հարսի հագուստի առանձին մասերում կան կյանքի, բեղմնավորության, արգասավորության նշանագրեր, կենաց ծառեր, ծաղկանախշեր. կրծկալի և գոգնոցի վրա արվել են բուսանախշեր, վերնագգեստը եզրազարդվել է ծաղկանախշերի շղթայով, գլխի հարդարանքը և ազանելիքը ևս գեղազարդվել են բուսանախշերի իրական և ոճավորված պատկերներով:

**Светлана ПОГОСЯН (Армения)**

Музей этнографии армян (Армавир)

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: sv\_ethnomuseum@yahoo.com

## **ОСОБЕННОСТИ ОРНАМЕНТИРОВКИ ЖЕНСКОГО НАЦИОНАЛЬНОГО КОСТЮМА ШИРАКА-ДЖАВАХКА**

1. Самым типичным растительным мотивом армянского орнаментального искусства является древо жизни. Оно появляется в виде идеографического изображения дерева, зерна-семени, цветка, пестика, плода, потому что плод, а вместе с ним и будущее семя, происходит именно из цветка. Изображения в виде бутона, а также пестика-плода, выражающие идею плодородия, являются неотъемлемой частью цветов. Хотя в орнаментальном искусстве часто встречается обобщенная идея цветка, но есть и натуральные или символические изображения фиалки, подснежника, бессмертника, кувшинки, мака, розы и цветка гранатового дерева. Так как цветок считается символом роста и плодородия, молодых часто сравнивали с процессом цветения, с растениями и деревьями. В системе армянского национального костюма растительные узоры более часто встречаются в группах национального костюма Бардзр Айка и Айрарата. Важно, что цветочные узоры были типичны для женских национальных костюмов, потому что женщина отождествляется и связана с природой. Органы развития растений находятся внутри цветка, при этом женский орган (пестик) в отличие от мужского (тычинка) после осеменения день ото дня растет, увеличивается и становится будущим плодом с семенами. Цветочные узоры символизировали плодородие и связаны с культом солнца.

2. Женский национальный костюм Ширака - Джавахка, входящий в группу национального костюма Бардзр Айка, отличается своей роскошной золотой вышивкой и растительной

орнаментацией. Праздничные шелковые нижние штаны молодой женщины украшались широкой вышитой полосой украшенной птицеобразными и растительными узорами, символизирующими плодovitую пару. Края украшались подвесками в виде колокольчиков из золотой нити. Примечательно ритуальное использование вытканного из шелковых нитей пояса с дарственной надписью и передника с вышитыми краями (растительный орнамент и большие миндалевидные узоры), связанного с плодородием и обычаем деторождения. Как передник, так и нагрудник связаны с половой символикой. Передник, как и символика вышитых на нем растительных узоров, защищали хозяйку от злых сил, таким образом обеспечивая способность деторождения, защищая поясницу и грудь. Края праздничной одежды были расшиты тонкими растительными узорами. Детали головного убора: красная шапка-феска с подвеской - кисточкой в виде колокольчика из серебряных или золотых нитей, височные украшения из ряда плетеного жемчуга и золотых монет, налобное украшение, украшение для лба из двойного ряда золотых монет и тонкая шелковая вуаль, налобник «Роза» (вард) с шелковыми кружевными цветочками дополняли комплекс женского национального костюма. Женщина отождествлялась с цветком и деревом, представляясь растительным символом, а девочки-с бутонем, (еще не расцветший цветочный орнамент). Пиджак молодой женщины тоже был украшен растительными орнаментами: расцветшими ветками, цветочками, листьями, миндалевидными и коническими узорами. Растительными орнаментами украшали и вязаные носки, причем самыми распространенными мотивами являлись древо жизни и цветочные узоры. Древоподобные, ветвистые орнаменты изображались и на женских туфлях и тапочках. Древо жизни и другие растительные мотивы на женской одежде отождествляются с идеей плодородия. Женщина и природа или символ жизни - древо жизни, сливались воедино и стали жизнеобеспечивающими могущественными силами.

3. Свадебное снаряжение - это знаковая система, связанная с древней магией, цель которой обеспечить непрерывность смены поколений. Сама невеста и ее празднично-ритуальное одеяние как будто полное олицетворение древа жизни. Свадебное снаряжение выражало таинство самого радостного мига жизни невесты, она сравнивалась с цветущим деревом, а одежда выступала в качестве украшения цвета с обязательным присутствием элементов ритуального значения и орнаментировки (передник, пояс, фата, налобник, носки). На отдельных деталях одежды невесты изображены символы оплодотворения, плодородия, древа жизни, цветочные узоры. На нагруднике и переднике вышивались растительные узоры, верхнюю одежду обрамляли цепочкой из цветочного узора. Головной убор и обувь также украшались натуральными и стилизованными растительными изображениями.

**Svetlana POGHOSYAN (Armenia)**

Museum of Armenian Ethnography (Armavir)  
The Institute of Archaeology and Ethnology (Yerevan)  
e-mail: sv\_ethnomuseum@yahoo.com

## **PECULIARITIES OF DECORATIONS ON WOMEN'S TRADITIONAL COSTUME IN SHIRAK-JAVAKHK**

1. The most typical expression of floral motifs in Armenian decorative art is the tree of life, which is expressed in the ideological forms of a tree, seed, flower, pistil and fruit, because we get fruit and future seed corn from the flowers. Inseparable parts of flowers are buds and pistil-shaped patterns, which are the symbols of fertility. The idea of flower is very common in decorative art, but there are also floral patterns of violets, snowdrops, immortelles, nenuphars, tulips, roses, pomegranate trees. Flower was considered to be the symbol of growth and fertility by young men, therefore, they compared themselves with the process of blossoming, plants and trees. Floral motifs are especially typical of Armenian traditional costume of Bardzr Hayk and Ayrarat. It is significant that the floral shaped motifs were mainly on the women's clothes as woman was associated with nature. Growth parts of the plants are contained in the flower. And the carpel, which is the female part, unlike the stamen, which is the male part of the flower, keeps on growing day by day after insemination and turns into future fruit with seed. Floral motifs were the symbols of fertility and they were connected with the worship of the sun.

2. The women's traditional costume of Shirak-Javakhk, which is included in the set of Bardzr Hayk traditional costume, is distinguished with its splendid gold-thread embroidery and floral motifs. The lower ends of the festive silk pants worn by young women were embroidered and decorated with bird-shaped and floral-shaped patterns, which symbolized the fertility of the couple. The lining was ornamented with bell-shaped pendants. The ritual use of silk woven belt with good wishes on it and apron with floral and large almond-shaped patterns, connected with fertility and custom of childbirth is of great interest. Apron and bib are sexual symbols, and they were worn to protect the woman's waist and breast from evil eyes and to provide the ability of childbirth. The lining of dresses was trimmed with special subtle floral motifs. The parts of headdress, such as a short cylindrical hat with a tassel attached to the top, called fez, pearl string with ear pendants decorated with gold coins, forehead ornament made of gold coins, silk veil and forehead ornament "rose" with subtle lace flowers on it were the necessary elements of the women's traditional costume. Woman was associated with the flower and tree, girls were associated with buds and blossoming patterns. The jacket of a young woman was also decorated with floral motifs, leaves, flowerpots, almond-shaped patterns. Socks were decorated mainly with tree of life. Women's shoes and slippers were ornamented with branch-shaped motifs, which symbolized fertility. Woman and nature or tree of life united and became powers providing eternity of life.

3. Wedding costume is a structure of symbols connected with the ancient fascination intended to provide permanent birth of children. The bride herself and her festive and ritual costume were completely the expression of tree of life. Wedding gown was the symbol of the most solemn celebration in life and the bride herself was compared with blossoming tree. The necessary elements of wedding costume were apron, belt, veil, forehead ornament and socks having special color, decoration and ritual meaning. Different parts of the bride's dress were decorated with the symbols of fertility, trees of life, floral motifs. Wedding gown, bib and apron, headdress and footwear were also decorated with floral patterns.

**Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)

Էլ. փոստ՝ sahakyanani@mail.ru

**ԿԱՐՄԻՐ ԶՈՒ ՏՈՒՐ, ԿԱՐՄԻՐ ՕՐ ՏԱՄ**

**(Զատկական տոների ժողովրդական ավանդույթը Գյումրիում)**

Աշխատանքում անդրադարձել ենք Զատկական տոնի խորհրդին, կրոնական և ազգաբանական պատկերացումներին, ծեսերին, սովորույթներին ու ավանդույթին, ինչպես նաև պաշտամունքի ձևերին ու հավատալիքներին, Զատկական խաղերին՝ ընդգծելով այն փոխակերպումները, որոնք ակներև են մեր ժամանակներում:

Մեր նպատակն է պարբերաբար ներկայացնել ժողովրդական ծեսերն ու տոները Շիրակի մարզում՝ որպես համայնքի զարգացման գրավական: Դեռևս հնում մեր նախնիները փնտրել են միմյանց հետ ուրախությունները համախումբ նշելու և դժվարությունները հաղթահարելու ելուղիներ: Այդ ձգտման առիավատյան են տոները, ծեսերն ու ավանդույթները, որոնք դարձել են մեր սովորութամշակութային կենցաղի կարևոր բաղադրիչները: Այս հայեցակետից հետադարձ հայացք նետելով մեր անցած ճանապարհին՝ կարիք ունենք հստակորեն տարբերակելու, թե ո՞ր տոներն են միտված մեր ազգային ոգու, նկարագրի ու ավանդույթի պահպանմանը՝ վերաիմաստավորում ստանալով առհասարակ տոների համատեքստում:

Մեծ պահքը հոգևոր ինքնամաքման, լուսության, ներհայեցման շրջան էր, որից հետո ժողովուրդը միանգամայն նոր որակով՝ մաքրված նոր կյանք է սկսում, և այդ նոր կյանքի խորհրդանշական մուտքը կատարվում է հավերժության խորհրդանիշ ձևի ճաշակումով:

Զատիկը շարժական տոն է, որ հանդիպում է գարնան գիշերահավասարից հետո՝ լուսնի լուսնին (լինում է լուսնի լուսն մերձավորագույն կիրակին): Տոնի եկեղեցական անունը՝ Սբ Հարություն, միանգամայն արտահայտում է գարնանային այս տոնի և՛ եկեղեցական, և՛ ժողովրդական բովանդակությունը: Ըստ եկեղեցական տոնացույցի՝ այդ օրը տոնվում է Քրիստոսի հարություն առնելու հրաշքը:

Զատիկի վերջին կիրակին ախառի (հասարակական մատաղ) կիրակին էր: Երինջ էին մատաղ անում, մոզի, արջառ. մատաղը եփում էին մեծ կաթսաների մեջ գիշերը դրսում, որպեսզի գոհաբերության խորհուրդը ելնի առ Աստված: Առավոտյան՝ բարի լույսին, պղնձե ամաններով բաժանում էին:

Ժողովրդի մեջ ընդունված էր նաև լավաշ հացի մատաղը:

Զատկվա առաջին ձուն օրհնել էին տալիս յոթ հոգու և խփում բակ դուրս բերված լծկան անասունների ճակատին, որպեսզի չարը խափանվեր:

Այդ ձուն զարդարված էր լինում և պատկերում էր եզան գլուխ (դա արվում էր խմորի գնդիկների օգնությամբ): Եփած, չներկած ձվից պատրաստում էին Զատկվա Նուրին՝ այն ձուն, որ կախվում էր պատից, և ամեն մի հյուր պետք է ողջուներ նրան ու նոր մտներ տուն: Այլուրի խյուսով ծլած ցորենի հատիկները ամրացնում էին ձվի գլխիկին, և այնպիսի

տպավորություն էր ստեղծվում, թե դրանք մազեր էին: Աչքերի տեղը կայցնում էին կանաչ ուլունքներ, որ Ջատկվա Նուրին կանաչ գարուն բերեր:

Տոնի ընթացքում կազմակերպվում են խաղեր՝ ձվկոտրուկ, ձու գլորել, նախկինում նաև՝ ձիարշավներ և այլն: Մասնակից երեխաները տնետուն են շրջում և կարմիր ձվեր հավաքում: Այստեղից էլ՝ «Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ» խորհրդանշական արտահայտությունը: Ընդհանրապես, տոնական մաղթանքների գերակա մասն անձրևի ու ցորենի բարեբանմանն է ուղղված. «Տե՛ր, թո՛ն արա, թոն-թո՛ն արա, գարի հացը բոլ-բոլ արա, կարմիր կովի եղը կուզեմ, սև հավի հավկիթը կուզեմ»: Այդ օրը գրեթե բոլորը հագնում էին նոր շորեր՝ ուռքից գլուխ: Եվ մեկը մյուսին փոխանակ ասեր՝ բարով մաշես, ասում էր՝ զատիկը վրեղ «ծռտել է». կա՛մ Ջատկի տոնը նկատի ունեին, կա՛մ զատիկ միջատը, իսկ միմյանց մաղթում էին այսպես.

Աչքդ միշտ զատիկ տեսնի,

Ալ ու խաշխաշ շորըդ հարսիկ (տ. հարսնիք).

Էս տառոսը ձեր տունը լինի,

Ձեր տունըն էլ միշտ հարսնիք լինի:

Ջատիկը նաև տնօրհների օր է: Քահանաներն այդ օրը տնետուն էին շրջում, օրհնում աղը, հացահատիկը, ջուրը, գինին, խունկը: Օրհնվում էր բարիքը՝ ապահովելով տարվա լիությունը: Ջատկի օրհնած կարմիր ձուն պահում էին մինչ հաջորդ Ջատիկ, իսկ հաղթող ձուն դեղ-գուռնայի նվազակցությամբ տանում-թաղում էին այն արտում, որ նախորդ տարին նվազ բերք էր տվել:

Օրվա խորհուրդն ամփոփվում է Խնդումի ծեսով (խաչաձև մի փայտ են տնկում կանաչի մեջ և զարդարում կանաչ-կարմիր փնջած ձվերով, նուր-խնձորով ու կարմիր վարդերով):

Բոլոր դեպքերում տոները և տոնական մշակույթը միտված են համադրելու ազգային ոգին, էությունն ու ավանդույթը՝ դառնալով կարևոր գործոն ազգաբնակչության հոգևոր վերելքի ճանապարհին:

**Карине СААКЯН (Армения)**

Ширакский центр арменоведческих исследований НАН РА (Гюмри)

e-mail: sahakyanani@mail.ru

## **ДАЙ КРАСНОЕ ЯЙЦО, ДАМ КРАСНЫЙ ДЕНЬ**

В нашей работе мы обратились к таинству Пасхи, религиозным и этнологическим представлениям, обрядам, обычаям и традициям, а также к видам культового поклонения и поверьям. Представили Пасхальные игры, обратив особое внимание современным преобразованиям.

Пасха считается подвижным праздником и празднуется после весеннего равноденствия, в ближайшее воскресенье полнолуния. Церковное название праздника - Святое Воскресение, полностью выражает и религиозную, и народную суть, содержание этого весеннего праздника. По церковному календарю в этот день празднуется чудо Воскресения

Христа. Последнее Пасхальное воскресенье считалось днем общественного жертвоприношения. В жертву приносили теленка, бычка. Жертвенное мясо варили в больших котлах ночью на открытом воздухе, чтобы таинство жертвоприношения воспряло к Богу. Рано утром готовое жертвенное мясо раздавали в медной посуде. В народе было принято также приносить в жертву хлеб – лаваш.

Первое пасхальное яйцо давали на благословение семи лицам и разбивали о лоб упряжного скота, вывезенного во двор, чтобы отградиться от зла. Это яйцо было разукрашено и изображало голову вола (делали с помощью шариков из теста). Из варенного неукрашенного яйца изготавливали Пасхальное Чучело, которое вешали на стену, каждый гость должен был сначала поприветствовать его и только потом войти в дом. Проросшую пшеницу прикрепляли к яйцу наподобие волос, а вместо глаз ставили зеленые бусы, чтобы Пасхальное Чучело принесло с собой зеленую весну. Во время праздника играли в игры: разбивали друг о друга окрашенные яйца, катили их, в прежнем организовывали еще и скачки. Дети ходили по домам и собирали красные яйца, отсюда и символическое выражение - «Дай красное яйцо, дам красный день». Вообще большая часть праздничных пожеланий относилась к восхвалению пшеницы и дождя (плодородие). В этот день почти все надевали новую одежду и желали друг другу следующее:

Пусть твое око всегда увидит Пасху

Алое платье невесты,

Пусть такое будет в вашем доме,

Пусть будет свадьба в вашем доме.

В Пасху благословляли также дома. Священники в этот день ходили из дома в дом, благословляя соль, зерно, воду вино, ладан. Благословлялись благодеяния, обеспечивая изобилие и достаток года.

**Karine SAHAKYAN (Armenia)**

Shirak Center for Armenological Studies RA (Gyumri)

e-mail: sahakyanani@mail.ru

## **GIVE ME RED EGG, I SHALL GIVE YOU A RED DAY**

### **(Folk Tradition of Easter Holidays in Gyumri)**

In our work, we have touched upon the Easter holiday, its religious and ethical concepts, rituals, traditions and customs, as well as worship forms and beliefs, Easter games, underlining the transformations that are apparent in our days.

Easter is a movable celebration that meets the spring equinox, the closest Sunday of the moon. The church name of the holiday- Holy Resurrection, is an expression of this spring holiday's religious and national content. According to the church calendar, this day is celebrated miracle of the resurrection of Christ.

The Last Sunday of Easter was a day of social sacrifice. It was a mortuary festival for the poor- people were sacrificing heifer, calf, cattle: the sacrifice was carried out at night. People were also sacrificing lavash bread.

The first egg of Easter was blessed by seven people and stricken to the forehead of the cattle as a means of evil breaking. That egg was decorated and had an ox-like head. Easter Nuri was made from unpainted egg and hung on the wall- each guest was to greet Nuri and then enter home. The wheat grains were fastened to the egg head and the impression was created that they were hair. Green beards were pasted instead of eyes so that Easter Nuri would bring green spring.

During the holiday, games were organized: eggs breaking, eggs rolling, horseback riding, and so on. Participant children go home to home and collect red eggs. From here, the symbolic expression "Give Red Egg, Give Red Day" arose. In general, the main part of festive greetings is directed to the improvement of rain and wheat.

Easter is also a day of blessing. The priests walked homes on that day; blessed salt, grain, water, wine, incense. Blessed is the good, ensuring the fullness of the year.

**Արմեն ՍԱՐԳՍՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)

Էլ.փոստ՝ armensargg@gmail.com

## **1988 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՐՏԱՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՅԿԱԿԱՆ ԱՆԵԿԴՈՏՆԵՐՈՒՄ**

1988-ի դեկտեմբերյան երկրաշարժից հետո ստեղծված անեկդոտներում ժողովուրդն այդ ահռելի չափերի հասնող ավերածությունների և զոհերի համար հիմնական մեղավորների մեջ երբեմն ուղղակի, երբեմն էլ անուղղակի՝ այլաբանորեն, մատնանշում էր՝

**ա. Խորհրդային համակարգը.** փաստերն ապացուցում էին, որ նախախորհրդային տարիների կառույցները կանգուն էին մնացել, խորհրդային տարիներինը՝ ավերվել:

**բ. Խորհրդային ղեկավարներին.** 1988-ին Լենինականի քաղկոմի առաջին քարտուղարը Դոնարա Հարությունյանն էր, որը երկրաշարժից հետո ժողովրդի կողմից ստացավ *Դոնարա Քանդի* «պատվանունը»:

**գ. Ընչաքաղցությունն ու անպատասխանատվությունը.** խորհրդային համակարգի մարդկանց հատուկ էր կառուցվող շենք-շինությունների ամրությունն ապահովող



շինանյութերի վաճառքը:

Ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում, նույնիսկ Ռուսաստանում ժողովուրդը համոզված էր, որ երկրաշարժը հանդուգն հայերին պատժելու նպատակ էր հետապնդում:

Իբրև բողոքի նշան ԽՍՀՄ կենտրոնական մամուլում Ղարաբաղյան շարժման վերաբերյալ տպագրվող կեղծ հաղորդագրությունների և հայերին վարկաբեկող հողավաճների՝ ժողովուրդը բոլոր արարողակարգերով կազմակերպեց «Պրավդա» ու «Իզվեստյա» թերթերի հուղարկավորությունը, ինչից մի քանի ամիս անց տեղի ունեցավ ահասարսուտ երկրաշարժը: Ժողովուրդը զվարճախոսությամբ արձագանքեց դրան.

*Լենինականցիք «Պրավդա» ու «Իզվեստյա» թերթերը թաղեցին, գետինն էլ չդիմացավ... (ԱՄՇՀ)*

Անեկդոտները չեն շրջանցում նաև աշխարհի տարբեր ծայրերից երկրաշարժից տուժածներին օգնություններ հասցնելու թեման: Ըստ ընտանիքի անդամների տրվող օգնությունները անեկդոտներում պատճառ են դառնում արտագնա աշխատանքի համատեքստում բացահայտելու որոշ ընտանիքներում առկա մութ պատմությունները:

Փրկարարական աշխատանքներ կատարելիս տխրության, վշտի հետ անպակաս էր նաև ժողովրդին գոտեպնդող հումորը: Լենինականցին պատրաստ է դիմագրավելու ազնիվ պայքարի մեջ մտնող, դեմ առ դեմ դուրս եկող ամեն բանի, սակայն երկրաշարժի դեմն առնել անգոր է, քանզի... «*տրկից կուգա*»:

Երկրաշարժային անեկդոտների և սրախոսությունների մի մասը ստեղծվում էր հենց նույն պահին, եթե փրկարարական աշխատանքները համեմատաբար բարեհաջող էին ավարտվում, մի մասն էլ հետո էր ստեղծվում՝ համեմվելով անիրական գործողություններով ու արտահայտություններով:

**Армен САРКИСЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: armensargg@gmail.com

## ОТРАЖЕНИЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЯ 1988 ГОДА В АРМЯНСКИХ АНЕКДОТАХ

В анекдотах, созданных после землетрясения в декабре 1988 года, люди иногда напрямую, а порой и косвенно, указывают на возможных виновников опустошения и жертв. Среди них:

- а. Советская система.** Факты доказали это. Досоветские строения остались стоять, а построенные в советские годы - были разрушены.
- б. Советские руководители.** В 1988 году первым секретарем Ленинакана была Донара Арутюнян, после землетрясения получившая «почетный титул» Донары Канди /разрушительница/.

**в. Алчность и безответственность.** Люди советской системы специализировались на продаже строительных материалов, которые обеспечивали прочность строящихся конструкций.

Не только в Армении, но и за рубежом, даже в России, люди были убеждены, что землетрясение имело целью наказать армян.

В знак протеста против постоянно публикующихся в газетах СССР ложных сообщений и статей, порочащих армян, люди фактически организовали похороны газет «Правда» и «Известия». Спустя несколько месяцев после этих событий произошло разрушительное землетрясение. Люди ответили на это в шуточной форме.

Жители Ленинакана похоронили газеты «Правда» и «Известия», а земля не устояла...

Шутки не обходят также тему помощи жертвам землетрясения со всего мира. Тема помощи членам семей в анекдотах приводит к тому, что в контексте работ за границей раскрываются темные истории в некоторых семьях.

Феномен неравного распределения рельефа также не избежал анекдотов. Землетрясение для части организаторов действительно становится источником прибыли.

Ленинаканец готов противостоять всему, что происходит в благородной борьбе, но он не в состоянии бороться с землетрясением, потому что ... «исходит из-под земли».

При проведении спасательных работ наряду с печалью и горем также неотделим был юмор, придающий людям силы. Он помог народу противостоять трагедиям и продолжать жить и творить. Часть этих анекдотов и острот создавалась непосредственно при данных операциях, если же спасательные работы завершались относительно успешно, позже создавалась уже другая часть шуток, приправленная вымышленными действиями и выражениями.

**Armen SARGSYAN (Armenia)**

The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)

e-mail: armensargg@gmail.com

## REFLECTION OF 1988 EARTHQUAKE IN ARMENIAN ANECDOTES

In the anecdotes created after the earthquake of December 1988, the people, sometimes directly and sometimes indirectly - allegorically, pointed the following as the main parties to be blamed for the devastating destructions and victims:

- a. The Soviet system.** The facts proved that as the structures built before the Soviet period remained standing, while those built in the Soviet years were destroyed.
- b. The Soviet leaders.** In 1988 the first secretary of Leninakan was Donara Harutyunyan who, after the earthquake, was given the “honorary name” of *Donara Ruiner* by the people.
- c. Avarice and irresponsibility.** The people of the Soviet system used to sell the construction materials that had to secure firmness of buildings and structures.

Not only in Armenia, but also abroad, even in Russia, people were convinced that the earthquake was aimed at punishing the impudent Armenians.

As a sign of protest against the false information and articles disgracing the Armenians,

which were constantly published in the central newspapers of the USSR, the people indeed organized the funeral of “Pravda” and “Izvestia” newspapers observing all relevant ceremonies, which was followed by the devastating earthquake a few months after that. The people responded to it with new jokes:

*The people of Leninakan buried “Pravda” and “Izvestia” newspapers, and the earth could not bear them...* (ASPC)

The anecdotes do not leave out the topic of helping the earthquake victims from all over the world. The help provided to family members is mentioned in anecdotes revealing dark stories existing in some families in the context of working abroad.

The fact of unequal allocation of the *help* delivered was also covered by anecdotes. The earthquake really became a source of income for a part of the people who governed and organized the process of allocation.

A resident of Leninakan is ready to confront anything and anyone that enters into decent struggle, face to face, but is helpless in the fight against the earthquake, because it ... “comes from underneath the ground”.

During the rescue works and later on, along with sadness and sorrow, there was plenty of humor and anecdotes, which cheered up people, helped them recover their strengths, go on living and creating. Part of the earthquake anecdotes and humorous stories were created, of course, at the time when the rescue operations were relatively successful, and another part – later, spiced with unrealistic actions and expressions.

#### Նվարդ ՎԱՐԴԱՆՅԱՆ (Հայաստան)

Երևանի պետական համալսարան,  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ. փոստ՝ nvardv@yahoo.com

#### ՄԱՀՎԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ԼԱՑԵՐԳԵՐՈՒՄ

Հարսանեկան ծիսերգերը մինչև վերջերս հարսանեկան ծիսաշարի անբաժանելի մասն են կազմել և ուղեկցել են հարսանիքի բոլոր փուլերն ու արարողությունները: Ուրախ և տոնական այս երգերի շարքում իրենց յուրահատուկ թախճոտ մոտիվներով առանձնանում են լացերգերը, որոնք կատարվել են հարսի հարազատների և հատկապես՝ ընկերուհիների կողմից, ինչպես նախքան հարսին հայրական տնից հանելը, այնպես էլ հարսնառի ժամանակ: Հարսին հայրական տնից փեայի տուն տեղափոխելը ծիսական համատեքստում որպես մահ և հարություն է ընկալվել, որին առնչվող՝ հարսանեկան լացերգերում առատ են մահվան պատկեր-խորհրդանիշները: Ինչպես թաղման ողբերգերում, այստեղ էլ աշխարհի պատկերը քայքայման խորհրդանիշներով է ի

հայտ գալիս. խավարող արևի, տերևաթափվող ծառի, քաղվող բույսի, ցնցվող շեմքի, կոտրատվող ապակու, դատարկված սենյակի և այլ պատկեր-խորհրդանիշները ուղղակի զուգահեռներ են ստեղծում ողբերգերի կայուն բանաձևերի հետ՝ մինևույն ժամանակ, սակայն, ի հայտ բերելով խորքային տարբերություններ՝ այս երկու ծեսերի իմաստաբանությանն ու բնույթին առնչվող:

Հողվածում տիեզերական, բուսական ու կենցաղային խորհրդանիշների քննությամբ փորձ է արվում ցույց տալ մահվան ծիսական ընկալման գեղարվեստական արտահայտումները հարսանեկան լացերգերում, աշխարհի պատկերի ստեղծման առասպելաբանաստեղծական ընկալումներից սկիզբ առնող կայուն նշանային համակարգերի յուրահատուկ դրսևորումը՝ ողբերգերի նմանատիպ խորհրդանիշների հետ զուգահեռ դիտարկմամբ:

**Нвард ВАРДАНЯН (Армения)**

Ереванский государственный университет:

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: nvardv@yahoo.com

## **СИМВОЛЫ СМЕРТИ В АРМЯНСКИХ СВАДЕБНЫХ ПРИЧИТАНИЯХ**

Свадебные песни были частью свадебного ритуала и до последних времен сопровождали все этапы и церемонии бракосочетания. Среди радостных и праздничных песен выделяются свадебные причитания, которые исполнялись родственниками и подругами невесты как перед выходом невесты из отцовского дома, так и во время выхода из дома. Переход невесты из родительского дома в дом жениха в ритуальном контексте воспринимался как смерть и возрождение, соответственно в свадебных плачах присутствуют символы смерти. Как в погребальных песнях, так и в свадебных причитаниях в картине мира изобилуют символы разрушения и распада: символические изображения затемненного солнца, падающих листьев, сорванных растений, вздрагивающего порога, разбитого стекла, опустошенной комнаты и других символов создают прямые параллели с формулами похоронных песен плача, одновременно выявляя большие различия относительно семантики и природы этих двух церемоний.

В статье рассматриваются космические, растительные и бытовые символы, которые показывают художественное выражение ритуального восприятия смерти в свадебных причитаниях, особенности знаковых систем, исходящих из мифопоэтического мышления, рассматривающихся параллельно аналогичным символам погребальных песен.

**Nvard VARDANYAN (Armenia)**

Yerevan state university  
The Institute of Archaeology and Ethnography NAS RA (Yerevan)  
e-mail: nvardv@yahoo.com

## **DEATH SYMBOLS IN ARMENIAN WEDDING LAMENTS**

Until recently, wedding songs have been the inseparable part of wedding ceremonies and have accompanied all the stages and rites of a wedding. Among these merry and festive songs, lamentations are singled out with their unique sorrowful motives. These were performed by the relatives of the bride and in particular by her friends before bringing the bride out of her father's house. The ceremony of taking of the bride from her father's house to the groom's house was perceived as death and resurrection in the ceremonial context. Due to this, symbolic images of death are abundant in laments. Like funeral songs, these songs also portray the world with symbols of decay: the symbolic images of darkening sun, falling leaves, plucked plants, shaking threshold, breaking window, emptied room and others create direct parallels with the fixed formulas of funeral songs, simultaneously revealing big differences with respect to the semantics and nature of these two ceremonies.

Through the study of cosmic, herbal and household symbols, the paper attempts to show the artistic expressions of the ceremonial perception of death in wedding songs of laments, the unique manifestation of fixed semantic systems originating from mythopoetic perceptions of the images of world creation with parallel consideration of similar symbols in funeral songs.

**Սերգեյ ՎԱՐԴԱՆՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (Երևան)  
Էլ. փոստ՝ sergeyvardanyan@yahoo.com

## **ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻՑ ԳՐԱՌՎԱԾ ՄԻ ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄԻ ՅՈԹ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1987 թ. հունիսին Ղազախստանի Չիմբենդի մարզի Սայրամի շրջանի Չիրկինո գյուղում կրոնափոխ համշենահայ Քազըմ Քարաիբրահիմովից գրառեցինք «Արդէլեցիք՝ ավջի» (Արդալացիները՝ որսորդ) զվարճապատումը: Նա ծնվել էր 1926 թ. Աջարիայում՝

Թուրքիային սահմանամերձ Մարփի գյուղի Քանլը դերե (Ադունոդ քեդ) գյուղակում: Աջարիայում բնակվող թուրքերի, քրդերի և այլ ազգությունների հետ 1944 թ. նոյեմբերին Ղազախստան և Ղրղզստան արքայությունների նաև իսլամ համալսարանները: Կրոնափոխ համալսարանները խոսում են Համալսարանի Խոփայի խոսվածքով, որն անվանում են «համալսարան», «հոմալսարան»: Այն բաժանվում է երկու ենթախոսվածքի՝ թուրքականների (այսինքն՝ դրսեցիների, այլ գյուղերի բնակիչների) և արդեւեցիների (արդալացիների, այսինքն՝ Արդալա գյուղի բնակիչների): Արդալան գտնվում է Թուրքիայի Արդվի-նի նահանգի Խոփայի (Հոփա) գավառում: Այն այժմ բաժանված է երկու գյուղի՝ Էշմե-քայա (Վեյի Արդալա) և Չիմենլի (Վայի Արդալա):

Թուրքականները սիրում են արդալացիների հասցեին կատակներ անել: Ղազախստանում մեր գրառած գվարճապատումը հինգ արդալացու որսի գնալու մասին է: Նրանք արջի որջի անցքից ներս են նայում, բայց ոչինչ չեն տեսնում: Նրանցից մեկը համաձայնվում է որջը մտնել: Նրան պարան են կապում, և նա ներս է տողոսկում: Արջը նրա գլուխը պոկում է: Իրենց ընկերոջը դուրս են քաշում և սկսում են մտածել, թե մտնելիս նա գլուխ ունե՞ր, թե՞ չունե՞ր: Գնում են գյուղ, կնոջը հարցնում, թե՞ այս առավոտյան մարդո՞ր, որ վեր ելավ, գլուխը վրա՞ն էր, թե՞ վրան չէր: Կինն էլ պատասխանում է. «Քելօխե չքիդիմ, համա բերբուքե (բերվուքե) ժաժի գուր» (Գլուխը չգիտեմ, բայց շրթունքը շարժում էր):

Այս գվարճապատումի մեկ այլ տարբերակ 1995 թ. Հարվարդի համալսարանի աշխատակիցները գրառել են Բոստոնում (ԱՄՆ) մի 25-ամյա իսլամ համալսարանից: Համալսարանի բարբառի Խոփայի խոսվածքի թուրքականների ենթախոսվածքով պատմված գվարճապատումի լատինատառ գրառումը, նաև անգլերեն թարգմանությունը՝ «Temel's head» (թարգմ.՝ Թեմելի գլուխը) վերնագրով, 1996թ. տպագրվել է ԱՄՆ-ի Օհայոյի նահանգի Քիվլենդ քաղաքի համալսարանի «Annual of Armenian Linguistics» հանդեսում հրատարակված Հարվարդի համալսարանի աշխատակիցներ Բերթ Վոքսի, Սերջիո Լա Փորթայի և Էմիլի Թաքերի «Լեզվաբանական գրառումներով ազգագրական նյութեր մուսուլման հեմշինլիից» անգլերեն հոդվածում:

2010-2013 թթ. ընթացքում մեզ հաջողվեց Խոփայի գավառում գրառել այս գվարճապատումի ևս 5 տարբերակ: Իսլամ համալսարաններից գրառված այդ յոթ տարբերակներից հինգում ձախորդ գյուղացու գլուխը պոկում է արջը, մեկ դեպքում՝ մակույկը, մեկ դեպքում էլ՝ ջրաղացի քարը:

Բնականաբար, մեր գրառումների ընթացքում հարց էր ծագում, թե արդյոք իսլամ համալսարանների շրջանում տարածված այս գվարճապատումն իր փոփոխականներն ունի՞ հայ ժողովրդի տարբեր հատվածների բանահյուսության մեջ:

Մեր որոնումների արդյունքում պարզեցինք, որ շուրջ 26 տարբերակներ պատմվել են նաև Ղարաբաղում, Ղարադաղում, Փերիա գավառում, Սյունիքում, Նախիջևանում, Ջավախքում, Լոռիում, Տավուշում, Մուշում, Վանում, Շատախում, Մոկսում, Կեսարիայում, Հալեպում և այլն:

Այս զվարճապատումի մեկական տարբերակ էլ մեզ հայտնի է թուրքական և պարսկական բանահյուսությունից: Դրանք համարյա կրկնում են իրար: Մոլլա Նասրեդինն ընկերոջ հետ գնում է որսի, հետապնդում են գայլին, որը մտնում է իր բունը: Ընկերը խցկվում է նրա հետևից: Որոշ ժամանակ անց, երբ Նասրեդինն ընկերոջը դուրս է քաշում, տեսնում է՝ գլուխը չկա: Վերադառնում է քաղաք ու նրա կնոջը հարցնում, թե ամուսինը տնից դուրս գալիս գլուխ ունե՞ր: Այսքանով ավարտվում է. չկա կնոջ պատասխանը, որը զվարճապատումի հայկական տարբերակների մեխն է, ամենակարևոր, եզրափակիչ մասը:

Մի շարք ընդհանրությունները հաշվի առնելով՝ կարծում ենք՝ հայերենի Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով պատմված այս յոթ զվարճապատումները հայկական բանահյուսական ժառանգության անքակտելի մասն են:

**Сергей ВАРДАНЯН (Армения)**

Институт археологии и этнографии НАН РА (Ереван)

e-mail: sergeyvardanyan@yahoo.com

## **О СЕМИ ВАРИАНТАХ ЗАБАВНОЙ ИСТОРИИ, ЗАПИСАННОЙ У ИСЛАМИЗИРОВАННЫХ АМШЕНСКИХ АРМЯН**

В 1987г. я записал забавную историю (анекдот) у одного исламизированного амшенского армянина, проживающего в Казахстане. Сказатель вместе с другими исламизированными амшенскими армянами был сослан в Казахстан из Аджарии в 1944 г. Эта забавная история повествует о пяти жителях села Ардала, округа (илче) Хопа, провинции (ил) Ардвин, которые пошли на охоту. Один из них вошел в медвежью берлогу. Медведь оторвал ему голову. Остальные охотники вернулись в деревню и спросили его жену, имел ли ее муж голову утром? Жена ответила, что не помнит головы, но припоминает, что он двигал губами.

В дальнейшем мне удалось записать в Турции, в округе Хопа еще пять вариантов данной забавной истории.

ակունքներում կանգնած էր փայլուն դաշնակահար, հասարակական գործիչ, հմուտ մանկավարժ ու ազգագրագետ Նիկողայոս Տիգրանյանը (1856-1951): Երաժշտական կրթություն ստանալով Վիեննայի «Կույրերի համար ինտերնատ»-ում՝ Ն. Տիգրանյանը վերադառնում է հայրենի Ալեքսանդրապոլ, հիմնում կույրերի դպրոց, զբաղվում ուսուցչությամբ, միաժամանակ համերգներով ու դասախոսություններով շրջագայում Անդրկովկասի, Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի քաղաքներում: Դարասկզբի արևելահայ մամուլի էջերում բազմաթիվ են տեղեկությունները Ալեքսանդրապոլի և Թիֆլիսի քաղաքային ակումբների դահլիճներում նրա մասնակցությամբ կազմակերպված համերգների մասին: Դրանցում մեծանուն կոմպոզիտոր-դաշնակահարը հանդես է գալիս թե՛ որպես նվագակցող, թե՛ որպես մենակատար՝ ունկնդրի դատին հանձնելով իր ստեղծագործություններն ու մշակումները:

Հաստատվելով Ալեքսանդրապոլում և առնչվելով տեղի աշուղ-երաժիշտների, սազանդարների ու երգիչների հետ՝ Ն. Տիգրանյանը ծանոթանում է նրանց արվեստին ու ազգային երաժշտության ժանրերին և զարգացնում դրանք իր ստեղծագործություններում: Նա առաջիններից մեկն էր, ով գրառեց ու մշակեց պրոֆեսիոնալ երաժշտության հարուստ ու բարձրարժեք նմուշ մուղամները:

Ն. Տիգրանյանի ստեղծագործական ժառանգության մեջ առավել նշանակալի տեղ են զբաղեցնում դաշնամուրի համար գրված ժողովրդական պարերը: 25 պարային մշակումներ, որոնք ազգային երաժշտության այդ բնագավառը բարձրացրին լիովին նոր մակարդակի: Նրա ստեղծագործություններն ունեն հիմնարար արժեք պրոֆեսիոնալ գործիքային ստեղծագործական արվեստի ձևավորման և հատկապես, դաշնամուրային մանրանվագի ժանրում: Դրանք ժողովրդական մեղեդիների մշակումներ են: Ն.Տիգրանյանի դաշնամուրային մշակումներն իբրև սկզբնաղբյուր ներառում են և՛ հայկական ժողովրդական երաժշտությունը (հիմնականում քաղաքային, գուսանական-աշուղական), և՛ նմուշներ արևելյան ժողովուրդների մոնոդիկ արվեստից: Սրանով է պայմանավորված տիգրանյանական ստեղծագործությունների կերպարային և լադամեղեդային գծի առանձնահատկությունը:

Տիգրանյանական երաժշտության ուսումնասիրությունը հետազոտողի առջև դնում է ոչ միայն նեղ մասնագիտական խնդիր, ինչպես, օրինակ, երաժշտական լեզվի առանձնահատկության բացահայտում, այլև առավել ընդհանուր՝ սկզբունքային հարց. այն է՝ ազգային գեղարվեստական մտածողության ինքնորոշումն արևելյան և արևմտյան մշակույթների համատեքստում:

XIXդ. վերջից մինչև XXդ. սկիզբը հայ երաժշտության մեջ մասնագիտական ուրակներ ձեռք բերելու ժամանակահատված էր, որն ուղեկցվեց եվրոպական երաժշտության կոմպոզիցիոն սկզբունքների հետ շփման նոր ուղիների որոնմամբ: Երաժշտական նյութի կազմակերպման համապատասխան սկզբունքների և միջոցների կուտակման այս գործընթացը, որ արմատապես տարբերվում էր եվրոպական կոմպոզիտորական արվեստի ավանդական մեղեդային-հարմոնիկ մտածողությունից, հիմնականում

հնարավոր դարձավ շնորհիվ Ն. Տիգրանյանի դաշնամուրային փորձերի, համաշխարհային դասական երաժշտության մասին նրա պատկերացումների:

Փաստորեն, Ն. Տիգրանյանն իր դաշնամուրային մշակումներով հիմք դրեց յուրօրինակ երաժշտագեղագիտական երկվությանը՝ համադրելով արևելյան և եվրոպական աջանդույթները: Ընդ որում, երկուսն էլ հավասար հիմքերով ստացան իրական մարմնավորում ժանրային տիրույթում և դաշնամուրային մանրանվագի գործիքային-ձայնային համատեքստում:

**Ани АСАТРЯН (Армения)**

Гюмрийский филиал Ереванской государственной консерватории  
e-mail: aniani79@mail.ru

## **У ИСТОКОВ РАЗВИТИЯ ПРОФЕССИОНАЛЬНОЙ МУЗЫКИ АЛЕКСАНДРОПОЛЯ: НИКОГАЙОС ТИГРАНЯН**

В конце XIX и начале XX века центр Ширака – Александрополь имел все предпосылки для нового витка культурного развития. Город был известен живыми традициями народной и ашугской музыки. Кафе были платформой конкурирования для местных и приезжих музыкантов, а городской клуб стал центром классической музыки. Народные песни, с разными жанровыми проявлениями, стали неотъемлемой и важной частью быта александропольцев. Звучали лирические, колыбельные, патриотические и шуточные песни. В городе сформировалась многожанровость музыки и исполнительного искусства.

Начало XX века для Александрополя ознаменовалось развитием классической музыки. У истоков фортепьянного и исполнительного искусства стоял выдающийся пианист, общественный деятель, опытный педагог и этнограф Никогайос Тигранян (1856-1951). Получив музыкальное образование в Вене в «Интернате для слепых», Н. Тигранян возвращается в родной Александрополь, открывает школу для слепых, занимается преподаванием, одновременно гастролирует с концертами и лекциями по городам Закавказья, России и Западной Европы. В начале века в восточно-армянской прессе было много сведений о концертах в городских клубах Александрополя и Тифлиса с его участием. На этих концертах именитый композитор, пианист аккомпанировал и выступал сольно, предоставив зрителю возможность судить о его произведениях и проработках. Обосновавшись в Александрополе и общаясь с местными ашугами, сазандарами и певцами, Н. Тигранян знакомится с их искусством, жанрами народной музыки и развивает все это в своем творчестве. Он одним из первых записал и обработал мугамы, являющиеся богатыми и высокозначимыми образцами профессиональной музыки.

Особое место в творческом наследии Н. Тиграняна занимают народные танцы, записанные для фортепиано. 25 танцевальных обработок эту сферу народной музыки подняли на совершенно новый уровень. Его произведения имеют фундаментальную ценность в формировании профессионального инструментального искусства, особенно в жанре фортепиан-

ных миниатюр. Это обработки народных мелодий. Фортепианные обработки Н. Тиграняна в качестве первоисточника включают в себя и армянскую народную музыку (в основном городская музыка, ашугские напевы), и образцы монадического искусства восточных народов. Этим и обусловлена образная особенность тигранянского творчества.

Изучение тиграняновской музыки ставит перед исследователями не только узкую профессиональную задачу, как, например, выявление особенностей музыкального языка, но и ставит перед ними более обобщенный принципиальный вопрос – самоопределение народного художественного мышления в контексте восточных и западных культур.

Конец XIX и начало XX вв. был периодом приобретения профессиональных качеств в армянской музыке, что сопровождалось поиском новых путей соприкосновения с композиционными особенностями (принципами) европейской музыки. Этот процесс организации музыкального материала и накопления соответствующих принципов и способов, что в корне отличается от традиционного мелодико-гармоничного мышления европейского композиторского искусства, в основном стал возможным благодаря фортепианным экспериментам Н. Тиграняна и его представлениям о всемирной классической музыке.

Фактически, Н. Тиграняна своими фортепианными обработками стал основоположником своеобразной музыкально-эстетической двойственности, сопоставив восточную и западную музыку. При этом оба направления в равной степени выражаются в инструментально-звуковом контексте фортепианных этюдов.

**Ani ASATRYAN (Armenia)**

Yerevan State Conservatory Gyumri Branch

e-mail: aniani79@mail.ru

## **ALEXANDRAPOL IN THE SOURCES OF PROFESSIONAL MUSIC DEVELOPMENT: NIKOGHAYOS TIGRANYAN**

At the end of the XIX<sup>th</sup> and the beginning of the XX<sup>th</sup> centuries, Alexandrapol as the center of Shirak world, had all the preconditions for a new stage of cultural development.

The city was famous for its live traditions of folk and ashough music: the cafés were a real competition platform for local and newcomer musicians, and the urban club became the center of classical music. The folk song with its genre variety was the most important and integral part of the life of Alexandrapolians. Lyric, lullaby, patriotic and jingual songs were performed.

The beginning of the XX century of Alexandrapol was marked by the rise of classical music. The brilliant pianist, public figure, skilled pedagogue and ethnographer Nikoghayos Tigranyan (1856-1951) stood at the origins of the development of piano and performance arts. Having received musical education in the Viennese "Nursing for the Blind", Tigranyan returns to his native Alexandrapol, settles school for the blind, deals with teaching, simultaneously having concerts and lectures in the towns of Transcaucasus, Russia and Western Europe. At the beginning of the century Eastern Armenian press had much information about concerts with his participation in the clubs of Alexandrapol and Tiflis. The great composer and pianist acted as both an accompanist and a soloist, delivering his works and cultivations to the audience.



Being settled in Alexandropol and dealing with local ashough-musicians, singers, Tigranyan gets acquainted with their art and national music genres and develops them in his works. He was one of the first who wrote and developed the mughams, the rich and valuable example of professional music.

Among N. Tigranyan's creative heritage, folk dances play an important role. 25 dance compositions brought a new breath to national music. His works have a fundamental value in the design of professional instrumental creative art, and especially in the genre of piano miniature. These are the manifestations of folk melodies. N. Tigranyan's piano compositions as a source include the Armenian folk music (mostly urban, gusan-ashugh) and samples from eastern monodic art. This is due to the peculiarity of the pictorial and lamelodic line of Tigranian art.

Tigranyan's music research puts the researcher not only a narrow professional issue, such as revealing the peculiarity of musical language, but also a more general, principled issue - the self-determination of national artistic thinking in the context of eastern and western cultures.

From XIX century up to the end of the XX century it was the time to acquire professional qualities in Armenian music, which was accompanied by the search for new ways to communicate with European music composite principles. This process of acquiring the appropriate principles and means of organizing musical material, which fundamentally differed from the traditional melodic-harmonic meaning of European composer art, was largely made possible thanks to N. Tigranyan's piano experiments, his ideas about world classical music.

In fact, N. Tigranyan laid the foundation for his unique piano masterpieces by combining Eastern and European music. On the other hand, both were equally authentic in the genre domain and in the instrument-audio context of the piano miniature music.

**Աննա ԱՍԱՏՐՅԱՆ (Հայաստան)**

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (Երևան)

էլ.փոստ՝ instart@sci.am

**ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ «ՌԱՆԳԻ» ՊԱՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ինչպես հայտնի է, բազմատոնալությունն ու բազմալադայնությունը XX դարում սկիզբ առած ու ձևավորված ամենաբարդ ու նշանակալի երևույթներից են: Սկզբնավորվելով անցյալ դարի 10-ական թվականներին՝ դրանք, այնուհետև, եկան լրացնելու պրոֆեսիոնալ կոմպոզիտորների արտահայտչամիջոցների զինանոցը: Նոր ամերիկյան դպրոցի հիմնադիր Չարլզ Այվզին ընդունված է անվերապահորեն համարել բազմատոնալության ու բազմալադայնության հիմնադիր պրոֆեսիոնալ երաժշտության մեջ:

Ստրավինսկու վկայությամբ, Այվզն օգտագործեց բազմատոնալությունը «Պետրուշկա»-ից շուրջ երկու տասնամյակ առաջ: Սակայն իշխում է այն տեսակետը, որ Այվզը «... ոչ թե հայտնագործեց բազմատոնալությունը, այլ կանխագուշակեց այն»: Ավելի ուշ Ի. Ստրավինսկին առաջին անգամ դա օգտագործեց որպես երաժշտական մտածողության մշտական տարր: Հետագայում բազմատոնալությունը լիակատար ու բազմակողմանիորեն իր զարգացումն ստացավ ու հաղթարշավը կատարեց Ս. Պրոկոֆևի, Դ. Շոստակովիչի, Մ. Ռավելի, Բ. Բարթոկի, Դ. Միոյի, Ա. Օնեգերի, Պ. Հինդեմիտի, Կ. Շիմանովսկու և այլոց ստեղծագործություններում:

Մինչդեռ հայ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ բազմատոնալությունն ու բազմալադայնությունը, որոնք, իրավամբ, համարվում են XX դարի անվիճելի նվաճումները, իրենց կիրառումը գտան շատ ավելի վաղ՝ դեռևս XIX դարի 90-ական թվականներին: Ապացույց՝ Ն.Տիգրանյանի «Ռանգի» դաշնամուրային պիեսը մի երկ, որտեղ վերոհիշյալ երևույթներն ունեն ոչ թե էպիգոդիկ բնույթ, այլ հիմք են ծառայում ողջ ստեղծագործության համար:

**Анна АСАТРЯН (Армения)**

Институт искусств НАН РА (Ереван)

e-mail: instart@sci.am

## **О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ МУЗЫКАЛЬНОГО ЯЗЫКА ТАНЦА «РАНГИ» НИКОГАЙОСА ТИГРАНЯНА**

Доклад посвящен анализу особенностей музыкального языка танца «Ранги» Никогайоса Тиграняна.

Как известно, политональность и полиладовость относятся к самым сложным и значительным музыкальным явлениям, возникшим в XX в. Сформировавшись в 10-х годах прошлого века, они впоследствииполнили арсенал выразительных средств профессиональных композиторов. Основателя новой американской композиторской школы Чарлза Айвза безоговорочно принято считать создателем политональности и полиладовости в профессиональной музыке. По свидетельству И. Стравинского, Айвз использовал политональность примерно за два десятилетия до «Петрушки». Однако согласно доминирующей точке зрения, Айвз «... не открыл, а предугадал политональность». Позднее И. Стравинский первым использовал ее как постоянную составляющую музыкального мышления. Получив в дальнейшем полноценное и многогранное развитие, политональность победно вошла в произведения С. Прокофьева, Д. Шостаковича, М. Равеля, Б. Бартока, Д. Мийо, А. Онегера, П. Хиндемита, К. Шимановского и других.

Между тем, в армянской профессиональной музыке политональность и полиладовость, которые по праву считаются неоспоримыми достижениями XX века, нашли свое приращение раньше, намного раньше – еще в 90-х годах XIX в. Доказательством тому является

фортепианная пьеса Н. Тиграняна “Ранги” – произведение, в котором упомянутые явления носят не эпизодический характер, а являются основой для всего музыкального сочинения.

**Anna ASATRYAN (Armenia)**  
Institute of Art NAS RA (Yerevan)  
e-mail: instart@sci.am

## **ON SOME SPECIFICITIES OF THE MUSICAL LANGUAGE OF THE “RANGI” DANCE BY NIKOGHAYOS TIGRANYAN**

The report analyzes the specificities of the musical language of the “Rangi” dance by Nikoghayos Tigranyan.

As it is known, polytonality and polymodality are ranked among the most complicated and significant musical phenomena, which emerged in the XX century. They appeared in the 1910s of the last century and replenished the variety of expressive means, used by professional composers. The founder of new American composition school Charles Ives is indisputably deemed to be the progenitor of polytonality and polymodality in professional music. I. Stravinsky stated that Ives used polytonality almost two decades prior to “Petrushka”. However, according to the dominating opinion, Ives “... did not discover, but preconceived polytonality”. Later, I. Stravinsky was the first to use it as a permanent attribute of musical thinking. With time, polytonality had been elaborated and triumphantly marched through the compositions of S. Prokofiev, D. Shostakovich, M. Ravel, B. Bartok, D. Milhaud, A. Honegger, P. Hindemith, K. Szimanowsky, and others.

Meanwhile, in Armenian professional music, the techniques at issue, which are rightfully considered as the irrefutable accomplishments of the XX century, had been used earlier, much earlier – back in the 90s of the XIX century. The proof of it is the piano piece by N. Tigranyan – “Rangi”. In this work, polytonality and polymodality are not isolated phenomena, but form the basis of the entire musical composition.

**Ինգա ԱՎԱԳՅԱՆ, Պարույր ԶԱՔԱՐՅԱՆ (Հայաստան)**  
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան (Գյումրի)  
Էլ. փոստ՝ kumayriargelots-tangaran@mail.ru

## **ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԳՅՈՒՄՐՈՒ ՄԵՍՈՐԻԱԼ ՄՇԱԿՈՒՑԹԸ**

Հուշագրելու մշակույթը Շիրակում հայտնի է դեռևս Արագածի ժայռապատկերներին, այն իր զարգացման բարձրակետին է հասնում բիսյնական շրջանում, երբ Ար-

գիշտիի արշավանքների արդյունքում պատմական Շիրակում հատվում են չորս կարևոր ուրարտական սկզբնաղբյուրներ (Մարիդամիշի, Կուլիջանի և Մարմաշենի հայտնի արձանագրությունները և վերջերս՝ ընդամենը մեկ տասնամյակ առաջ, բացահայտված, Վանի թանգարանում պահպանվող ազաթե սեպագիր ուլունքը): Բազմաքանակ են նաև միջնադարյան աղբյուրներում հանդիպող հուշագրությունները: Կումայրի անվամբ մեր բնակավայրը միջնադարյան աղբյուրներում հիշատակվում է Ք.հ. VIII դ. պատմիչ Ղևոնդի կողմից 774 թ. հակաարաբական ապստամբության առիթով. «...հասաներ ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի»: Հայ մատենագրության մեջ Կումայրին (Կումրի ձևով) կրկին հիշվում է 1209 թ. իբրև գյուղաքաղաք: Մատենադարանում պահպանված մի ձեռագիր հիշատակարանում (թիվ 1886, 1 թերթ) ասվում է. «Ես մեղուցեալս և յետինս ի կրոնաւորս Ովասափս, որ էի ազգաւ և տոհմիւ ի մեծ գեղաքաղաքէն Կումիրոյ...», այսինքն՝ 1209թ. Կումայրին մեծ գյուղաքաղաք էր և այլևս Կումայրի, Կումիրի կամ այլ անվանումով մինչև XIX դ. սկիզբը չի հիշատակվում: Յուրօրինակ աղբյուր են Ալեքսանդրապոլի եկեղեցիների և նշանավոր կառույցների վրա պահպանված որմնագրերը: Ալեքսանդրապոլի մասին հիշատակություն ունի նաև Ղևոնդ Ալիշանը «Շիրակ» աշխատությունում:

Լենինական-Գյումրիում տեղադրված հուշաղբյուրները, հուշակոթողները և հուշատախտակները ևս կարևոր սկզբնաղբյուրներ են, այս հուշարձանները ունեն մշակութային առանձնահատկություններ, զարգացման փուլեր, տեսակներ: Կարևոր է նաև այդ աղբյուրներում պահպանված տեղեկույթի վերլուծությունը:

Գյումրու տարածքում, ինչպես և Հայաստանի Հանրապետությունում, հուշատախտակների, հուշաղբյուրների և հուշակոթողների մշակույթը սկսել է զարգանալ XIX դ. վերջին և XX դ.:

Ալեքսանդրապոլ-Գյումրու տարածքում կառուցված հուշաղբյուրների նախատիպ կարելի է համարել վիշապաքարերը (մի քանիսը հայտնաբերված են Արագածի վրա) և Արտաշեսյան սահմանաքարերը (Շիրակավան, Բենիամին): Հուշաղբյուրների մասին վաղ վկայություններից է Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուր» վիպակում վարպետ Մկրտիչի կերտած քառասուն աղբյուրների մասին պահպանվող տեղեկությունը: Դրանցից մի քանիսի վրա կային արձանագրություններ: Իհարկէ՝ այդ արձանագրությունները զանազան բովանդակություններ ունեին: Հուշաղբյուրների կառուցումը շարունակվում է նաև խորհրդային շրջանի Լենինականում, պարզապես այս հուշարձանները որոշ դեպքերում ավելի տարածական են դառնում, քան նախկինում էին և համարում են ճարտարապետական մի քանի տիպեր: Գյումրու տարածքում հուշակոթողների քանակը տասն է, իրենց հորինվածքներում դրանք համարում են հուշաղբյուրի, հուշատախտակի և քանդակի մշակույթները: Դրանցից են «Մայր Հայաստան», «Ա. Պուշկինի հիշատակին», «Անի հազարամյա», «Քարե մատյան», քաղաքի հարավային մուտք՝ «Քաղաքի զինանշան», «Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին», «Երկրաշարժի զոհերի հիշատակին» հուշարձանները: Այսօր քաղաքում հարյու-

րավոր աղբյուրներ և ցայտաղբյուրներ կան, որոնց վրա բազմաթիվ մակագրություններ են արված, այս աղբյուրները ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային շրջանի են և նույնպես հուշագրելու մշակույթի վառ դրսևորումներ են համարվում: Այսպիսի հուշաղբյուրներ կան թե՛ քաղաքի թաղամասերում՝ Մլաբողկա, Թուրքի մահլա, Բոշի մահլա, թե՛ Գյումրու կենտրոնական փողոցներում: Այս հուշաղբյուրները կանգնեցվել և կանգնեցվում են մարդկանց հիշատակը կամ որևէ իրադարձության մասին հիշողությունը վառ պահելու համար:

Գյումրիում հուշաղբյուրների կողքին մեծաքանակ են նաև հուշատախտակները, որոնք տեղադրվել են ի հիշատակ նշանավոր մարդկանց, դեպքերի և ունեն ուսուցողական, դաստիարակչական, ճանաչողական դեր: Լենինական-Գյումրու տարածքում տեղադրված հուշատախտակները ժամանակագրական առումով կարելի է բաժանել երկու փուլի՝

1. Խորհրդային շրջանի հուշատախտակներ,
2. Անկախության շրջանի հուշատախտակներ:

Հուշակոթողները, հուշաղբյուրները և հուշատախտակները իրար նման են գրություններով, զարդանախշերի հորինվածքներով, բովանդակային լուծումներով:

«Կումայրի» արգելոց-թանգարանի աշխատակիցների կողմից հաշվառվել և որպես պահպանական միավորներ գրանցվել են հինգ տասնյակից ավել հուշատախտակներ, որոնք բազմազան են կատարման եղանակով, ոճով և բովանդակությամբ: 2016թ. ապրիլին՝ Քառօրյա պատերազմից հետո, հուշատախտակների քանակը ավելացավ ևս մեկ տասնյակով: Դրանց դաստիարակչական բնույթը անգերազանցելի է, քանի որ մատաղ սերնդի մեջ դաստիարակում են հայրենասիրություն, անձնագոհություն, նվիրվածություն հայ ազգի և հայրենիքի հանդեպ:

**Инга АВАГЯН, Паруйр ЗАКАРЯН (Армения)**

Историко-культурный музей-заповедник "Кумайри" (Гюмри)  
e-mail: kumayriargelots-tangaran@mail.ru

## МЕМОРИАЛЬНАЯ КУЛЬТУРА АЛЕКСАНДРОПОЛЯ - ГЮМРИ

Мемориальная культура в Шираке восходит в глубь веков, проявляясь в петроглифах Арагаца, и доходит до кульминационной точки развития в урартскую эпоху, когда в результате походов Аргишти в Шираке были высечены четыре важных источника (клинописные тексты Сарыкамыша, Кулиджана, Мармашена и обнаруженная совсем недавно, всего десять лет назад, бусина из агата Ванского музея с клинописным текстом). Многочисленны так же мемориальные упоминания в средневековых источниках. В средневековых источниках VIII в. после Р.Х. поселение под названием Кумайри упоминает историк Гевонд в 774 г. по случаю антиарабского восстания: «...достиг провинции Ширак селения Кумайри». В армянской библиографии Кумайри (под названием Кумри) снова упоминается в 1209 г.,

как поселок. В рукописной надписи библии, которая охраняется в ММ (№ 1886, с. 1), говорится: «Я грешник, а позже ставший верующим Овасап, являюсь родом и племенем из великого поселка Кумыро...», то есть, в 1209г. Кумайри являлся большим поселком и уже больше под названием Кумайри, Кумири, или под каким либо другим названием не упоминается до начала XIX в. Особыми источниками являются поминальные надписи церквей и главных зданий Александрополя. Об Александрополе так же упоминает Гевонд Алишан в своем труде «Ширак».

Основанные в Ленинакане - Гюмри родники-памятники, монументы и поминальные доски так же являются важными первоисточниками, эти памятники имеют важные культурные особенности, фазы развития, типы. Важен так же анализ информации, которую содержат эти памятники. На территории Гюмри и Республики Армения культура родников-памятников, монументов и поминальных досок начала развиваться с конца XIX и в XX вв.

Прообразами родников-памятников построенных на территории Александрополя - Гюмри можно считать «камни-вишапы» (некоторые из которых обнаружены на горе Арагац) и стелы Арташеса (Бениамин, Ширакаван). Ярким свидетельством существования родников-памятников является повесть Мкртыча Армена «Эгнар Агбюр», в которой мастер Мкртыч сотворил сорок таких родников, на некоторых из них были надписи. Конечно - эти надписи имели разное содержание. Несколько свидетельств о таких родниках-памятниках сохранилось по наши дни. Строительство родников-памятников Ленинакана продолжается и в советское время, в некоторых случаях - эти памятники становятся более пространственными, чем раньше и начинают совмещать ряд нескольких архитектурных типов. На территории Гюмри число мемориалов не более десятка. В своем исполнении они сочетают традиции памятников-родников, мемориальных досок и скульптуры. Такими памятниками являются «Мать Армения», «Памяти А. Пушкина», «Тысячелетняя Ани», «Каменная книга», южный вход в город - «Герб города», «Мемориал жертвам Великой отечественной войны», «Память жертв землетрясения». Сегодня в городе насчитывается более ста родников – памятников на которых имеется множество надписей, эти родники датируются как советским, так и пост советским периодом и являются ярким проявлением мемориальной культуры. Такие родники-памятники построены как в кварталах города Слободка, Турки майла, Боши майла, так и на центральных улицах Гюмри. Такие родники строились и строятся в память о людях или для увековечения важных событий.

В Гюмри наряду с родниками-памятниками большое количество составляют мемориальные доски, которые поставлены в честь знаменитых людей и событий и имеют познавательное, образовательное и воспитательное значение. Мемориальные доски поставленные на территории Ленинакана-Гюмри хронологически подразделяются на две группы:

1. Мемориальные доски советского периода.
2. Мемориальные доски постсоветского периода.

Родники-памятники, мемориалы и мемориальные доски похожи друг на друга надписями, мотивами орнаментов, решениями содержания.

Сотрудники музея-заповедника «Кумайри» насчитали более пяти десятка памятных досок, которые зарегистрированы в качестве культурных единиц, которые разнообразны по своему стилю, конфигурацией и содержанию. Они разнообразны по своему стилю, содержанию, характеру исполнения. В 2016г. в результате Четырехдневной войны количество поминальных досок в городе возросло на один десяток. Непревосходима воспитательная суть

последних, так как у юного поколения воспитывается патриотизм, самоотверженность, преданность армянскому народу.

**Inga AVAGYAN, Paruyr ZAKARYAN (Armenia)**

"Kumayri" Historical-Cultural Reserve-Museum (Gyumri)

e-mail: kumayriargelots-tangaran@mail.ru

## **MEMORIAL CULTURE OF ALEXANDRAPOL - GYUMRI**

The memorial culture in Shirak dates back to centuries, manifesting itself in the Aragats petroglyphs, and reaches the culmination point of development in the Urartu era, when four important sources were carved out of the Argishti campaigns in Shirak (the cuneiform texts of Sarykamysch, Kulidzhan and Marmashen and recently discovered bead from agate of the Van museum). Memorial references in medieval sources are also numerous.

In the medieval sources of the VIII. AD. the settlement called Kumayri is mentioned by the historian Ghevond in 774 on the occasion of the anti-Arab uprising: "... reached the province of Shirak, the village of Kumayri." In the Armenian bibliography Kumayri (in the form of Qumri) is again mentioned in 1209 as a village settlement. In the handwritten inscription of the manuscript, which is protected in MM (N. 1886, p. 1) is said: "I am a sinner, and later became a believer Ovasaps, I come from the great village of Kumyro ...", that is to say, in 1209 Kumayri was a large village and is no longer mentioned under the name Kumayri, Kumiri, or under any other name until the beginning of the 19th century. The special sources are the memorial inscriptions of churches and the main buildings of Alexandropol. Gavond Alishan has some references on Alexandropol in his work "Shirak".

The memory sources, monuments and memorial boards set up in Leninakan - Gyumri are also important primary sources, these monuments have important cultural features, development stages, types. The analysis of the information contained in these monuments is also of great importance. On the territory of Gyumri and the Republic of Armenia, the culture of memorial boards began to develop from the end of the 19th and 20th centuries.

In Gyumri, along with the memorial boards, which are set in honor of famous people and events have cognitive, educational and didactic value. Plaques placed on the territory of Leninakan-Gyumri are chronologically divided into two groups:

1. Memorial plaques of the Soviet period.
2. Memorial plaques of the post-Soviet period.

The memorial plaques, monuments are alike with inscriptions, motifs of ornaments, decisions of the content.

Employees of the Museum-Reserve "Kumayri" recorded more than five dozen memorial plaques, which are registered as cultural units, which are diverse in their style, configuration and content. They are diverse in their style, content, nature of performance. In 2016 as a result of the Four-Day War, the number of memorial plaques in the city increased by one dozen. The educational essence of the latter is unmatched, since the younger generation brings up patriotism, selflessness, and devotion to the Armenian people.

**Քնարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ (Հայաստան)**

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա (Երևան)

Էլ. փոստ՝ knarik\_avetisyan@hotmail.com

**ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ**

19-րդ դարից քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացման նոր փուլ թևակոխած Հայաստանի մշակութային կյանքում Ալեքսանդրապոլ-Գյումրու կարևոր դերի վկայություններից է այն, որ այստեղ են հիմնադրվել կրթամշակութային առաջին հաստատությունները (Արդության հայ օրիորդաց դպրոց, մանկավարժական թեքումով միջնակարգ դպրոց, նկարչական դպրոց), բեմադրվել են առաջին թատերական ու օպերային ներկայացումները, շարունակել են զարգանալ ավանդական արհեստները, առաջացել են նորերը:

Հայաստանում գեղարվեստական կրթության ձևավորման ակունքներում գտնվող Գյումրու նկարչական դպրոցի գործունեությանը նվիրված հաղորդման մեջ հետազոտվում են ուսումնական հաստատության պատմությանը, մասնագիտական կրթության սկզբնավորման ու զարգացման գործում նրա ունեցած դերակատարությանն առնչվող հարցեր, անդրադարձ է կատարվում մանկավարժ նկարիչների և նրանց սաների ստեղծագործական աշխատանքին:

1920թ. որպես նկարչական ստուդիա հիմնադրված կրթարանի (1936-ից՝ քառամյա նկարչական դպրոց, 1947-ից՝ Սերգեյ Մերկուրովի անվան) առաջին ուսուցիչներն էին Գևորգ Բրուսյանը, Ստեփան Ալթունյանը, Մամիկոն Փանոսյանը, Եղիսաբեթ Պատկանյանը, որոնց սաներից շատերի (Կորյուն Սիմոնյան, Լևոն Տոնականյան, Վանիկ Կարապետյան, Հմայակ Ավետիսյան, Սարգիս Ալեքսանյան, Անդրանիկ Մարկոսյան և ուրիշներ) համար նկարչությունը դարձավ ոչ միայն մասնագիտություն, այլև կոչում: Հայաստանում և նրա սահմաններից դուրս մեծ ճանաչում ունեցող արվեստագետներից շատերն այստեղ են սկսել իրենց առաջին քայլերը: Շուրջ մեկ դար անընդմեջ գործող նկարչական դպրոցի գործունեությունը յուրովի է նպաստել Գյումրու և տարածաշրջանի գեղարվեստական կյանքի, ինչպես նաև ինքնատիպ գեղանկարչական դպրոցի ձևավորմանը:



**Кнарик АВETИСЯН (Армения)**

Государственная академия художеств Армении (Ереван)

e-mail: knarik\_avetisyan@hotmail.com

## **ХУДОЖЕСТВЕННАЯ ШКОЛА ЛЕНИНАКАНА В ИСТОКАХ ХУДОЖЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ**

Неоценимую роль в культурной жизни Армении, вступившей с XIX века в новый этап политического, социально-экономического развития сыграл город Александрополь-Гюмри. Свидетельством является то, что именно здесь были основаны первые культурно-образовательные учреждения – женская гимназия Аргутян, средняя школа с педагогическим уклоном, художественная студия и школа. Тогда же были поставлены первые театральные и оперные спектакли, развивались традиционные национальные ремесла, зарождались новые.

В статье, посвященной деятельности художественной школы в Гюмри, находящейся в истоках формирования художественного образования Армении, исследуются история учебного заведения, вопросы, касающиеся формирования и развития профессионального обучения, а также художественные произведения преподавателей и студентов.

Первыми преподавателями в основанной в 1920 году художественной студии (с 1936 года – художественная школа с 4-годичным обучением, в 1947 году названа именем Сергея Меркурова) были Геворг Брутян, Степан Алтунян, Мамикон Паносян, Егисабет Патканын. Для многих выпускников – Ваника Карапетяна, Корюна Симоняна, Левона Тонаканына, Амаяка Аветисяна, Саркиса Алексяна, Андраника Маркосяна живопись стала не столько профессией, сколько призванием. Именно здесь свои первые шаги начали большинство художников, в дальнейшем получивших признание в Армении и за ее пределами. Непрерывная, почти вековая деятельность этой художественной школы, возымела большое влияние на формирование и самобытность художественной жизни Гюмри и региона.

**Knarik AVETISYAN (Armenia)**

State Academy of Fine Arts (Yerevan)

e-mail: knarik\_avetisyan@hotmail.com

## **THE LENINAKAN DRAWING SCHOOL IN THE SOURCE OF ART EDUCATION**

Starting from the 19th century the cultural life of Armenia entered a new stage of political and social-economic development. The significant role of Alexandropol-Gyumri was then illustrated by the first educational-cultural institutions (the Arghutian School for Girls) and secondary pedagogical and drawing school established there, as well as by the first theatrical and opera performances staged, by continuously developing crafts and the new ones.

The paper is devoted to the study of the activity of Gyumri Drawing School as being in the Source of the development of Armenia's art education. A study of issues is made on the

significance of the history as well as the formation and development of professional education of this institution; the creative work of the pedagogue-artists and their alumni is being touched upon.

The school was established in 1920 as a drawing studio (it was a four-year drawing school from 1936, and from 1947 was named after Sergey Merkurov).

Gevorg Brutian, Stepan Altunian, Mamikon Panosian and Elizabeth Patkanian were the first teachers of the school. For most of their alumni (Koryun Simonian, Levon Tonakanian, Vanik Karapetian, Hmayak Avetisian, Sargis Aleksanian, Andranik Markosian and others) drawing became not only a profession, but also a vocation. Many artists renowned in Armenia and abroad made their first steps in art here. The activity of the drawing school, active about a century, in its own way contributed to the artistic life of Gyumri and the region in general, as well as to the formation of the original painting school.

### Գագիկ ԳԻՆՈՍՅԱՆ (Հայաստան)

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ (Երևան)

Էլ. փոստ՝ gagik.ginosyan1966@gmail.com

## ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՍԵՐՆԴԻ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ

*«Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը,  
մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը»:  
Կոմիտաս*

**Յուրաքանչյուր ազգի**, մանավանդ նրա հոգեբանությանն ու բնութագրի և դրանք ձևավորող սրբությունների մասին կարելի է դատել ըստ նրա հավատալիքների, պաշտամունքների և ըստ այնմ, թե իր արժեհամակարգում բնության որ դրսևորումները, իր բնաշխարհին բնորոշ բնակլիմայական որ առանձնահատկությունները, իրենց շրջապատող կենդանական աշխարհի որ ներկայացուցչի որ հատկանիշները, մարդկային հոգեբանության որ դրսևորումներն են տվյալ ազգի մեջ առաջացրել ակնաձանք, ապա և վերածվել պաշտամունքի դեռևս վաղնջական ժամանակներից:

Կարող է թվալ, որ մշակույթն այնքան էլ սերտ կապեր չունի մեր հավատալիքների, մեր ազգային արժեհամակարգի հետ, և դա անհատի կամ հասարակության կուլեկտիվ ստեղծագործական մտքի, նրանց հույզերի, երազանքների արտացոլքն է: Սակայն մշակութային ստեղծագործական որևէ դրսևորում չի կարող չկրել ազգի, մասնավորաբար տվյալ համայնքի, հանրության տվյալ հատվածի վրա իր հավատալիքների և ընդհանուր արժեհամակարգի կնիքը:

Հային բնորոշ գծերը, բարքն ու քաղաքակրթության աստիճանն արտացոլող պարավեստը հազարամյակների միջով անցկացրել և մեր ժամանակների դատին է հանձնել շուրջ երկու տասնյակի հասնող պարատեսակ և երկու-երեք հազարի հասնող պարանմուշ, որոնք շարժողական համակարգի նույն արմատներն ու մեկնություններն ունենալով հանդերձ, տարածաշրջանային առումով ունեն ավելի քան հստակ և շատ յուրօրինակ տարբերակումներ, ինչը բնորոշ է նաև հայոց լեզվին, որը նույնպես նույն բառարմատներն ունենալով հանդերձ, նաև ունի բարբառային հսկա տարանջատումներ և ինքնատիպություն:

**Լեզվի և մշակույթի, մասնավորաբար, պարի մեջ եղած այս ընդհանրությունը ապացուցում է,** որ յուրաքանչյուր ազգի լեզվի և մշակույթի միջոցով է գլխավորապես ձևավորում ազգային արժեհամակարգը, որն ուրվագծում է ազգի հոգևոր կերպն ու ազդում նրա յուրաքանչյուր ներկայացուցչի ինքնության արտացոլման վրա:

Մեզ հաճախ կարող է թվալ, որ տարբեր մշակույթներ ներագդել են իրար վրա և ինչ-որ չափով խաչասերվել են, մանավանդ հաշվի առնելով, որ հին ժամանակներում բոլոր մշակույթներն ունեին միասնական դրսևորում, որն ընդհանուր անվամբ կարելի է կոչել թատերականացված գործողություն: Այդ խոհերն էին, որ մեզ հանգեցրին Ազգագրական թատրոնի (Etno կամ Folk Teatre) ստեղծման անհրաժեշտությանը, ուր ներառված էին ավանդական երգ-երաժշտությունը, պարը, ծեսերն ու ավանդազրույցները, ազգային խաղերն ու նաև տարածքի հավատալիքային ավանդական ձևավորումը: 2007 թվականին բեմ բարձրացված առաջին նմուշն արդեն, նախ մեզ, ապա և հանդիսատեսին համոզեց մշակութային բազմաձևության, մշակութային ընդհանրականության, սինկրետիկ արվեստի (syncretic culture – ռիթմի, շարժումների, երաժշտության և ձայնի համադրման մշակույթ) կարևորության մեջ, ասելիքն ավելի ամբողջական դարձնելու և ի սկզբանե դերասանի, պարողի, կատարողի ապրումներն ամբողջապես դրսևորվելու համար: Առանց բացառելու արվեստների փոխազդեցությունն ու արվեստի յուրաքանչյուր ճյուղի զարգացման վրա հարակից արվեստների ազդեցությունը, այնուամենայնիվ պետք է փաստենք, որ յուրաքանչյուր ազգի հավատալիքները, հոգևոր և աշխարհիկ արժեհավանարգն է, որ ճառագայթաձև ազդել է արվեստներից յուրաքանչյուրի վրա՝ հաճախ ի սկզբանե ձևավորելով այս կամ այն արվեստի կառուցվածքային հիմնադրույթները:

**Վաղուց ապացուցված է,** որ որոշակի շարժումների ռիթմիկ կրկնությունը հիմնարար դեր է խաղում մարդկային հոգեբանության ձևավորման վրա: Հետևաբար, երբ մի ամբողջ համայնք, երբեմն նաև մի ամբողջ ազգ կատարում է միասնական, միանման շարժումներ նույն ռիթմի ներդաշնակության ներքո, ապա տրամաբանորեն սովյալ համայնքի, կամ ազգի մեջ ձևավորվում է միանման, ներդաշնակ հոգեբանություն և նույնանման արժեհամակարգ...

**Յուրաքանչյուր ազգ կամ նրա մի հատված, սովյալ հատվածն իր ամբողջականությամբ գերազանցապես ռիթմ է:** Մեր մարմնի բնագրական շարժումների մեջ

գոյություն ունեն անմիջական կապակցություններ, որոնց շարունակականությունը կազմում, գոյացնում է ռիթմը և մեր հոգեկան կյանքի ձևահայտնությունը: Ռիթմն է, որ գոյացման վիճակի է հասցնում ոգին, ուղղություն տալիս նրան, շեշտավորում, ներդաշնակում և մանավանդ պահում է այն տևականը, այն անմիջականը և ինքնուրույնը, որոնք կազմում են մարդու կամ ազգի հոգեկան դիմագիծը: Եվ երբ պատահում է պարագաների բերումով, որ ցեղը կամ ժողովուրդը կորցնում է, մոռանում է իր կշռույթային ինքնուրույնությունը, նա դառնում է խառնածին քանակ, բոլոր հոսանքները ընդունող և ոչ մի հոսանքին չպատկանող, բոլոր պարերը պարող, բայց հոգեպես մերկ և մշտնջենապես անպար:

Մեծ մշակույթները, այդ թվում և հայկականը, միշտ էլ առաջ են եկել հակառակ առարկայական, տնտեսական և քաղաքական պայմանների: Մշակույթը, եթե ուզում եք, հոգեկան արկածախնդրություն է. վսեմ մի խենթություն, որով տիեզերքը գտնում է իր իմաստը: Մշակույթը պահանջում է մեծ ճիգ, հավատք և զոհաբերություն՝ առաքինություններ, որոնցով հայ ժողովուրդը լիովին օժտված է: Այլապես հնարավոր չէ հասկանալ նրա ամբողջ պատմությունը, նրա դարավոր մարտիրոսությունը, թափած արյան իմաստը:

**Հաճախ տարբեր առիթներով կարող ենք լսել տեսակետ**, որ ազգայինը, հատկապես ավանդականը, խոչնդոտում են համամարդկայինի ընկալմանը: Ավանդական մշակույթը, մասնավորաբար պարը ոչ թե Չինական պարիսպ է, որով ազգերը փորձում են իրենց սահմանազատել, կղզիանալ, առավել ևս հակադրվել, այլ դա յուրաքանչյուր ազգի կղզին մայրցամաքին կապող կամուրջն է, որն առնվազն պիտի այդ կղզին թերակղզու վերածի:

**Ճենց այս համոզմունքն էր**, որ մոտ տասնհինգ տարի առաջ մեզ մդեց արհեստածին սովետական մշակույթի կողմից կյանքից, կենցաղից դուրս մղվող ավանդական մշակույթը պարերի բաց դասերի միջոցով նոր սերնդին վերադարձնելու: Դրանց շնորհիվ ավանդական պարարվեստի նկատմամբ ժողովրդի մեջ աճող հետաքրքրությունը նոր սերնդի սեփական ինքնությունը վերագտնելու ապացույցը եղավ: Ավանդական մշակույթի նկատմամբ անընդհատ աճող հետաքրքրությունը ծնեց սիրողական կամ կիսապրոֆեսիոնալ խմբեր, և ի վերջո հանգեցրեց մեզ մի կարևոր վճռի:

**Ազգային երգ ու պար առարկան**՝ որպես հանրակրթական հիմնական առարկա, ներդնել Հայաստանի կրթական համակարգ: Կառավարության որոշումով սկզբում որպես փորձարարական, այժմ արդեն որպես հիմնական առարկա Ազգային երգ ու պար առարկան արդեն վեցերորդ ուսումնական տարին է, որ 230-ում դպրոցներից դասավանդվում է: Այս ուսումնական տարում դրանց կմիանա ևս 100 դպրոց: Առարկան սկսել է ներդրվել նաև Արցախի Հանրապետությունում, և ներդրման գործընթացը շարունակվում է:

**Մենք կորցրել ենք այն ընդհանրությունը, մեր համայնքային արժեհամակարգը, որ առաջ սերնդե սերունդ էր փոխանցվում** ծեսերի և ավանդական մշակույթի միջոցով: Կարծում եմ՝ նման դպրոցական առարկաներով է պետք փորձել վերականգնել սերունդների միջև արժեհամակարգի փոխանցման խզված կապն ու նոր սերնդին փոխանցել համայնքային, ազգային արժեհամակարգ: Նման հասարակությունում, որտեղ արժեհամակարգը հիմնավոր է և զորեղ, միգրացիան ավելի չնչին է: Որտեղ մարդն ինքն իրեն զգում է իր համայնքային արժեհամակարգի, հավատալիքների կրողը, շատ մեծ դժվարությամբ է իր հասարակության արժեհամակարգը փոխարինում մեկ այլ՝ օտարի արժեհամակարգով:

**Կաքավագիր (Կինետոգրաֆիա)**

Պարը ոչ միայն շարժում է, այլև հոգևոր ընկալում, հուզական վերապրում և հավատալիքների ամրագրում, և այս դեպքում, եթե օգտվում ենք կաքավագրից, ուրեմն մենք կարող ենք այն չափելի դարձնել, ինչպես որ երաժշտութեան մեջ նույնն իրականացնում է սուֆեջիոն: Հայ էթնոպարագիտության հիմնադիր Սրբուհի Լիսիցյանը հրապարակել է պարերի գրառման համակարգ, որը կոչել է Կինետոգրաֆիա, քանզի այն միայն պարեր գրառելու համակարգ չէ, այլ հենց շարժումների գրառման համակարգ: Այն ուշագրավ է ոչ միայն իր ունիվերսալությամբ, այլ հատկապես կիրառման պարզությամբ և տեսողական մատչելիությամբ: Այսպես ասած, պարերի սուֆեջիոյի դերը ավանդական պարավեստում անգնահատելի է: Պարը հուզականությունից չզրկելը, անհրաժեշտ է այն հնարավորինս ճշգրիտ բանաձևելու համար և պիտի հնարավորություն տա այն ճիշտ վերլուծելու և չափելի դարձնելու և՛ որպես ֆիզիկական շարժում, և՛ նույնիսկ որպես հուզական երևույթ:

Այդ իսկ պատճառով մենք փորձեցինք Կինետոգրաֆիայի համակարգը վերածել համակարգչային ծրագրի, որն ավելի կպարզեցնի ու ավելի մատչելի կդարձնի գրառման համակարգը, այն կդարձնի ավելի արագաշարժ, և որ պակաս կարևոր չէ, շարժումների գրառմանն ավելի լայն հնարավորություն կընձեռի: Այդ համակարգչային ծրագիրը կոչեցինք Կաքավագիր, քանի, որ հին հայերենում *պարել* բայը նույնացվում էր *կաքավել* բային, որի հիմքում, կաքավի, ընդհանրապես թռչունների հայկական հնագույն պաշտամունքն է, թռչունների շարժումների ընդօրինակումը:

**Այս համակարգով արդեն գրառել և արխիվացրել ենք** երկու տասնյակ պար: Սրանով հնարավոր է ոչ միայն հայկական պարեր գրառել, այլև աշխարհի յուրաքանչյուր պար, մարդկային ցանկացած շարժում:

**Յուրաքանչյուր ազգի ծեսն** ու ավանդական մշակույթը վերադարձնելով երիտասարդներին՝ մենք լայն հնարավորություն ենք ընձեռում նոր սերնդին ինքնաձանաչ դառնալու, ընդառաջ քայլելու նոր ժամանակների մարտահրավերներին:

Այս բոլոր դրույթներն ու վերլուծությունները հանգեցնում են այն համոզմունքին, որ **ավանդական մշակույթը նոր սերնդի ինքնաձանաչողության ձևավորման հիմնասյունն է:**

**Гагик ГИНОСЯН (Армения)**

Музей-институт Комитаса (Ереван)

e-mail: gagik.ginosyan1966@gmail.com

## ТРАДИЦИОННАЯ КУЛЬТУРА КАК ОСНОВА ФОРМИРОВАНИЯ САМОВОСПРИЯТИЯ НОВОГО ПОКОЛЕНИЯ

*«Танец изображает все черты, особенно нрав  
и степень цивилизованности, присущий определенному народу»  
Комитас*

О менталитете, мировоззрении, мышлении, особенностях ценностной системы *любого народа* можно составить представление, исследуя его убеждения, предметы поклонения, представления о добрых и злых силах. Последние отражаются в быте, духовных и материальных предметах искусства. Народные особенности более вещественно изображаются в различных проявлениях искусства: в песнях, танцах, риторических и рукотворных работах.

Армянское искусство отражает черты, нрав и степень цивилизованности, присущие армянскому народу. Несмотря на то, что традиционные танцы, насчитывающие более чем 2000-3000 образцов, имеют одинаковые корни с точки зрения опорнодвигательной системы, они также имеют ярко выраженные различия, позволяющие четко различить армянские танцы от остальных.

Театрализованные танцевальные церемонии служат средством обучения людей секретам знаний и передачи их из поколения в поколение. Во время мужских церемоний освящения (инициация), молодежь знакомится с секретами общества, целой системой культуры – материальной и духовной.

Важность культурных разнообразий, синкретичной культуры, служит для придания чувствам исполнителя большую целостность.

*Давно доказано, что ритмичное повторение определенных движений играет важную роль в формировании человеческой психологии. Следовательно, когда целая община, единый народ исполняет единые движения под одинаковым ритмом, логично, что данная община или народ формирует единую, гармоничную психологию и систему ценностей. Каждый народ или его определенная часть в своем единстве – ритм.*

Часто по разным случаям мы слышим, что народное, особенно традиционное, мешают всеобщему восприятию, иногда становясь основой международных конфликтов. Традиционная культура, особенно танец – это не Китайская стена, при помощи которой народы пытаются разделить, оградить друг друга, а самая могущественная связь, мост, связывающий остров с материком.

*Именно это убеждение* приблизительно 15 лет назад заставило нас возвратиться к истокам, с помощью открытых уроков включить *народные песни и пляски* в основную школьную программу общеобразовательных учреждений Армении.

Четко представляя, что танец, культура, убеждения – это эмоциональный фон, комплексы, связанные с правильной трактовкой, тем более с правильным воспроизведением становяться более чем ясны, ровно так же, как музыка систематизируется и отмеряется нотной системой. Именно поэтому мы опробовали систему *Кинетографии* Лисициана,

который не только упростит и делает более доступной систему записи, но и привысит ее скорость, и даст записи движений более широкие возможности.

Традиционную культуру необходимо вернуть новому поколению с целью придания духа для противостояния новым проблемам, что в свою очередь приводит к тому убеждению, что *традиционная культура - основа формирования самовосприятия нового поколения.*

**Gagik GINOSYAN (Armenia)**

Komitas Museum-Institute (Yerevan)

e-mail: gagik.ginosyan1966@gmail.com

## **TRADITIONAL CULTURE AS THE BASIS FOR THE FORMATION OF SELF-COGNITION OF A NEW GENERATION.**

*“Dance portrays all the traits, especially the temper  
and degree of civilization of certain nation”*

*Komitas*

You can form an idea about the mentality, worldview, thinking, features of the value system of **any nation**, exploring its beliefs, objects of worship, ideas about good and evil. The latter are reflected in everyday life, spiritual and material pieces of art. Folk features are more materially depicted in various manifestations of art: in songs, dances, rhetorical and hand-made works.

Armenian art reflects the traits, character and degree of civilization inherent in the Armenian people. Despite the fact that traditional dances (more than 2000-3000 samples) have the same roots, they also have differences that clearly distinguish Armenian dances from the rest.

Drama dance ceremonies serve as a means of teaching people the secrets of knowledge and passing them on from generation to generation. During men's consecration (initiation) ceremonies, young people get acquainted with the secrets of society, the whole material and spiritual system of culture.

The importance of cultural diversity, syncretic culture, serves to give the performer a greater sense of integrity.

**It has been proven** that the rhythmic repetition of certain movements plays an important role in the formation of human psychology. Consequently, when a whole community, a single nation performs single movements under the same rhythm, it is logical that the community or people form a common, harmonious psychology and value scheme. **Every nation or its particular part in its unity is a rhythm.**

Often in different cases we hear that national, especially traditional, interfere with universal perception, sometimes becoming the basis of international conflicts. Traditional culture, especially dance, is not the Wall of China, with the help of which people are trying to divide, protect each other, but the most powerful way together, we would say the bridge connecting the island with the mainland.

About 15 years ago, **this conviction** led us to return to basics with the help of open lessons and, finally, the inclusion of **folk songs and dances** in the main school curriculum of educational institutions in Armenia.

Clearly realizing that dance, culture, beliefs are an emotional background, complexes associated with correct interpretation, especially with correct reproduction become more than clear, just as music is systematized and measured by a musical system. That is why we tried Lisitsyan's **Kinettography** system, which not only simplifies and makes the recording system more accessible, but also increases its speed, and gives movement recordings more opportunities.

Traditional culture needs to be brought back to the new generation in order to give spirit to the new problems.

Which in turn leads to the conviction that **traditional culture is the basis for the formation of self-perception of a new generation.**

**Ալվարդ ԳՐԻԳՈՐՅԱՆ (Հայաստան)**

ՀՊՄՀ-ի պատմության թանգարան (Երևան)

Էլ. փոստ՝ aspumuseum@gmail.com

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ՄԿՁԲԻՆ**

Comparisons, borrowings, epithets are also peculiar to the language thinking of the people, for example, **like the sun**, phrases: **dry head, heart will give**, etc. Phrases such as morphological and syntactic language forms, for example, “**I have a star crown on my forehead**” add poetic language to the literature and deepen the perception of aesthetic features.

The language of the poem “Abu-Lala Maari” is quite differs. It's an invaluable sample of the beauty of the Eastern Armenian language. The writer provided eloquence in the poem with unpredictability, unusually combining the words, and using new expressive words in a new and bold way, for example, **peace-making freedom, painfully-tormenting blood, rainbow feather birds** and others. Esthetically are not comparable the descriptive and expressive means of language. Concerning to the poem “Mher from Sasun” Isaakyan doesn't follow to the developing of language means of that time, but he tries to create the eloquence of Armenian epos, combining Eastern Armenian Literary with Karno Dialect, but never use the Sasun Dialect. As a fact, three poems of the “Master” in Language aspect are very different, but from the point of language consistency and content, each of the poems in its kind is a literary perfection, the art sample.

#### Աստղիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (Հայաստան)

Շիրակի պետական համալսարան (Գյումրի)

Էլ.փոստ՝ a\_hayrapetyan@list.ru

#### ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ՏԱՂԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ միջնադարյան տաղերգությունը մշակույթի հատուկ, աննախադեպ դրսևորում է ոչ միայն թեմատիկ-բովանդակային առումով: Հաջորդելով գրաբարով ստեղծված բարձրարվեստ գրականությանը՝ այն միանգամայն տարբեր և նոր երևույթ էր իբրև խոսքարվեստ և դրանով այսօր էլ արժեքավոր է և՛ հիշատակված, և՛ լեզվաոճական առումով:

Տաղերգության լեզվական մշակույթը բնութագրվում է բազում իրակություններով ու նրբերանգներով: Սակայն այս աշխատանքում մենք փորձել ենք քննել հայ միջնադարյան տաղերգության բնորոշ լեզվամիջոցներից դարձվածքները՝ ընդգծելով դրանց բովանդակային-ոճական առանձնահատկությունները, կիրառման նրբերանգները:

Նշենք, որ «Նոր հայկազեան բառարան»-ում տաղերգությունը ներկայացված է իբրև *տաղասացություն, երգասացություն*<sup>1</sup>: Այդ իմաստով *տաղերգություն* եզրն առաջին անգամ վկայվել է 12-րդ դարի հեղինակ Ներսես Լամբրոնացու «Գովեստ ներբողական, պատմագրական բանի» չափածո երկում<sup>2</sup>:

Հասկանալի է, որ տաղերգության լեզուն հիմնականում միջին հայերենն է, և դարձվածքներն էլ բնորոշ են լեզվի այդ գոյավիճակին:

Տաղերգությունն աչքի է ընկնում անմիջականությամբ և զգացմունքային խորությամբ, իսկ դարձվածքները, լինելով վերաիմաստավորված կայուն կապակցություններ, օժտված են հուզաարտահայտչական մեծ լիցքով: Ըստ քերականական ձևերի դրսևորման՝ տաղերում վկայված դարձվածային միավորները կարելի է բաժանել երկու խմբի՝ *գրաբարյան* և *խոսակցական* կամ *միջինհայերենյան*: Պարզ է, որ միջին հայերենի շրջանում գրաբարյան լեզվական այլ տարրերի շարքում առկա էին նաև դարձվածքներ:

Գրաբարյան համարել ենք այն դարձվածքները, որ վկայվել են ՆՀԲ - ում կամ իրենց բնույթով ու քերականական դրսևորմամբ գրաբարին չեն հակասում, օրինակ, *յանձն առնել, յերկինս վերանալ, նայիլ քաղցր աչօք, ակն ունել, ազդ առնել, մեղաւք ոտնակապել, ընտրելոց ամպով թռչել, խորհուրդ անել, վրեժ խնդրել, դարձ գալ, յոտքն անկանել* և այլն: Ընդ որում, Պ. Բեդիրյանը գրաբարյան դարձվածքների համար որպես առաջին առանձնահատկություն նշում է նախդիրների առկայությունը, ապա շարադասության՝ «արևելյան հայերենի համար անթույլատրելի շրջումը և ի վերջո, գրաբարյան դարձվածքների կոտորությունը, որոնք թույլ են տալիս դարձվածքներն ընդմիջարկել այլ խոսքային միավորներով<sup>3</sup>»:

Գրաբարյան դարձվածքների շարքում իմաստային առումով առանձնանում են աստվածաշնչյան դարձվածքները, ինչպես՝ *անարծաթ բժիշկ, անառակ որդի, Քրիստոսի արեամբդ գնուածք, հրեշտակի փողի կոչում*//*Գաբրիէլեան փողի գոչում, լուսոյ որդի, կենդանի ջուր, Տէրն փառաց, հողեղէն սրովքէ, հոգւոյն ռոճիկ անել, հոգոյ աչքն բանալ, Ճշմարիտ է բանս, յետին մշակ, յարութեան ակն ունենալ, որդի մեղաց*:

Խոսելով միջինհայերենյան կամ խոսակցական դարձվածքների մասին՝ նշենք, որ ժողովրդախոսակցական տարրերի գործածությունն առկա է ընդհանրապես բոլոր ժամանակների և ազգերի գրողների գեղարվեստական մտածողության մեջ՝ անկախ նրանց նախընտրած ոճից և անհատական յուրահատկություններից, օրինակ, *ածել խելացն ի վերայ /ՖրԴ, 381/, աչացս լոյս /ՆԲ, 158/, արեան գետ լալ /ՖրԴ, 257/, բերանով երդում առնել /ՆԲ, 234/, ականջ անել /ՀԹ, 191/, անուն հանել /ՆԲ, 204/ և այլն:*

<sup>1</sup> Տե՛ս ՆՀԲ, հատոր 2, էջ 840:

<sup>2</sup> Տե՛ս Ներսիսյան Վ., Հայ միջնադարյան տաղերգության ժանրերն ու տաղաչափությունը (X-XVIII դդ.), Եր., 2008:

<sup>3</sup> Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 216-218:

Թեև դարձվածքների ճնշող մեծամասնությունը երկանդամ է, սակայն հանդիպում են նաև բազմանդամ միավորներ, ինչպես՝ բերել խելքն ի վերայ /ՖրՂ, 326/, գլխի եւ արեան գիրն տալ /ն. տ. , 260/, գայ գուլ առնու հոգին բերնի /ն. տ. , 265/, երեսն լինել ոտից կոխան /ն. տ. , 256/, զարհունն (ինչ-որ մեկի) ի վրա ձգել /ն. տ. , 376/, զգինին ի գլխոյն թափել /ն. տ. , 352/ և այլն:

Տաղերում առկա դարձվածքները կարելի է առանձնացնել ըստ իմաստային – շարահյուսական դասակարգման՝ դարձվածաբանական սերտաճում (յաչքից վարած /ՖրՂ, 314/, բերանով երդում *առնել /ՆԲ, 234/*), դարձվածաբանական միասնություն (սիրտ ունենալ /ՖրՂ, 270/, մորուս ոլորել /ն. տ., 329/), դարձվածային կապակցություն (գլխի եւ արեան գիրն տալ /ն. տ., 260/, սիրտն ի փորիդ առնու գալար /ն.տ., 477/ և այլն):

Առանձնանում են ասացվածքային բնույթ ունեցող դարձվածային միավորներ, ինչպես՝ Խիստ յիմար եւ անգէտ էի, այլ չէր երեկ ոտքս այս քարիս /ՖրՂ, 265/: Զինչ որ դու չափես այլոց, քեզ չափեն մէկին մէկ՝ մին այլ /ն. տ. , 359/: Զոտքդ քո չափով փոես եւ ապա լինիս շահաւոր /ն. տ. , 375/:

**Астхик АЙРАПЕТЯН (Армения)**

Ширакский государственный университет (Гюмри)

e-mail: a\_hayrapetyan@list.ru

## **ФРАЗЕОЛОГИЗМЫ В СРЕДНЕВЕКОВЫХ СТИХОТВОРНЫХ ТЕКСТАХ**

Армянская средневековая поэзия является беспрецедентным проявлением традиции не только в тематическо-содержательном плане. Высокохудожественная литература, созданная вслед за древнеармянским языком, отличается от всего и является новым в риторике и тем самым очень ценна в наши дни и в упомянутом, и в лингво-стилистическом аспекте.

Языковая традиция поэзии характеризуется разными фактами и нюансами. Но в этой работе мы попытались исследовать характерные для средневековой поэзии обороты языковых средств, подчеркивая их содержательно-стилистическую особенность и нюансы использования.

Отметим, что в Новом словаре Айказеан, поэзия представлена как *воспевание, песнопение*.<sup>1</sup> В этом смысле определение поэзии впервые было засвидетельствовано у автора XII века Нерсеса Ламбронаци в стихотворном произведении «Восхваление исторического».

Понятно, что поэтический язык в основном среднеармянский, и обороты речи соответственно свойственны языку этого периода.

Поэзия выделяется непосредственностью и глубиной чувств, а обороты речи, являясь переосмысленными устойчивыми сочетаниями, наделены огромным эмоциональным зарядом. Отметим, что по выраженным грамматическим формам фразеологические

<sup>1</sup> См. Новый словарь Айказеан (НСА), том 2, с. 840.

единицы в стихотворении можно разделить на 2 группы: древнеармянский и разговорный или среднеармянский. Ясно, что в среднеармянском языке между отдельными рядами присутствовали и фразеологизмы.

Древнеармянскими считались те обороты, которые включались в Новом словнике айказеан или по их характеру и грамматическому выражению не противопоставлены древнеармянскому, например, **советовать, исчезнуть с земли** и др. При этом для древнеармянских оборотов как первый признак П. Бедирян отмечает присутствие предлогов, потом синтаксическое «непозволительное смещение для восточноармянского, и наконец, компактность древнеармянских оборотов, которые позволяют этим оборотам прерываться другими единицами речи».

В ряде древнеармянских оборотов по смыслу выделяются библейские обороты как, например, **блудный сын, живая вода** и др.

Говоря о среднеармянском или об оборотах разговорной речи отметим, что использование элементов просторечия присуще всем писателям художественных произведений во всех временах, независимо от их выбранного стиля и личных особенностей, например, **заливаться слезами, дать волю слезам** (Фрик Диан, 257).

Хотя доминирующее большинство оборотов состоит из двух или трех слов, но встречаются и с большим составом, например, **ручаться за кого-то головой**.

Выделяются фразеологические единицы, имеющие поговорочный характер, например, «не была бы слишком дурой и невеждой, **не уткнулась бы носом** об этот камень» (Фрик Диан, 265).

**Astghik HAYRAPETYAN (Armenia)**

Shirak State University (Gyumri)

e-mail: a\_hayrapetyan@list.ru

## PHRASEOLOGICAL UNITS IN MEDIEVAL POETIC TEXTS

Armenian Middle Age poetry is a special, unrepeatable expression of traditions not only in thematically-contents point. Immediately after the creation of Old Armenian Language high literary poetry, it differs from everything before and presents something new in Rhetorics and that's why it is so valuable nowadays especially from linguo-stylistical point of view.

The poetry of language is characterized by different facts and nuances. But in this work we have tried to research the phrases which belong to the Middle Age poetry, underlining their content-stylistical peculiarities and nuances of use.

Let us note that in the new Aykazean Dictionary the poetry has been presented as *chanting, praise*. In this sense, the definition of poetry has been first used by the author of the XII century Nerses Lambronatsi in the poetic work "Praise of the Historical".

It is clear that the poetic language is mainly Middle Armenian, and the phrases of speech are correspondingly specific to the language of that period.

Poetry was distinguished by spontaneity and depth of feelings, and phrases of speech, being rethought stable combinations, are endowed with a huge emotional charge. It is worth

mentioning the fact that in the poem, the phraseological units can be divided into two groups according to their expressed grammatical forms: Old Armenian and colloquial or Middle Armenian. It is clear that between each row in the Middle Armenian language there were also idioms.

It was accepted to consider to the Old Armenian that phrases which were in the Aykazeen Dictionary or by their character and grammatical meanings have not been opposed to Old Armenian, e.g. **to give an advise, to disappear from the land**, etc. By the way for the Old Armenian phrases as a first sign P. Bediryan mentioned the presens of prepositions, then syntactic “unacceptable displacement for Eastern Armenian, and finally, the compactness of the ancient Armenian phrases, which allows these phrases to be interrupted by other units of speech.

In the row of Old Armenian phrases by their meanings, the biblical phrases can be singled out, e.g. **live water, prodigal son**, etc.

Talking about the Middle Armenian or about the colloquial phrases we are going to mention the usage of the common language elements are present in works of all writers of any time, independently of the style they have chosen and individual peculiarities, e.g. **to cry by the blood river**, etc. (Fric Dian, 257).

The dominant majority of phrases consist of two or three words, though there can be found with more numbers, for example, **to give a signature on the head and blood**, etc.

The phraseological units are studied which have a proverbial character, e.g. **If I not to be so fool and ignorant, I would not hit myself on this stone** (Fric Dian, 265).

#### Սերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Գյումրի)  
Էլ. փոստ՝ serhayr@mail.ru

#### ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ԳՅՈՒՄՐՈՒ ԽՈՍՎԱԾՔԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վերջին տասնամյակներին իրականացված ժողովրդագրական մանրաքննիչ ուսումնասիրություններն արձանագրում են, որ օգտվելով ցարական կառավարության ընձեռած արտոնություններից և հնարավորություններից՝ դարասկզբի ռուս-թուրքական պատերազմներին հաջորդած 1829-31թթ. ներգաղթերը շուրջ 1250 ընտանիք արևմտահայեր բերեցին Գյումրի, և արդեն 19-րդ դարի երեսնական թվականներին դրսեկ տարրը բացարձակ գերիշխող դարձավ նրա բնակչության կազմում: Եկվորների մեջ ճնշող մեծամասնություն էին Կարսից (600 ընտանիք), Բայազետից (մոտ 300 ընտանիք), Կարինից (200 ընտանիք), Բասենից ու Մուշից (մոտ 100-120 ընտանիք) գաղթածները՝ իրենց տնտեսական, նիստուկացի ու մշակույթի (նաև բարբառի) առանձնահատկու-

թյուններով (տե՛ս Ա.Հայրապետյան, Արևելյան Շիրակը 19-րդ դարի առաջին կեսին, 2005): Աննախադեպ եղավ նրանց դերը ոչ միայն օրավուր զարգացող նոր քաղաքի՝ Ալեքսանդրապոլի տնտեսական անընդհատ վերելքի մեջ, հասարակական կյանքի բուրն ոլորտներում, այլև քաղաքի ինքնատիպ հոգևոր դիմագծի կայացման և, վերջապես, բնակավայրի խոսակցական լեզվի ընդհանուր նորմերի ձևավորման մեջ:

Պատմաքաղաքական բուռն իրադարձություններով, հասարակարգային կտրուկ վայրիվերումներով, ժողովրդագրական աշխույժ տեղաշարժերով, նոր գրական արևելահայերենի հաղթարշավով ու այլ պատճառներով պայմանավորված՝ հետագա տասնամյակները, անշուշտ, փոփոխություններ ու փոխակերպումներ առաջացրին Կարնո բարբառի Գյումրու խոսվածքի ընդհանուր պատկերի մեջ, որոնք, ի դեպ, առաջնահերթորեն վերաբերում են նրա արդի բառային կազմին և համեմատաբար քիչ՝ հնչյունական և քերականական համակարգերին: Այնուհանդերձ տեղաշարժեր առկա են նաև Գյումրու խոսվածքի քերականական համակարգում, և դրանք, կարելի է համոզված պնդել՝ գերազանցապես ժամանակակից գրական հայերենի ազդեցության հետևանք են: Ստորև ներկայացվում են այդ փոփոխությունների հիմնական դրսևորումները.

ա) Գրեթե ավարտուն իրողություն է գոյականների թվի քերականական կարգի արտահայտումը – էր և ներ հոգնակիակերտ մասնիկներով (*մրգներ, սանդղոններ, որսներ, պարտքեր, բամբասանքներ*): Այսօր նրանցով են հոգնակիանում նաև ոչ հեռու անցյալում այլ հոգնակիակերտներ ունեցող շատ բառեր՝ *ա՞խպըրդիք-ա՞խպըրդանք-ա՞խպերներ, ամըննիք-ամըններ, կըղորդանք-կըղորդանքներ, բ՛աղնեստան-բ՛աղնեստաններ*: Խոսվածքում անչափ նեղացել է այն գոյականների շրջանակը, որոնց հոգնակին շարունակում է արտահայտվել գրաբարյան *ք* մասնիկով (*տըղէք, էրէխէք, խնամիք, քաղըրցիք, գյումրեցիք, բալէք, թուլէք* և այլն), թեև այս և այլ բառերի մի մաս էլ ներկայումս օգտագործում է նաև գրականին մոտ հոգնակիի ձևեր (*էրէխանէք, քաղըրցիներ*):

բ) Կարնո բարբառի հոլովման համակարգի առանձնահատկություններից մեկը որոշյալ սեռականի առկայությունն էր (*սեղանին վօք, տերդերին կընիզ*): Մակայն Գյումրու խոսվածքում սեռականը հիմնականում գրական լեզվի ազդեցությամբ վաղուց արդեն կորցրել է որոշիչ հոդը (*պատվի թոռ, ախպօր տըղա, ջ աղջի քար*):

գ) Թեև գոյականների ճնշող մեծամասնությունը (*էր-ներ*-ով հոգնակիացողները) հոգնակի սեռականում ստանում է *ու* հոլովիչ (*պատվըներ-պատվըներու, ա՞ղմըներ-ա՞ղմըներու*), մի որոշ մասն էլ (*ք*-ով հոգնակիացողները)՝ գրաբարը հիշեցնող *օց* վերջավորություն (*մարթիք-մարթօց, կընգըրդիք-կընգըրդօց, տըղէք-տըղօց*), սակայն վերջին շրջանում խոսակցական լեզվում այլ հոլովումների հաշվին ավելի գերակշռող և գործուն է դառնում *ի*-ով եզակի սեռականը (*տալ-տալօջ-տալի, կէտուր-կէտրօջ-կիսուրի, գ՛ըլօխ-գ՛ըլխու-գ՛ըլխի*), այլև՝ սեռականի հոգնակին (*պատվըներու-պատվըների, տըղօց-տըղէքի, ջայելներու-ջայելների* և այլն):

դ) Զգալիորեն աճել է այն գոյականների քանակը, որոնք եզակի և հոգնակի բացառականի *էն*-ով ձևերի կողքին գործածվում են նաև *ից/ուց* հոլովակերտով, ինչպես՝



*ձիւն-ձիւն ձիւրէն-ձիւրից, բալօցէն-բալէքից, մարթ-մարթէն-մարթուց, աստըծմէն-աստուց, գրլիւն-գրլիւն, գրլիւրնէրէն-գրլիւրնէրուց/ից, ձրնէն-ձրնից, տարվանէն-տարուց, տարիներէն-տարիներից* և այլն: Այդպէս էլ՝ գրականին ավելի է մոտեցել նաև գյումրեցիների արդի խոսվածքի գործիական հոլովածը (հմմտ.՝ *տարվընէրով-տարիներով, բ'ալօցով-բ'ալէքով, տըրթօցով-տըրէքով*):

ե) Գյումրու խոսվածքում համեմատաբար սակավ են Կարնո բարբառի ածականի, թվականի ու դերանվան փոփոխությունները: Դրանցից թերևս կարելի է նշել ածականի բաղդատականի կազմության մեջ մի ժամանակ բավականին գործուն *ջիլիզ* և *բէթար* թուրքերեն բառերի (երկրորդը՝ ժխտական իմաստով)՝ խոսվածքից գրեթէ ամբողջությամբ դուրս մղվելը (*ջիլիզ լավ, բէթար անհավատ*), *տագ*-ով բազմապատկական թվականների նվազ գործածական դառնալը (*իրէքտագ, հինգտագ*), դերանունների մեծ մասի *էն*-ով բացառականի փոխարեն *ից*-ով ձևերի ավելի հաճախակի դրսևորումները (*ու\*րդէղէն-ու\*րդից, մէզնէն-մէզնից, մէզէլէն-մէզէլից, ա\*մմէնէն-ա\*մմէնից, ա\*մմէն մէզէն-ա\*մմէն մէզից*):

զ) Ընդհանուր օրինաչափություններով հարազատ մնալով Կարնո բարբառի բայական համակարգին՝ Գյումրու խոսվածքը զերազանցապէս գրական լեզվի ազդեցությամբ ներկայումս մի շարք իրողություններով նկատելիորեն հեռացել է նրանից: Այսպէս՝ գյումրեցիների նոր սերունդները վաղակատարի *էր* վերջավորությունը վաղուց են փոխարինել *էլ*-ով (*աղալ-աղէր-աղէլ, տէսընէլ-տէսըրէր-տէսըրէլ*), և *էր*-ով վաղակատարը մնացել է թերևս գյումրեցի հնաբնակ ծերերի բերանում:

է) Գրեթէ մոռացության են մատնվել Կարնո բարբառին բնորոշ և գրական լեզվի համակցական դերբայը հիշեցնող *-դան* մասնիկով (թուրքերենի ազդեցություն) *լըսածդան, բէլածդան* և այլ դերբայական ձևերը (*չլըսածդան խօսքըս կըրիր*):

ը) Եթէ բարբառում սահմանական ներկայի ու անկատարի *կը/գը* մասնիկը սովորաբար հաջորդում է բաղաձայնակիզ բային (*սիրէմկը/սիրէմգը, մօրթէմկը*), իսկ ձայնավորակիզ բայերի վրա մասնիկն հավելվում է նաև սկզբից (*կուդէմկը, կէրթայիկը*), ապա Գյումրու արդի խոսվածքում առավել սովորական է դարձել *կը/գը* մասնիկի առաջադաս գործածությունը, ինչպէս՝ *կըսիրէմ, գ'ուլամ, կէրթայի, գ'ուգաք, կաշէնք* և այլն:

թ) Թերևս միայն հնաբնակների խոսքում կարելի է հանդիպել պատճառականի *վէրցուցի, խըմցուցինք* և նման այլ ձևերին, որոնց փոխարեն ներկայումս առավել գործածելի են գրականին նմանվող անցյալ կատարյալները (*վէրցըրէցի, խըմցըրէցինք* և այլն):

ժ) Բարբառի ինը տասնյակի հասնող փոխառյալ (զերազանցապէս թուրքերենից) մակբայների մեծ մասն այսօր մեր հաշվումներով Գյումրու խոսվածքում կա՛մ այլևս գործածական չէ (*արթըխ-հէտո, դաֆիլ-հանկարծ, սա\*դա\*-անընդհատ, ֆա\*րա\*զի-իզուր, սալթ-միայն* և այլն), կա՛մ պահպանվում է հնից եկող կայուն կապակցություններում, ինչպէս՝ *կողք բօլօրը կֆըրոռա, օրթայէն /մէջտէղից/ կուդէ, սա\*բըր էրա /համբերիր/, դըրա\*դ կայնի /առանձնացիր/, դ'ա\*գմա\* հալօվ /հէշտությամբ/* և այլն: Այդպէս էլ՝ խոսվածքի փոխառյալ կապերը, շաղկապներն ու ձայնարկություններն են (*սավայ-*

բացի, գ' յօրա-համեմատ, բ' աշտան-պես, ամա-բայց, թա\*քիլա-միայն թե, չունքի-որով-հետև, հայդէ/կոչ/, հա\*լլա, հա\*լլա-հա\*լլա /զարմանք/, քյաշկա/երանություն/ և այլն) վերջին տասնամյակներին դարձել չափազանց սակավ գործածական:

Ժա) Գյումրու խոսվածքի շարահյուսական համակարգը ըստ էության ամբողջապես Կարնո բարբառին է՝ իր հիմնական օրինաչափություններով առանց գրական հայերենից նկատելի տարբերությունների: Թերևս նշենք մի քանի աննշան իրողություններ, ինչպիսիք են, ասենք, թվական որոշի հետ գոյականի գերազանցապես եզակի լինելը (*հա\*գա\*ր հօգի, ի\*րէք ը\*նգէր*), կամ մեծաքանակ բակառությունները (*վօղնէրս հօգնավ, աչքէրս կըցավի, մաղնէրս մըրսսավ*), կամ հոլովաձևերի՝ գրականից տարբերվող մի քանի շարահյուսական կիրառությունները և այլն:

Մեր պատմության խորհրդային շրջանի հատկապես վերջին երկու-երեք տասնամյակները լեզվաշինության, մասնավորաբար, գրական հայերենի աննախադեպ զարգացման և նրա իրական հաղթարշավի տեսակետից եղան լրջագույն հաջողությունների ու ձեռքբերումների տարիներ: Նաև այս շրջանում է, որ Կարնո բարբառի Գյումրու խոսվածքի քերականական համակարգը նկատելի ձևափոխություններ կրեց, որոնք նրան զգալիորեն հեռացրին մայր բարբառից՝ ավելի մոտեցնելով արդի գրական արևելահայերենին:

**Серго АЙРАПЕТЯН (Армения)**

Ширакский центр арменоведческих исследований НАН РА (Гюмри)

e-mail: serhayr@mail.ru

## СДВИГИ В ГРАММАТИЧЕСКОЙ СИСТЕМЕ ГЮМРИЙСКОГО ГОВОРА КАРИНСКОГО ДИАЛЕКТА

Советский период нашей истории, особенно его последние два-три десятилетия, стали годами беспрецедентного развития литературного армянского языка. В этот период заметные изменения понесли также ряд говоров армянского языка, в том числе грамматическая система гюмрийского говора Каринского диалекта, которые значительно отдалили его от грамматики диалекта и приблизили к современному литературному восточно-армянскому. Ниже представляются основные проявления этих изменений:

а) Более заметным становится выражение грамматической категории множественного числа существительных аффиксами *էր* и *նէր* (*մըգնէր, սանդըռնէր, որսնէր*). В настоящее время в говоре этими аффиксами образуются множественные числа многих существительных, которые в недавнем прошлом имели другие аффиксы, (*ա\*խպըրդիք*

*ա\*խսլըրդանք-ա\*խսլերներ, կըղորդանք-կըղորդանքներ*). В говоре резко уменьшилось число тех существительных, множественное число которых продолжает образовываться аффиксом грабара *p* (*տըղէք, էրէխէք, գընւրէցիք, բալէք, թուլէք*). Хотя некоторые из этих слов употребляются также формами множественного числа близкими к литературному.

б) Одной из особенностей склонения в Каринском диалекте это наличие определенного родительного (*սէղանին վոյ, տէրըրին կընիգ*), что в гюмрийском говоре больше не существует (*սլանվի թոռ, ախսլոր տըղա, ջ'սղի քար*).

в) В говоре подавляющее большинство существительных во множественном родительном получало аффикс *ni* (*սլանվներ-սլանվներու, ա\*ղւրներ-ա\*ղւրներու*), в настоящем более применительно родительное множественное число с аффиксом *h* (*սլանվներու-սլանվների, ջայելներու-ջայելների*).

г) Значительно увеличилось число тех существительных, которые вместе с *էն* формами единственных и множественных аблативов применяются также и с падежными аффиксами *hg/nig*, например, *մարթ-մարթէն-մարթուց, աստըծսէն-ասծուց, գըլխէն-գըլխուց, գըլխըներէն-գըլխըներուց/hg, տարվանէն-տարուց* и т.д. Таким же образом к литературному армянскому более приблизилась и форма творительного падежа современного говора гюмрийцев (*տարվընէրով-տարիներով, տըղոցով-տըղէքով*).

д) В гюмрийском говоре изменения прилагательных, числительных и местоимений Каринского диалекта сравнительно небольшие. Из них можно выделить почти полное вытеснение из говора довольно применительных в прошлом турецких слов *ջիլիգ* и *բէթար* в составлении сравнительных прилагательных; значительное уменьшение применения многократных числительных с аффиксом *տազ* (*իրէքտազ, հինգտազ*); более частое применение вместо большинства местоимений с аблативом *էն* форм с *hg* (*ուրիգէն-ուրիգ, սէզնէն-սէզնիգ, ա\*սսէն սէզն-ա\*սսէն սէզիգ*).

е) Гюмрийский говор, оставаясь верным общим закономерностям глагольной системы Каринского диалекта, в настоящем, под влиянием некоторых явлений литературного языка заметно отделился от него. Так, новое поколение гюмрийцев уже давно окончание *էր* деепричастий прошедшего времени поменяло на *էլ* (*սղալ-սղէր-սղէլ, տէզընէլ-տէզըրէր-տէզըրէլ*).

ё) Почти забыты, характерные для Каринского диалекта и напоминающие причастные формы, слова с аффиксом *դան* (влияние турецкого) *լըսածդան, բէլածդան* и другие (*լըսածդան խօսքու կըրիր*).

ж) Если в диалекте аффикс *կը/զը* изъявительного настоящего и несовершенного обычно является окончанием глагола, начинающегося с согласного (*սիրէսկը/սիրէսզը, մօրթէսկը*), а в гласноначинающихся глаголах этот аффикс добавляется также и сначала (*կուղէսկը, կէրթասկը*), то в современном гюмрийском говоре более применительны препозитивные формы, где аффикс *կը/զը* ставится только сначала (*կըսիրէս, գ'նլսս, կէրթասի, գ'ուքար, կաշէնք*) и т.д.

з) Пожалуй только в речи старшего поколения можно встретить каузативные глаголы типа *վերցնիցի, խրվցնիցիւք*, вместо которых в настоящем в говоре более применительны близкие к литературному современные формы прошедшего времени (*վերցրեցի, խրվցրեցիւք* и т.д.).

и) По нашим расчетам около девяноста заимствованных наречий диалекта (в основном с турецкого) в гюмрийском говоре или не применяются (*սրբըի-потом, դի-ֆիլ-вдруг, иш\*դи\*-постоянно, ֆш\*ри\*қи-напрасно, ишը-только* и т.д.), или сохраняются в старых устойчивых сочетаниях, например *иш\*րըր էրիш /терпи/, դըրиш\*դի կայնի /отделись/, դի\*қиш\* հալով /легко/* и т.д. Таким же образом в последние десятилетия менее применительными стали и заимствованные предлоги, союзы, междометия говора (*ишվш-кроме, գ'јорш-сравнение, р'шзиш-похожий на, рш\*рիш-только чтобы, չնի-рի-потому что, һш'лш /удивление /, ршзқш /блаженство /*).

й) Синтаксическая система гюмрийского говора, по сути, полностью относится к Каринскому диалекту, с основными закономерностями, без заметных отличий от литературного армянского. Пожалуй отметим некоторые незначительные факты, какими являются характерные говору большие количества паратаксиса (*վղնէրի հոգիսի, սպէրի կըցալի, մաննէրի վըրишի*) и т.д.

**Sergo HAYRAPETYAN (Armenia)**

Shirak Center for Armenological Studies NAS RA (Gyumri)

e-mail: serhayr@mail.ru

## SHIFTS IN THE GRAMMATICAL SYSTEM OF KARNO DIALECT OF GYUMRI SPEECH

The last two- three decades of the Soviet era of our history have been the years of great progress and achievements in the language-building, inter alia, the unprecedented development of literary Armenian language and its real triumph. It is also during this period that the grammar system of the Gyumri speech of the Karno dialect underwent remarkable transformation that significantly removed it from the grammar of the main Karno dialect, bringing it closer to the modern literary Eastern Armenian language. Below are the main manifestations of those changes.

a. The expression of the number of nouns in the grammatical order and with plural particles էր and նէր (*վըգնէր, սանդըրննէր, նըսնէր*) is almost complete reality. Many words the plurals of which were formed in other ways in the far past, got their plural numbers with the help of those particles (*ш\*խսըրըրիք-ш\*խսըրըրիանք-ш\*խսէրնէր, կըդորդանք-կըդորդանքնէր*). The scope of the nouns getting their plurals with the old Armenian (Grabar) k /p particle has narrowed significantly (*սըրէք, էրէխէք, գընսըրէցիք, բալէք, թուլէք*, etc.), though part of them for forming plural numbers use particles closer to the literary Armenian (*քսաըրըցիներ*).

b. One of the peculiarities of the Karno dialect declension system was the presence of definite possessive case (*սէղանին վօղ, տէրդերին կընիգ, that are no longer applicable in the Gyumri speech* Գյումրու (պատվի թոռ, ախպօր տըղա, ջ'անջի քար).

c. The prevailing majority of the speech nouns formed their plurals with the help of *ni* particle (*պատվըներ-պատվըներու, ա\*ղմըներ-ա\*ղմըներու*), currently, the formation of plurals of possessive case with the help of *i/h* particle is more active (*պատվըներու-պատվըների, ջայելներու-ջայելների*).

d. The number of the nouns which singulars and plurals are formed with its/uts *ից/ուց* particulars that are largely in use instead of old *en/ էն* particular of exceptional case has significantly increased, such as *մարթ-մարթէն-մարթուց, սատրձմէն-սածուց, գըլխէն-գըլխուց, գըլխըներէն-գըլխըներուց/ից, տարվանէն-տարուց* and so on: The same way the instrumental case of the Gyumri speech has become closer to the literary Armenian (cf., *տարվընքով-տարիներով, տըղօցով-տըղքով*):

e. In the Gyumri speech the changes of the Karno dialect adjectives, numerals and pronouns are relatively few. Among them we can mention Turkish *ջիլիգ* և *բեթար* that once would be used widely. Those ways almost entirely stopped being used in the speech. Also the number of multiplicative numerals that were formed with the help of *tag/տագ* particle (*իրէքտագ, հինգտագ*). The same way its/ից exceptional particle replaced *en/էն* exceptional particle while forming the pronouns plural numbers (*ni\*րդէդէն-ni\*րդից, մէզնէն-մէզնից, ա\*մմէն մէզէն-ա\*մմէն մէզից*):

f. Despite all common symmetries with the Karno dialect verbal system the Gyumri speech with a range of linguistic realities mainly conditioned with the influence of the literary Armenian has farther itself from the Karno dialect Thus, latest generations of Gyumri replaced *er/էր* particle for forming past/present perfects with *el/ էլ* particle (*սողալ-սողէր-սողել, տէսընէլ-տէսըրէր-տէսըրէլ*).

g. The ways of building participle forms with the help of the Turkish –*dan/ դան* particle have already been forgotten է (*յըսածդան խօսքըս կըրրիր*):

h. If in the dialect *ky/gy կը/գը* particles for forming present and indefinite normally are added to the verb with consonants at the end (*սիրէմկը/սիրէմգը, մօրթէմկը*), and in the case of vowels the particle is added from the beginning as well (*կուղէմկը, կէրթասկը*), then in nowadays speech of Gyumri it has become more applicable to add *կը/գը* particles from the beginning of the word like in the case of *կըսիրէմ, գ ուլսմ, կէրթայի, գ ուզաք, կաշէնք* and so on:

i. Perhaps only in the old residents' speech we can meet causal verbs like *վէրցուցի, խըմցուցինք* and, instead of them, currently, past simples more closer to the literary Armenian are of wide use in the Gyumri speech (*վէրցըրէցի, խըմցըրէցինք* and so on).

j. Today about 90 loan adverbs of the dialect (mainly taken from the Turkish) are either no longer used in the Gyumri speech (*արթըխ-հէտո, դաֆիլ-հանկարծ, սա\*դա\*-անընդհատ, ֆա\*րա\*զի-իզուր, սալթ-միայն* և այլն) or kept in the old expressions such as *սա\*բըր էրա*

*/hold on/, դրրա\*ղ կայնի /stay apart/, դ'ա\*գմա\* հալով /with ease, easily/ and so on. The loan conjunctions, prepositions and exclamations (սավայ-բացի, գ'յորա-համեմատ, բ'աշտան-պէս, թա\*քիլա-միայն թէ, չունքի-որովհետև, հա\*լլա /զարմանք/, քյաշկա /երանություն/ ) are likewise, used much less within the last decades.*

k. All in all, The syntactic system of Gyumri speech belongs to the Karno dialect, with its basic patterns, without noticable distinctions from the literary Armenian. Perhaps we should just mention some minor facts, such as, a large number of idiosyncratic expression typical of the GYumri speech (*վողնէրս հոգնավ, աչքերս կըցալի, մաղնէրս մըրսավ*) and so on.

## Հայկանուշ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ լեզվի հնաստիտուտ (Երևան)

է.վոստ` mtatev@mail.ru

## ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱԳՆԻՆ ԵՎ ՆՐԱ «ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՈՄԱՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ

Ուսումնասիրության նպատակն է Շիրակի և առհասարակ հայոց պատմամշակութային ժառանգությունից վեր հանել և լայն շրջանակներին ներկայացնել Շիրակի լավագույն զավակներից մեկի՝ յոթերորդ դարի գիտնական, մաթեմատիկոս՝ համարող Անանիա Շիրակացու դերն ու կատարած գործունեությունը հայ գիտական մտքի բնագավառում:

Նրա կյանքի մասին կարելի է տեղեկություններ ստանալ իր իսկ ձեռքով գրված ինքնակենսագրականից, ինչպես նաև թվաբանական խնդիրների տվյալներից, որոնցում հաճախ են հիշատակվում Կամսարական իշխանական տան ներկայացուցիչների անուններ, ինչից կարելի է եզրակացնել, որ նա կապված է եղել այդ նախարարական տան հետ:

Անանիա Շիրակացին հայ մատենագրության այն սակավաթիվ երջանիկ գործիչներից է, որի գործերը բազմաթիվ ընդօրինակումների են արժանացել մեր միջնադարյան գրիչների կողմից: Դա մի աներկբա ապացույց է նրա գործերի կարևորության և կիրառելիության փաստի մասին:

Նոր ժամանակներում ևս աճել է հետաքրքրությունը նրա անձի ու գործերի հանդեպ: Շիրակացու, նրա բնական և տիեզերական երևույթների քննության, աշխարհագրության, տոմարագիտության մասին գործերի ուսումնասիրությամբ զբաղվել են հայագիտության մեծ երախտավորներ Քերովբե Պատկանյանը, Գալուստ Տեր-Մկրտ-

չյանը, Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, Մեն Արևշատյանը, Աշոտ Աբրահամյանը և ուրիշներ, որոնք թարգմանել են (գրաբարից ռուսերեն) նրա առանձին գործեր կամ կազմել են քննական բնագրեր: Ա. Աբրահամյանը Գ.Պետրոսյանի հետ ոչ միայն գրաբարից աշխարհաբար է թարգմանել տոմարագիտությանը, տիեզերագիտությանը, աշխարհագրությանը, թվաբանությանը վերաբերող նրա գործերը՝ ամփոփելով «Անանիա Շիրակացի» խորագրի տակ (1979թ.), այլև դեռևս 1940 թվին կազմել է տիեզերագիտությանը և տոմարին վերաբերող նրա գործերի քննական գրաբար բնագիրը՝ «Տիեզերագիտություն և տոմար» վերնագրումով, որից էլ կազմել ենք Համաբարբառը:

Համաբարբառի կազմման նպատակը եղել է յուրահատուկ ձևով արժանին հատուցել հայ մեծ գիտնականին, որն աշխարհին հայտնի Կոպեռնիկոսից ութ դար առաջ՝ դեռևս 7-րդ դարում, արձանագրել է Երկրի՝ արևի և իր առանցքի շուրջը պտտվելու, տիեզերական մարմինների՝ իրար հետ փոխկապվածության գաղափարները: Բայց, ցավոք սրտի, միջազգային այնպիսի ճանաչում չի ստացել, ինչպիսին լեի գիտնականը:

Համաբարբառը որևէ հեղինակի գործի յուրատեսակ ընդարձակ բառարան է, որում բառերը տրվում են ամփոփ միտք արտահայտող բառահոդվածի մեջ: Նրանից կարող են օգտվել արվեստի, գիտության բոլոր բնագավառների, անգամ հասարակական կառուցվածքներն ուսումնասիրողներ և նույնիսկ արհեստավորներ՝ մատենագրության մեջ իրենց արհեստին վերաբերող բառը, փաստը կամ երևույթը գտնելու համար:

Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» գործի Համաբարբառը կարևոր է նաև նրանով, որ հնարավորություն է տալիս բազմիցս անդրադառնալու հեղինակի գործերին և առնչվելու նրա արտահայտած գաղափարներին, դրանով իսկ նույնքան անգամ հաղորդակցվելու հեղինակի հետ:

Քանի որ Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» գործը բնական և տիեզերական երևույթների փոխկապվածության, նրանց պատճառահետևանքային կապերի մասին է, Համաբարբառի բառահոդվածները որոշ դեպքերում ավելի ընդարձակ են ընտրվել՝ չաղճատելու համար վերը նշված կապերը:

Հակառակ այն բանի, որ 7-րդ դարում օ տառը դեռ գործածության մեջ չէր մտել և գրվում էր աւ երկբարբառով, այն տպագիր բնագրում /1940թ./ լայն կիրառություն ունի: Այդ է պատճառը, որ 7-րդ դարի հեղինակի գործի՝ մեր կազմած Համաբարբառն ունի նաև օ տառով սկսվող բառեր:

Գրքում նկատված որոշ սխալներ, որոնք հետևանք են ժամանակի ուղղագրական կանոնների, կամ տպագրական բնույթ են կրում, ուղղված են մեր կողմից՝ համեմատելով նաև Մատենադարանում եղած ձեռագրերի հետ: Համաբարբառի վերջում ծանուցման կարգով տրված է այդ ուղղումների ցանկը:

Այս միջազգային գիտաժողովը կրում է «Շիրակի պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» խորագիրը: Համոզված ենք՝ Անանիա Շիրակացին իր գործերով Շիրակի պատմամշակութային մեծագույն արժեքներից է: Իսկ արդի վիճակում նրա գործերի ու անձի գնահատությունն է նաև նրա լավագույն աշխատանքի՝

«Տիեզերագիտություն և տոմար»-ի Համալսարանի կազմումը: Եվ սա հենց կապ է՝ մի կամուրջ անցալի ժառանգության ու ներկալի միջև:

**Айкануш ОГАННИСЯН (Армения)**

Институт языка НАН РА (Ереван)

e-mail: mtatev@mail.ru

### **АНАНИЯ ШИРАКАЦИ И «АМАБАРБАР» (СЛОВАРЬ-СИНОПСИС) ЕГО РАБОТЫ «КОСМОЛОГИЯ И КАЛЕНДАРЬ»**

Цель исследования – пролить свет на роль Анании Ширакаци в развитии армянской научной мысли как Ширакского региона, так и всего армянского историко-культурного наследия, представить широкой публике одного из лучших представителей Ширакского региона, ученого, математика VII века Анания Ширакаци.

Сведения о его жизни мы получаем из автобиографии ученого, а также из арифметических задач, в которых часто упоминаются имена представителей княжеской фамилии Камсаракан. Можно сделать вывод, что он был связан с этой фамилией.

Анания Ширакаци - один из немногих деятелей армянской рукописной науки, чьи произведения широко использовались нашими средневековыми писателями. Это неопровержимое доказательство важности и применимости его работ.

В новые времена интерес к его личности и произведениям значительно вырос. Изучением деятельности Анании Ширакаци и его работ, посвященных природным и космическим явлениям, летоисчислению, географии, занимались такие великие деятели-армяноведы, как Керовбе Патканян, Галуст Тер-Мкртчян, Овсеп Орбели, Акоп Манандян, Сен Аревшатян, Ашот Абраамян и другие. Они перевели с грабара - древнеармянского языка, на русский отдельные работы ученого или же составили анализ оригинальных рукописей.

А. Абрамян вместе с Г. Петросяном перевели не только с грабара на современный армянский работы автора по истории, географии, арифметике, обобщив их под заглавием «Анания Ширакаци» (1979), но и еще в 1940 г. составили анализ работ ученого на темы космоса и календаря, обобщив их под названием «Космология и календарь», на основе которого мы и составили «Амабарбар»-Конкорданс.

«Амабарбар» – Конкорданс является своего рода данью уважения великому армянскому ученому, который еще за 8 веков до Коперника, уже в VII веке, озвучил и записал идеи о том, что Земля крутится вокруг своей оси и вокруг Солнца, а также о взаимосвязи между космическими телами. Но, к сожалению, он не получил такого международного признания, как польский ученый.

«Амабарбар» - Конкорданс - это уникальный объемный словарь любого авторского произведения, в котором слова представлены в словосочетаниях, выражающих краткое изложение. Им могут пользоваться представители искусства, науки, те, кто изучают социальные структуры и даже ремесленники, с целью найти в рукописях слово, факт или явление, связанное с их отраслью деятельности.



Работа «Амабарбар» - Конкорданс на основе исследования Анании Ширакаци «Космология и календарь» особо важна тем, что позволяет многократно ссылаться на работы автора и его идеи, таким образом, позволяя участить общение с автором. Ведь оригинал обычно откладывается в сторону после прочтения книги, в то время как словарем, в данном случае – «Амабарбаром»-Конкордансом могут пользоваться часто, каждый раз вспоминая автора данной работы.

Так как работа Анании Ширакаци «Космология и календарь» посвящается взаимосвязи природных и космических явлений, их причинно-следственных связей, в некоторых случаях, во избежание неточностей, в «Амабарбаре»-Конкордансе выбраны более общие формулировки словесных выражений.

Вопреки факту, что в VII веке буква «o» не использовалась в современной форме, она писалась как «ш», которая широко используется в печатном оригинале, учитывая правила правописания того времени (1940г.), поэтому в «Амабарбаре»- Конкордансе автора VII века есть в том числе слова, начинающиеся на букву «o».

Некоторые ошибки, замеченные в книге вызваны орфографическими правилами того времени, или же являются типографическими неточностями и исправлены нами на основе сравнения с рукописями в Матенадаране. В конце «Амабарбара»-Конкорданса приводится список этих исправлений, в порядке уведомления.

Если учесть, что международная конференция носит название «Историко-культурное и современное наследие Ширака», мы можем с уверенностью утверждать, что Анания Ширакаци является одним из величайших деятелей, а его работы - важными историко-культурными ценностями Ширака. В наши дни своеобразной оценкой его личности и работ является также составление «Амабарбара»- Конкорданса на основе его лучшей работы.

Это и есть та самая связь - мост между наследием прошлого и настоящим.

**Haykanush HOVHANNISYAN (Armenia)**

Institute of Language NAS RA (Yerevan)

e-mail: mtatev@mail.ru

## **ANANIA SHIRAKATSI AND GLOSSARY OF “COSMOLOGY AND CALENDAR”**

The aim of the study is to highlight the role of Anania Shirakatsi in the development of Armenian scientific thought. Shirakatsi, 7th-century scientist and scholar, mathematician, is one of the most gifted people born in Shirak region, and this study aims to feature his role in the Armenian historical and cultural heritage and to present it to a wide public.

We learn about his life from his autobiography, as well as from the arithmetic problems, where the names of the representatives of the Kamsarakan noble family are mentioned frequently. Thus, we can deduce that he was connected to that noble family.

Anania Shirakatsi is one of the few lucky figures in Armenian literature, whose works have been widely used by our medieval writers. It is an indefinable proof of the importance and significance of his work.

In the new era, the interest towards his personality and works has become even greater. Kerobve Patkanyan, Galust Ter-Mkrtychyan, Hovsep Orbeli, Hakob Manandyan, Sen Arevshatyan, Shot Abrahamyan and many other Armenian scientists have studied the works of Shirakatsi regarding natural and space phenomena, geography. They have translated his works into Russian, or created a compilation of the original works.

A. Abrahamyan and G. Petrosyan not only translated Shirakatsi's works about space, geography, math (summed up under "Anani Shirakatsi" edition in 1979), but also already in 1940 they made a compiled study from those which was named "Cosmology and the Calendar" from which we have derived the "Hamabarbar"-Concordance.

The goal of the "Hamabarbar" (Glossary)- Concordance is to once again pay tribute to the great Armenian scientist, who talked about the idea of Earth turning around the sun and the connections between celestial bodies, in the 7th century - 8 centuries before the prominent Copernican. Yet, unfortunately, Shirakatsi hasn't received such international recognition as the Polish scientist.

"Hamabarbar"- Concordance is a unique, extensive dictionary of an author's work in which the words are presented in a summary of the meaningful word phrases. It can be used by researchers of science, arts, social structure and even craftsmen, to find a word or a fact related to their field of study.

The Hamabarbar- Concordance of Anania Shirakatsi's "Cosmology and the Calendar" is also important because it allows to refer to the works of the author multiple times and to relate to his ideas, thus establishing deeper communication with the author. After being read once, the original work is usually put aside, while a dictionary (in this case "Hamabarbar"-Concordance) can be in use very often, which will keep the original author alive.

As Shirakatsi's "Cosmology and the calendar" is about the interconnection of natural and cosmic phenomena, their cause-and-effect relationships, in some cases the common wordings were chosen to avoid any disruptions in the above mentioned interconnections.

Despite of the fact that in the 7th century the letter "o" was not yet in use in its modern way, it was written in the form of a double-edged letter "uu", and it is widely used in the printed original copy, based on the spelling rules of that time (1940). That's why the "Hamabarbar" - Concordance of the 7th century scholar has also words starting with letter "o".

Some of the errors in the book, those which were caused by the spelling rules of that time, or are mostly typos, have been corrected by us, also based on the manuscripts of the Matenadaran. At the end of the "Hamabarbar"- Concordance, the list of these corrections is presented as a supplement.

Taking into consideration that the international conference bears the title of "Historical and cultural heritage and modernity of Shirak", we can certainly say that Anania Shirakatsi is one of the most prominent historical and cultural values of Shirak region. The creation of "Hamabarbar"- Concordance based on his best work is also another act of evaluation of his works and his figure, in our times.

And this is also another link, a bridge between the heritage of the past century and the present.

Միլվա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Հայաստան)

Վանաձորի պետական համալսարան  
Էլ.փոստ՝ silva\_hovhannisyan\_2017@mail.ru

**ԱՆՑՑԱԼ ԴԱՐԱՍԿՁԲԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՎԱՐՈՒԺԱՆԻ ԳՐԱԿԱՆ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ  
ԴԻՏՈՒՄՆԵՐՈՒՄ**

Անցյալ դարասկզբի արևմտահայ հանճարեղ բանաստեղծ Դանիել Վարուժանին ուղղված ուշադիր հայացքը՝ քննելով նրա պոեզիան, գրականագիտական հողվածները, ճամփորդական նոթերը, դասախոսությունները, թարգմանությունները, կարող է ուրվագծել նաև Վարուժանի բանախոսին և հրապարակախոսին: Մեզ հասած հեղինակային ժառանգությունը վկայում է նաև նրա ստեղծագործական հեռանկարների, չիրականացված ծրագրերի մասին, վկայում, որ Վարուժանը կունենար սովորաձավալ աշխատություններ ժամանակի գրականագիտական, իմաստասիրական, գեղագիտական, սոցիալ-քաղաքական խնդիրների շուրջ, քանի որ չկա այնպիսի բնագավառ, որին անտարբեր մնար բազմաշնորհ բանաստեղծը: Այդպիսի ծրագրերից էր նաև պատրաստել ուսումնասիրություն «...հայկական պատմություն մը լոկ իմաստասիրական և քաղաքագիտական տեսանկյունով»: Իր իսկ խոստովանությամբ գրական-իմաստասիրական, իսկ այնուհետև նաև հասարակական-քաղաքական ճյուղերի ընտրությունը կատարել է անհատական նախասիրություններից ելնելով, ոչ միայն պոեզիայով, այլև ուղղակի գործով «ազգին պետքական ըլլալու» ցանկությունից: Այն օրերին, երբ շատերը ոգևորված էին երիտթուրքերի հռչակած սահմանադրությամբ, Վարուժանը կարողանում է կռահել, որ «ազատություն խոստացող քարոզները խաբուսիկ են ու կեղծավոր»: «...Ներկա Խորհրդարանը՝ ազգերը պիտի ուրանա և ավելի դաժանորեն, քան «Կարմիր սուլթանը» ազատության բերանը «բռնակալության մուրճով պիտի դարբնե...»: Վարուժանը գտնում է, որ անիմաստ է օգնություն հայցել նաև եվրոպական դիվանագետներից, որոնք դրացիներուն անգամ «արծաթի ձայնով կը ճանչնան»: Բանախոսը պահանջում է ապավինել միայն սեփական ուժերին և հայության համար եղերական այդ օրերին հայրենանվեր բանաստեղծ է համարում նրան, ով կկարողանա «ամեն հայտարարի տակ քնած առյուծ մը արթնցնել»: «Տակավին պաշտումով կվերաբերվիմ կովոդներուն հանդեպ», «...Ճանչցած եմ հեղափոխական ոգին, կարդալով Ժ.Ժ.Ռուսոն, Թոլստոն և այլք հազար ու մի դժվարությամբ»: «Պայքարը վաղվան հաջողությունն է», - գրում է նա:

*Ազգապահպանման, այնուհետև նաև պետականության կայացման համար Վարուժանը ասես ուրվագծում է այնպիսի ծրագիր, որը տասնամյակների հեռավորությունից այսօր էլ թվում է արդիական: Այսպես, բանաստեղծը պահանջում է.*

1. Համախմբվել «ազգրս ազգի համար» դրոշի ներքո, միավորվել մեկ միասնական գաղափարի, «մեկ իտեալին շուրջ»։ գիտնականի, արվեստագետի, ուսուցչի և վերջապես եկեղեցու ջանքերը նպատակաուղղել միևնույն հայրենանվեր գործին:

2. Ձարգանալ ոչ միայն գաղափարապես, այլև նյութապես, «...այո՛, նյութապես, որպեսզի այսինչ կամ այնինչ հարուստին քմահաճույքեն անկախ ըլլանք»: Սակայն չհանգստանալ, եթե անգամ «որոշ հայ ընտանիքներու հաջողվել է ժամանակավոր բարվոք կյանք», «Երբ ազգ մը գերի է և իր ամբողջ շրջագիծով կտառապի, ընտանիքներու կղզիացյալ բարելավությունը դրական օգուտ մը չունի...»: Ուրիշ խոսքով սոցիալական անկախության հարցը Վարուժանը կապում է տնտեսական ազատության խնդիրներին:

3. Մշակել և պահպանել միասնական լեզու և գիր, որից հավասարապես կարող է օգտվել թե՛ բանաստեղծը, թե՛ լեզվաբանը, թե՛ պատմաբանը: «Մեր գահը, թագը, ծիրանին առին, սակայն լեզունիս պահպանեցինք և անոնց վրա իշխեցինք, լեզուն եղավ նժույգը և ցեղը առաջ շարժեց», - գրում է նա: «Ես կսիրեմ շովինիզմը հանդեպ իմ լեզվիս և իմ ինքնությունությանս»:

4. Բարեշրջել կրթական համակարգը և «չստրկանալ այլասիրությանը»: Մովորեցնել ոչ միայն «գիտնալու», այլև միտքը մտքով մշակելու, «ստեղծելու արվեստը»: Բայց որ ամենակարևորն է՝ սաների մեջ փրկել «վտանգված հայությունը»:

5. Ընդունել այնպիսի օրենքներ, որոնք ի գորու են «...քարուքանդ ընել բոլոր հին րեժիմի մնացորդները»՝ միաժամանակ չմոռանալով, որ «Ամեն օրենք անոր հպատակողին պետքին և հոգեբանության համաձայն կդրվի, հակառակ պարագայի այն չեղածին պես է»:

6. Քաղաքակիրթ, լուսավոր իդեալներով ազգ ձևավորելու համար Վարուժանը պահանջում է ձեռքն առնել ու շարունակել «դարերով ընդհատված տոհմային փառահեղ քաղաքակրթության թելը»: Ձարգացնել ազգային մշակույթն ու պատմությունը, ձերբազատվել ցեղային հատկությունները և ինքնությունը եղծանող սովորություններից: Պայքարել «ազգային ոգու և մտքի խեղճության», «ժողովրդական տգիտության և կուսակցական խոլորություններու», կրոնական «նախապաշարումներու» դեմ, քանի որ «Հայրենիքի սերը վեհ կրոնքը կըլլա հազարավոր կրոնքներու»:

